ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

891.99
Գ-31

ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

13 APR 2011
891.99
Փ-31

ՎՐԹ. ՓԱՓԱԶՅԱՆ

ԸՆՏԻՐ ՅԵՐԿԵՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
1940

2 8 .08. 2012

506
45

ВРТАНЕС ПАПАЗЯН

ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ

Книга вторая

АрмГИЗ. Ереван, 1940

ԽՄԲԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Այս հատորում զետեղված են Վ. Փափազյանի «Գյուղից» ակնարկաշարը, «Մշուշ» և «Ծովափին» վիպակները։ Նախնական ծրագրով պետք է տեղ գտներ նաև նամակների հատընտիր մասը։ Գրքի սահմանափակ ծավալը հնարավոր չդարձրեց այդ, մի բան, որ կարելի կլինի անել նրա երկերի ամբողջական ժողովածուի հրատարակության ժամանակ։

Գ Յ Ո Ւ Ղ Ի Ց

ԱԿՆԱՐԿԱՇԱՐ

ՁՌՁՌ — ՔԱՐ

Իջել էինք սայլից, թողնելով վոր հեվիհեվ գար նա միանալու մեզ: Մագլցել էինք վերջին քարաժայռը և այժմ նրա մյուս կողմն անցած՝ նստել էինք անմոռուկների մի շքեղ մարգի վրա և դիտում հեռանկարը, վոր փռվում էր մեր վոտքերի տակ:

Ամառնամուտի այդ սքանչելի պահուն, գիշերային առատ ցողի տակ ճղփացող անտառը բացվում էր ներքեվում, ազատվելով հետզհետե ցրվող մշուշից:

Սեպաձեվ, հսկա ապառաժներով անտառոտ լեռները, մազերը գլխների վրա դիզացած վիթխարիների նման, գագաթնին ամպերի մեջ, կողերն ի վար հոսանուտ ժայռեր թավալագլոր, այս-այն կողմ անհատակ խորխորատներ, մթին անդունդներ ու կանաչ հագած ծործորներ՝ հաջորդում էին իրար:

Մշուշն իջել էր մինչեվ հովիտների խորքը և այժմ դանդաղ, արեվը ծագելու հետ, իր ընդարձակ ծավալով վոլորտվում էր ծայրերից, բրդի խոշոր քուլայի նման որորվում էր ծառերի ծայրերին և վարանելով կարծես՝ մաքրում էր բռնած տարածությունը, սահելով լեռներն ի վեր:

Լուռ և անշարժ մնացել էյինք: Ոչ իսկ կարողանում էյինք հաղորդել իրար մեր սքանչացումը:

Ահա ուրեմն, թե վորպիսի՜ բնության մեջ էյինք գնում ապրելու.—այդ ներքևվի շքեղ հովիտներում, անտառոտ բլուրների կողերին...

Ու բացվում եր հորիզոնը մեր աչքի առաջ՝ մանիշակագույն և փոշելից: Հեռուներն սկսում էյին չեշտվել հրջակա գյուղերն, գալարուն, կապույտ ոձերի պես դեպի վեր սողոսկող ծխի անոսր սյունյակները յերևվան էյին գալիս բլուրների ստորոտներում: Բայց դեռ խորին, անշշուկ լռությունն եր թագավորողը: Կարծես վոչինչ դեռ չեր զարթնել, վո՛չ մի թռչուն, վո՛չ մի լույս: Անլսելի էյին նույնիսկ հեղեղատների և ջրվեժների կարկաչները:

Այդ խորին լռության մեջ եր ահա, վոր հանկարծ մի սուր, յերերուն ղողանջ թրթռաց, յելևեջներով բաղխվեց ժայռերին, թնդաց, ապա մեղմացավ և իջավ հալվելու անտառի գրկում:

— Քարկող գյուղի զանգն է. ասաց ընկերս:

Ներքևվ, թերակղզու նմանող ահավոր ժայռերի մի տափարակ պատվանդանի վրա գտնվող գյուղի զանգն եր:

Մի րոպեյի մեջ կարծես ամեն ինչ զարթնեց: Թռչունների ճլվլոց, հեռավոր աղաղակներ, նույնիսկ շների հաչոց, ապա՝ լույս ու թուփ փայլեցին մեր շուրջը, ժայռ ու մարդ պսպղացին զվարթացին՝ նոր ծագող նարնջագույն արեվաշողքի տակ:

Յեվ զանգը խորքերում՝ հնչում եր անընդհատ: Քա՛նի արագ, ա՛յնքան կենդանությունն ավելանում եր ամեն կողմ, ա՛յնքան թռչունները շատացնում էյին յերգերը և ա՛յնքան ջրվեժների ձայնը լսելի, ազատված մշուշի քողից, յելնում եր ձորերն ի վեր և գալիս եր հասնելու մեզ:

Վորքա՜ն գեղատիպ եր այդ միջոցին դաշտի հեռանկարը: Այնտեղ, ընդարձակ տարածության մեջ, տեղ-տեղ ցցված էյին կանաչ, կարմիր տանիքներով գյուղեր, մեջամեջ՝ արևի ցոլքի տակ գալարվող ջրեր էյին հոսում, իսկ առավոտյան ցողի ակնակիտ կաթիլները շողշողում էյին մենմի ծաղկի— մանուշակի, անմոռուկների և զանգակիկների շուրթերին:

Յեվ հեռուն, շա՜տ հեռուն, սպիտակ չերտերով շարժվում էյին հոտերը, սևլին էյին տալիս նախիրները. թացությունն էլ այդ ամենը չեշտում եր՝ տալով հողին, ժայռին թարմ գորշ գույն, լվացած լինելով թփի և բույսի փոշին:

— Այնտեղ է ահա՛ գյուղը, մատը պարզեց դեպի հեռավոր հորիզոնը՝ ընկերս:

Յեվ մեր հայացքները ուղղվեցին դեպի մշուշալից բլրակները:

Մի քանի ժամ ևս ու պիտի գնայինք այդ կանաչ, յերանավետ վայրերում հանգչելու, թողած քաղաքի սեղմ օդը, ժխորն ու աղմուկը:

Մինչ այդ, մեր սայլը, բազմաչարչար այդ փայտե արկղը, ցնցվելով, ճռճռալով, ամեն քայլին փըշուր-փշուր լինելու սպառնալով՝ գալիս հասնում եր մեզ:

Զառիվերը վերջացել եր. պիտի իջնեյինք այնուհետեվ. քիչ հետո անտառն էլ ցանցառանում եր և

դաշտի բաց հորիզոնը իր կանաչ տարածությամբ՝ մի նո՛ր հրճվանք եր պատճառում:

Միքանի վոստյուններից հետո, սայլը կանգ առավ և նստեցինք: Իջնում եյինք արագ, իրավ .,
սակայն դեռ ևլի քան րոպե անհնար յեղավ բա՛ռ իսկ արտասանել: Կառչում եյինք սայլի կողերին, որտեղնից դող եր յելնում, յերբ անտանելի արկղը ծռվում եր դեպի անդունդը՝ սոսկալի ցնցումներ գործելով քարակույտերի վրա: Ականջ խլացնող նրա դղրդյունը դրավել եր մեր ամբողջ լսողությունը:

— Քի՛չ տեղ է. հաջողվեց ասել մեզ ընկերս, վոր տեղացի մի յերիտասարդ եր և քաղաքում բնակվող. յերբ այդ Զուչու-քարն անցնենք, այնուհետև հարթ է:

Զուչու-քար կոչվածը մի ժայռոտ և անտառապատ լեռ եր, վոր ցցվում եր կնճռոտ ձորակի ծայրին: Տեսնում եյինք նրա կրծքի վրա, ապառաժները ճեղքած և դեպի անդունդը խոնարհված կաղնիների տակ, մթին, խոշոր քարայրներ, դեպի վորոնց հասնելը մեզ թվում եր ուղղակի անհնարին:

Յերբ քիչ ավելի հարթ տեղ եյինք հասել, հարցրի նրանց մասին:

Այնտեղ մեղվի փեթակներ եյին պահում գյուղացիք. յերևի առաջ փարախներ են յեղել և կամ, ո՞վ գիտե ինչ: Սակայն այդ այրերը նշանավոր են նրանով, վոր այնտեղ են սպանված յեղել Հասար գյուղացի չորս հայտնի յեղբայրները... Անշուշտ լսած պիտի լինեյիք նրանց մասին:

— Վո՛չ. ասացի յես.— ի՞նչ յեղբայրներ են դրանք:

Ընկերս գլխովը համբերության հրավիրեց, մինչև վոր մեր ոտքերը հանգիստ գտնեյին քարերի վրա վոստնող սայլից: Յեվ յերբ վերջին վայրենի տանձենուց հետո հարթ տեղ ընկանք, այնտեղ, մինչ ձիերին շունչ եյին առնել տալիս, պատմեց մեզ Զըռ-չըռ-քարի մասին:

— Հասարցի չորս յեղբայրներ եյին իրանց գյուղի ամենակտրիճները; Տունուտեղ ել ունեյին. ամենքից մեծը, վոր հիսնամյա հսկա մարդ եր, մեր լեռների հարազատ ծնունդը —ամուսնացած եր. միայն մի մանուկ ուներ, տասնամյա տղա. մյուսները ամուրի եյին, ամուրի յել մեռան... Դուք, իրա՞վ, չե՞ք ել լսել Դուլանի Հաբեթ աղայի մասին:

— Դուլա՞ն. դա այն գյուղը չե՞, ուր գնում ենք մենք ապրելու:

— Վոչ միայն այն է, այլև Հաբեթ աղայի վորդու հետ է, վոր ընկերացել եք՝ նրա հողերը մշակելու համար:

— Հետաքրքիր է. պատմեցե՛ք, մենք վոչինչ չենք լսել:

— Հաբեթ աղան, սկսեց ընկերս, բազմահարուստ մի աղա յեր իր շրջանում. հարուստ և լիրբ... փողի ույժը վորձել եր և լրբացել... Փողը, մանավանդ այսպիսի խուլ տեղերում, տեր և իշխան է ամեն բանի... Ունի՞ս փող—ունիս ամեն ինչ. կարող ես դռռալ, կանչել, հայհոյել, ծեծել... անհոգ կաց, ամենքը կատու կդառնան առաջդ. քա՛նի ամուր զարնես, ա՛յնքան ավելի կքծնեն. քա՛նի պինդ գոռաս, ա՛յնքան ավելի լեզուները դուրս կհանեն... փո՛ղ ունիս. դա հանաք բան չէ... Յեվ Հաբեթ ա-

ղան փող ուներ, շա՛տ փող... Այսպես կամ այնպես՝ դիզել էր նա բավական, տոկոսով էր տալիս— ի նկատի ունեցեք. հարյուրին ամենապակասը 20, հաճախ 40, և դեռ ընծաներն ավելի, ձրի աշխատեցնելը, վորևե բան կես գնով պարտատերից կորզելը, գյուղի մեջ ամենալավ պատառների տեր դառնալը... Ուղղում էր այդպես: Կենտրոն էր դրել իրան և կամաց-կամաց շրջան էր գծում իր չորս կողմը, ձեռքը հասնելու չափ վառների առաջն էր քարշ տալիս հասնողներին... Նախ, ի՛ր գյուղացոց էր սորուկ չինել, մուրհակներով, գրավներով չզլթայել. հետո, շրջանը մեծացրել էր ա՛յնքան, վոր հասել էր մինչև այս կողմերը, մինչև Հասար և դեռ ե՛լ հեռուն... Գյուղացի չկար՝ վոր պարտք չունենար նրան... Տոկոսնե՛րը հենց —մի տարվա տոկոսը — ինձ ու իմ ընտանիքիս կապահովացներ ընդմիշտ... Միայն կանխիկ փող ա՛յնքան թողեց, վոր կհավատա՞ս, նրա մեռնելուց հետո վորդին քաղաքում ցորենի նման, բուռ դես ու դեն ցրվելով՝ հազիվ 3-4 տարում հասավ իր չորերը ծախելու օրին...

Ու այսպես, ընկերս սկսել էր պատմել՝ ինքնահատուկ դառն, կծու հեգնությամբ լի, սրախոսություններով և պատկերացումներով:

— Լա՞վ մարդ է յեղել... ծիծաղեց փեսաս:

— Ազդեցիկ մարդ էր. շարունակեց ընկերս, ա՛յնքան ազդեցիկ, վոր ահա 18 տարի յե նրա մեռնելը, բայց յե՛ս իսկ չեմ հանդգնել այս պատմությունը ճշտորեն պատմելու մեր գյուղում... աստվա՛ծ ազատի. յեղբայրնե՛ր, յեղբոր վորդինե՛ր... Այնքան էլ շատ են վո՛ր... տո՛ւնս կքանդեն... Գյուղ մըտ-

նենք, ձեզ ցույց կտամ յեկեղեցու կողքին նրա գերեզմանը, ամենաշքեղն է. վանդակապատ, վանդակներն էլ կանաչ յուղաներկ...

— Գյուղացի՞ք են շինել:

— Վորդին... գյուղացիք միայն թույլ տվին, կարծեմ միջնորդեցին էլ առաջնորդին, վոր յեկեղեցու դրան մոտ թաղվի... «Լուսահոգին իշխա՛ն մարդ էր»— մինչև հիմա յել ձեզ կասի մեր գյուղի «Խոլերան»...

— «Խոլերան»... դա ո՞վ է:

— Կծանոթանաք. ծիծաղեց ընկերս. յերբ ամառվա շոգին, խանութների առաջ մուշտակով նըստած տեսնենք մի մեծ փափախով դժգույն, կարծես խոլերա ծերունի— դա «Խոլերան» է...

— Հետո՞, միջամտեց փեսաս. վաշխառուի պատմությունդ շարունակիր:

— Ս՛ս... զգույշ. խրատեց ընկերս՝ կռանալով դեպի մեզ. սայլապանը մեր գյուղացի յե. իմացեք, ձեր վո՛չ մի ածականը չի մոռանալ գոյականին կըպցնելու...Ցեվ դա կանի ա՛յն ժամանակ, յերբ վորևե բանով վիրավորեք նրան. օրինակ՝ կովին չթողնեք, վոր ձեր բանջարներն ուտի և կամ այծերին քշեք, յեթե նրանք խմբովին այցելեն ձեր տնկած ծառերին...

— Պատմությունդ չմոռանաս...

— Վո՛չ. ժպտաց ընկերս. 18 տարի յե վոր չեմ մոռացել: Ցես դեռ յերեխա եյի այն ժամանակ, բայց յերեվի իմ թոռն էլ, յեթե ձեր թոռներին հանդիպի, նույն ճշտությամբ կպատմի նրանց՝ Հարեթ աղայի և չորս յեղբայրների մասին... Նմանը չտեսնված

դեպք էր այդ... Ահա՛, նայե՛ք, այժմ պարզ յերևում է այդ կաղնիների խումբը՝ քարայրների վերևում... այդ մացառները... Այնտեղ էր վոր յերկար ժամանակ ապաստան գտան չորս յեղբայրները, այնտեղ եյին նետել իրենց խեղձերը, վերջին արյունոտ բոպեներին... Յես վստահում եմ մեր արկղի պես... Վերադառնանք ուրեմն Հաբեթ աղային... Յեվ այսպես, նա իր գրպանի և բռան մեջ էր հուպ տվել մի ամբողջ գավառ: Իր յուղը, պանիրը, բուրդըն ու հնձվորները— տոկոսի տոկոսներն եյին. իսկ տոկոսի տոկոսի՛ տոկոսները— «այսոր բաղս փորելու յեկ, Արշա՛կ... Եգուց յեզներդ դրկիր ղուլթանի, Մարկո՛ս... Յեկող շաբաթ պատս պիտի չինես, ուստա՛ Ղազար...» և կամ— «ես ո՞ւր ես, ա՛յ հաբամզադա Թորոս, բոս թողնելու յես, վոր ես ծեր հալովս յե՞ս գնամ ցորենս հնձեմ բերեմ կալը»... Հասկանո՞ւմ եք... Սրանք բուն տոկոսները չեյին դեռ. բուն տոկոսները սկսում եյին ձմեռնամուտին... — «Ղազա՛ր, մուրհակիդ որը հասել է... Ադա Մարկո՛ս, փողս չե՞ս տալու... Տո Արշա՛կ, թե փող չունիս տոկոսը տալու, էլ ո՞ւր ես հարոցիդ խոտը տունդ տանում» ... Յեվ ժողովում էր, և՛ ճզմում սարդից ավելի անգութ, վամպիրից ավելի՛ խիստ...

Որերից մեկ որ էլ... բայց սպասեք, կարծես մեր «ղուլթին» (սայլին էր ակնարկում) ուզում է իլի պար գալ...

Հիրավի, զառիվայրից դեպի մի հեղեղատ եյինք սլանում արագությամբ: Ջանացինք չունչերնիս բռնել, աղիքներնիս ձգել և սայլի կողքերին կառչել, վորպեսզի քարերի ցնցումներից չշպրտվեյինք դուրս:

Յերեք—չորս րոպե տևեց, բայց վորպիսի՜ րոպեներ... Անցանք սակայն. ազատ շունչ առինք ու վազում եյինք կիսախարխուլ յերկու—յերեք խըրճիթների առջևից, ուր դիմավորեցին մեզ 5–6 կատաղի գամփռներ:

— Փարախնե՞ր են...

— Որերից մեկ որ էլ... շարունակեց ընկերս. պատմում եմ, լսեցե՛ք... Այդպիսի փարախներ շատ կտեսնեք... Հաբեթ աղան լուր է ուղարկում Հասար, Սողոմոնին թե՝ «դե շո՛ւտ, յերկու որ կա մուրհակիդ լրանալուն, փողն ու տոկոսը բեր, թե չէ եսա՝ գալիս եմ տավարդ առաջս անեմ, քշեմ ու ծախեմ»...

Բանն այն է, վոր խեղճ Սողոմոնն ու իր յեղբայրները վաղուց պարտք ունեյին աղային: Մի տարի տավարների հիվանդությունը կոտորել էր գոմեշներին, յեզներն էլ սովածությունից ընկել—սատկել եյին, տուրք պիտի տային, ի՞նչ անեյին. միքանի, կարծեմ հենց յերկու հարյուր ռուբլի՝ տոկոսով առել եյին... 40 տոկոսով. պարտքն էլ, գի՞տես, խո ձնագնդի նման գլորվել էր, գլորվել, սա՛ր էր դարձել և դեռ էլի գլորվում, Զուշու-քարի չափ էր լինում...

— Յերեվի յերկու հարյուրը՝ չորս էր դարձել. դիտեց միսաս:

— Առանց տոկոսների... Դե՛հ, խեղճ Սողոմոն և յեղբայրներ, չորս հարյուրը մի անգամով ի՞նչպես տային. այդ տարին էլ, հակառակի պես անձրևային էր. կալերը ծլել եյին, գետնախնձորը փչացել... Անիծվի այս յերկիրը, ամե՛ն տարի խո այդպես է... Հաբեթ աղան, ո՞վ գիտե ինչու— յե-

ըռվի Սողոմոնը չատ խոնարհ վողջույններով չէր հանդիպել նրան — թշնամս էլ էր, այժմ իր բոլոր առնելիքն էր ուզում... Մի կողմից էլ յերևի տեսնում էր, վոր պարտքն աճում է, իսկ վճարող աղբյուրը՝ ցամաքում. մտածում էր՝ քանի չուտ էր, յեղածը սաղացներ... Պահանջում էր, կարո՞ղ ես դոռալ, վիճել... ձեռք ես քաշել — պիտի վճարես... Սողոմոնն էլ, չատ դես ու դեն է անում, լուր է ուղարկում, աղաչում, բայց տեսնում է, վոր աղաս անդրդվելի յե, մի որ էլ չարուխները հագնում, վոտքով Դուզան է գալիս, վոր ինչ է՝ անձամբ աղաչի, պաղատի, գուցե մուրհակը կարողանա նորոգել տալ... Մի 20–30 մանեթ էլ, վոնց վոր լինի, ճարում է, վոր տոկոսները վճարի, գուցե խղճան և ժամանակ տան...

Գալիս հասնում է գյուղ, վոր Հաբեթ աղան նըստել Սեռովբենց դուքանումը, գլխին է հավաքել գեղացոց ու ղալմաղալի մեջ է, տոկոսներն է հավաքում, նեղսրտվել է, գոռգոռում է, հայհոյում...

— Բարեվ, աստծու բարին...

— Հա՞, յեկա՞ր... յեկ տեսնենք, գոնե դո՛ւ պարտքդ բեր, թե չե ես անիծածները ինձ սոված են թողնելու այս ձմեռ...

— Աղա, յես...

— Հը՞, ի՞նչ կա... քե՞զ հետ էլ կռվենք... Տո, ես ի՞նչ անամոթ, լիրբ խալխ եք... փող եք ստացել՝ դե բե՛րեք տվեք, էլի՛... էլ ո՞ւր եք նեղացնում, ես կիրակի օրով հայհոյանքներ հանում բերնիցս... Չի՞ լինիլ, չէ՛, ամբողջը պիտի տաս, հե՛րիք է համբերածս...

Սողոմոնի լեզուն ասես՝ կապվել է... Անձայն, հանում է 30 մանեթը դնում աղայի առաջ և աղաչում թե՝ էս է յեղածը, աղա՛, վոր քամես մեզ, ավելին չունենք... մուրհակը նորոգիր, գուցե գարնան...

— Վո՞նց թե գարնան... Տո խծի՛ մորուք, յես քո խաղա՞լիքն եմ, յա թե չէ՝ փողը դաշտից եմ գտել... բաս իմ տղերքը հաց չե՞ն ուզիլ, դու գարնան կարո՞ղ ես չորս–հինգ հարյուր մանեթ մի անգամով տալ...

Եվ ի՞նչ է լինում, ինչ չի լինում —մի թունդ կռիվ ու հայհոյանք՝ հետեվում է դրան... Խո գիտե՞ք, մեր գյուղացիք ինչ վոր չգիտենան, կիրակի օրով կռվելն ու միմյանց հայհոյելը չա՛տ լավ գիտեն. մեկ էլ վոր, մի թեթև պատճառ՝ և ահա միմյանց և՛ հայր, և՛ պապերի գերեզման...

Մանրամասն չի՛ հասել մեզ, թե ի՞նչպես է լինում, վոր Հաբեթ աղան մի թունդ, լկտի հայհոյանք է բաց թողնում բերնից, յետևից էլ մի մեծ ապտակ հասցնում Սողոմոնին... Մեկ էլ ի՛նչ տեսնեն... Սողոմոնն էլ, մոռանում է աղա, պարտք, անճարություն, արյունը գլխին է խփում, տանում է բերում և այնպիսի հարված հասցնում աղային, վոր սա յետ–յետ է գնում ու խանութի գետինը չափելու պառկում...

Մի՛ խառնաշփոթ, մի՛ աղաղակ... Վո՞նց, Հաբեթ աղան ծե՞ծ ուտի, խանութի փոշի՞ն ավլի...

Բայց դե՛հ, թափվում են գյուղացիք, մեջ են ընկնում, աղային բարձրացնում, չորերի փոշին թափ տալիս, ճգնում են հաշտեցնել, Սողոմոնին են հա-

մողում, աղային՝ աղաչում… բայց վո՛չ կարիճ և սրտի խորքից վիրավորված լեռնցին և ուզում աղաչելով հաշտվել և վոչ էլ լիրբ ու յերես առած բռնավորը՝ զիջել և ներել։

— Գնա՛, կանչում է նա կատաղած—գնա՛, յես մարդ չեմ լինիլ, յեթե դու և բոլոր ցեղդ այս ձմեռ չկոտորվեք քաղցածությունից, չա՛ն վորդիներ, ավազակնե՛ր…

Ու կատարում է սպառնալիքը։ Ճշմարիտ է, կերած ծեծը վոչինչ, բայց մեկ մտածե՛ք… Հաբեթ աղան, գավառի գլխին կակալ կոտրողը, ամենքի վրա անպատիժ գոռացողը, ամենքին վախեցնող ահդողը… և հանկարծ, ծեծվա՛ծ մի ինչ-վոր լեռնցուց, փռված գետի՛ն, վոտքի տա՛կ, այն էլ վողջ գյուղի առաջ… Վաղը չե՞ վոր լուրը կտարածվեր, ամբողջ նահանգի խոսելիքը կդառնար… Վո՛չ, պետք է ցույց տալ, և լա՛վ ցույց տալ, վոր անպատիժ կերպով չէր կարելի նույնիսկ բարձրաձայն խոսել նրա նման «իշխանի», նրա նման գավառի մեծի, աղայի հետ…

Այդ ձմեռ Սողոմոնն ու ընտանիքը, բոլոր յեղբայրները, հիրավի, մնում են համարյա՛ անոթի։ Աղան ամեն կերպ աշխատում է և փողի ուժով հաջողվում է հասցնել նրանց այդ դրության։ Խլում է տավարը, խոտը, կալի արդյունքը… Սողոմոնի կինը կրած տանջանքներից մեռնում է, թողնելով վորբ տասնամյա մանուկին…

Գարունը յերբ բացվում է, այլևս չկան վո՛չ յե՛ղ, վո՛չ գոմեշ, վո՛չ սերմացու, վո՛չ փող… Զարս յեղբայրները դառնում են ուղղա հացի կարոտ մարդիկ…

Ցավ մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն բռնկում է մի ժամանակ մեծ, առատ տան զավակների սրտի մեջ։ Ավելացրեք դրանց վրա Հաբեթ աղայի ծաղրը, չարախնդաց ակնարկները, ամեն տեղ, ամեն բանում նրանց վնասելը…

Վո՛չ, տանել չէր կարելի այլևս։ Հարկավոր էր քանդված օջախի վրեժն առնել, գավառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից, վիշապի ակռաները խլել…

Այս և ուրիշ այդ տեսակ մտքեր ներշնչում են յեղբայրներին՝ թողնելու ամեն ինչ և ընկնելու լեռները։ Մի գիշեր էլ զինված, իջնում են Դուզան, գտնում գյուղի գիշերապահներից մեկին, սպառնում վոր նա մի պատրվակով բաց անել տար Հաբեթ աղայի տան դուռը, ներս են նետվում և բռնում աղայի կոկորդից։ Մեկը գտնում է բոլոր մուրհակները, դիզում, վառում է, իսկ Սողոմոնը վար է բերում տանտիրոջ արծաթապատ հրացանը, կամենալով զրկել նրան պաշտպանվելու միջոցից։ Սպառնում է սպանելու, յեթե նա չեր ցույց տալ փողերի տեղը։ Այդպիսով մտածում է իրանց քանդած տունը վերանորոգող գումար ձեռք բերելուց հետո՝ թողնել հեռանալ։

Հաբեթ աղային և վո՛չ իսկ ճչալ է հաջողվում. կինն ու վորդիները սարսափահար՝ կծկվում են անկյունում. օգնություն կանչել անհնար է. գիշերապահի վրա՛ իսկ հսկում է յեղբայրներից մեկը։

— Ուրեմն մտադիր չե՞ն յեղել սպանել աղային. հարցնում եմ յես, ընդհատելով։

— Վո՛չ. արյուն թափել վո՛չ վոք չի կամենում.

Սողոմոնը մինչև իր կյանքի վերջը յերդվում եր, վոր նա չեր կամեցել Հաբեթ աղայի մի մազն իսկ չարժել տեղից, այլ միմիայն դիզած մուրհակները վոչնչացնել և միքանի հարյուր ռուբլի ձեռք բերել— գնալ ուրիշ յերկրում տեղավորվելու համար... Բայց փող քիչ են գտնում. հազիվ յերկու հարյուր. աղան, ըստ յերևույթին, զգույշ մարդ է յեղել... Ինչ վոր ել լիներ, գլխավոր խնդիրը կատարված եր, ամբողջ գավառի շղթաները—մուրհակները վոչնչացված եյին.. Յեղբայրները գոհ, պատրաստվում են հեռանալու: Սողոմոնը կամենում է հետը վերցնել նայև աղայի լի հրացանը, վախենալով վոր յետևից չխփեն իրեն... Խելոք եր մտածում. Հաբեթ աղային ճանաչողը պիտի իրավունք տար Սողոմոնի կասկածներին...

Բայց, գրված եր, մուրհակներից հետո նրանց տերը ապրել չեր կարող... Հիմարությո՞ւն է գալիս Հաբեթ աղայի վրա այդ միջոցին, թե՞, հիրավի, նա կամենում է յեղել յեղբայրներին յետևից զարնել— փաստն այն է, վոր նա անմիջապես բռնում է հրացանի փողից և չի թողնում վոր տանեն:

— Ինչ վոր տարար, մնաս չունի, գոչում է նա— բայց հրացանս թող, պապենական հիշատակ է...

— Թո՛ղ տուր, չո՛ւն, ճգնում է նրա ձեռքից քաշել Սողոմոնը, թողնեմ՝ վոր յետևից զարնե՞ս մեզնից մեկին...

— Վո՛չ, յերդվում եմ...

— Յերդվո՞ւմ... քեզ նման չո՞ւնը... Թո՛ղ տուր...

Յեվ պինդ, գետնի յերեսին քարշ գալով կառչում է աղան իր հրացանի փողից...

Մինչ այդ, աղայի կինը սթափվում է, դուրս է սլըդում և ճիչ ու աղմուկ բարձրացնում: Լսվում են աղմուկներ, շների հաչոց: Պետք եր փախչել, բայց աղան ձյութի պես կպել է հրացանից. վո՛չ աքացիները, վո՛չ գլխին տված բռունցքները, վոչինչ չեն հաջողվում պոկել նրան... Յեղբայրները հասկանում են, վոր զզվելի վաշխառուն դիտմամբ է սարքում այս տեսարանը, մինչև ոգնության հասնեն, բռնեն նրանց, և կամ, յեթե հրացանը թողնեյին, գնդակահար աներ յետևից մեկնումեկին...

— Տո՛ւր, յեղբայր, ձայնում է Սողոմոնին կրտսերը,— գալիս են, վե՛րջ տուր՝ գնանք, գյուղը վոտքի յե յելնում ..

— Ի՞նչ անեմ, թողնե՞մ հրացանը...

— Տո ի՞նչ ես չվարել, գոչում է Ղուկասը. բլթակը քաշիր և մեկ չահին յետ տուր...

Փամփուշտին եր ակնարկում. չե՞ վոր հատը 5 կոպեկ արժի: Ուզում եր ասել՝ թե գնդակահարիր...

Յեվ իրավ ուրիշ ճար չկար... Սողոմոնը քաշում է բլթակը... Լսվում է մի խուլ թնդյուն, հետո բարձրանում է ճիչեր, աղմուկ և չորս յեղբայրները հազիվ կարողանում են իրենց դուրս նետել գյուղից, մտնել անտառները և ազատվել հետապնդումից...

Այլևս նրանք «ղաչաղ»-ներ են... Ղաչաղներ՝ ազատ, բայց տխուր, վոր մարդ են սպանել և այժմ հալածական, անտուն, մի մանուկ ել հետերնին՝ աստանդական, վո՛չ մի տեղ հանգիստ չեն գտնում... Սողոմոնի յերեսից ժպիտն անհետացել եր... Իրավ

է, գյուղացիք ուզում էին նրանց, յեղբայրներից գյուղ իջնողին տալիս էին պաշար, վոչխար, հագուստ, սակայն մյուս կողմից հալածանքը ստիպում էր միշտ շարժուն, միշտ թաղնված, քարայրների, խիտ անտառների մեջ ապաստանել, վո՛չ ազգականի կարողանալ յերևալ, վո՛չ ժամերգություն լսել, հայրենի գյուղը մտնել...

Այսպես նրանք փախստական՝ ապրում են ամբողջ ամառը: Քանիցս ձիավորների զինված խմբեր, նրանց յետևիցն ընկած՝ վորոնում-գտնում են, բայց միշտ փախստականներին հաջողվում է ազատվել, մինչև մի որ էլ, այդ դժբախտ Զուչու քարի լեռը յեկած ժամանակ, մատնությա՞ն շնորհիվ, թե՞ պատահմամբ, պաշարվում են հանկարծ, անհույս՝ այս անգամ էլ ազատվելու...

Ու կռվում են, վորքան հնարավոր է չորս հոգուն, մի մանուկ էլ հետերնին՝ հարյուրի դիմաց...

Յեղբայրներից կրտսերը զարնվում է մի թփի տակ և մեռնում տեղնուտեղ, յերկրորդը վիրավոր՝ ժայռերից գլորվում է ձորը և փշրվում քարերի վրա, յերրորդին գտնում են վոտքը կոտրած՝ մի քարայրի մոտ և նա յել բանտումն է մեռնում, իսկ Սողոմոնն արյունաքամ, մի քանի գնդակ մարմնի մեջ, տասնամյա վորդուն գրկած՝ նետում է իրեն, ահա, նայեցե՛ք, այն միջին մեծ «քարայրը»...

ԿՈՒՅՐԸ

I.

Չնայելով վոր ձոթեղենի յերկու խանութ միայն կար գյուղական հրապարակում, բայց Կիրակոսենց Գալոինն անհամեմատ ավելի լավն էր:

Նախ վոր, Սարոենց Թորոսի խանութի նման «Ջհուդի բազար» չէր․ այսինքն, ամեն ինչ միմյանց կողքի և իրար վրա լցրած՝ մի նեղ ու ցածլիկ ծակ․ — մաստակը չթի կողքին, պապիրոսը ապակու մոտ և ձեթի տակառի առաջ․ Նեֆտի ու մազուտի ամաններն էլ, ներս մտնելուն պես քթիդ տակը:

Վո՛չ, Գալոյի տղան ծառայել էր քաղաքում, մարդ էր տեսել, խանութ կառավարել գիտեր: Ծոթեղենը կարգով, մաքուր դարսած խանութի մի մասում, առանձին, ապակեպատ դռնով բաժանմունքի մեջ․ իսկ այս մյուսը՝ ծառայում էր միմիայն մանրունքի—ապակեղեն, յերկաթեղեն, ուտելիք, ծխելիք․ մազուտը, ձեթն ու նեֆտն էլ ծածկված դռան յետևը:

Բացի դրանից, խանութի առջև գտնվող հովանոցաձև պատշգամբը ավելի լայն էր, գետինը ավազ

փռած, սյուները հարթ գունավորված, իսկ դռան կողքին Գալոյի տղան խնամքով շինել էր մի յերկար նստարան, վրան խոտով ու կտավով ոթոց կապած:

Այդտեղ էր, որ գյուղի մեջ մի պտույտից հետո վարժապետը հրավիրեց մեզ նստելու:

Իսկապես տնստրանն էլ այդտեղից վատ չէր: Ծիշտ մեր դիմացը, ցցվում էր շաքարի գլխի նմանող Ծաղկասարը—ամենաբարձր այդ բլուրը լեռնադաշտի մեջ, որի կրծքից դեպի վտակներ խոնարհվել գյուղը իր տների կղմինդրյա տանիքներով և գլխին, իբր աննման ցոպավոր զարդ, ուներ կարմիր, դեղին և կապույտ շերտերից խառն մի սալեր, որ վայելչորեն նոսրանալով ծայրերից, դույնզդույն յերիզներ էր դնում պուրակի կողերին, հասնում—դրվում էր ամենաբարձր կետին կռթնած ժայռերը և յերկնքի պարզ—կապույտ խորքի վրա նկարում գեղատեսիլ գունազանություն:

Ծաղկավետ զառիվայրի վրա յեր կանգնած գյուղը: Պարտեզների շարքը հասնում էր մինչև դաշտը կտրող վտակին. այնուհետեվ, վոչ ավելի քան յերեք վերստ լայնություն ունեցող արտերի ծայրից՝ ցցվում եյին անտառոտ լեռների կույտերը:

Յեվ ծաղի՛կ, ծաղի՛կ. բյուրավոր, անհաշիվ, անուշահոտ ու կենսապարար: Առավոտյան թարմ ոդի մեջ բուրում եյին նրանք արբեցնելու չափ:

Այնտեղ, ուր նստել եյինք, գրեթե գյուղի կենտրոնն էր. ցեխոտ ու աղտոտ մի փոքրիկ տարածություն, բացված յերեք գլխավոր փողոցների միացման կետի վրա: Հի՞նգ թե վեց եյին խանութները. յերեվում եյին—դերձակ, կոշկակար, այլեվ մի պայ-

տար, որ կքված մի անկյունում, պայտեր էր շինում:

Գյուղացիներ այդ պահուն, շատ չկային կանգառած հրապարակի վրա. յեղածներն էլ ցանուցրիվ կանգնել խոսում եյին այս-այն խանութի առաջ, մինչ սայլեր ճռճռալով, կովեր բառաչելով՝ ծանրորեն անցնում եյին մեր առջեվից:

— Ինչպե՞ս է, հավանո՞ւմ եք մեր գյուղը:

Առաջնորդել էր մեզ, ցույց էր տվել գեղեցիկ շրջակայքը, գյուղական սիրուն յեկեղեցին, հրավիրել էր ճաշակելու սառնորակ ու անուշահամ աղբյուրների ջրերը և այժմ ուզում էր մեր տպավորությունն իմանալ:

— Ո՛, այո՛, դրախտ է այստեղ. գոչեց վոգեվորությամբ ծերունի ընկերս—յերեվի այստեղ ապրողը չի մեռնի:

Սյունին կռթնած և մեզ ականջ դնող Գալոյի վորդին և վարժապետը ծիծաղեցին:

— Չի՛ մեռնի, ասաց վերջինս. ինչպե՛ս չէ, դուք խո տեսա՞ք մեր գերեզմանատունը:

— Այո, բայց շատ գերեզմաններ չկային:

— Նորն է. հինը լցվել է արդեն... Հիվանդություններ շա՛տ կան գյուղում, միամիտ յեղեք, այստեղ էլ մարդիկ մեռնում են... գուցե ավելի շատ, քան քաղաքում:

— Ի՞նչպես, հիվանդություննե՞ր այսպիսի չքեղ բնության մեջ...

Վարժապետը ժպտեց, հետո պահ մի մելամաղձոտ մնաց և ծերունի ընկերոջս դառնալով, ասաց.

— Ինչպես յերեվում է, դուք վաղուց է վոր քա-

ղաքից դուրս չեք յեկել... Այս բոլորը նոր և չափազանց սուր հակադիր է քաղաքի սեղմ ոգին, փոշուն ու ժխորին... Այո՛, բայց մե՞նք... չէ՞ որ մենք ծնվել ենք սրա մեջ, սովոր ենք տեսնելու այս ամենը:

— Բնական է, դիտեցի յես:

— Այո, բայց... շարունակեց նա. բայց այս բոլորն արդեն ձանձրացրել, վաղո՛ւց ձանձրացրել է մեզ. յեթե կուզեք՝ նույնիսկ անտանելի դարձել... Ձեզ նման յեկվորները միայն, յերբ սքանչացումն են արտահայտում, մի քանի րոպեյով հաջողվում են հրապույրի նշույլներ զարթեցնել մեր մեջ՝ դեպի հայրենիքի հողն ու անտառը... Անշա՛րժ, անկյա՛նք գեղեցկություն, միշտ միևնույն բանը՝ միևնույն տեղում, ամեն րոպե... Յեվ վերջապես ի՞նչ կա զմայլելու... Ճշմարիտ է, վարդ ու ծաղիկով լի յե յերկիրը, բայց չէ՞ որ փուշեր կան, որքա՜ն փշեր... Ո՛չ, մարդկանց կողմից՝ իրա կարգին-դա անհաշիվ է, ահավոր. սակայն հենց բնությունը ինքն էլ փշեր է արտադրում. արյունոտող, հոշոտող փըշեր...

— Դուք հոռետես եք. յերևի մշտապես անփոփոխ, այլև միակերպ կյանքը զզվեցրել է ձեզ:

— Այո՛... մշտապե՛ս միակերպ... Սկսում է մարդ նույնիսկ ատելություն զգալ դեպի այդ ամենը ...Մեր պարտեզն օրինակ. մտնել չեմ կարող. ծնված օրից նա ամեն օր աչքիս առջևն է իր սիրտ խառնող միաձևությամբ... Գոնե հնար լիներ փոփոխելու, ուրիշ ձև տալու նրան...

— Բարեզարդեցեք, նոր ծառեր տնկեք, մշակեցեք... ինչ՞ն է խանգարում ձեզ:

Վարժապետը գլուխը յերերցրեց, հետո դառն ժպիտով ձեռքը պարզեց դեպի դաշտ ու լեռ և ասաց.

— Ի՞նչ եք տեսնում այդտեղ...Անտա՛ռ, յեղեվնիների պուրակ, հետո՝ ծաղիկ, վոչ թե մի քանի, այլ միքանի հարյուր տեսակ, բուրմունքով օդը լի. թռչունների ճռվողյուն, վտակների կարկաչ... Այնպես չէ՞, վոր այդ բոլորը բանաստեղծական է, դրախտային... Ա՛հ, բայց, մնացեք ելի մի քանի օր և կտեսնեք թե ի՛նչն է խանգարում մեզ բարեզարդելու մեր սիրտ խառնող միաձև բնությունը... Հանկարծ մեկ էլ տեսար մթնեց ամեն կողմ, հալված կապարի նման ամպերը յեկան ծածկելու արև, յերկնակամար, ապա մի խոնավ, զզվելի անձրև, այդ անիծյալ հյուսիսից գալով, տեղա՛ց ու տեղաց...Վո՛չ թե մի ժամ կամ գոնե մի օր... Վո՛չ, այլ յերբեմն մի ամբողջ շաբաթ՝ օր ու գիշեր, նույնիսկ յերկու շաբաթ... մշո՛ւշ, խոնա՛վ, ցե՛խ, ճահիճ շուրջդ, տանդ առաջ, նույնիսկ տանդ մեջ...Յեվ ամեն հրապույր կորսվում է, ամեն զվարթ դեմք մթագնում, ծաղիկներն էլ, կարծես, անհետանում են ճղփացող թացության մեջ, մարդիկ ջղային են դառնում, ատում բնությունը, ատում իրար... և խմում են, խմո՛ւմ... ի՛նչ արած, պետք է վերջապես մի բան անել մոռանալու համար, վորովհետև դա մեկ, յերկու անգամ չէ, այլ ամբողջ տարին, ամեն տարի...

Ու լռեց, ծնոտը ձեռնափայտի կոթին կռթնցնելով:

— Իզուր եք այդքան տխուր գույներ փռում մեր

լեռնալանջի վրա, վարժապետ, խոսեց Գալոյի վորդին սառը, անտարբեր չեշտով. լավ որեր էլ ունինք... ամեն տարի խո այսպես չէ՞...

— Մի՛շտ. չեշտեց վարժապետը. մեր աշըղ Մարտիրոսն իրավունք ունի, յերբ յերգել է թե՝ «Տարին 40 որ արեվըն յերես չի տեսնում մեր յերկիրը» ...

— Ինքը, ինարկե, չի տեսնիլ, վորովհետեվ կույր է. ժպտեց Գալոյի վորդին. բայց դե՛հ, վոր 40 որ չլինի, այս բոլորը—պտուղ, ցորեն, գարի... ի՞նչպես կաճի... Դուք դրան մի՛ լսեք,— դարձավ նա մեզ— այսոր ինչպես յերեվում է, քեֆը տեղը չի:

Այս բոլորը մի այնպիսի տարորինակ հեգնախառն ձեվով ասաց նա, վոր նոր միայն սկսեցի ուշադրությամբ զննել այդ յերիտասարդին: Անհասկանալի յեր, ծաղրո՞ւմ եր, թե հիրավի, դեմ խոսում վարժապետին:

Կռթնել եր սյունին և կեցվածքի ու ժպիտների մեջ մի ինչ-վոր գյուղի համար՝ անսովոր բան ուներ:

Գյուղացու նման էլ չեր: Հագել եր մաքուր և լավ. նույնիսկ ոսլայած շապիկ, թեյեվ առանց վըզկապի:

Չնայելով վոր ակնարկը վարժապետին եր՝ աչքերի անկյուններում հազիվ նշմարվող հեգնական ժպիտի ծալքերով, սակայն հաճախ դառնում եր դեպի այս—այն կողմ հավաքվող, կամ այս—այն կողմից անցնող գյուղացիների, և սուր, հետախուզող, նրանց շարժումների միտքն ըմբռնել կամեցողի ուշադրությամբ՝ հետեվում եր հրապարակի վրա յեղածներին:

Ուզեցի խոսեցնել նրան, ըմբռնելու համար այդ տիպարը:

— Լավ խանութ ունիք, ասացի, իսկ առեվտո՞ւրը ինչպես:

— Ի՜հ, արեց նա արհամարհությամբ,— յեթե այս գյուղացոց նայեյինք, մեր որը որ չեր լինիլ:

Ու խուսափեց ինձ նայելուց:

— Պարոն Արշակը, նկատեց վարժապետը—առեվտուր ունի շատ գյուղերի հետ. գալիս են ճոթ են տանում և փոխարենը իր ժամանակին յուղ, պանիր, ցորեն... Բացի դրանից, հայրը կարողության տեր է. ունի հողեր, զանազան յեկամուտներ...

«Յեկամուտ» բառը նա չեշտեց: Զգացի, բայց ձայն չհանեցի. իսկ Արշակը ուսերը թոթվեց և առանց առարկություն անելու՝ ակնարկը դարձրեց մի կողմը:

Մինչ այդ ծերունի ընկերս, վոր անշարժ նստել և մանավանդ տխուր խոսքեր լսել յերբեք չեր սիրում, յելավ, մոտ գնաց գյուղացիներին և նրանց հետ խոսակցության բռնվեց:

Ահա այդ միջոցին եր, վոր մի ձիավոր, դուրս գալով յեկեղեցու կողմի փողոցից, կանգ առավ հրապարակի վրա:

Նրա յերեվույթը անմիջապես շարժում առաջացրեց ամեն կողմ:

— Վա՜յ, Ալեքսեյն է... ձայնեց իսկույն Արշակը և մի քանի քայլ դուրս գնաց դեպի ձիավորը:

Վարժապետն էլ յելավ ու դիմավորեց:

Յեկողը անտառապահն եր՝ հրացանը ուսին և փամփշտակալը կրծքի վրա:

II

Յուրաքանչյուր պաշտոնյա, լինի նույնիսկ անտառի հասարակ պահապան—և յեթե կուզեք այս վերջին տեսակի ստորին պաշտոնյաները մանավանդ—կարեվոր անձնավորություն ե գյուղում: Պիտի գյուղացի լինել և կամ գյուղում ապրելով թափանցել գյուղացոց ներքին կյանքի մեջ, ըմբռնելու թե ի՛նչ մեծ նշանակություն ունի մի այդպիսի պաշտոնյայի տխուր կամ ուրախ տրամադրությունը՝ գյուղացոց կյանքի համար:

Յեվ գյուղացիք ամեն ջանք ի գործ են դնում մի՛շտ ուրախ տրամադրության մեջ պահելու նրանց:

Այդ եր պատճառն ահա, վոր հրապարակի վրա կանգնած գյուղացիների մեջ իսկույն մի շարժումն ընկավ: Դիմացի Սարոենց Թորոսի խանութից կաղնիկաղ դուրս նետվեց նախ մի կլորիկ-հաստլիկ մարդ և վազեց դեպի ձիավորը: Այս կողմից ել Գրիշոենց Մկրտիչը ժպիտը դեմքին՝ ցցվեց իր խանութի շեմքին, իսկ վարժապետը ժպտուն, ձեռքը պարզած՝ գնաց մինչեվ ձիավորի ասպանդակի առաջ:

Ձիուց իջնելուն պես, անտառապահը շրջապատվեց· Սարոենց Ջավադը լայն ծիծաղով պարզեց նրան իր ձեռքը և հնչեղ ձայնով կանչեց ռուսերեն.

— Ա՛յ բարեվ քեզ, Ալեքսե՛յ, ի՞նչպես յեղավ վոր մեզ ել հիշեցիր...

Մտերմական և սիրալիր դեմքեր ստացան ամենքը, ոգնեցին իջնելու. մեկն անմիջապես ձին տարավ կապելու և բոլորն ուղղվեցին դեպի Գրիշոենց Մկրտչի խանութը:

— Ե՛հ, գործ կա. ասաց պահապանը,—պրոտոկոլ (արձանագրություն) պիտի գրեմ:

— Ա՛յ, ա՛յ, ծիծաղեց վարժապետը—ի՞նչ «յեղուլ,— կա յա ես գողաչալ ել···

— Տո, թո՛ղ ե՛, մե՛կ. ձայնեց Ջավադը—հլա մեկ գնանք մեզ մոտ զակուսկի[1]) անենք··· Հը, Ալեքսե՛յ, գնա՛նք. նոր արաղ ունեմ:

— Միեվնույն ե, ժպտեց պահապանը—Մկրտիչն ել կունենա:

— Ունեմ, իհարկե, կանչեց Մկրտիչը—նոր գինի յել ստացել եմ:

Հետո բոլորն ել, վարժապետն ու անտառապահը ամենից առաջ՝ մտան խանութ, մինչ կաղլիկը պահ մի հեռացավ, խանութը իր յեղբոր վորդուն պահ տալու:

— Աղա՛, ասաց նա իր խանութի առաջ կանգնող գյուղացոց—Բախշիենց Մուրադի համար յեկած կլինի. վազեք ասեք գերանները պարտկի, մինչեվ մենք սրա գլուխը քիչ տաքացնենք...

Մնացի մենակ՝ նստած խանութի առաջ և զարմացած դիտում եյի այդ ամենը: Բայց յերկար չմնացի այդպես, վորովհետև քիչ հետո վարժապետը դուրս թռավ խանութից, յեկավ դեպի ինձ և ասաց.

— Համեցե՛ք դուք ել, մի քիչ կխոսենք այնտեղ. յեկողը մեր անտառապահն ե:

Խանութի յետեվում մի փոքրիկ սենյակ կար, ուր իսկույն բոլորս ել տեղ բռնեցինք՝ մեծ, աղտոտ

---

[1]) Նախաճաշ:

սեղանի առաջ: Վարժապետը մոտ գնաց Մկրտչին ու մի բան ասաց նրան և ահա քիչ հետո սեղանի վրա յերևաց նախ ողի, հաց ու պանիր, հետո խոշոր շշերով գինի:

Ինձ ծանոթացրին անտառապահի հետ:

Գյուղի փայտ տվողն ե. կամացուկ բացատրեց վարժապետը: Յեթե նրան չշոյեյին, ով գիտե, ամբողջ ձմեռը կարող եր առանց փայտի թողնել գյուղացուց: Այսինքն, իհարկե, տոմսակ ունեցողներին, նշանակած չափով թույլ կտար կտրելու, բայց ախր բոլորը խո տոմսակ չունեյի՞ն, և վերջապես վո՞րտեղից գյուղացին կարողանար վճարելով ունենալ տախտակացու, գերան... ծախելու փայտ... Ապրե՛լ եր հարկավոր, ուստի և պետք եր շոյել, ուտեցնել— խմեցնել, յերբեմն ել ափը շոշափել, խաղեցնել...

Թեյև գյուղացիների հետ անտառապահը համարձակ, գրեթե իշխանաբար եր վարվում, բայց ինձ հետ նա համեստաբար սկսեց: Ատամների միջով մի քանի ռուսերեն բառեր դուրս թողեց և ձեռքը տարավ ողիի բաժակին:

Ռուս եր. արտասանությունը և սոսկալի ռուսերենն ել այդ ցույց տվավ:

— Գիտե՞ք, դարձավ ինձ այդ ժամանակ վարժապետը, նախապես պահանջելով լռություն սենյակի մեջ յեղողներից—մեր Ալեքսեյը, պարո՛ն Յերվանդ, մի շատ լավ, ընկեր տղա յե. թող ձեզ ծանոթացնեմ նրա հետ... վաղո՛ւց նա մեր անտառների գլխավոր պահապանն ե (об'ездчик), բայց դեռ վոչ մի վատություն չենք տեսել և հույս ունենք, վոր այս անգամ ել չենք տեսնիլ նրանից...

Պահապանը ժպտեց և գլուխը ցնցեց: Թեյեվ հայերեն եր խոսում վարժապետը, բայց նա հասկանում եր շատ լավ:

— Վո՛չ, ներեցեք... շարունակեց վարժապետը— ինչո՞ւ յես ծիծաղում, Ալեքսեյ, սո՞ւտ եմ ասում... մինչեվ որս դեռ վոչվոքի վո՛չ կացինն ես խլել, վո՛չ ցեպը (շղթան) և վոչ ել մի ենպես վնաս տվող պրոտոկոլ (արձանագրություն) կազմել... Դուք ասե՛ք, ա՛ խալխը, քի՞չ լավություն եք տեսել այս մարդուց... վո՞ր մեկդ իր ուզածի չափ փայտ չի ունեցել, վո՞ր մեկիդ մերժել ե՝ ե՛լ գերան, ե՛լ խվորոստ[1])... Այդպես ե, պարո՛ն Յերվանդ, յես չեմ ստում, Ալեքսեյը մեր բարեկամն ե, խմենք առաջ մեկ նրա կենացը...

Ասաց և ձեռքի մեծ բաժակով ողին մի ումպով դատարկեց, ու յերբ նստում եր՝ ավելացրեց ժպտելով.

— Անտառի մեջ, պարո՛ն, այն յեղեվնիների կողքին մի սքանչելի տեղ խրճիթ ունի՛, վոր քեֆդ գա... Մի որ կգնանք քեֆի. մի լավ գառը կտանենք... Այնպես չե՞, Ալեքսեյ:

— Համեցեք. ասաց պահապանը և նույն կերպով պարպեց մեծ բաժակով ողին:

Սոսկացի յերբ տեսա, թե ինչպիսի՛ դյուրությամբ ամենքը դատարկեցին թեյի բաժակների մեջ կեսից ավելի տեղ բռնող ողին: Այն ել ի՞նչ ողի:

---

1) Յերկար ճյուղեր, վորոնցից գյուղերում ցանկապատներ են շինում հաճախ:

Յերբ բերանս առի մի կում—կարծեցի թե կրակ եր, սպիրտ եր ամբողջովին:

Բանից դուրս յեկավ, վոր ցորենի ողի յեր այդ, գյուղացոց պատրաստածը: «Գիժ հացի» ողի: Լեռնադաշտը բուսցնում եր ցորենի հետ խառն, ցորենանման ինչ վոր կանաչ հատիկ: Նեղ տարին այդ հացից ուտում եյին անգամ: Մի գյուղացի պատմեց ինձ, վոր այդպիսի հացը «գժվացնում ե»: Բայց իսկապես՝ նա արբեցնում եր ավելի վատ, քան վոգելից ըմպելիները: Ահա այդ իսկ հացից շինած ողին եր, վոր այժմ այնքան առատությամբ խմում եյին գյուղացիները:

Գյուղում գինետուն չկար, վո՛չ: Առաջ յեղել եր, բայց, ինչպես վարժապետը բացատրեց, վորովհետև շատ անկարգությունների, կռիվ և աղմուկի պատճառ եր դառնում, իր և քահանայի միջնորդությամբ ու ջանքերով՝ փակվեց:

— Իբր թե շա՞տ լավ արիք. մեջ մտավ մի գյուղացի—հիմի պա՞կաս ենք խմում, պակա՞ս ամեն կիրակի կռվում, ծեծկվում, միմյանց հայհոյում:

Հիրավի, ավելի վատ եր յեղել: Ամենքն ել խոստովանեցին: Առաջ գոնե մաքրած և թույլ ողի եյին խմում. իսկ ա՞յժմ... բայց գինետան փակվելն իր յերկար պատմությունն ուներ:

— Մի՛ հարցնիլ թե ինչու յե փակվել կամ ինչպես, պարո՛ն, հորդորեց ինձ մի գյուղացի. փակվելն իր աստառն ուներ. ոյինե՛ր յեղավ վոր...

Վարժապետը, վոր լսում եր, վոստնեց տեղից:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ամեն բան չես պատմում. գոչեց նա—ինչո՞ւ յեք թողնում վոր այս մարդիկը սխալ

հասկանան... Ա՛յ, թողեք յես պատմեմ ճիշտը, ուսումնական մարդիկ են՝ թող գտնեն...

Յեվ վերարկուն ու գլխարկը միշտ հագին, խմած յերկու խոշոր բաժակ ողիից գլուխը տաքացած՝ վոտքի յելավ մի ձեռքին հաց ու պանիր, մյուսումը ողի և թեթևակի կակազելով ասաց.

— Ա՛ խալխը, դո՛ւք ել լսեցեք...

Սենյակի մեջ դարձյալ տիրեց լռություն. կարծում եյին թե վարժապետը մի նոր կենաց ե առաջարկելու:

— Ըստեղ, խոսեց նա—ելի կրկնում են թե մեր միկիտանի (գինետուն) փակվելը աստառ ունի, վոր ոյիներ յեղան... ես քանի՞ մեկ, ա՛խպեր. դուք ու ձեր աստվածը, դուք չե՞յիք վոր, ձեզնից շատերը չե՞յին վոր, գիշերով յեկան ինձ մոտ, խնդրեցին, ստիպեցին, պրիստավին խնդիր գրել տվին, թե միկիտանը կռիվ ա քցում, ղալմաղալ... Հը՞, սո՞ւտ եմ ասում...

— Ջե՛, ճիշտ ա, ինչի՞ սուտ. ասաց մի գյուղացի—դե ենա՛, տեսաք վոր Սարոենց ձեռքն եր մնալու միկիտանը, ձեր ցեղը մեջ ընկավ, խնդիր գրեցիք, դու ել ուսումնարանը մեջ տեղ քցեցիր...

— Հլա՛ տե՛ս. հլա՛ տես... բարկությունից կարմրեց և ընդհատեց նրան վարժապետը—ըտենց մի խոսալ, ա՛ Կարապետ... ինչի՞, յես վարժապե՞տ եմ, թե՞ միկիտանչի... իմ ինչի՞ս եր պետքը միկիտանը, յա ինձի՞ ինչ...

Փոքրիկ սենյակը հետզհետե լցվում եր գյուղացիներով: Մեծ մասը յերիտասարդ, նոր սերունդն եր և բոլորն ել, առանց բացառության՝ «կարտուզնե-

րով», այլ և հաղուստը փոքրիշատե յեվրոպական հաղուստի նմանեցնելու հավակնությամբ: Ով տե՛ղ էր գտնում—նստում էր, ով չէ՝ կռթնում էր պատին, կամ պպզում մի անկյունում: Մի ինչ վոր կարճահասակ ծերունի էլ, վոր իր սպիտակ մեծ մորուքով շատ նման էր հնամյա նահապետի, զվարթ ծիծաղը դեմքին ներս խծկվեց, վորոնեց տեղ, հետո մագլցեց լուսամուտի քիվի վրա և խոշոր փափախը ծռած, յերկար փայտը ծնոտին դեմ տված՝ սկսեց լսել:

Չնայելով վոր լսում էյի վարժապետի խոսքերը, բայց և զննում էյի ներս մտնողներին: Այլազան էր ամբոխը: Կային նույնիսկ չեկեր. կարմիր, հրաշեկ կարմիր մազերով յերիտասարդն էլ իր գլուխը դուրս էր ցցել յերկարահասակ ու խոշոր քթով Գրիշոենց Մկրտչի յետեվից և ինձ էր նայում:

Յեվ այդ բոլորը տգեղ էր, խիստ տգեղ. դեմքերը գրեթե թոռմած ու դեղնած, չոր, վաղաժամ կնճիռներով լի, մեծ, այլանդակ քթեր, կոպիտ և հանդուգն դծեր: Ավելացրեք դրա վրա և այն, վոր շատ-շատերի հայացքները արտահայտում էյին քծնախառն աներեսություն: Միմյանց ակնարկներ անել, աչքով-ունքով շարժումներ, անտանելի հայհոյանքները, իբր շատ սովորական բառեր շպրտել միմյանց, խոսքերը «համեմել» լկտի համեմատություններով, այլև ճղնել անպատճառ, թեկուզ տափակ, սրախոսություններ անելու...

Հին սերնդի մեջ սակայն, նկատեցի քիչ ու շատ համակրելի դեմքեր: Յեվ յերբ ծերունի ընկերս ներս մտնելով՝ բերավ իր հետ գյուղացիների նոր մի

խումբ—յերեվան յեկան 5–6 ծերունիներ՝ հին հագուստով, բոլորն էլ խոշոր փափախներ գլխներին: Ահա օրինակ, այդ վաթսունամյա անձը, վոր մոտեցավ, ձեռքը պարզեց ինձ և դեմքի վրա անկեղծ սիրալիրության ժպիտ՝ բարի գալուստ մաղթեց: Համակրելի յեր նաեվ այդ մյուս ծերունին, վոր իր խոշոր թաթերի մեջ սեղմեց պարզած ձեռքս ու ասաց.

— Բարի լինի գալուստդ, պարո՛ն:

— Շնորհակալություն:

— Մենք շատ ուրախացանք, յերբ լսեցինք, վոր ձեզ պես կրթված մարդիկ ուզում են մեր գյուղում ապրել: Յեթե վոչի՛նչ էլ չանեք, ձեր այստեղ լինելն էլ մեզ օգուտ է. ասած է՝ վոր հոտավետ մի հատ խնձորը թեկուզ դնես կոշտ քարերի մեջ, հոտից նրանց էլ կկպչի...

Պահ մի վարժապետը ստիպվեց ընդհատել իր խոսքը, ներս մտնողների բարեվների վերջին սպասելով: Բայց յերբ տեսավ, վոր նոր յեկողները խոսակցության նոր նյութ մեջտեղ բերին, ձեռքի ողին մի ումպով և գայրացած կուլ տվավ, հացը բերանն առավ, մի բան մռմռաց քթի տակին, նստեց և բաժակը դարձյալ լցրեց:

Այնքան անկեղծ ձեվով ինձ հետ խոսող ծերունուն պատասխանել չհաջողվեց ինձ, վորովհետեվ դարձյալ մի նոր խումբ ներս լցվեց:

— Պա՛, պա՛... ես ինչքա՛ն լցվել եք ըստեղ... լսվեց դռան մեջից մի խոշոր ձայն և յերեվան յեկավ Սարոենց Թորոսի կաղլիկ ու հաստլիկ յեղբայրը,

համարձակ ճղեց բազմությունը, ձեռքը ինձ պարզեց ու ասաց.

—Խնդրեմ ծանոթանանք... Սարոյան Ջավադ:

Ցեվ հպարտությամբ վիզը ցցեց ու գյուղացիներին նայեց: Կարծես ուզում էր ասել թե՝ «Հը՞, վո՞նց է, կարծում եք չգիտե՞մ քաղաքացոց ձևերը»:

— Լավ ձայն ունի, քմծիծաղով դիտեց վարժապետը:

— Ինչի՞ չէ. ասաց կոկոզավիզ կաղլիկը—յերգեր էլ գիտենք...

Ու ճգնեց նստել: Տեղ չկար, բայց սրան հրեց, նրան հրամշտեց և ճիշտ դիմացս, անտառապահի կողքին խծկվեց—տեղավորվեց:

Գեր, լայն դեմքով և հանդուգն հայացքով մի յերիտասարդ էր այդ, վոր միշտ բարձրաձայն, գրեթե գոռալով էր խոսում. ճգնում էր ցույց տալ, վոր քաղաքում շատ է ապրել, քաղաքացիների դեմքը նրան անսովոր չէ, վոր ինքը կոպիտ և անտաշ գյուղացիներից շատ է բարձր, անփորձ ու վախկոտ չէ, այլ վոր վոչվոքից վախ չունենալով, կարող է միշտ բարձր խոսել:

Հագել էր մեզ նման, մեջքի և վարտիքի վրա այլազան կարկատաններով, ինչվոր տափակ և աղտոտ «կարտուզ» կոխած մինչև ականջները, մորուքը խնամքով ածիլած, ընչացքի ծայրերը գոռոզաբար դեպի վեր վոլորած ... Վորի՞ց վախ ուներ. օրե՞նք չգիտեր, ի՞նչ է, մարդ չէ՞ր տեսել, քաղաքացոց հետ չէ՞ր նստել-կանգնել: Ցեվ այդ՝ նա շեշտում էր միշտ. և վորպեսզի գյուղացի անտաշները

չմոռանային յերբեք, կրկնում էր գոռալով ու ձեռքի կարճ փայտը ուժգնորեն իջեցնում սեղանի վրա...

Բայց, մտնելուն պես, սկսեց անտառապահի հետ խոսել:

— Նո՛ւ, մոյե պոչտեննիե[1]): Ալեքսի, խմենք: Քե՛ֆ անենք... Ճշմարիտ է, հերթը յեղբորս է քեֆը սկսելու և հարբելու, բայց դե՜հ, վո՞նց կլինի վոր դու մեզ մոտ գաս և յես մի լավ՝ չհարբեմ... Նալեյ, տո՛, պոլնի նալեյ...[2]) Աղա՛, սարսաղ,—դարձավ նա խանութպանին,—ո՞ւր ես թողել ես անտաշները ներս լցվին... Քաշվե՛ք, քաշվեք. ի՞նչ կա, մարդ չեք տեսել... գե՛ղացի յեք է՛է՛... հենց վոր մի քաղաքացի յեք տեսնում... տո՛, քաղաքումը շաբաթներով ապրեք, մարդ տեսեք, վոր ըղենց բեզ զապրոսա[3]) ներս չխծկվեք... յա թե չէ՝ աղա՛ վեր կացեք մեր տունը գնանք, ստեղ սկի վոզդուխ[4]) էլ չկա...

— Դե լա՛վ, ձե...ձենդ կտրիր քիչ...կտրի՛ր... կակազեց վարժապետը կիսովին յելնելով և դատարկեց ողին. Թող ուրիշներն էլ խոսան...

Ու բոլորովին յելավ: Գինետան հարցը վիրավորել էր իրեն: Ուզեց նորի՛ց նույն նյութին դառնալ:

— Մոյե պոչտեննիե՛... ինչո՞ւ չէ. ճչաց Ջավադը,— բայց ո՞ւր ես եղպես շուտ կակղել, վարժապետ. ա՛յ, թող մեկն էլ մենք կոնծենք... ընենց... ես բուլթիլկան[5]) լցրու, տո՛...ի՛մ հաշվին. Ալեքսեյը

---

1) Հարգանքներ. 2) Լցրու, լիքը լցրու. 3) Առանց հարցնելու. 4) Օդ. 5) Շիշ

վողջ կենա... եսոր էլ մխ չեն մորթել, վոր մի խորոված էլ անենք...

— Են եյի ասում. ուշք չդարձրեց նրան և սկսեց վարժապետը,— չէ՛, ա՛ խալխը... սպասեցե՛ք... Կարապետը ասում եր վոր միլլիոնը կո... կողպել ենք, վորովհետև...

— Դե լավ, նու աստա՛վ[1])... ընդհատեց նրան անտառապահը,— լավ եք արել կողպել եք. ի՞նչ ե, ես պակա՞ս միլլիոն ա...

— Չե՛, չե՛, Ալեքսե՛յ, պաստոյ[2])... գոչեց վարժապետը և թևովը մեծ շարժում գործեց,— ինչո՞ւ... թո... թող պարզվի, չա՛տ են խո... խոսում...

— Ադա, կանչեց այն կողմից Հայր Աբրահամին նմանող ծերունին կանացի սուր ձայնով. ես ինչ ջըհուդի ժամ չինեցինք ըստեղ, ձեր տունը չինվի... կացեք, մեկ մեր ղոնաղները խոսեն, քաղաքից են յեկել, թազա խաբարներ կիմանան...

— Հա՞... նո՛ւ...զիջավ վարժապետը, վոր արդեն հարբել եր,— լա՛վ, թո՛ղ պարոնները խոսան... Հըմ, ինչո՞ւ չե, թազա խա... խաբարնե՛ր... համեցե՛ք...

Ու ձեռքի բաժակը դարձնելով անտառապահի բաժակին, յերկուսն էլ միմյանց ժպտելով խմեցին:

Առհասարակ անտառապահը քիչ եր խոսում: Ըստ յերևույթին՝ քաշվում եր մեզնից: Շուտով սակայն Ջավադը դարձավ դեպի նա և սկսեց ցած ձայնով մի

---

1) Թող. 2) Սպասիր.—բոլորը ռուսերեն բառեր են աղավաղված:

քան պատմել. վարժապետը ընկերիս հետ խոսակցության բռնվեց և այսպես, խոսակցությունը ընդհանուրից մասնավորի դարձավ:

— Դե՛հ, պատմիր տեսնենք, պարո՛ն. դարձավ ինձ ծերունի յերեսփոխը. պատմիր նոր բաներ... ականջ մի՛ անիլ շատ եդ մեր ջահիլների ափեղցփեղ խոսքերին. մի քիչ շատ են քաղաքի յերեսը տեսել...

III

Այդպես եր, վոր սկսեց մեր ծանոթությունը գյուղացոց հետ, գինետան մեջ, ողիի և գինու շիշերի առաջ: Պաշտոնապես միայն Սարուենց Ջավադն եր, վոր ձեռքը պարզելով, քաղաքացու նման, իր անունն ու ազգանունն եր տվել: Մյուսները բոլորն էլ խոսակցության բռնվեցին և ահա ամենքի հետ էլ ծանոթացանք:

Սկզբում վո՛չ վոքի անունը չգիտեյի: Յեվ ի՞նչ հարկ իմանալ: Կնճռոտ, չոր դեմքեր եյին, վոր միմյանցից սակավ եյին զանազանվում: Ամենքն էլ մեզ նայելիս՝ նախ մեր շորերն եյին զննում, ապա, խորին ուշադրությամբ լսում մեզ, դիտում մեր դեմքի գծերը, կարծես կամենալով իմանալ թե ի՞նչ տեսակ մարդիկ եյինք մենք: Իսկ յերբ բավական լուռ քննել եյին, կամաց-կամաց, խորամանկ, պտուտավոր հարցուփորձերով տեղեկանում եյին թե վո՞րտեղացիներ եյինք, քաղաքում ի՞նչ գործերի տեր, այնտեղ սեփական տնե՞ր ունեյինք, թե՞ վարձվորներ եյինք, ամուսնացա՞ծ, ընտանիքի տե՞ր... և թե ի՞նչ նպատակով եյինք գյուղ գալ ուզում— ամառա-

նո՞ց, քեֆի՞ համար, թե՞ վորևէ գործի ձեռնարկելու, չահ սպասելու... Ցեվ յեթե գործի ձեռնարկելու՝ ի՞նչ եյինք մտադիր անելու. որինակ, մեղունե՞ր ունենալ, կաղա՞մբ ցանել, ծա՞ռ տնկել... բայց դրանք խո բոլորն էլ գիտեն...իսկ նո՞ր, նոր բա՞ն... ուրիշ վոչի՞նչ առայժմ: Բայց չե՞ վոր այդ բոլորը վոչ մի յեկամուտ չեր բերիլ, մարդ դրանով մի՞թե կարող եր փող աշխատել... Մտադիր չեյինք հարստանալ, փող չահե՞լ... Զարմա՛նք: Ուրեմն ինչո՞ւ եյինք յեկել: Գյուղի կյանքը ուսումնասիրելո՞ւ, գյուղայոց ողտակար լինելո՞ւ... ճի՞շտ եյինք ասում, թե՞ ծիծաղում եյինք իրենց վրա... Ցերեվի քեֆի համար եյինք յեկել... իսկ յեթե ծառեր եյինք ուզում տնկել, ուրեմն ի՞նչ հողի վրա: Ընկերությա՞մբ... Ինչո՞ւ չէ. վորքա՞ն պիտի տնկեյինք: Հինգ–վեց հարյո՞ւր, իսկ հետո ծառերը հողատիրո՞ջը կմնար... Ո՞վ ասես վոր իր հողը, պարտեզը չտար...

Ցեվ այսպես, գդուշավոր, մանվածապատ հարցուփորձով իմացան ամեն ինչ: Իսկ մեր տված միամիտ, պարզ և անկեղծ ճշտությամբ, պատասխանների ժամանակ՝ դուք պիտի տեսնեյիք թե գյուղացոց մեջ ինչպիսի մնջկատակություն եր տեղի ունենում: Ակնարկներ միմյանց, ժպիտներ, այլև միամիտների իրենց ճանկերի մեջ ձգողների սարդային արտահայտություններ:

Ու ինչ վոր, մեր մտադրությունները գիտենալուց առաջ վատ եյին ասել ինձ, հողի մասին, վարպետորեն սկսեցին յետ առնել, այժմ գովում եյին

ևև, բարեբեր հողը, սքանչելի ոդը, յերկրի բեղմնավորությունը...

Յերկար չտևեց մասնավոր խոսակցությունը: Միմյանց սեղմելով մեր գլխի վրա շրջան կազմող հետաքրքիրները միասմի ցրվեցին: Գիտցել եյին ինչ վոր պետք եր. մնում եր այժմ տեսնել թե վորպիսի ձևերով կարելի յեր վոստայնն ընկած ճանճերիցը ոգտվել: Պարզ է,—յերևի մտածում եյին նրանք,— անշուշտ քաղաքից ձանձրացած՝ փող ունեին և յեկել են ինչ վոր յերազներ իրականացնելու... գուցե և, ո՞վ գիտե, նոր ձեռնարկություններ պիտի անեն և առայժմ ծածկում են... Համենայն դեպս իրենց պետք եր զգույշ, աչալուրջ մնալ և վորսը ձեռքից չփախցնել... Այն մեկը— ծերունին, միամիտ մարդ եր յերևում. նրան խաղացնելն ու խաբելը դժվար չեր. իսկ այս մյուսը դեռ լուռ եր, քիչ եր խոսում, բայց չար մարդ եր նկատվում...

Ցեվ այս բոլորը յես վոչ միայն միասմի կարդում եյի նրանց դեմքերի վրա, հասկանում եյի վարմունքներից, այլև մեկ–մեկ էլ ականջիս եյին հասնում հատուկտոր դատողություններ, նկատողություններ, վորոնց դժվար չեր կցել իրար և վորոշ յեզրակացության հասնել:

Ծերունի ընկերոջս անունը իսկույն «պապաշա» դրին: Անողը Ջավադն եր: Համարձակորեն շատ շուտով մտերմացավ նրա հետ. միասին խմեցին, իրար ծիծաղելի պատմություններ արին:

Ու խմում եյին: Հարբել եյին շատերը. իսկ մի ինչ վոր գլուխը կախ և քիթը մինչև կարմիր պարոն էլ — պարոն ասացի, վորովհետև ճգնում եր նա

այդպես ցույց տալ իրեն— անընդհատ գինի յեր խըմում, չիչեր դատարկում:

Ցերեւփոխը միայն նստած մնաց ինձ մոտ. մյուսները հեռացան և խմբեր կազմեցին:

— Այդպե՞ս... ասեց ծերունին, մի վայրկյան լուռ խորհելուց հետո,—ուզում եք դո՛ւք էլ մեզ նըման՝ մեր հողը մշակել... յեթե իմանամ վոր քեֆի համար է, ամառը հենց անցկացնելու— խոսք չունեմ. բայց, յեթե ուզում եք շահվել... Սահակենց Մանուկը ձեզ, օրինակ, չի՞ խոսել մեր հողի, մեր մարդկանց կամ ոդի մասին...

— Խոսել է, ասացի յես, մարդիկը վատ չեն յերեվում, հողն էլ լավ է թվում, իսկ ոդը, ասում են, վոր անձրեվային է:

— Անձրեվայինը իրա կարգին. բայց ասե՞լ է, վոր մեր հողը առանց լա՛վ, շա՛տ լավ աղբելու՝ բան չի բուսցնիլ, վոր անձրեվը, կարճատև ամառը...

Բայց Ջավադը, վոր յերևի աննկատելի՝ լսում էր մեզ, ականջը մեր կողմն էր, հանկարծ ընդհատեց ծերունուն և գոչեց.

— Ինչի՞ ես եդպես խոսում, ա՛մի. ինչի՞, մեր հողի ի՞նչն ա... պակա՞ս բան ա բուսցնում՝ վոր բեջարես[1]... բաս եսքան ծաղիկները, անտառը, ջուրը... ճիշտ չե՞մ ասում, պապաշա՛:

Ընկերս ծիծաղեց և ասաց.

— Դե իհարկե. մենք էլ խո տեսնում ենք... Յեվ վերջապես ի՞նչ կա, աղբ քի՞չ ունիք. ամբողջ գյուղը— ինքը մի՞թե հենց աղբի մեջ չի նստած...

---

1) Վոր կարողանաս, հասկանաս:

Շատերը ծիծաղեցին, սրախոսություն համարելով: Ջավադը ամենից բարձր քրքջաց, մինչ մի գյուղացի մոտեցավ ծերունի խրատչին և ասաց.

— Ամի՛, քաղաքացոց սիրտն ի՞նչի յես կոտրում... իրանք խո մեզանից լավ գիտեն, թող տեսնեն, էլի՛:

— Բան չեմ ասում, ի՞նչ եմ ասում,— չփոթվեց ծերունին,— յանի ասում եյի, վոր առաջուց իմանան...

— Եդ քո ի՞նչ բանն ա... կանչեց նրա վրա Ջավադը,— քո հողը լավը չի, իմը չա՛տ լավն ա, ի՛մը կտամ:

— Հա՛, բա՞ս. մեկը քո հողն ա լավ, մեկն էլ իմը:

— Դե՛, դե՛, անսաս[1]) տեղդ նստի՛. ձայնեց Ջավադը բարկությամբ,— մեր հողին վատ ասելը բերնիդ չի ընկել... լավն են ա, ամի՛, վոր դու չխոսես... իմ պապաշան— դարձավ նա ընկերիս— քեզնից էլ ու մեզնից էլ լավ գիտի... Աղբ էլ վոր ուզենա, այ, մեր տան առաջը մի սարի չափ կա հինը. ի՛նքան տամ, վոր սաղ դաշտը ծածկի... Հը՞, սրա՞ն ինչ կասես, պապաշա՛...

Ցերեւփոխը լռեց, նայեց իրեն ուղղած զայրացկոտ ակնարկներին, գլուխը ցնցեց, հետո կամացուկ յելավ և դուրս գնաց:

Թեև լսում եյի և կիսովին դեմքս անտարբերահին եյի դարձրել, բայց լավ նկատեցի թե ինչեր կատարվեցին այնուհետև լռությամբ:

---

1) Անձայն:

Ծերունուն գյուղացիները մռմռոցով ճանապարհ բացին. Զավադը մի թունդ հայհոյանք շպրտեց նրա յետևից կիսաձայն, հետո մի քանի յերիտասարդներ դուրս գնացին նրա յետևից, դուռը խնամքով փակեցին և լսեցի ինչպես գոռգոռում էին խանութի մեջ:

Յելա և ուզեցի դուրս գնալ, սենյակի օդը ծանրացել էր և արբածների տեսքը զզվելի յեր դառնում: Բացի դրանից, հետաքրքիր էր թե ի՞նչ էին ասում այնտեղ ծերունի յերեսփոխին: Բայց Զավադը, յերևի ըմբռնեց մտադրությունս, վորովհետև մեկեն պարզեց դեպի ինձ մի բաժակ գինի ձեռքին և գոչեց.

— Ո՞ւր ես գնում, պարո՛ն, հլա մեկ էս բաժակով խմիր պապաշայի կենացը... Չե՞ս խմում, չհավանեցի՞ր մեր գինուն... Դե՛, ինչ անենք, մեր սարերում խաղող չի բուսնում... Հլա մեկ սպասիր, քեզ ասելիքներ ունիմ...

— Ասա՛. կանգ առի յես:

— Դու եդ ախմախի խոսքերին մի լսիլ. դու ջահիլ մարդ ես, գիտես, վոր մարդ յերբ ծերանում ա, խելքը քիչ պակասում ա... համ էլ դա միքիչ, ընենց էլի՛...

Առանց ուշք դարձնելու խոսքերին, դիմեցի դեպի դուռը: Ճշմարիտ է, այնտեղ կանգնածները ճանապարհ տվին, բայց ջանացին խոսակցության բռնել. մեկն էլ ինձնից առաջ դուրս նետվեց և յերբ խանութ յելա, այնտեղ կատարյալ լռություն էր տիրում, յերեսփոխն էլ հանցանք գործածի ժպիտ դեմքին՝ ինձ նայեց:

Զգացի, վոր ավելորդ էր վորևէ բառ արտասանել և դուրս գնացի խանութից, անցա հրապարակն ու սկսեցի դեպի յեկեղեցին յելնել մենակ:

Կամաց էի քայլում: Բացի այն, վոր տեսածներիցս ու լսածներիցս առաջացած անախորժ տպավորության տակ խորհում էի, այլև զննում էի չուրջըս:

Յեկեղեցուց վեր, խճուղին յելնելու կետում, դիմացս դուրս յեկավ մի ինչ վոր կույր և նիհար ծերունի, վոր շոշափելով ճանապարհը, զգուշությամբ քայլեր գնելով՝ դեպի գյուղն էր իջնում:

Յերբ վոտնաձայնս լսեց, պահ մի կանգ առավ:

— Բարև, ծերունի՛, ասացի յես:

Յերեսիս նայեց իր բբերից զուրկ աչքերով, ձեռի գավազանը դեպի իրեն քաշեց և ասաց.

— Աստծու բարին... դու ո՞վ ես... Հա՛, չլինի՞ դու յես այն քաղաքից յեկած մարդը:

— Յես եմ. իսկ դու աշըղ Մարտիրոսը խո՞ չես:

— Ե՛հ, ի՞նչ աշըղ քեզ մատաղ, յերգ ասող էնք... ասած ունիմ— «քոռ Մարտիրոսն էլ իրան աշըղ է կարծում, յերգ է հորինում, ձայնին լսեցեք»...

— Դա խո Ջիվանի խոսքերն են, բարեկա՛մ:

— Այո՛, նա «խելքի աչեցեք» է ասել, յես էլ «ձայնին լսեցեք»... Ո՞ւր ես գնում էսպես հրամանքըդ:

— Վոչինչ, ման եմ գալիս. իսկ դու այդ կույր տեղովդ վո՞րտեղից ես գալիս:

— Ես վերեվումը մի արտ ունենք, էնտեղ էի: Ասի տեսնեմ ի՞նչպես ա բուսել:

— Տեսա՞ր, ժպտեցի յես:

— Կոտցա ձեռք տվի. է՛հ, փառք իրեն, մի թըղղաչափ բարձրացել ա... ամա գիժ ցորեն չատ ա ըլնելու:

— Ի՞նչպես իմացար:

— Իմացվում ա. գժի տերևը փայլուն, ընենց փափուկ ա ըլում... Ըտեղ կանգնելը լավ չի, պարո՛ն, թե կուզես՝ իջնենք ժամի մոտ. ընտեղ գերեզմանաքարեր կան, նստենք քիչ խոսանք, յա թե չե՝ համեցեք մեր տուն գնանք, մխասին ճաշենք... Յես ուզում եյի մեկ քեզ հետ խոսալ...

— Ձե՛, տուն գնալը թող մնա, բայց իջնենք յեկեղեցու մոտ:

Կույրը փայտը պարզեց և սկսեց քայլել:

— Թո՛ղ թևդ բռնեմ և տանեմ քեզ. մոտեցա նրան:

— Հա՞... շնորհակալ եմ. բռնի՛ր...

Յեվ յերբ թևիցը բռնել ու քայլում եյինք ձեռքովը բռնեց մի ձեռքս ու ասաց.

— Թո՛ղ մեկ հլա ձեռքդ շոշափեմ... յես մարդու ճանաչում եմ իրա ձեռքիցը... տեսնե՞մ... Հա՛, յերևում ա վոր պիսեր[1]) ես եղել...

— Ինչպես իմացար:

— Իմացա է՛լի... Ա՛յ, աջ ձեռքիդ միջամատը — գրիչը խո նրանով ես բռնում — ծայրի վրա կաչին կոշտացել ա... ամա չար բնությա՛ն տեր մարդ էլ ես յերևում... ընենց էլի՛, հեշտ բարկացող...

— Դա՞ ինչպես իմացար...

1) Գրագիր:

— Ինչի՞... յես խո միշտ կույր չե՞մ յեղել... է՛հ, աստված բալքի պատժեց ինձ, ով ա իմանում. առաջ յե՛ս էլ աչքեր ունեյի, սև սպիտակից ջոկում եյի, գրում եյի, կարդում... Ա՛յ, նրանից իմացա, վոր գրելիս գրիչը պինդ, չատ պինդ ես հուպ տալիս, ընտուր էլ կաշին քար ա կտրել...

— Հետո՞, հուպ տալը մի՞թե միայն չար մարդը կարող է:

— Չէ, բայց ընենց, թուղթ ես գրելու ժամանակը, է՛լի... Հը՞, աստվածդ սիրես, դու քաղաքումը ի՞նչ գործի եյիր:

— Վարժապետի նման բան:

— Հա՛, լավ, բաս, ամառս յեկել ես մեր գյուղը անցկացնես, է՛լի... Չհասա՞նք հալա... Հա՛, համա հրես ժամի կողմի մեծ քարը... Ա՛յ, գնանք դենը, էն մյուս կողքին...

— Հարեթ աղայի գերեզմանի մո՞տ...

— Հա՛, նրանից քիչ հեռու... Գիտե՞ս, եդ Հարեթ աղան իմ ախպերն եր... վողորմի հոգուն...

Հիշեցի Սահակյանի պատմածը և լուռ մնացի: Ապա, յերբ տեղավորել եյի ծերունուն ապառաժի մի կտորի վրա, վոր յերևի իբր գերեզմանաքար նետված եր այդտեղ, ինքս էլ նստեցի կողքին:

— Թե ծխում ես՝ ծխի՛ր, ասաց կույրը, յես խնոթի[1]) յեմ քաշում:

Ասաց, յերկար մուշտակի քղանցքը յետ տվեց ու արխալուղի գրպանից հանեց քթախոտի փոքրիկ տուփը, մի քանի արծաթե կտորներով պատած գոտի

1) Քթախոտ

միջի կարմիր Թաշկինակովը նախ քիթը մաքրեց, հետո փոշին լցրեց քթածակերի մեջ, աչքերը սևեռեց հեռուն ու ասաց.

— Հե՜յ գիտի հա՜յ, աշխարհ... Վոր աչքերս լավ լիներ, յես կթողայի՞ մենակ ման գաս գեղումը, գեղի չների հետ կռիվ տաս... յա թե չէ՝ ըստե՞ղ կնստեյինք և վոչ թե մեր սիրուն ձորագլուխներումը, չուչուան ջրի, հով ծառերի տակ, են լավլավ ծաղիկների մեջ... Ա՛խ, ա՛խ, պարոն վարժապետ, շա՜տ, շա՜տ կարոտել եմ մեր սարերին, մեր անտառին ու ձորերին. մե՛կ էլ տեսնեյի, մի կո՛ւշտ աչքով վայելեյի ու հետո մեռնեյի...

IV

Պահ մի յերկուսս էլ լուռ մնացինք: Ծերունու անձկությունը հուզեց ինձ: Նայեցի դեմքին: Բբերից դուրկ աչքերը լցվել եյին արցունքով և դեմքը կընճռոտվել:

Մատներով հուպ տված քթախոտի կեսը նա դարձյալ ներս կոխեց քթածակերի մեջ, լեցված արցունքը սրբեց Թաշկինակով, հետո, յերևի ավելի սովորությունից՝ քան ցրտից, ծածկեց մուշտակի քըղղանցքով ծնկները և ասաց.

— Յես միշտ խո այսպես չեյի... Յե՛ս էլ մի ժամանակ ղոչաղ աղամարդ՝ չափչփում եյի մեր անտառները. գործը վախենում էր ինձնից... իսկ այժըմ, ի՞նչ եմ յես... մի ուրվական, վոր պտտում եմ գյուղում և սրտիս նեղությունից, բարկությունից յերգեր յերգում.—

Ե՛հ, կո՛ւյր յերգիչ, տխուր սազեր անցյալի,

Դու մեզ յերբեք զվարթ յերգեր չես տալի.
Որը խավար քե՛զ համար, արևն անփայլ քե՛զ
համար.

Շա՛տ ապրեցիր— այս աշխարհ թո՛ղ, հալվի...

— Քո՞ գրածն է. հարցրի յես:

— Ի՛մ... Այսպես շատերը ունիմ. ասում եմ՝ գրում են... Եհ, ինչ անեմ, ադես մարդ եմ, յերգերս էլ ադես անտաշ՝ ինձ նման... Եհ, քիչ-միչ կարդացել եմ, լույս դառնա Սարգիս վարդապետի հոգին— նա՛ յե ինձ դաս տվել:

— Վաղո՞ւց է վոր կույր ես:

— Տաս տարուց ավելի... Ջիլուց ընկա, հետո յերկար հիվանդ պառկեցի և յերբ վոտքի յելա— կույր եյի... եհ, փառք իրեն, նրա կամքը հալբաթ այդպես էր... Դե՛հ, բայց, հերիք է իմ մասին, մի քիչ էլ դո՛ւ ասա... Յեկել եք գյուղը, լսել եմ, ուզում եք ըստեղ ապրել... վարժապետը պատմեց... Գիտե՞ս, յեղբորս վորդին է:

— Այդ ի՞նչ շատ ազգականներ ունիս:

— Գյուղի կեսից ավելին... Յոթը յեղբայր ենք: Գալոն էլ իմ յեղբայրն է, անիծվի նա:

— Այն հարուստ խանութատե՞րը:

— Այո... Եդ ջաղացի առուն խո գիտե՞ս— դուքաններից ցած, ընտեղից դենը համարյա Կիրակոսենց ցեղն է, դեսը՝ Սարոենց ցեղը:

— Այդ Ջավադի ցե՞ղը:

— Հա՛. ծանոթացա՞ր... խմող, լիրբ տղա յե, քաղաքի միկիտանների զավակ... Ասենք, մեծ յեղբայրն էլ մի բան չի. այ, նրանց հերն էր լավ մարդ. աղքատասեր, բարի... Եդ ինչի՞ց ա, վարժապետ,

դու կզխտենաս— վոր լավ հոր տղան էլ է միս դուրս գալիս...

— Ժառանգության օրենքը դեռ լավ չի ուսումնասիրված. ով գիտե. Հրջանը, գոյության կռվի միջավայրը...

— Հըմ, արեց ծերունին, վոր արձանացած լըսում էր ինձ. չնեղանաս, վարժապե՛տ, բայց ասածներդ գլխումս չմտան. մեկ էլ ասե՞ս...

Նոր ուշքի յեկա, վոր հիրավի, ծերունին վոչինչ չպիտի հասկացած լիներ ասածներիցս: Ծիծաղս յեկավ:

— Վոչինչ, վոչինչ... ասացի— ներիր, վոր մի քիչ խրթին խոսեցի... ուզում եյի ասել թե մարդս վո՛նց կրթվի, ինչ մարդկանց հետ վոր նստի-կանգնի, նրանց բնությունն էլ կստանա:

— Եդ մեկը ճիշտ ասացիր... Զավադը մեր ապականված գյուղաքաղաքումն է մեծացել, մեծ յեղբայրն էլ այնքան խման-հարբաններին հետ ունեցածը ծախսեց, վոր բոլոր խարաբ եղավ, գնաց... Հմի էլ, հրե՛ն, քյոխվի օդնական ա. աչքովդ պիտի տեսնաս, թե վոնց ա պլոկում գյուղացոց, վոնց ա դազանի պես փետը քաշում սրա նրա վրա...

— Իսկ ձե՞ր ցեղը:

— Մեր մեջն էլ կան փսերը, յես խո մեր ցեղը չեմ գովում... այ, մեկը հենց եդ Գալոն... Ցեղբայրս ա, բայց չնից փիսն ա... ես ա տաս տարուց ավելի, մեզ հետ խռով ա, թե ի՞նչ— նրան չենք օռուտ տալիս... Ախր վո՞նց տամ. մի անգամ հիմարացա փող պարտք արի— հինգ տարի քըրթեց կա-

շիս... Բայց էլի մեր ցեղի մեջ մարդիկ կան. Սարոենց ցեղը...

— Հա՛, միջամտեցի յես— լսել եմ. գյուղը յերկու ցեղի յե բաժանված և յերկուսն էլ իրար վնասում են... Լավ չե այդ. հայկական այդ սոդոր հատկությունը զզվեցրեց: Ախր ի՞նչ ունիք իրար հետ, մի՞թե չեք կարող հաշտ, գոնե առանց իրար վնասելու ապրել:

— Հը՛մ... արեց նորից ծերունին,— յերևում ա վոր նրանք արդեն իրանց կողմն են քաշել քեզ... բայց, տես վարժապե՛տ, կփորձես, կտեսնաս. նրանց հետ գործ վոր բռնես՝ կփոշմանես... Թե՛ նրանց հողը հող չի, թե մարդիկը՝ մարդիկ չեն:

— Լավ, լավ, Թող բամբասանքը... հավատացած կացիր, վոր մեզ խաբել կամեցողը կզղջա: Ցես լավի հետ լավ եմ, վատի հետ կրկնապատիկ վատ:

— Ապրե՛ս, կարգն էլ հե՛նց եդ ա... բայց, քեզ համար եմ ասում, լավ կլինի, վոր առվի ե՛ն ղրաղի հողերն էլ մեկ տեսնես:

—Այդ թո՛ղ. ինձ այն ասա, թե ինչո՞ւ ձեր գյուղացիք այդքան խմում են և բոլորն էլ կարծես խոսք մեկ են արել, վոր մեզ միշտ խաբված պահեն... Մենք խո իրենց վնաս տալու չենք յեկել... Քիչ առաջ, դուքանում յերեսփոխը ուզեց գյուղի մասին մի քիչ ճիշտ բաներ ասի մեզ— քիչ մնաց կորտեյին խեղճին:

Ծերունին գլուխը կախ մնաց մի րոպե, հետո նորից ինձ նայեց իր անբիբ աչքերով, բռնեց ձեռքս, սեղմեց ու ասաց.

— Ա՛խ, քեզ մատաղ, պարոն յեղբայր, ինչո՞ւ

յես խղուր յեկել՝ չցաված գլուխդ ավետարանի տակ դնում... Մեր ջահիլների հետ, աստված ազատի, գործդ լավ բանի հա՛... Եվ առաջվան սերունդը չի՛ մնացել, վո՛չ... ղալբություն[1]), սո՛ւտ, ինչ ասես՝ քաղաքից լցվել ա մեր կողմը...Ա՛խ, յերկաթուղին, այդ անիծված մաշի՛նը բերեց բոլորը...Մեր ջահիլները քաղաք շա՛տ տեսան, շա՛տ...Լսիր քեզ ինչ կասեմ... Յես կույր եմ, չէ՞. լավ, վոր ծարավ լինեմ և ուզենամ բուն աղբյուրը գտնել, թե ցույց տվող չլինի՝ կգտնե՞մ... Վո՛չ, իհարկե, ստիպվա՛ծ պիտի կեղտոտ ջրիցը խմեմ... չեմ էլ տեսնում ախր, վոր նա կեղտոտ ա... Խմում եմ, խմում՝ մինչև ծարավս կտրի... Դե՛, խմածս էլ ամենից շատ՝ կեղտ կլինի, վորովհետև կեղտը միշտ ջրի յերեսին ա կանգնում, միշտ ավելի շուտ ա մարդուս բերնին մոտենում... Ըտենց էլ մեր հիմիկվան սերունդը. հենց վոր քաղաք են ընկնում, ճանապարհը, աղբյուրի ճանապարհը ցույց տվող չկա— նրանք էլ ծարա՛վ, ինչ կեղտոտ ջուր ասե՛ս խմում են... Ա՛յ, հենց դրանները վոր նայես— կհասկանաս: Խո տե՞սել ես ինչպես են հագնվում. իրենց հայրերը հլա փափախով, արխալուղով են, իրենք մեկ էլ տեսար բինջակ, կարտուզ, ճռաճռան կոշիկ, ձեռքին փե՛տ, մատանի՛... Ըտենց էլ ամեն բանը. ինչ վոր հայրերն են տալիս՝ չեն վերցնում. ծարավ են՝ քաղաքի կեղտոտ ջրերիցն են խմում. են անիծված տեղումը մեկ մարդ էլա չկա, վոր մեր տղերանցը բանի տանի բուն աղբյուրի մաքուր ջրին...

[1]) Խաբեբայություն:

— Այդ ձե՛ր, հայրերիդ պարտքն է. ինչո՞ւ չեք կրթում, նրանց լավ կողմը ուղղում:

— Հը՛մ... ուղղե՛լ սովորեցնե՛լ... Տո՛, հիմիկվան աշխարհը այլ է, այլ. հիմիկվան վորդիքը վոչ իրենց հորն են մարդատեղ դնում, վոչ էլ թողնում վոր նրանք մի խոսք ասեն: Հրե՛ն, յերեկ յերեկո չէ՞ր, վոր լսում եյի թե ինչպես յեղբորս վորդին իր հորը վրա գոռում եր թե՝ «ի՞նչ ես հաջում քյաֆթառ շան պես, ղարաչի կտրել գլխիս»...

Ի՞նչ առարկեյի, չէ՞ վոր ինքս էլ հաճախ տեսել եյի, թե ինչպես վորդին գոռում է հորը վրա և հայրը խեղճ ու կրակ՝ արտասուքի յեր դիմում, իրեն մխիթարելու համար:

— Բա՞ս... շարունակեց ծերունին— եդպես են, Էդպես... բայց ա՛յ, բան չեմ ասիլ, յեթե վորդիս արժանիք, ինձնից ավելի կատարելություն ունենա և ինձ հրամայի սուս կենալ... Ուրախ էլ կլինեմ: Գրլուխս նրա վոտի տակին կդնեմ. բայց մեկ իմանում ե՛, վոր նա ինձնից լավն ա, խելո՛ք, կատարյա՛լ... Աշխարհս էլ հենց առաջ չի յերթալ, թե վորդին՝ հոր վրա կատարյալ չլի... Ըտենց չի՞:

— Այդպես է:

— Շատ ապրե՛ս... Յես մի՛շտ մտածել եմ, վոր կատարյալ ուսումը մարդուս լավացնում ա, համա կիսատը՝ լրբացնում:

— Ճիշտ է:

— Ա՛յ, մի յերգ էլ ունիմ ասած դրա վրա.

Լավ կարդալը, վորդյակ սիրուն
Կլինի տանդ մեծ սյուն,
Կտա քեզ համբերություն:

Կիսատ կարդալը, վորդյակ ա՛նպետք.
Չի թողնիլ վո՛չ մի լավ հետք,
Կդարձնի քեզ յիմր, անտուն...
Լավ չե՞մ ասել... Հետո ավելացնում եմ թե՝
Ավելի լավ է մնալ տգետ,
Քան ուսանիլ կիսատ, անպետք:

— Դու յերևի շատ այդպիսի գրվածքներ կունենաս:

— Ունիմ: Բոլորը գրել եմ տվել մի տետրակում... Հիմի ճաշի ժամանակ ա՝ թե արժան կհամարես, վեր կաց գնանք մեր տուն, համ կճաշենք, համ էլ կասեմ քեզ բոլորը:

Ու վոտքի յելավ: Լռությամբ թևը բռնեցի և սկսեցինք իջնել դեպի հրապարակը, վորից հետո յեր Ջրաղացի առուն:

Կույրի խոսակցությունը հաճույք էր պատճառում ինձ: Յերևում էր, վր մարդն աշխարհ էր տեսել, այլև իր 10 տարվա կուրության ընթացքում, ինքնամփոփ խորհրդածություններով, հասել էր այն ամենին, ինչ վոր ժողովրդի իմաստությունն է արտադրում:

Ճանապարհին նա քիչ խոսեց: Հրապարակից անցնելիս, նկատեցի թե ինչպես գյուղացիք հետաքրքրությամբ մեզ եյին դիտում, ակնարկներ անում միմյանց և ժպտում:

Յերբ անցնում եյինք Գալոյի խանութի առջևից, վորդին, վոր նստել էր նստարանի վրա, հեգնող ժպիտով մեզ նայեց:

— Ընկերս դեռ այնտե՞ղ է. հարց տվի նրան, գինետանը ակնարկելով:

— Վո՛չ, ասաց նա,— նոր դուրս յեկան խմբովին և վարժապետի մոտ այդ կողմը գնացին:

Կույրը, քիչ անցնելուց հետո, թեքվեց դեպի ինձ և ցած ձայնով ասաց.

— Հիմի մինչև յերեկո կլակեն, հետո կսկսեն կռիվ, ղալմաղալ... ափսո՛ս ընկերդ:

— Կուղարկենք, կկանչենք նրան:

— Հա՛, թող գա. ի՞նչ նրանց ընկերն է: Մենք էլ ողի, գինի ունենք ճաշին, բայց դեհ, քանի յես վողջ եմ, իմ տունը հարբեցողի յերես չի տեսնիլ...

Հարբեցողը վոնց վոր մի խոզ աղտոտ,
Ցեխի մեջ թաթախում է ձեռք ու վոտք.
Դնչովը լկստում ա ցեխը,
Գլխի տեղակ՝ գլուխն ա դառնում տբեխը:

— Այդ ե՞լ քոնն է:

— Իմն է. յես ուրիշի գրածները չեմ ասում: Լսիր մնացածը... Առուն հասա՞նք... Դե լավ, ջաղացի տակն ա կամուրջը, բայց նեղ ա, դու անցիր. հիմիկվանից դենը յես մենակ էլ կարամ գնալ. սովոր եմ... Դու լսիր մնացածը.—

Թե ուզենա մի խոսք ասել,
Կասես իշի ձեն ես լսել.
Վայ թե քեֆին ես կպել...
Բերնի ցեխը վրադ շուռ կտա:

— Այդ տողը չեղավ, բարեկամ, ժպտեցի յես.

— Հա գիտեմ... Արտիցը գալիս ուրիշն եյի մըտածում գտնել, բայց դու ռաստ յեկար... Վնաս չունի, գիշերս պառկելիս՝ կգտնեմ... Հիմի լսիր վերջին կտորն էլ.

Հարբեցողը վո՛չ տուն ունի, վո՛չ ընտանիք.

Վորտեղ գինի—ընտեղ նրան հարսանիք։
Մարտիրոսը ճիշտ է, գինի խմել էլ գիտե,
Բայց չի կորցնում մարդկային իսկ արժանիք...

V

Հաղիվ անցել էյինք տալից և պտույտ էյինք գործում ինչ վոր քարակույտերի առջևից, վոր վո՛չ շատ հեռու լսվող մի աղմուկ՝ կանգ առնել տվավ կույրին։

— Բո՛... կանչեց նա վախեցած— կռիվ ա. կասես մեր տան կողմերումն ըլի, մեր տղերանց ձենն ա...

— Ձեր տունն այդքան մո՞տ է։

— Հա՛. էս յերևցողը յեղբորս — Հարեթինն ա, հետո մերը... Հլա մեկ շուտ-շուտ գնանք։

Մտատանջ ու վախեցած ծերունին թեև խփվում էր պատերին, դայթում էր հաճախ, բայց շտապով առաջ քայլեց։

Քիչ հետո կանգ էյինք առնում մի յերկհարկ շինության առաջ, վորի մոտից, դեպի վտակն էր փռվում ընդարձակ, ծառազարդ և սիրուն պարտեզների մի շարք։ Հիրավի, ծերունին իրավունք ուներ, տալի այս կողմերի հողերը շատ ավելի լավ ու բեղմնավոր էյին յերևում։

Այդպես էլ էր։ Սարոենց ցեղի բռնած կողմը, հրապարակից սկսած դեպի վեր՝ տարօրինակ կերպով տները զուրկ էյին պարտեզներից, մինչ այս կողմը լիքն էր ծառաստաններով ու ջրերով։

Բայց յերկար չկարողացա շուրջս զննելով զբաղ-

վել, վորովհետև կույրի տան առաջ տեղի յեր ունենում մի այլանդակ տեսարան։

Խանութի յետևում խմող-արբեցողների խումբն էր ամբողջովին այնտեղ և դեռ մի նոր դեմք էլ ավելի։ 10—15 հոգի, բոլորն էլ արբած, յերերուն, աղմկալից ձայնով խոսող, միմյանց չհասկացող— ժողովվել էյին ինչ վոր դերանների կույտերի առաջ և աղմըկում, կանչվռտում էյին։

Անտառապահը, վարժապետը, նոր դեմքը, վոր ինչպես տեղեկացա Ջավադի յեղբայր տանուտերն էր,— խառնվել էյին իրար։ Անտառապահի դեմը կարել էր վարժապետը և ճգնում էր համոզել նրան, իսկ Ջավադի յեղբայրը կանչում էր.

— Ինչի՞, ախպե՛ր, փետ են գողացել, թող պրատակոլ շինվի... ո՞ւր եք վողջ գյուղը ձեր կրակովը էրում...

— Աստավ, Ալեքսե՛յ, նո՛ւ... համոզում էր ուսուցիչը։

— Ինչո՞ւ գողացած,— գոռում էր մի յերիտասարդ, վոր կույրի վորդին էր,— էս փետերը յես առե՛լ եմ, առե՛լ...

— Աստված գլխիդ քա՛ր դցի, Թորո՛ս, ձայնում էր մի պառավ էլ հեռվից,— տո՛ւնդ գլխիդ ընկնի, բաս մինակ մե՞զ տեսաք...

Մյուս գյուղացիք շրջապատել էյին, իսկ Ջավադը, չարամիտ քրքիջը բերնին, ընկերիս մի կողմն էր քաշել և ինչ վոր բան էր բացատրում տաքությամբ։

Շրջակա տանիքներից, փողոցի անկյուններից, Գալոյի պատշգամբի լուսամուտից՝ դուրս էյին ցցը-

վեր գլուխներ․ կին, մանուկ, տղամարդ՝ կիտվել ե-յին ամեն կողմ։

Ցեվ ամբողջ այդ աղմկող խումբն այնքան հար-բած եր, վոր իրար վրա յեր ընկնում, առանց մի-մյանց լսելու գոռգոռում, վիճում։

— Սա՞ ինչ ա, տո՛... առաջ քայլեց կույրը բարձրաձայն կանչելով— Հակո՛բ, ա՛յ տղա, Սրա՛մ, դա՞ ինչ ա, ի՞նչ ա յեղել...

Ամուսնուն տեսնելով, ճչացող պառավը մոտ վա-զեց, բռնեց թևիցն ու ասաց.

— Ի՞նչ պիտի լինի, անա՛շենի մարդ. հրե՛ն, Սարոենք մատնել են, պահապանն ել յեկել՝ պրա-տակոլ ա գրում...

— Վո՞նց թե պրատակոլ, ինչի...

— Փեթերի համար... են նոր բերած տախտա-կացուների... ասում ա՝ գողացել եք, ծածուկ բե-րել, յա 10 մանեթ կտաք, յա թե չե՝ փեթերն ել տանում եմ ու ձեզ ել դատաստանի քաշ տալիս...

— Բո՛... բա ըտենց բա՞ն կըլի, արեց կույրը— ինչի, մենակ մե՞րը տեսավ... յես եդ ոձ Թորոսի հորը... տո մեկ տենը կացեք տենա՞մ... Ո՞ւր ա ա-բեշչիկը, վարժապե՞տն ուր ա...

Ասաց, հրեց իր դեմը կեցողներին ու քայլեց դե-պի գերանների կողմը, վորի տեղը նա լավ գիտեր և գուշակում եր թե նրա չուրջը պիտի կենտրոնացած լինեյին աղմկողները։

— Հա՛, հրես յեկավ Մարտիրոսը— ինքը, նկա-տեց տանուտիրոջ ողնականը— հլա մեկ արի, Մար-տիրո՛ս, ես ո՛ւր ա քո տղեն մեչի՛ցը ծառեր գողացել բերել։

— Աղա ի՞նչ ես հաչում, ճչաց նրա վրա կույ-րը— վո՞նց թե գողացել... մեկ գնանք քո տունը, տեսնենք դո՞ւ յես ձեչեն (անտառը) դարտկել-բերել, թե՞ մենք... ո՞ւր ա աբեշչիկը...

— Ըստեղ եմ, հառաջացավ դեպի նա յերերվելով անտառապահը— դու... ես փետը պրատակոլ, տասը մանեթ...

— Վո՞նց, տասը մանե՞թ... տո՛ յես քեզ նման հարյանին տասը սիլլա (ապտակ) կտամ, վոր մի՛չ խմես... ինչի՞, բիլե՞թ չունիմ, փետ բերելու ինձ իրավունք չկա՞...

— Ունես... ես փետը... գողացած ա. յե՛ս... յես կտրել եյի Սարոենց համա... ը՛ըմ... եանի ինձ համար...

— Տո ի՞նչ ես դուս տալի. լավ տեսե՞լ ես փե-տը, թե ես խլեղ քեոխվին ես ականջ դնում. յա թե չե վո՞ղդ ա պակասել ու մարդ չըտա՞ր գեղումը...

— Աղա քոռ, քո՛ռ... մեջ ընկավ տանուտերի ողնականը, մի՝ լիրբ ծիծաղ դեմքին— դու վոր չես տեսնում գերանները, մենք չե՞նք տեսնում... ել ո՞ւր ես ուշունցի (հայհոյանք) տանում բանը... են ա տասա, վոր գողացել-բերել եք, հանիր մի վոսկի կո-խիր ձեռքը, փետն ել յա տուր տանենք՝ պրծնի-գնա ելի՛... ո՛ւր ես կրակը մեծացնում...

— Տո չոռ ու ցավ կտամ... կտա՞մ վոր տա-նեք...

Վարժապետը, վորի աչքերը փոքրացել եյին, բայց ճգնում եր զսպել իրեն և տեղն ու տեղը կանգ-նած՝ օրորվում եր, շրթունքները պրկում, ձեռքի փայտն ամուր կոխում գետնին, ճակատը կնճռում և

աշխատում եր խիստ կերպարանք ստանալ— փորձեց միջամտել:

Յեվ յերբ կույրը, տանուտերի ոչնականն ու անտառապահը՝ գրեթե յերես–յերեսի մոտեցրած, վոտների վրա լարված, յերեք աքաղաղների պես ճչում եյին, նա ձեռքը 3—4 անգամ թափահարեց, դահավիժմամբ առաջ նետվեց, յերկու թևերովը լայն շարժում գործելով յետ մղեց չրջապատողներին, մտավ աքաղաղների մեջ տեղ, ուժգին հրումով հեռացրեց նրանց միմյանցից ու գոչեց.

— Յավա՛շ... յավաշ ասում եմ է՛է՛... յավաշ կե՛ս էլ ասեմ...Դո՛ւ,Ալեքսեյ,պաշո՛լ (կորիր)... հեռու գնա... Ըտենց... Դու յել քյոխվա, ախխըրը քեզ քաշիր ու յալլա՛, գենը... Ըտենց.. .Հիմի դո՛ւ, ամի՛, ինձ լսիր...

— Ինչի՞ «յալլա գենը»— ձայնեց վոտների վրա ցցվելով քյոխվան— յանի ուզում եք վոր ցեպս[1]) կախե՞մ... յա... յա թե չէ... Ազա ո՞ւր ա գզիրը... Շան վորդի Սահա՛կ, եդ ո՞ւր ես կորել...

— Տո սուս է՛է՛... սուս մեկ, կանչեց նրա վրա վարժապետն ու վոտները լայն–լայն դնելով՝ ձգնեց հավասարակշռություն ստանալ՝ չորորվելու համար: Հետո կուրծքը ցցեց, գլխարկը պինդ կոխեց գլխին, դեմքը կնճռեց ու ասաց.

— Ո՞ւր ա Ջավադը... Հա՛, ըստե՞ղ ես... Լավ, ա՛յ ամի, խո տեսնո՞ւմ ես եդ չան վորդի կաղին... խո տեսնո՞ւմ ես... Լավ նայիր... չե՞ս տեսնում, ի՞նչ ա, աչք չունե՞ս... Թյո՛ւ յես դրա... ես ամե-

[1]) Գյուղապետական նշանը, շղթան:

նը դրա բանն ա... ես խեղճ աբեշչիկը սկի յել չեր իմանում, վոր ձեր Արամը փետ ա բերել. դեղն եր յեկել վոր Բոլշևինց Մուրադի գողացած փետերը բռնի: Դե՛, Ջավադի բարեկամն ա ախր, խո գիտե՞ս... Հը՛մ, ինչ ա, վոր նրանը մոռանա, սրա՞ն չուտ տվավ դե՛սը... Ամա, բայց վոր...

— Հա՞... միջահատեց նրան կատաղությամբ կույրը— ո՞ւր ա եդ չան վորդին, եդ, եդ...

Ու փայտը բարձրացրեց:

— Փխե՛, փխե՛... կանչեց հեռվից Ջավադը վախեցած— տո, եդպես չո՞ւ կլինի... չե՞ս ամաչում, վա՛րժապետ...

Հետո մեկեն, վախը փոխելով հանդգնության, կամ ավելի ճիշտն ասած, վախն ավելի սաստկանալուց, մի քայլ առաջ նետվեց ու ահավոր ճիչով կանչեց.

— Տեսնո՞ւմ եք ես չան ցեղը... ես չան... այ յես ձեր... այ յես ձեր...

Ու միմյանց յետևից, կարճ փայտը ցցած, կաղ վոտքի վրա լարված, կոկորդը պատռելու չափ ճչալով՝ սկսեց նա այնպիսի հայհոյանքներ, այնպիսի լկտի բառեր, վոր լողները խառնվեցին, վարժապետը յերկու ձեռքերով ականջները փակեց, անտառապահը ապշած՝ յետ քաշվեց, իսկ ընկերս բերանբաց մնաց:

Շարունակելով կաղլիկը ամենքի ձայնի վրա իշխող աղաղակներն ու հայհոյանքները, վախից գունատ, սոսկումով լի աչքերը, նա կամաց–կամաց յետ քաշվեց, ապա թքեց և սկսեց հեռանալ դեպի տուն: Այնտեղ, փոխանակ կամուրջից անցնելու— յերկար

կոշիկներովը մտավ ուղղակի ջրի մեջ, այնտեղից էլ դարձավ, ելի ճչաց մի րոպե, առվի մյուս կողմն էլ մի վայրկյան մեզ նայելով հայհոյեց և անհետացավ...

Մի րոպե ամենքը լուռ էյին, հետո հանկարծ մեկը քրքջաց, ապա ծիծաղ յերևաց բոլոր դեմքերի վրա, իսկ կույրը, փայտը ցած թողնելով՝ ասաց.

— Ը՛մ, յես քո վախկոտ հոգուդ...

Այնուհետև մեկեն աղմուկն իջավ, մարդիկ ըսկըսեցին ցրվել, մնացողները հանդարտ, համոզիչ կերպով շրջապատեցին անտառապահին, և չեր անցել հինգ րոպե, որ տանուտերի ոգնականն անհետացել եր, իսկ վարժապետն անտառապահի թևը մտած, կույրի առաջնորդությամբ, յետևներիցը մենք էլ, մտանք մի ընդարձակ սենյակ, ուր շուտով սփռոց փռվեց և յերեվաց շիշերով ողին և գինին...

— Ըռենց հա... ձայնեց վարժապետը— ա՛յ, հիմի լավ ելավ... Տո ի՛նչ գողացած փայտ, ի՛նչ տանուտեր...վողջ գեղը, բոլոր գեղերը գողանում են... Դու գինի՛ ասա, գինի՛...խմե՛նք, Ալեքսեյ, կը չորտու[1]) պրատակոլ մրատակոլ... ինչի՞, դու չե՞ս իմանում, վոր մեկը հենց ինքը տանուտերը վողջ անտառը թալանում ա ու տարեկան ինչքանի տախտակ ա ծախում... նա՛, վազմի՛, պե՛յ (ա՛ռ, խմի՛ր)... Քո կենացը, Մարտիրոս ամի...

Յեվ յերբ սկսել եյինք ուտել, կույրը, վոր լուռ և գունատ, պատառներ եր չինում, յերկար չխոսելուց հետո՝ մեկեն ինձ դարձավ և խուլ ձայնով ասաց.

— Մարդիկ կան, պարո՛ն յեղբայր, վոր ծնվելու որիցը հենց՝ իրանց տեղումը չեն ծնում, ուրիշ տեղի վայել են, բայց բախտը նրանց ցեխի մեջ ա բերելքցել... Մարդիկ էլ կան, վոր ծնած որիցը չան կաթ ծծածի պես չուն են ըլում, բայց բախտը նրանց մարդկանց մեջ ա բերում-քցում... Ո՞ւր ես յեկել մեր գեղը, ափսոս չե՞ս... Ա՛ռ, ա՛ռ մի-մի բաժակ էլ մենք խմենք, բյալքի թե մի քիչ անասունի նման մենք էլ կարողանանք մտածել, թե չե՝ մարդու պես ապրելը մեր բանը չի... ու տեղը չի.. Ըռենց չի՞, վարժապե՛տ...

— Թո՛ղ, թո՛ղ, ամի՛... խմեց վարժապետը տըխուր, խիստ տխուր դեմքով— խմե՛նք, խմենք վոր մոռանանք. թե չե՝ մարդու պես չի՛ ապրվում, չե՛...

---

1) Սատանային թող գնա, թող գլուխը տանի

ՔՅՈԽՎԱ

Սարսափելի յեր տեսնել տանուտեր Թորոսի բարկությունն այդ յերեկո:

Ջուխի ծայրերը գոտկի մեջ, կարտուզը պինդ կոխած գլխին, աչքերն արյունով լի, ձեռքին մի խոշոր մտրակ շառաչեցնելով, գզիրին ել— այն խեղճ ու կրակ Սահակին— յետևը ձգած, հայհոյելով ու դողդողալով եր, վոր հայտնվեց գյուղի հրապարակի վրա:

Յեվ ձա՛յնը, ձայնը... Նման պատռած մեծ թըմբուկի ձայնի, խռպոտ, խմած ողուց դեմքն ել կապտած, քունքերը ուռած՝ գոռում եր, կանչում. իսկ բառերը միմյանց գլխի վրայից, իրար կոխոտելով ու անկապ՝ դուրս եյին նետվում բերնից:

Ո՛հ, ինչպիսի՛ բառեր...

Գյուղում պիտի լինել կիրակի որերը, այն ել այդ լեռնային գյուղերում, լսելու համար թե վորպիսի՛ հայհոյանքներ ու լպիրշ բառեր կարող են գոյություն ունենալ հայերեն լեզվի մեջ:

Հայր, մայր, գերեզման, պապեր, հավատք... վոչի՛նչ, վոչինչ չե խնայվում: Ու բանաստեղծական պատկերացումնե՛ր, ինքնատիպ կազմությամբ՝ հայհո-

յանքնե՛ր, վոր մարդ ապշած ե մնում գյուղական մտքի այդքա՛ն բեղուն ստեղծագործության, այդքա՜ն հնարագե՛տ աղտեղի նրբասացության առաջ:

Անշուշտ, Թորոսը հարբած եր և լա՛վ հարբած: Հերթը իրանն եր յերեկվա այդ որը և ո՞վ գիտե, վո՞րտեղ եր «լակել»: Սակայն իզուր խո չե՞ր վոր կատաղել եր, մտրակն եր շառաչեցնում և կամ պատռած ձայնով գյուղը վոտքի հանում, այն թշվառ գզիրին ել յետևից քարշ եր տալիս—բերում:

Հրապարակի վրա եյին գյուղացիները. յեթե վո՛չ բոլորը, գրեթե մեծ մասը: Յերեկոյան ժամերգությունից հետո,— կիրակի յեր և անելու վոչինչ չկար— հավաքվել եյին խոսելու, զվարճանալու, ե՛հ, յեթե հասարակության գործ ել պատահեր՝ դողդողալու, վիճելու:

Կիրակոսենց Գալոյի «մաղազինի» առաջ և մոտը դրված նստարանի վրա այդ յերեկո բավական մարդիկ կային: Նախ «Խոլերան»: Ցամքած, յերկտակ յեղած դժգույն մի ծերունի, վոր չնայելով տաքին, մուշտակը վրան եր, ահագին փափախը մինչեվ ականջների արմատը խրած, տակից կապած սեվ թաշկինակի ծայրերն ել, նապաստակի ականջների նման դուրս հանած:

Կային նաև— կարմրամազ Սմբատը՝ ձեռքերը միշտ գրպանում, Գալոն, վոր ամեն խոսելիս՝ դողում եր ինչպես կաչաղակ, վորդին՝ Արշակը, լուսավորության լույս, արհամարհոտ, կանգնած խանութի շեմքին: Այնտեղ եր և մշտապես ալյուրոտ Զաքեն, մրոտ դեմքով յերեսփոխ Մուշեղը, յերկարավիզ հյուսն Գեվոն, ծոծրակին ածիլած պայտար Խե-

չոն, մինչև իսկ զուռնաչի և վորմնադիր վարպետ Համբոն:

Գրիչաենց Մկրտչի խանութի առաջ, ճշմարիտ է, վոչ վոք չեր յերևում, բայց թե՛ ներսում և թե՛ յետևի սենյակում խմբեր կային ողու չիչերի առաջ։

Սարոենց խանութի մոտ բազմությունն ավելի յեր: Բացի այն, վոր ամբողջ ծածկոցի տակ նստոտել կամ խումբ առ խումբ կիտված կային գյուղացիներ, այլև նստարանի վրա «տամա» եյին խաղում վարժապետն ու ծերունի մանրավաճառ Հրյա Սիմոնը՝ անբաժանելի սպիտակ չուխան (կարծեմ., պիտի վոր կտավից լիներ) հագին և այլանդակ, յերկարավուն մեծ ակնոցը աչքին:

Խաղացողների մոտ եր յերիտասարդությունը: «Տաման» զբաղմունք եր. Հրյան լա՛վ խաղացող եր, յերեկվանից ի վեր գյուղումն եր և վողջ որը գյուղի տղայք միմյանց եյին հաջորդում խաղի նստարանի վրա:

Ու դիտող, միմյանց սեղմած այժմ, սրտատրոփ տեսնում եյին, վոր վարժապետն ել հաղթվում եր վարպետ Հրեայից:

Այստեղ եր նաև չմոռանանք-գլուխը միշտ կախ ձգած կարմրաքիթ «պարոնը», վերարկուն, քաղաքացու նման ուսերին, կարմիր ատլասե արխալուղով, վոսկեջրած արծաթապատ գոտի, մինչև իսկ, այո՛, վոսկյա մեծ մատանի, այն ել փիրուզով... Քաղաքացի յեր գրեթե մարդը. ի՞նչ անենք վոր այդտեղի՛ց եր աղջիկ առել, Սարոենց փեսան եր, նրանց խանու-

թի կիսարարար և կամ առանց կարմիր քթի յերբեք տեսնել չեր կարելի նրան:

Իսկ ի՞նչ եր անում Ջավադը— հաստլիկ ու կաղլիկ այդ ճչացողը՝ մեջքի վրա մեծ կարկտանով:

Թշվա՜ռ կաղլիկ: Սկի քեֆը տեղը չեր այդ որ: Յեղբայրն առավոտյանից ի վեր կորսվել եր խանութը իր վրա թողնելով. վողջ որն ել «բոլ, անտաշ» գյուղացիների հետ ճղճղացել-աղմկել եր՝ մի քանի արշին չիթ ծախելու համար. և ի դժբախտություն ամենի, հարբելու, խմելու վո՛չ մի առիթ չեր ներկայացել:

Մարդը գինի յեր խմում, իսկ այդ շաբաթ, թարսի նման, վո՛չ մի կաթիլ գինի չկար վո՛չ իրենց տանը, վո՛չ ել խանութներում: Ջուր պետք եր տալ «զիժ» ողիին:

Ու նստել եր նա «տամա» խաղացողների կողքին, մեջքը դեմ տված պատին, կարճ փայտը վոտների մեջ, յերազուն, հազիվ խառնվում եր խոսակցությունների: Ուշքն ել-կատաղեցնողը հենց դա՛ յեր, դեպի գետեզրն եր, վորտեղից նրա ականջին եյին հասնում զուռնի և յերգերի զվարթ ձայներ...

Իսկ յեղանակը, վորքա՛ն լավ եր այդ որերը. գետինը չոր, յերկինքը պա՛րզ, այգիները պճնված կանաչով, ծաղիկներով, դաշտերը ժպտուն... ամեն ինչ քեֆի համար. մարդու յերգելը, պարելն ու վազվզելն եր գալիս:

Բանն այն եր, վոր մի շաբաթից ի վեր, ոգտվելով լավ յեղանակներից, հայտնվել եյին ցածի գյուղերից 5–6 յերիտասարդներ—այն անիծյալ Կիրակոսենց ազգականները— ու ամե՛ն յերեկո, նույնիսկ ցե-

ռեկը, զուռնաչի Համոյի աշակերտ Ղազարին հետ-ներն առած, մարդ չի իմանում՝ վորտեղից բոլ գինի գտած, նախ մի լավ կոնծում եյին գետեզրի կանաչ-ների մեջ, հետո զուռնան առաջներն առած, թափո-րով, յերգերով, անցնում եյին փողոցներից, և մինչև կես գիշեր թնդացնում գյուղը:

Յեվ ահա ա՛յդ իսկ «շան վորդիները», առանց Ջավադի, առանց նրա մասնակցության, այդ որ չա՛տ ավելի աղմկարար եյին դարձել այնտեղ—Սուքիասենց այգիների տակը, գետեզրին նստած: Կույր Մարտի-րոսենց Արամի զիլ ու քաղցր ձայնն էլ խո՛... կա-տաղությունից տրաքեցնում եր կաղլիկին:

— Եդ վո՞րտեղ են քեֆ անում դրանք.—հարցրել եր նա գյուղացիներին:

— Գետի ղրաղումը, Սուքիասենց բաղի տակը...

— Հը՛մ, տո՛. բաս համբերելու բա՞ն եր: Ինքն այնտեղ նստած, իսկ ուրիշները Սուքիասենց սիրուն հարսի առաջ բայաթիներ կլկլացնեն և Ջավադն իր ձայնը լսեցնելու սիրտ չգտնի «հրեղեն» Մարանին:

Չկարծեք թե Ջավադը կին չուներ: Ի՞նչու վոչ: Մինչև իսկ յերեք վորդի, կինն էլ դաշտի գյուղերի մի լավ օջախից: Բայց, դե՛հ, Սուքիասենց հարսին ո՞վ տեսներ՝ վոր ջանը կրակ չնկներ. այն էլ Ջավա-դի պես քաղաքին սովոր, սիրուն «մաթուշկաների» հետ նստած-կանգնած, ճաշակը «պարզացրած» մար-դը...

Սուքիասենց հարսն էլ—մեղա՛ աստծու, մի քանի անգամ արտը գնալիս ժպտել եր Ջավադին, խոսքե-րին պատասխանել. մինչև իսկ—ղուշա՛խ Ջավադ—աչքով անելուն ժպիտովը քաշալերել:

Սակայն այդ որ բանը թարսվել եր: «Շան տղեր-քը» առանց իրեն՝ քեֆը չաղացրել եյին հենց ճի՛շտ սիրուն Մարանի տան պարտեզի տակը, և Ջավա-դի փոխարեն, Արամն եր ձենը գլուխը քցել:

Սատանեն ասում եր մեկ վե՛ր կաց, գնա նրանց մոտ, բոլորին գենը տուր, զուռնեն քոքիր, ձենդ գլխիր ու վողջ գյուղի հարսներին էլ տներիցը դուրս թափիր...

Հենց ա՛յդ մտածության մեջ դուռն ընկել եր ջա-նը. մի րոպե յեվս և գուցե վազքի յելներ, վոր հան-կարծ յեղբայրը—տանուտերի ողնական Թորոսը, կա-տաղած ու գոռգոռալով՝ հրապարակ եր նետվել գզի-րի հետ:

Արդյոք ի՞նչ եր յեղել, ի՞նչ կար: Հա՞րբելուց եր, թե՞ մեկը քյոխվի քեֆին կպել եր:

Ամենքը թողին իրանց զբաղմունքը: Խմբակները լուծվեցին, Խոլերան ուղղվեց և վազքի յելավ, Գա-լոն առաջ գնաց, հրյան այլանդակ ակնոցների վերե-վովը դարձավ, նայեց, վարժապետը, կարմիր քարե-րը բռան մեջ՝ առաջ քայլեց, իսկ Ջավադը յերկու-փոստյունով դեպի յեղբայրը վազեց:

— Եդ ի՞նչ ա ըլել, քյոխվա, ձչաց Գալոն—ի՞նչի ես ղաղաղել:

— Տո յե՛ս նրանց հոր... տո յե՛ս նրանց պապե-րի օխտը ջինսը... բա ըտենց բա՞ն եք տեսել, խալ-խը...

— Ի՞նչ կա, մոտեցավ Գալոն չարամիտ ժպիտով,
— ո՞վ ա նեղացրել քյոխվին, ա՛ Սահակ...

Հետզհետե շրջապատեցին քյոխվին, վոր քայլեց դեպի Գալոյի պատշգամբը և այնտեղ, նստեց նստա-րանի վրա:

— Աղա՛ բաս... շարունակեց նա մորակը դեմ-նին խփելով. բաս յես քյոխվա չե՞մ... տո բաս դո՞ւք չեք ընտրել ինձ, բաս քյոխվության ցեղը (չղթան) հրես ջրո՞ւմս չի... Ա՛յ յես նրանց...

— Հլա մեկ սսա՛, Թորո՛ս, հորդորեց Գալոն— ըտենց ի՞նչի ես բարկացել... ի՞նչա ըլել... Տո ջհա՛ննամը թե մի բան էլ պակասություն ես տեսել, ի՞նչի յես իղուր քեզ կտրատում...

Գյուղացիք խմբվեցին խանութի առաջ և շրջանը սեղմվեց: Ջավադը դարձյալ ճարպիկ դառնվելով, հաջողվեց նստարանի ծայրը բռնել՝ թողնելով վոտքի վրա թե՛ Խոլերային և թե՛ մյուս ծերունիներին, իսկ վարժապետը, կարմիր քարերը դեռ բռան մեջ՝ կանգնած մնաց Գալոյի կողքին, շարունակ հայհոյող քյոխվի առաջ:

— Դե սսա տեսնենք, Թորո՛ս, ճչաց Գալոն—եդ ի՞նչ ա ըլել, վոր կրակ ես դարձել...

Ծաղր, հեգնություն, ամեն ինչ կար նրա ձայնի մեջ, աչքերն էլ թարթում եր ու ակնարկներ անում սրան-նրան, բայց քյոխվեն և վոչ իսկ ուշադրություն դարձրեց:

— Տո ի՞նչ ասեմ, ճչաց նա—ասելու բա՞ն բան ա, վոր ասեմ... ըսենց բան սկի իմ որումը չեյի տեսել ու լսել... Տո բաս էլ ինչացո՞ւ քյոխվա եմ, վոր գզիրին քարով խփեն, փափախին բամփաչեն, հլա մի ստաքան էլ կարմիր գինով դունչն ու մռութը լվանան... Հ՞ը, ա՛ խալխը, տեսնվա՞ծ բան ա սա...

— Հա՛, հա՛ արեց գզիրը խեղճ-խեղճ.—չա՛տ ասի թե մի անեք, լավ չի...գի՛նին ելա, ասի, տվեք յես

խմեմ, ամա չեղավ... Ա՛յ, ըսե՛նց սա՛ղ փափախս լվացին, շորերս գինոտեցին...

— Փի՛ե... կանչեց Ջավադը— բա գինին էլ կթափե՞ն... շան տղերքը ջրի տե՞ղ են դրել...

— Աղա եդ ինչե՛ր եք ասում է՛հ՛... դոռաց քյոխվեն-ի՞նչ գինի, ի՞նչ փոտան... խոսքը գինի՞ն ա, թե՞ իմ հրամանը վոտնատակ տալը, գզիրիս թակե՞լը...

Ապա հանկարծ դարձավ դեպի գզիրը և ձայնեց.

— Տո շա՛ն տղա, դու գզիր չե՞ս, հասարակությունը քեզ իշխանություն չի՞ տվել... ո՞ւր ես բաս եդ յերկար չոմբաղը ձեռքիդ ման ածում, չեյի՞ր կարալ նրանց կողքերը մի լավ ջարդի...

— Դե ելավ վոչ, քյոխվա, ի՞նչ անեմ... Շատ եյին, համ էլ հա՛րբած...

— Տո հրես յես խմա՞ծ չեմ... կուզե՞ս, ես դամ-չին ընենց մեկ վրա բերեմ փափախիդ...

Վարժապետը, վոր լուռ լսում եր, համբերությունից դուրս գալով, բռան քարերը դեն շպրտեց ու ջղայնությամբ ասաց.

— Ի՞նչ ես ծմծմում, Թորո՛ս, քեզ բան են հարցնում. ասա, ին՞չի ես ձենդ գլուխդ քցել:

Քյոխվեն զգաց բարկությամբ ասված և հրամայական շեշտ կրող այդ խոսքերը և խեթ-խեթ ուսուցչին նայեց:

— Հը՛մ... արեց նա— ի՞նչ ա ըլել... ինչի՞, բա դու խուլ խո չե՞ս. չես տեսնում վոր եդ սալախները (սրիկաներ) ես ա մեկ շաբաթ՝ սաղ որը, գիշերը, զուռնան առաջները քցած, գինին ջրի պես խմելով, տաղ ասելով՝ հոգիներս հանեցին...

— Յանի դա քե՞զ ինչ. ավելի բարկացավ վարժապետը— կարա՞ս դո՛ւ էլ արա, ո՞վ ա ձեռքդ բռնել... Ե՞դ էր, դրա՞ համար էյիր փրփրել... Տեսնո՞ւմ եք, ա խա՛լխը, հիմիկանց ղենը առանց քյոխվի իրավունքի քեֆ անելն արգելված ա ... վե՛ր, վեր կաց գնա քնի... շա՛շ...

Ասաց, արհամարհաբար թևերը շարժեց, ճղեց բազմությունը և գնաց դարձյալ իր «տաման» շարունակելու:

II

Մութն սկսում էր կոխել այդ միջոցին: Յերեք խանութներում ճրագները վառել էյին, իսկ բազմությունը ավելանում էր հրապարակի վրա: Յերևում էյին օտար գյուղացիներ էլ, վորոնք հյուր էյին այդտեղ:

Ավելի շատ, բնականաբար, Գալոյի «մաղազինի» առաջն էյին գալիս կիտվում: Վորովհետև, չնայելով, վոր վարժապետի կոպիտ վարմունքն ու խիստ շեշտերով ծաղրը հանկարծակիի յեր բերել քյոխվին, սակայն նա բուռն կատաղությունից մի րոպե կարկամած մնալուց հետո, մեկե՛ն վոստնեց, նախ մի քայլ առավ դեպի վարժապետի կողմը, ապա դարձավ, իրանը յետ ծռեց, վոտների վրա լարվեց, բռունցքով մի հարված տվավ կարտուզին և ճչաց.

— Վո՞նց թե «չաչ»... վո՞նց թե՝ «գնա քնի»... բա յես մարդ չեմ թե պրատակոլ[1])... ցեպս, ցեպս) վո՞րդի ա...

---

[1]) Տեղեկագիր. [2]) Տանուտիրական նշանը—շղթա:

— Հա՛-հա՛հա՛... քրքջաց Գալոն—ա՛յ թե զլեցին քեզ հա՛, քյոխվա... Արի՛, արի նստիր... Տո դուն ո՞ւր էս նեղանում, վոր ջահիլները քեֆի են ու քեզ չեն կանչել...

— Ախր էդ չի է՛է՛, Գալո՛ ամի, համարձակվեց միջամտել գզիրը—էդ չի՛... Ո՞վ ա նրանց բան ասում...

— Ձենդ կտրի, լպստա՛ծ... քու ի՞նչ բանն ա, կանչեց քյոխվեն—թող հլա մի տեսնանք են վո՞ր հարամզադեն էր ինձ «չաչ» ասողը... վարժապետ էս, ի՞նչ զահրումար էս, հլա մեկ դեսն արի...

— Դե՛, ձե՛նդ, ձե՛նդ... կանչեց կանացի ձայնով սյունի մոտ կանգնած մի կարճահասակ ծերունի— տեղդ վեր ընկի, քու բերնին չի ընկել տերության վարժապետին...

— Էդ ո՞վ ա, էդ վո՞ր...

— Յես եմ... վարժապետի հերն ա... տեսնո՞ւմ էս էս չոմաղը... բան ունես՝ ասա... բաս վոր դու շաշ չըլես, քու ի՞նչ բանն ա թե մեր ջահիլները, մեր ղոնաղները քեֆ են անում, զուռնա ածում, յա գինի խմում...

— Փի՛է; փի՛է... վոտքի յելավ Զավալը —սաղ Կիրակոսենց ջինսը ուզում եք վրա՞ տալ մեզ:

— Ա՛ խալխը, ձայնը բարձրացրեց վերջապես գզիրը,—մեկ թողեք յե՛ս պատմեմ է՛է՛...ախր քեֆի բան չի... գիշերվան ղարաուլի համար ա՛, ղարաուլ՛...

— Վո՞նց... ղարաուլ՞... ինչի...ի՞նչ կա...

Ամեն կողմից հարցեր տեղացին, ամենքը խառնըվեցին իրար: Զավալը վեճի բռնվեց Կիրակոսենց

ցեղից Հաբեթ աղի տղայի հետ և այն էլ թունդ վե-ճի, վորովհետև յերկուսն էլ կոկորդ պատռելու չափ գոռում եյին. Խոլերան փափախը յերերցնելով ճգնում եր խոսք հասկացնել խռնվող և շրջանը քան-դող գյուղացիներին. ալյուրոտ Զաքեն, մարդ չեր հասկանում թե ի՞նչու յեր աղաղակում կարմրամազ Սմբատի ականջն ի վեր. յերկարավիզ Գևլոն էլ, վիզն ածիլած պայտար Խեչոյի դեմքի մոտ լարված՝ համառ կերպով ճչում եր ինչ վոր անհասկանալի բա-ռեր...

Մի խոսքով, մի այնպիսի խառնուրդ աղաղակ-ների, ձայնի զանազան յելևեջների, վոր չներն ան-գամ սկսեցին հաչել ամեն կողմից: Վարժապետն ու Հրյան միայն անդրդվելի, թեյեվ դադարել եյին խո-սելուց, բայց նստած մնացին. այլև Արշակը, վոր իր վո՛չ կանգնած դիրքը փոխեց, վո՛չ էլ դեմքի ան-տարբեր հայացքը:

Յեվ այդ տեվեց յերկար: Միմյանց չհասկանալը կարծես պայման եր դրված, իսկ աղաղակելը՝ միակ խոսակցության և վեճի ձեվ: Սակայն քիչ-քիչ ճչա-ցողների թիվը նվազեց և նրանց միջից դարձյալ դուրս նետվեց քեոխվի ձայնը, վոր գոռում եր.

— Տո խեղդելո՞ւ եք... բաս ղարաուլ չըլի՞, բաս գեղը առանց ղարաուլի՞ մնա...

— Ինչի՞, նրա դեմը կտրեց մեկը— բա ուրիշի չտեսա՞ր, վոր յերկու անգամ իրար վրա նրան ես ղրկում...

— Հա՛ տո... կանչեց մի յերկրորդը— հարուստ-ներին թողնում ա ու աղքատների ջա՛նին ընկնում...

— Դե վո՞նց անենք, քյոխվեն ի՞նչ անի, պաշտ-պանեց քյոխվին Գևլոն՝ չարախնդաց—վո՛չ վոքի չի գնում... համ էլ ի՞նչի զուռնա ածի Ղազարը...

— Պտի գնա, բա՛ս, պնդում եր Զաքեն,—հերթը իրա՛ն ա ընկել. էլ ինչացո՞ւ ա քյոխվեն... հրամա՛-յում ա, պիտի կատարես...

— Ըստեղ մտիկ տու, ըստե՛ղ, քյոխվա, նետվեց դեպի Թորոսը՝ պայտար Խեչոն և յերկար վզով գլու-խը քիչ մնաց կոխեր տանուտերի բաց բերանը,—յանի քի՞չ ա պատահել վոր հենց ըտենց չեն գնացել... յա թե չե՝ գնացել էլ են, ճթնելու պես փախել են ու տները մտել, հ՞ը...

— Դրո՛ւստ ա ասում Խեչոն, վրա բերեց Սմբա-տը—էլ դրա համար, ո՞ւր եք եսքան ղալմաղալ քցել... ուրիշը դրեք ու պրծավ գնաց...

— Վո՞նց կըլի, գոռաց այն կողմից Զավադը— հերթը նրանն ա, նա էլ պիտի գնա... կարա՞ զուռ-նեն քյոքի ու գեղի հարսներին դուրս թափի... չա՛ն տղերքը... սալախանանե՛ր... կատա՛ղել են, դինին ջրի պես են վեր ածում...

Այդ միջոցին դլիրը, վոր մի կողմը քաշվել՝ յերկար փայտը ձեռքին, սրան-նրան եր հորդորում հանդարտելու հեռվից, հանկարծ վոստնեց դեպի նա մի յերիտասարդ, բռնեց նրա թևից ու ձայնեց.

— Հրե՛ս ա, քյոխվա, բռնել եմ մեկին... հենց սա՛ եր, վոր հյուջաթ եր անում թե Ղազարին չեն թողալ, թե հերթը նրանը չի... հենց սա՛ ա...

— Հա՞... թռավ դեպի նա քյոխվեն— ե՞ս չան տղան... Հլա մեկ դենը կացեք տեսնենք ետ ո՞վ ա, վոր քյոխվի հրամանքին դեմ ա կանգնում... Դու ո՞վ ես, ա՛ չան տղա...

Յերիտասարդն ոտարական էր: Ապշած այդ հարձակումից, մի րոպե շվարած՝ լուռ մնաց, հետո ասաց վրդոված զայրույթով.

— Ի՞նչ ես ռեխդ ցրիվ տալիս. չի՞ ըլել վոր քիչ քաղաքավարի խոսաս... Հա՛, հենց յես եմ ատողը...

— Ինչի՞ տո, չա՛ն թուլա... Դու ո՞վ ես, ի՞նչ մարդ ես ըստեղ. տեհնա՞մ մեկ պասպորտդ...

— Քարկողցի եմ. հետո...

— Տո բա դուք մեր դեղն եք յեկել, վոր լոթությո՞ւն անեք... տո բա յես մեռա՞ծ եմ ըստեղ, վոր թողամ սաղ չարաթ զուռնեն առաջներդ քցեք...

— Ասելիքդ ասա՛... միջահատեց խստությամբ յերիտասարդը:

— Զոռու ցա՛վ տանեմ, ի՛նչի տղա...ձայնը բարձրացրեց քյոխվեն,— դու ի՞նչ ես, ի՞նչ հորս ցավն ես, վոր համարձակվում ես գյուղիս յերեսին գինի շպրտել, փափախին դմվացնել...

— Զե՛, քյոխվա, միջամտեց գզիրը—սա չեր թափողը... սա հենց ընենց, խոսքո՛վ...

— Դու սու՛ս, հարամզադա՛, մորակը բարձրացրեց նրա վրա քյոխվեն,— յերբ քյոխվեդ խոսում ա, դու ձենդ կտրի... Հը՞ը, տղա՛— դարձավ նա յերիտասարդին,— ասա տեսնա՞նք, դու ո՞ւմ շունն ես, վոր սաղ չարաթ ղալմաղալը քցել ես գեղը, հլա քյոխվի հրամանին էլ դեմ ես գնում...

— Քյոխվա, կանչեց այն կողմից մի յերկարհասակ ծերունի—ա՛յ տղա, ըտենց բխարու խոսքերո՞վ կխոսան գոնաղի հետ... ի՞նչի քաղաքավարի, մարդավարի չես խոսում, վո՛րդի...

Քյոխվեն բարկացավ, բուռն շարժմամբ դարձավ դեպի ձայնի կողմը և կանչեց զայրագին.

— Տո ձե՞զ ինչ, դու՛ք ի՞նչ գործ ունեք իմ դատաստանի մեջը... Ղոնա՞ղս վո՞րնա... Ղոնաղը յեկել ա վոր մարդավա՞րի պահի իրան, թե՞ զուռնեն առաջը քցած, գինու բութիլկեն խառած՝ դեպի քուչեքովը պտուտ տա ու մեր ջահիլներին էլ պժվացնի, իմ հրամաններին դեմ դնի, գզիրին թակի... Հը՞, ա՛ չան թուլա, խոսա տեսնա՞նք, դու ի՞նչացու ես վոր...

— Քյոխվա, մեջ մտավ Գալոն,— յանի հերթը դրո՞ւստ Ղազարին ա, թե չե հենց ընենց, ուզում ես ջահիլների քեֆը խափանես՝ ընտուր նրանց զուռնաչուն խլում ես... արի՛ դրուստն ասա, դո՛ւ քո աստվածը...

Գալոն հարուստ, հետեվապես ազդեցիկ մարդ եր: Թորոսը շատ էլ ուզում եր մի լավ հայհոյի նրան, ուզում եր մի լավ «շշպռել» նրա հոգին լուսաբանող այդ կաչաղակային ծերունուն, բայց մտածելով հետեվանքի մասին, կուտակվող կատաղությունը զսպեց և ասաց բարկությամբ.

— Տո բաս էլ ինչա՞ցու քյոխվա եք դրել ինձ, վոր իմ ձեռքումս չըլի ղարավուլ նշանակելը:

— Դրու՛ստա, քո ձեռքումն ա, առարկեց Գալոն ժպիտը դեմքին,—բայց հերթը Ղազա՞րինն ա, ե: Արի դրուստը խոսա, ախպե՛ր... Ասենք բարկացել ես, վոր ես ա մի շարաթ քեֆ են անում ու սկի քեզ մարդատեղ էլ ա չեն դնում—կանչեն մի ստաքան գինի խմացնեն... Իհարկե, դա լավ չի, ամոթ ա նրանց համար, բայց դե՛, ջահի՛լ են, բախշի՛ր...

— Ինչե՞ր եք ասում, ինչե՞ր... աղաղակեց Քյոխվեն, կեղծ վիրավորված ցույց տալով իրան— յես նրանց դինո՞ւն եմ հասրաթ. դինի վոր ուզենամ չեմ կարող ձի հեծացնել ու Վլադիմիրովկից բերել տալ... Ասում եմ՝ հերթը հենց նրանն ա վոր կա, նրա՛նն ա...

— Եդ բա ինչի՞ հենց ուժդ աղքատներին ա պատում, մեջ մտավ յերիտասարդ հյուրը. Ղազարն ասում եր վոր հերթը իրանը չի ու ձեր, հենց Սարոենց Մուրադինն ա...

Քյոխվեն այլես զսպել չկարողացավ իրան և ամբողջ զայրույթը դուրս թափեց հյուրի վրա, մանավանդ, վոր յերևան եր հանվում իր կողմնապահությունը:

Մի քայլ առաջ նետվեց և առանց այլեվայլության մտրակը շառաչեցնելով՝ ուժգնությամբ իջեցրեց յերիտասարդի մեջքին:

— Շա՛ն տղա, քե՞զ ա մնացել խոսա՛լը... ըհ՛ը քեզ...

Իսկույն դրան հետևեցին աղաղակներ, հյուրը նետվեց դեպի Քյոխվեն՝ բռունցքները բարձրացրած, մարդիկ խառնվեցին իրար, ու մի քանի րոպե ճիչ, աղմուկ, շարժում, հայհոյանք խլացրին ամեն այլ ձայն:

Այս անգամ վարժապետն ու Հրյան վազեցին դեպի խառնուրդը, մինչեվ իսկ Արշակը թողեց խանութի շեմքը և մտավ կռվողների մեջ:

Յերիտասարդ քարկոցցին սաստիկ կատաղած ճղնում եր իրեն բռնողներին և հորդորողներին դեն հրել և հասնել Քյոխվին: Իսկ սա, մեկե՛ն կարծես

սթափված յետ եր քաշվել և թույլ եր տալիս վոր յեղբայրն ու այլ գյուղացիք նախ խլեյին ձեռքից մտրակը, ապա հորդորանքով ու համոզելով տանեյին մինչեվ իրանց խանութը, վորովհետեվ Կիրակոսենց ցեղի մարդիկ վրդովված ձայները բարձրացնում եյին:

Քարկոցցին կույր Մարտիրոսի ազգականներից եր. հետևապես բոլոր ներկա յեղող Կիրակոսյանները պաշտպանության յելան: Վարժապետի հայրը իր կանացի ձայնով սկսեց ճչալ, Գալոն կաչաղակային աղմուկը մեծացրեց, Հաբեթ աղայի վորդին ջանաց կտրել Զավալի դեմը, իսկ սա, Թշվառ կաղիկը, լրջորեն վախեցած՝ գոռում եր ու հայհոյում անխտիր, առանց հասցեյի...

Մինչ այդ, Խոլերան դուրս սլրտեց և տուն գնաց. ալյուրոտ Զաքեն, կարմրամազ Սմբատը և գունաչի Համոն միմյանց դեմ յեկած՝ բարձրաձայն գոռում եյին, վոր Քյոխվան անիրավ եր, վոր նա իրավունք չուներ խփելու, իսկ մի յերկարհասակ ծերունի—Վոսկանենց Հարությունը— իր խրոխտ ձայնով կանչում եր թե այդպես ել պետք եր և թե չպետք եր թողնել վոր զանազան «լոթի-փոթիներ» դայլին գյուղի մեջ աղմուկ հանելու, հնազանդությունը վերացնելու որինակը տալու...

Վարժապետն ել խոսում եր, բայց նրա ձայնը չեր լսվում ժխորի և աղմուկի մեջ: Հրյան լուռ եր, ըստ յերևույթին սովո՛ր այդպիսի տեսարանների:

Արբած տանուտերին հաջողել եյին վերջապես իր խանութի առաջը հասցնել, ուր նա նստարանի վրա ընկած, դեռ կտրվել չեր կամենում, շարունակում

էր հայհոյել, պնդել վո՛ր քիչ էր տված ծեծը և վոր դեռ մտադիր էր բոլորին էլ իր «ղամչու համը ցույց տալ»...

— Շան թուլանե՛ր... ասում էր նա—մաղամ անո՞տեր ա էս գեղը, վոր դո՛ւք գաք ու լոթության տաք ձեզ... մաղամ յես մեռե՞լ եմ... իշի լակոտնե՛ր, ըռնե՛նց հա... հմի գնացեք ու տեսնանք վո՞նց եք քեֆ անում...

III

Բարկոզցի ծեծ ուտողին խկույն շրջապատեցին և գրեթե զոռով, քաշեքաշ հանեցին հրապարակից, համոզելով լինեք կամ աղաչանքով՝ անցկացրին առվից և հասցրին ու ներս ձգեցին կույր Մարտիրոսի տունը:

Այնտեղ էր նա հյուր: Սաստիկ ղայրացած, չկարողանալով կատաղությունը թափել մեկի վրա, անզոր՝ իրան համոզողների դեմը և փակողների հազորներից խռովության հասած ձայնով աղաղակում էր անընդհատ...

— Աստված սիրողը բաց թողնի ինձ... թողեք գնամ յես նրա ջանդակը փռեմ մեկ... ինձ ծեծե՞լ... տո թողե՛ք է, յես կորաքեմ հիմի... բա դուք Աստված չունե՞ք, բա ինձ սպանե՞լ եք ուզում... թողեք ասում եմ է՛է՛...

Ու ամեն ճիգ, ամեն ույժ գործ էր դնում իրան բռնողներից ազատվելու և յետ դառնալու դեպի հրապարակը: Կռանում, քար էր վերցնում, սպառնում էր շան պես սատկացնել քյոխվին, աղաչում էր բաց թողնել... մինչև իսկ կատաղությունից արտասվել

սկսեց... բայց նրան հորդորող գյուղացիք չա՛ռ լավ զգալով թե ինչ պիտի լիներ հետեվանքը, յեթե արգելք չլինեյին ավելի ույժով հրեցին—հրմշտկեցին նրան, ներս ձգեցին և դռները փակեցին:

Լուրը հասել էր գետեզրում յեղած նրա ընկերներին և այժմ թե՛ զուռնաչին և թե՛ քեֆ անողները հուզված ու զայրացած մի առ մի հասնում եյին ու ներս լցվում:

— Սարգիս, քեզ մատաղ... գրեթե գրկել՝ հանգարտեցնում էր յերիտասարդին կույրի կինը. դա՛-դեա առնեմ, հանդարտի՛ր, հլա մեկ նստի, թա՛գ... դո՛րձանք կհանես...

— Տո թողեք է՛է՛... կանչում էր անդադար Սարգիսը— ի՞նչի, նա ո՞ւմ շունն ա վոր ինձ խփի... թողեք գնամ փորը թափեմ. բա յես քարկոզցի ըլեմ, Շուշանենց Կարապետի տղան ու պամ Դուզան ծե՞ծ ուտեմ Սարոենց շան ձեռքից...

— Սարգի՛ս, ա՛ Սարգիս... կանչեց իր թախտի վրայից կույր Մարտիրոսը, վորին չտապել եյին պատմել յեղածը—հլա մեկ դե՛ն արի... աղա մեկ ձեններդ կտրեք տենամ է՛ է՛... մեկ դեսը բերեք դրան... Ա՛յ տղա, դու չե՞ս վոր խելոք տղա եյիր, էս ի՞նչ ա ըլել քեզ... հլա մեկ ըստեղ արի՝ կողքիս նստի...

Բայց ով էր լսողը: Սարգիսը քանի գնում՝ կատաղում էր. անձնասիրությունը խորապես վիրավորված էր. վոչի՛նչ չէր լռեցնում նրան. գոռալուց ձայնը կտրվում էր, իրան բռնողների ձեռքից ազատվելու ջանքը հուսահատ կվլի հասցրած դեն էր շպրտում տանտիկնոջ, հարսին, աղջկան...

— Պոխ սպանե՛մ, ո՞ւր ա ղամես... յես քարկոզցի ըլեմ ու մեկ քոսոտ Թորոսից ծե՞ծ ուտեմ...

— Սարգի՛ս, ճգնում էր հանգարտեցնել նրան տանուտիրոջ աղջիկը, բռնած յերիտասարդի ձեռքը. Սարգի՛ս, քեզ մատաղ... բաս դու սկի մեզ չե՞ս սիրում... հանգարտի՛ր:

Ճշմարիտ ե, այդ սիրալիր աղաչանքները ազդում եյին յերիտասարդին, բայց ծեծ կերա՛ծ, խայտառակվա՛ծ և այն էլ անպատասխան թողա՛ծ...

— Տո գոնե մի հատ էլ յե՛ս խփեյի, նա՛մարդներ... կանչում էր նա—բա յես պատի՞վ չունեմ... Ասա՛, Մարգարի՛տ, վոր ասում ես թե հանգարտեմ, բա դու կմարսե՞ս վոր Սարգսին ղամչիով ծեծեն շան նման ու նա սուս կենա...

— Ա՛յ տղա Սարգի՛ս... ձայնում էր կույրը—փիե՛... տո էդ ի՞նչ էլավ քեզ, խո չգժվեցի՞ր ... գեսը բերեք դրան... տո գինի բերեք... ո՞ւր ա զուռնան, Ղազարին կանչեք ըստեղ... աղջի, Մարգարի՛տ, գնա Արամին ձեն տուր ըստեղ...

— Ըստեղ են, հայրի՛կ, Ղազարն էլ ա ըստեղ...

— Ա՛յ տղա մի զուռնեն ածեք չուտ ե՛ ե՛... փի՛ն—ի՞նչ եք թողնում խեղճ տղան ինքնիրան սպանի...

Նախագավթից, ուր կատարվում էր այդ ճնշող տեսարանը, վերջապես հաջողվեց ներս բերել յերիտասարդին և կույրի նստած մեծ թախտի ծայրին նստեցնել: Ցեվ այդ՝ հաջողվեց Մարգարիտին, վոր վճռականորեն, իր ուժեղ բազուկներով գրկեց յերի-

տասարդին, քաշեց ներս և յերբ նստեցրել էր, ձեռքը իր ձեռքի մեջն առավ ու չթողեց վոր շարժվեր:

Աղյուծը մեղմանում էր, թեյեվ կուրծքը յելնում—իջնում էր, կոկորդից խռպոտ մռնչյուններ էր արձակում և յերբեմն ճգնում էր ձեռքը նույն իսկ Մարգարիտի ձեռքից ազատել և գնալ ջախջախելու «քոսոտ շանը»:

— Ա՛յ տղա, խոսեց մեղմությամբ կույրը— բա ըտենց բա՞ն կըլի․դու խո յերեխա չե՞ս—ի՞նչ ես գըժվել ու կատաղել... տո ջհա՛նամը թե մի հարբած շուն կծել ա քեզ... դու նրա հախիցը գալն ի՛նձ թող. յես եգուց մեկ քյոխվա չինեմ նրան, վոր էլ չմոռանա... Զուռնան ի՞նչի չեք փչում, տղե՛րք... Գինի բերեք, ո՞ւր եք քեֆներդ խարաբ անում ... հե՛րն անիծեմ քյաչալ Թորոսի, մի ընե՛նց քեֆը գլեցեք, վոր սաղ Սարոենց թաղը ժաժ գա... Աղջի Մարգարի՛տ, վո՞րտեղ ես...

— Ըստի եմ, հայրի՛կ...

— Դե՛ ասա սեղանը քցեն, պանիր-բան բերեք ու ըստե՛ղ հիմի քեֆը սկսենք...

— Ջե՛, ամի՛, խոսեց յերիտասարդը հեվալով-չե՛, յես մինչեվ նրան մի լավ չը ջարդեմ՝ չեմ հանգստանա... Հերս ի՞նչ կասի թե լսեց վոր Սարոենց Թորոսը, էն քնծռոտ Թորոսը ինձ ղամչիով ծեծեց ու յես սկի մեկ մա՛տովս էլա, չկպա նրան...

— Տո սուս ե՛ մեկ, ասաց կույրը—հորդ յես բանի եյությունը կպատմեմ... ախր վո՞նց կըլեր, քյոխվա ա մարդը, մեկ էլ տեսար պրխտավ—զադ... Հլա մեկ կաց լուսանա ու տենանք թե ինչի՞ ա խփել, ի՞նչ իրավունքով... Դու քու քեֆդ տես, յես ես

ա մեկ կերթամ դուքանները ու կիմանամ, թե են չունն էլ ընդի ելավ՝ հախիցը կգամ... Այ տղա, Սքամ, Ղազարն ո՞ւր ա, ինչի՞ չեք զուռնան փչում... փչե՛ք վորդի, փչեք ու քեֆներդ չարունակեք...

Ղազարը—զուռնաչին, վոր պատի տակ դունատ՝ կանգնած մնացել եր զուռնան ձեռքին, գլուխը թափահարեց ու ասաց.

— Զե՛, զարաուլի են կանչել, պետի գնամ, թե չե քյոխվեն հոգիս կհանի թակելով... առանց են էլ հլա տեռանք քանի՞ ղամչի եմ ուտելու:

— Վո՞նց... վռստնեց տեղիցը Սարգիսը— յես չա՛ն ծիծ կերած ըլեմ՝ թե քեզ թողամ գնաս... բա հերթը քո՞նն ա, տո՛, բա աշկարա չի՞, վոր նա մեր քեֆը խառնելու համա՛ր ա քեզ զարաուլ կանչում...

— Սարգի՛ս, սեղմեց ձեռքը և ստիպեց նստելու Մարգարիտը— հանգարտվի՛ր, հերիք ա...

— Փի՛ե... ձայնեց կույրը— եդ վո՞նց բան ա, հլա կացե՛ք... մեկ դե՛ս արի, Ղազա՛ր-ինչի՞, հերթը քո՞նը չի...

— Զե՛, ամի՛, յես անցած շաբթու գնացի. հերթը եսոր Սարոենց Մուրադինն ա, Սուրենինն ու Փիլոսինը... էլ չե՛մ իմանում թե ինչի՞ ա քյոխվեն ինձ նշանակել... կարելի ա Մուրադը գեղումը չի... ըտենց մեկ բան կըլի. դեհրին զրկեց թե հալբա՛թ պիտի գաս... քյոխվա ա, ի՞նչ ասեյի. յես ուզում ի գնալ, ամա տղերքը չթողին...

— Աղա եդ ի՞նչ եք ասում, ճչաց կույրը— վա՛յ յես նրանց հոր... ըտենց էլ անիրավությո՞ւն կըլի... անպատճառ նախանձում ա ու կամենում ա ձեր քեֆը խարաբ անի... Զգնաս, ու համ էլ զուռնեդ քյոքե՛ր

չուտ, մեկ լա՛վ քեֆ արեք, յես դրանց անիրավ հոգին... ինչի՞, ալան-թալա՞ն ա, մենակ քեասիբների՞ն ա տեսել... զուռնեդ քյոքե՛ր, Ջուղարը յես կտամ...

Ղազարը պահ մի շվարած մնաց, հետո վճռականորեն գլուխը ցնցեց, զուռնեն բերնին տարավ ու ասաց.

— Ջհաննա՛մը, ինչ ուզում ա, թող ըլի...

Ժպտեց, և հիրավի, զուռնեն այնպե՛ս զլեց, վոր խսկույն տունը դղրդաց, ամեն դեմքի վրա ժպիտ յերևաց և ձայնը մինչև հրապարակ հասավ:

Իսկույն գինին էլ յեկավ մեջտեղ, աշխուժությունը տիրեց ամենքին, հարսները սեղան չինեցին, Կիրակոսենց ջահիլները մի առ մի ներս լցվեցին և քիչ հետո խումբն ամբողջ վերակազմված՝ սկսեց մի աշխույժ պար սենյակում, մինչ դրսումը, տանիքների, քարակույտերի և դերանների վրա հավաքվում եյին մոտակա բոլոր տներից կանայք և մանուկներ՝ հանդիսատես լինելու զվարճության:

Հինգ րոպեյից հետո, չգիտեմ վորի նախաձեռնությամբ, մի սեղան դուրս բերվեց դռան առաջ, ապա մի լապտեր վառվեց քաղաքացիների պատըշգամբում, և հուսկ ուրեմն, հանդիսատեսները մոտեցան մի մեծ շրջան կազմելու, վորի կենտրոնը մտան միմյանց ձեռքերից բռնած յերիտասարդները և սկսեցին շրջապար:

Լապտերի լույսը աղոտ լուսավորում եր այդ բոլորը: Պարողները վռստոստում եյին, գյուղի աղջիկները մոտ եյին գալիս, հետո, քաղաքացիք էլ աթոռներ իջեցնելով՝ նստան, ավելացավ և մի թմբկահար,

բազմությունը չատացավ, գյուղի հրապարակը սկսեց այստեղ դատարկվել և գիշերվա խոր լռության մեջ յերաժշտության ու զվարթ կանչերի ձայնը սփռում եր գյուղի մինչև ամենավերջին ծայրը:

Իսկ Ջավադը, վոր մնացել եր խանութի առաջ, ավելի կատաղած՝ կարտուզը պինդ կոխեց գլխին ու մրմռաց.

— Ծա՛ն աղերքը... Մարանի տան կողքին են սարքել հիմի քեֆը...

Յեվ հիրավի Սուքիասենց տունը հեռու չեր. Թարսի պես էլ հենց ինքը «հրեղեն» Մարանը, կտուրից կտուր անցնելով՝ մի քանի հարսների հետ յեկել եր իմանալու հանդիսատեսներին և քիչ հետո էլ՝ պարողներին...

IV

Վարժապետը և վո՛չ իսկ շարժում գործեց, յերբ քյոխվային հրելով հրմշտելով՝ ստիպեցին նստել նրա բռնած նստարանի վրա, ճիշտ կողքին:

Վո՛չ միայն չխոսեց, այլև ճգնեց սառը կերպարանք ստանալու և պապիրոսը բերնին՝ մեջքը դեմ տված պատին ու անշարժ մնաց: Զգաց վոր քյոխվեն ի՛ր հետն եր սկսելու այժմ, բայց զսպեց իրան և սպասեց տեսնելու, թե ի՞նչ կլիներ:

Գալոյի խանութի առջևից գյուղացիք անցան քյոխվի առաջը շրջան կազմելու: Հրյան անհետացել եր. Ջավադը բռնեց նրա տեղը և վարժապետը, արձանի նման անշարժ, գտնվեց յերկու յեղբայրների մեջտեղը:

Քյոխվան նախ մի քանի րոպե շարունակեց իր մտրակվողի և գյուղը յեկած «սալախանների» հացեյին աղոտ հայհոյանքներ ուղղել, հետո հետզհետե ձայնը իջեցրեց, լսելով հորդորներին հանդարտվեց՝ և նոր միայն նկատեց, վոր նստել եր վարժապետի կողքին:

Դարձավ և մի րոպե նրան նայեց լուռ: Վարժապետը սառնադեմ, անշարժ, ծուխի մի սյունյակ միայն դուրս թողեց բերնից դեպի նա: Քյոխվեն կատաղեց, շուռ յեկավ և գրգռված ձայնով ասաց.

— Հիմի դանք քեզ, վարժապե՛տ... եդ յանի ինչի՞ դու մեջ ընկար, ինձ էլ ուշունցի կապեցիր. էլ «չա՛չ», էլ «գնա քնի»... Հը՞, յես քեզ ի՞նչ եյի արել...

— Վոչինչ, ասեց ուսուցիչը և ծուխի մի ուրիշ քուլա յել արձակեց դեպի նա:

— Փի՛ն... բացականչեց քյոխվան— ծուխի ճանապա՞րհ չկա, վոր յերեսիս ես շպրտում...

— Յերեսդ վոր չմոտեցնես նա դենը կերթա:

— Հազըր դու գլուխդ շուռ տա՛ս..

— Ըսենց էլ լավ ա. թե ուզում ես ծուխը դրա քեզ չդա՝ քիչ դենը նստի:

— Թարսվել ես, խաչը... քեֆդ տեղը չի...

— Зато, քո քեֆը լա՛վ տեղն ա:

— Չի՛ խմել եսոր, ընդո՛ւր ըտենց ա վարժապետը. նկատեց ծաղրորեն Ջավադը:

— Յես ամեն վախտ լակել չգիտեմ, ջանաց զըսպել իրան վարժապետը և շարունակեց անընդհատ ծուխ ժայթքել բերնիցը— ըլի՝ կխմեմ, չելավ՝ գեղը վոտքի չե՛մ հանի, թե ի՞նչ ա՝ խմելու զադ չունեմ...

— Ինչի՞, տաքացավ Քյոխվեն— յես խմելո՞ւ համար եր վոր բարկացել եյի:

— Հա՛ խմելու համար: Քեզ չեյին կանչել՝ ընդուր ել ղալմաղալը քցել եյիր, հլա ղամչի ել չարժեցիր... Տենանք եղուց ի՞նչ պատասխան կտաս ծեծվողին:

Քյոխվեն բորբոքվեց:

— Տո չա՛տ լավ եմ արել, բացականչեց նա—հլա են քիչ եր. հրես գնալու եմ գիփունանց կաշին պոկեմ ղամչով, գեղիցը դուրս քշեմ... Քո բերնին չի՞ ընկել ինձ չթողալը...

— Կթողամ, ինչի՛ չե... Գնա՛, վոր մի լա՛վ դնքսեն քեզ ընտեղ ու ճամփու քցեն:

— Ի՞նձ, ի՞նձ դնքսեն... տենանք են վո՞ր շունը կհամարձակվի... հրես գնում եմ. ո՞ւր ա ղամչիս...

Ու վոտքի յելավ:

— Դե լավ, Թորո՛ս, համոզեց նրան մի գյուղացի— դու ել, վարժապետ, ո՞ւր ես թաղաղան ըլում դրան:

— Փի՛, շարունակեց Քյոխվան— ըստո՛ւր մտիկ տվեք ե՛ե՛... ասում ա՝ կդմփեն... Տո են վո՞ր շունն ա, վոր ջուրաթ կանի... Դո՞ւ, քո ջի՞նը...

— Ջնսխս հանգիստ թող, ասաց վարժապետը, ձեռքերդ կվառվեն...

— Ձեռքերս վառողը տե՛ս, գոռաց տանուտերը,— դեն կացեք տենա՞նք, ա՛ խալխը... սա՞ ինչ ա ուզում ինձնից...Դու հլա մեկ տես քե՛զ վոնց եմ քաշ տալիս պրիստավի մոտ, վոր ինձ ուշունց տվիր...

— Աղա՛, կանչեց վարժապետը ծիծաղով— բերնիցդ մինչև ականջներդ քանի՞ դյաղ ա... բաս դու քո ուշունցները սկի չլսեցի՞ր...

— Յես քյոխվա եմ, դո՞ւ ինչ ես...

Այստեղ այլևս չկարողացավ զսպել իրան վարժապետը, շարժվեց, մեկե՛ն պապիրոսը նետեց, վռստնեց նստարանից ցած, դարձավ, գլուխը մոտեցրեց քյոխվին ու գոչեց նրա յերեսն ի՛ վեր.

— Ա՛ շան տղա, յանի չա՞տ ես խոսալու, յանի հլա չա՞տ ես գեղի գլխին ոյիններ սարքելու...

Հետո չթողնելով քյոխվին խոսելու, դարձավ գյուղացիներին և աղաղակեց.

— Ըստեղ մտիկ տվեք, ա՛ խալխը. էս շանը կարծում ա՝ թե ինքը վոր քյոխվա եղավ՝ իրավունք ունի բերանը ցրիվ տալու, ում ասես՝ ղամչի ուտացնելու. մենք ել ե՛ն ա, պտի մեջքներս դեմ տանք անսա՛ս, բերաններս փակենք, հլամեկ ձեռն ել պաչենք... Վո՞նց չե... Տո ախմա՛խ, վոր եղուց եդ-բարկողցին գնա պրիստավին գանգատվի՝ թե դու անիրավ տեղը ծեծել ես իրան ու յես ել վկա դառնամ— ի՞նչ ջուղաբ կտաս. կասես քյոխվա ես, ընդո՞ւր ծեծեցիր... Հլա կաց մեկ... Համ ել դու ընչացո՞ւ ես, քյոխվեն յեղած տեղը դու ո՞վ ես, վոր կրակում ես գեղը... Ա՛ խալխը, ինչի՞ չենք էս շան տղի ձեռիցը ցեպը առնում ու իսկական քյոխվի ձեռքը տալիս, վոր սա ըսենց լրբանա, մարդ թակի...

Այնքա՛ն արագ, այնքա՛ն միմյանց վրա և հետըզհետե ձայնը բարձրացնելով այս բոլորն ասաց վարժապետը, վոր քյոխվեն կատաղությունից դողում, չա՛տ ել ուզում եր պատասխանել, բայց միմիայն

կակազեց, խռպոտ մռնչյուններ արձակեց և միջոց չգտավ առարկելու:

Վարժապետն էլ խո՛... Գիտեր վոր, ինչպես պետական պաշտոնյայի (պետական դպրոցի ուսուցիչ էր ախր), քյոխվեն իր վրա ձեռք բարձրացնել չէր կարող: Այդ էր պատճառը հենց, վոր նա ավելի քայլում էր դեպի յետ-յետ գնացող տանուտերը և խոսքերով կարկտահարում նրան:

Գալոն, վորդին, մյուս գյուղացիք դարձյա՛լ խռնվեցին. Ջավադը շտապեց քաշվել դեպի խանութի դուռը:

— Տո՛... փիե՛... տո՛... կմկմում էր քյոխվան— տո հլա կաց մեկ է՛է՛... վո՞նց թե քյոխվա չեմ... վո՞նց թե՝ յես ո՞վ եմ... վո՞նց թե՝ չան տղա... ցեպս առնեն ձեռքիցս...

— Հա՛ հենց, ավելի բարձր գոռաց վարժապետը— դու պամոշնիկ[1]) ես, դու քյոխվա չե՛ս. քյոխվեն հրեն Կարա՛պետն ա. նա չի յետ կացել, դու ժամանակա՛վոր ես... Մենք քեզ էլ չե՛նք ուզում, հերի՛ք ա, ցեպը յետ տուր ու ռա՛դ ըլի դլխներիցըս...

— Վո՞նց, վո՞նց, տո... դու ո՞վ ես, պրի՞ստավ ես... փի՛ե... աղա Սահա՛կ, Ջավա՛դ, մեկ ձիս թամբեք գնամ պրիստավին՝ տենանք սա վո՞նց ա ինձ պաշտոնիցս դուրս քցում, յա ո՞վ ա, վոր ինձ ուշունցակոխ ա անում ըսենց...

— Ղորթ, կանչեց Ջավադը դռան մոտից— դու ինչացո՛ւ ես վարժապե՛տ, վոր մեջտեղ ես ընկել:

---

1) Ոգնական:

— Ջե՛նդ, հարա՛մզադա... կանչեց նրա վրա վարժապետը՝ ավելի և ավելի բարձրացնելով ձայնը — վո՞նց եք՝ ես ահալթիս մի թուղթ գրեմ պրիստավին, վոր քյոխվեն սաղ որը հարբում ա ու ղամչին առած՝ սրան նրան ծեծում, ղալմաղալը քցում, էլ ղոնա՛ղ ասես, էլ վարժապետ ասես...

Քյոխվեն հիրավի, սկսեց վախ զգալ այդ սպառնալիքից: Նա լավ գիտեր վոր վարժապետը գրել կարող էր և վոր պրիստավը առհասարակ բարեկամ լինելով ուսուցչի հետ, կարող էր հավատալ, քննություն բանալ, իրան պատասխանատվության տակ ձգել...

Սակայն դարձյա՛լ զայրույթը չատանում էր, զգալով վոր հարկավոր էր հաղթել, ճզմել գյուղի այդ ըմբոստին և չթողնել վոր գործը մեծանա:

— Վարժապե՛տ, մեջ մտավ մի ծերունի— դե հերի՛ք ա, ձեռք քաշի... ղալա՛թ արավ, էլ ինչի՞ ես կատաղեցնում, քեզ խո չխփե՞ց մարդը...

— Կարա՞ վոր... Նա ի՞նչ իրավունք ունի ծեծելու անմեղ մարդկանց, հարբի ու գեղը վոտքի հանի, սրան-նրան ուշունց տա...

— Փի՛ե... կատաղությունից իրան կորցնում էր քյոխվեն— տո տրաքեցի է՛է՛... տո ձիս տվեք է՛է՛... բա յես ես բեխերս կթրաշեմ, վարժապետ, թե հենց հմի չգնամ պրիստավի մոտ ու ղաղախ, յասավուլ չղրկեմ հետեվիցդ...

Ասաց, բազմությունը ճղեց ու յերբ մի քանի քայլ գնացել էր, դարձավ ու շարունակեց.

— Ըսենց բա՞ն եք տեսել... Ասում ա՝ քյոխվա չես, ինձ «ախմախ» ա ասում... վկա՛ ըլեք, ա՛ խալ-

խը... ի՞նչ ա, ինձ ուտե՞լ եք ուզում սաղ ջնավ, բա ըստեղ իշխանո՞ւթյուն չկա... Չիս բե՛ր, Ջավա՛դ, Սահա՛կ, չա՛ն տղերք...

— Քյոխվա՛, քյոխվա՛... հորդորում եյին մի քանի գյուղացիք— հերիք ա՛...

— Չէ՛, ե՛ս սհաթիս գնում եմ... Յես դրանց ցույց կտամ քյոխվին անպատվելը, քյոխվի կարգադրությունների մեջ խառնվելը...

Ու մեծ քայլերով, սպառնալից, գնաց գեղի վեր: Վարժապետը թողեց նրան զսպագալու, իսկ ինքը դարձավ գյուղացոց: Սկսվեց ժխորային աղմուկ, վեճ: Հարց ծագեց թե վորքա՞ն իրավունք ուներ տանուտերի ոգնականը հրապարակորեն մորակելու անմեղներին: Ուսուցիչը պնդում եր, վոր նա շատ եր յերես առել, վոր նրան հարկավոր եր պաշտոնից դուրս ձգել, հաշիվները պահանջել, և վոր այդ հաշիվները, ինքը ստույգ տեղից գիտեր, մաքուր չեյին: Նրա ցեղակիցները— Կիրակոսենք միացան նրան, Սարոենց կողմի մարդիկ հակառակության յելան...

Սուր կերպարանք ստացած վիճաբանությունը, վոր տարվում եր ժխորային աղաղակներով, մեծացավ, գրավեց ամենքին, սակայն վերջի վերջո կազմվեց մեծամասնություն և վճռվեց վոր հարկավոր է իսկական տանուտերին խնդրել պաշտոնը ստանձնելու և Թորոսին «ռադ անելու»:

Յեվ յերբ մթնել եր, խանութները սկսում եյին կողպել, վարժապետին հաջողվել եր շատ կուսակիցներ շահել, վորոնք վորոշեցին մյուս որն ևեթ Կարապետին ստիպել կամ հանձն առնելու քյոխվու-

թյունը, և կամ գնալ նոր քյոխվայի ընտրություն պահանջելու իշխանությունից:

Այս բոլորից հետո, յերիտասարդները վարժապետի հետ գնացին կույր Սարտիրոսի բաղը, ուր դեռ զուռնան փչվում եր և շրջապատը յերկսեռ դարձած՝ մեծացել եր:

Մյուս որը, հիրավի, մի եսաուլ մտավ գյուղը և հրաման բերավ պրիստավից գյուղաքաղաք ուղարկելու վարժապետին և կարմրամազ Սմբատին: Պարզ եր. Թորոսը անշուշտ գիշերով գնացել եր վարժապետին իբր խռովարար, մինչև իսկ իբր Փիդան ամբաստանելու:

Համենայն դեպս, կարմրամազ Սմբատը շատ վախեցավ: Վոչ վոք չկարողացավ յենթադրություն անել թե նա՞ ինչ գործ ուներ այդ խնդրում և թե նրա՛ն ինչու պրիստավը կանչել եր:

Մյուս որն առավոտյան մի կառք լծեցին, Գալոյի վորդի Արշակն էլ, վոր ապրանք ուներ առնելու, յելավ իբր կառավար և յերեքն էլ գյուղաքաղաք գնացին:

Գյուղացիք այդ ամբողջ որը մինչև յերեկո, հուզված եյին, տենդագին անհամբերությամբ սպասում եյին գնացողների վերադարձին:

Յերեկոյան դեմ հանկարծ գյուղի վերևից լսվեցին յերգերի և զվարթ կանչերի ձայներ, հետո մի կառք դղրդյունով իջավ և հրապարակ մտավ:

Ի՞նչ մուտք: Բոլորը հարբել եյին: Բոլորն եմ ասում, վորովհետև գյուղաքաղաքում վորքան դու-

կանգլինել կային, նախ մի գինետուն մտել—լավ կոնծել էյին, լցվել կուզը, ճանապարհին կանչվըռտել և այժմ ահա ահագին աղմուկներով՝ գյուղ էյին մտնում։

Պետք էր յենթադրել վոր հաղթական էր նրանց մուտքը։ Հիրավի, ամենից առաջ վար ցատկողներն էյին Սմբատն ու վարժապետը։ Սա այնքա՛ն լավ կոնծել էր, վոր հազիվ կարողացավ հավասարակըշռությունը պահպանելով՝ հասնել Գալոյի խանութի առաջ և ընկնել նստարանի վրա։

— Կչորտու[1])... գոչում էր նա— պըծա՛վ... Թորոսի բանը պըծավ... պա՛չոլ վոն, մե՛րզավեց[2])... պրիստավն ասաց, հլա քիչ մնաց, վոր մի լա՛վ դնքսեր...

Սպասող գյուղացիք խռնվեցին չուրջը։

— Հը՛մ... դեմքը կնճռեց Ջավադը։

— Հը՞... հարցրին վարժապետին գյուղացիք— պատմի՛ր, վո՞նց էլավ... ինչի՞ էր կանչել...

— Ցիղա՞ն[3])... վո՛նց տո... Թոթովեց վարժապետը—մեզ Ցիղան էր ասել... ըտե՛նց հա... Թորոսը պըծա՛վ. պրիստավը նրան «պաչո՛լ վոն» արեց...

— Հլա, մեկ պատմիր. ստիպեց նրան Գալոն։

— Քյոխվությունից քցեց... չարունակեց վարժապետը—հրամայեց ցեպը տիրոջը տալ, Կարապետին... ըտենց հա՛...

— Տո դըրո՞ւստ ... կանչեցին գյուղացիք—բաս

---

1) Սատանային գնա.

2) Կորիր դուրս, անպիտան։

3) Հեղափոխական անձնագրով։

քյոխվությունից ընկա՞վ Թորոսը... ա՛յ արել ա հա՛...

— Ընկա՛վ, ընկա՛վ. ժպտեց վարժապետը։ Գինին դես բերե՛ք, տղե՛րք... Պրիստավը՝ Թե «դո՛ւ, վարժապետ, խռովություն ես քցում»... «Վո՛չ, ձերդ ազնվություն, ասում եմ, սո՛ւտ ա, Թորոսն էր հարբել ու հասնողին ծեծում էր»... Քյոխվեն Թե՝ «սուտ ա, յես հարբած չեյի». «Ձերդ ազնվություն, ասում եմ, հրես հենց հիմի էլ հարբած ա յեկել ձեզ մոտ»... Պրիստավը աչքերը վոլորեց, մոտ գնաց քյոխվին, արաղի հոտը վոր չառա՛վ... «Պա՛չոլ վոն, մե՛րզավեց» արավ ու հրամայեց վոր ցեպը Կարապետին տա... Դուրս յեկանք, Խզրի դուքանումը մի լավ քեֆ էլ արինք ու ... տո գինին դես բերեք է՛ է՛ ...

ՍՏԱՐՇԻՆԱ[1]

1

Ընդոստ վեր թռա։

Ա՜խ այդ կաչաղակ տանտերս։ Դարձյա՛լ նա յեր։ Ամեն առավոտ այդպես զարթեցնում եր ինձ, հանգի՛ստ չեր. տալիս։ Ճչում եր թռչերի ամբողջ ույժով, գոռում եր ծառայի, գոռում հարսի, գոռում նո՛ւյն իսկ անցորդների վրա։

Անշուշտ ժամը հինգն եր։

— Աղա Մուկո՛ւչ, թաղե՞մ գլուխդ, եդ ո՞ւր ես բաղչի դուռը բաց թողել. եծերը պատրուսնին կերան է՜է... փի՛ե, տո դո՛ւս քշի, հարամ կերած... Եդ ո՞ւր ես առտեհան՝ բողկերը դուս տալի, Վարդան. գնա՛ կորի տուն, հլա մեկ չայդ խմի... Հա՛րսի, Սաթենի՛կ, յեկեք ես լակոտին տարեք է՜է...

Յեվ այսպե՛ս, աչքիցը վո՛չ վոքի չեր վրիպեցնում։ Մե՛կ իր թոռան, վոր մտել եր անշուշտ պարտեզ և բողկ եր խժռում. մե՛կ իր ծառային, մե՛կ հարսին. նո՛ւյն իսկ բադի ճների վրա յել ճչում եր, հավերի վրա դայլանում։

---

1) Շրջանական գյուղապետ, շահապ։

Հազա՛ր ասա դու, սովորություն եր. առանց դրան չեր կարող։ Վո՛չ առանց գոռգոռալու, վո՛չ էլ առանց առավոտ շուտով իր բաժին յերեք «բյումկա» արաղը կոնծելու։

Անկողնիս մեջ շուռ ու մուռ գալով՝ ստիպված եյի լսել այդ բոլորը և դիմանալ։

Արդյոք ի՞նչպիսի յեղանակ եր դրսում։ Նո՞ւյնը,—մի շաբաթից ի վեր անընդհատ մաղող անձրև, թացություն, մշո՛ւշ... յերկինքն էլ կապա՛ր, ճընշո՛ղ...

— Վա՛յ յես քո հայր ավողին, Մուկո՛ւչ, կանգնել ես եշի պես վոր ի՞նչ... կորի ձիանոքը տար ջրի... են խոտն էլ շուռ ու մուռ տուր, բյալքի արևը չորացնի...

Արե՞վ, իրա՞վ եր այդ։

Յերկու րոպեյի մեջ վեր թռա, լուսամուտների փեղկերը բացի, հետո հագնվեցի և դուրս նետվեցի սենյակից։

Դժվա՛ր եր պատահում պայծառ արևով վողողված օր, անամպ յերկինք տեսնել Դուզանում։ Բայց հաղիվ պատշգամբ յելա, վոր սքանչացման աղաղակ դուրս թռավ բերնիցս։

Արև եր. գվարթ, ժպտուն արև, վոր ջերմ ճառագայթներով վողողել եր ամեն ինչ։

Պարտեզ, դաշտ ու անտառ փոփխվում եյին. վո՛չ մի ամպի կտոր. մշուշն իսկ, վոր անբաժան ճընշում եր միշտ դիմացի մայրի անտառը —այժմ գլորվում, մագլցում եր դեպի կատարներն ու այնտեղից հալվում—անհետանում։

Վորքա՜ն շքեղ եր։ Դիմացս՝ պարտեզների չար-

քը, սպա՝ գետակն ու դեպի վեր պարզվող ծաղկալից դաշտը, ուր յուրաքանչյուր բույս ցողաթաթախ սարսռում էր, ուր սիզավետ մարգերը պսպղում էյին հաճույքով և նրանց մեջ կայտառում էյին այծեր, արածում՝ կովեր ու վոչխարներ:

Հեռո՛ւն, մշուշի տակից պարզվում, յերեվան էյին գալիս դալարազեղ լեռներն ու անտառը. յերկնքի պարզ խորքի վրա չեշտվում էյին ծառախմբերով պատած գագաթներ...

Իսկ թռչուննե՛րը... Վորքան բա՛րձր, վորքան գեղգե՛ղ յերգում էյին ամեն կողմից, վոստոստում բարդիների կատարներին, խմբային խաղեր սարքում, համերգներ կազմում և ճիչ ու դայլայլով սավառնում դեպի կանաչ բլուրները...

Մեղուներն էլ դուրս նետված փեթակներից, զվարթ բզզոցով կույտ առ կույտ սլանում էյին ամեն ուղղությամբ: Գլխավոր բերքի այդ օրերին նրանք ամբողջ մի շաբաթ ստիպված էյին փակված մնալ և ահա այժմ աճապարում էյին խորիսխները լցնել: Այլևս ծաղկեփոշի չէյին բերում, այլ միմիայն մեղր՝ այն բազմազան ծաղիկներից, վորոնք ամեն կողմից գլուխ էյին դուրս պարզել՝ ժպտելու արևին, հրճվելու նրա տված ջերմությունով:

Գյուղն ամբողջ կենդանացել էր. նա մեռած, դերեզմանի յեր նման անձրևալից օրերում: Հողը արագ չորանում էր այժմ, շոգի արձակում. ճռնչող սայլերը դաշտն էյին յելնում. յերեվում էյին ձիավորներ... Սագերի յերամներն էլ, որորուն, վզերնին ցցած՝ շարժվում էյին դեպի գետափը:

— Բարի լույս, բարի լո՛ւյս, կանչեց զվարթությամբ տանտերս — ա՛յ լավ արեվ... հիմիկանց դենը էլ դրախտ կըլի ըստեղ...

— Այո՛:

— Ըսե՛նց ա մեր տեղը, անիծվի՛ նա... դժոխք ա անձրև օրերին, դրախտ՝ յերբ արեվ ա անում... Դու էլ չե՞ս գնա սար, մերոնք հրես կերթան:

— Վո՛չ, պետք է փեթակները նայել, մաքրել...

— Հա՛, թացությունը հալ չթողեց... կըլի վոր կաթած էլ ունենա...

Մտա պարտեզ: Վորքան շուտ ցեխ էր կտրում հողը, այնքան էլ արագ ցամաքում էր: Ծառայիս հետ յերկար զբաղվեցինք փեթակներով. հետո, կեսօրվա մոտ, մտածեցի հանգչել քիչ ճոճի (գամակ) մեջ, վոր կապված էր յերկու ծառերի ստվերի տակ:

Յերկար, սակայն մենակ չմնացի: Նախ, աջ կողմից դրացու կինը, վոր իրանց պարտեզի մեջ ինչ վոր բանով էր զբաղված, դիմեց ինձ «աղա-աղբեր» տխտղոսով և ամանը պարզած պատի վրայով, ջուր խնդրեց կողքից գտնվող աղբյուրից: Հետո, յերկու մեծ թռչուններ գլխիս վրայի ծառի ճյուղերի մեջ մի լավ դզդզեցին իրար և տերևների անձրև հոսեցրին. հուսկ ուրեմն, նկատեցի թե ինչպես պարտեզի դըռնից մի առ մի ներս մտան և դեպի իմ կողմը դիմեցին մի խումբ գյուղացիներ:

Ամենից առաջ քայլողը նիհար ու յերկարահասակ անձ էր: «Չերքեզկա», յերկար կոշիկ, կլոր-կարճլիկ փափախ, ձեռքին էլ մորակ: Չմոռանամ սուրն ու արծաթապատ գոտին:

Ցավագար աչքերը ճպճպուն, շուրթերը պրկած, քիթը ցցած՝ զննում էր նա պարտեզը և մեկ-մեկ էլ,

ճիշտ պարսիկ մեծավորի նման, առանց զառնալու, յերեվի իր նկատողություններն եր, վոր հաղորդում եր հետեվողներին:

Այդ մարդու հետ թեյեվ դեռ գործ չեյի ունեցել, բայց ծանոթ եյի: Շրջանական, 5–6 գյուղերի չահայն եր: «Սարչինա», «գոլովա». այդպես եյին անվանում նրան գյուղացիք:

Անմիջապես յետեվից քայլողը՝ գրագիրն եր: Ագռավ եր հիշեցնում այդ յերկար ու կոր, գլուխը միշտ կախ, գունատ քիթը կապույտ ու սարկական շարժումներով յերիտասարդը: Մի քանի անգամ հանդիպել եյի նրան. հազիվ մի քանի բառ եյի լսել բերնից, սակայն միշտ ողու հոտը զգացել:

Ինչպես ամե՛ն «ուշիմ» գրագիր, ճարտար քերթող եր Սրապիոնը: Ձեռքն ընկնողը եժան չեր պրծնիլ: Պրոտոկոլներ (արձանագրություն) կազմողն եր: Նայելով թե ո՞վ և ինչքան կկոխեր ձեռքը—նրա համեմատ ել արձանագրության մեջ այս և այն յեզրակացությունը կգոյացներ: «Սարչինան» կարդալ-գրել չգիտեր: Իր անունը—այն հրաշալի հնգատառ Գիգոլ անունը—ստորագրել սովորել եր, բայց ա՛յդ-խակ ճգմելու համար, թշվառը ստիպված եր անընվազն տասն անգամ աչքերը ճպճպացնել, գոնե յերեք անգամ քիթը վեր քաշել և յերեք անգամ ել գրիչը կոտրելու ուժգնությամբ՝ թանաքամանի մեջ թաթախել:

Յեվ ինչ հարկ, խնդրե՛մ, վոր ծանրակշիռ պաշտոնյան ավելի գրել գիտենար: Ձեռնտու յել չեր: Կնիքը գրպանում. հանել, կոխել, միշտ մի–յերկու

մանեթ այդ նեղության համար ստանալը չա՛փ ավելի նպաստավոր եր:

Ահա այդ զույգն եր, վոր գալիս եր դեպի ինձ՝ բավական հանդիսավոր, պաշտոնական քայլերով, յետեվից տեղական քյոխվան, մռութը ցցած գզիր Սահակը, այլև ուստա Համոն, կարմրամազ Սըմբատը, յերեցփոխը, Խոլերան...

Հասկացա այդ խմբային այցելության պատճառը: Պարտեզի մեջ կար մի աղբյուր: Նրա ջրի կեսը, անցնելով մեր հողի վրա կենտրոնացող ստորերկրյա ավազանից, խողովակներով գնում եր գյուղի ներքին թաղերի աղբյուրին յեվս: Մի ամսից ի վեր ավազանը փչացել եր, ջուրը դուրս եր տալիս և շուրջը ճահիճ գոյացնում, իսկ դրանով ներքին թաղի աղբյուրի ջուրը լիովին կտրվում:

Հայտնել եյի գյուղացոց: Նրանք առաջարկել եյին վոր ավազանը շինել տամ իմ ծախսով. մերժել եյի և առարկել, վոր դա իրանց պարտքն եր:

Գանգատվել եյին: Այժմ յերեվի սարչինայով, քյոխվայով և գրագրով միասին՝ յեկել եյին վոր արձանագրություն կազմեն:

— Բարի լո՛ւյս, պ. Յերվա՛նդ, կանչեց հեռվից սարչինան. հ՞ը, եդ ի՞նչ ա, չըլի՞ յերեխությունդ միտդ ա ընկել, վոր ճոճի մեջ ես պառկել...

Յեվ մոտեցած՝ նստեց գետնի մեջ հաստատված նստարանին, մտրակը դրեց սեղանի վրա, նայեց շուրջն ու ասաց.

— Ձե՛, լա՛վ ես շինել... Բաս տնկած ծառե՞րդ

ուր են… Ե՞դ են յաշշիկներդ…[1]) Քիչ ա, յես մեր բաղումը 200 հատ ունիմ…

Ցելա և նստեցի դիմացը:

— Աղբյուրն էլ սա՞ ա. շարունակեց նա լուրջ— բա ընչի՞ ըտենց քիչ ա ջուրը:

— Ավազանը փչացել է, տակից ջուրը դուրս է տալիս և ահա այդքան հողը ճահիճ է շինել… Սարքված պիտի լինեմ բոլորովին քանդել, տակի դոյացնել, յեթե գյուղացիք չշինեն:

— Հա՛, ի հարկե, հողը խարաբ ա անում… Դե շինել տուր ելի՛. գեղացիք էլ շնորհակալ կըլեն:

— Գյուղացիք պիտի շինեն և վո՛չ թե յես:

Գյուղացիներից վոչ մեկը դեռ չէր խոսում: Ուստա Համոն քյոխվի հետ մոտեցել աղբյուրին՝ կկզել էյին ու զննում:

— Ասենք դու մի քիչ դրուստ ես, գեղացիք էլ պիտի շինեն. ամա չէ՞ վոր սա քե՛զ էլ վնաս ա տալիս…

— Համ էլ, մեջ մտավ Խոլերան—թե մենակ գեղացիք շինեն, են ա էլ քեզ ջուր չեն տալ ըստիանց:

— Վոր կռանտը (ծորակ) ըստեղից փակվի, ձայնեց ուստան աղբյուրի մոտից—ցածի աղբյուրին կերթա էս ջուրը:

— Սխալվում ես, ու՛ստա. մոտ գնացի յես—փորձիր փակիր և կտեսնես վոր չի գնալ. ա՛յ, նայի՛ր, ավազանի տակից է ջուրը դուրս գնում և ծծվում հողի մեջ:

— Հա՛, արեց քյոխվեն—ըտենց կըլի… Պիտի

---

[1]) Դադանի սիստեմով փեթակներ:

հավուզը[1]) շինվի… Ելի մեկ 50-60 մանեթ ծախս ունի:

— Բա՛ս, գոչեց ուստան— ծախս կուզի. ցեմենտ, ուստի հախ, քյարփիչ… կուզե՞ք, ինչի՞ չէ, շինեմ…

Ասաց, ավազանը ծածկող քարը դեն շպրտեց և բոլորը կռացան նայելու, բացի ստարշինայից և գրագրից:

Առհասարակ Սրապիոնը լուռ, բավական հեռու կանգնած, ձեռքին եր սեղմել աղտոտ թղթի մի կտոր և անընդհատ մատիտի ծայրն եր թքոտում:

Սակայն յերբ ամենքը կռացել եյին աղբյուրի վրա, իսկ ստարշինան քիթը ցցած՝ ծառերի բարձունքներին եր նայում— գրագիրը մի քայլ յետ գնաց ու մատովն ինձ նշան արավ իրան մոտենալու:

Զարմացա նկատելով նրա հանդուգն ժպիտը և այդ ձևով ինձ կանչելը: Զզվանքս եր շարժում առհասարակ այդ ագռավը. բայց, մի րոպե դայրանալուց հետո, հետաքրքրությունս հաղթեց՝ յելա ու մոտ գնացի:

Տեսնենք, ի՞նչ ուներ ասելու այդպես խորհըրդավոր կերպով:

Ջանաց սիրալիր ժպիտ ստանալ, վոտք վերցրեց դեպի փեթակների կողմն ու ասաց կիսաձայն.

— Հլա մեկ խնդրեմ գնանք են կողմը… ձեզ ասելիք ունիմ… փեթակներն էլ մեկ ցույց տվեք ինձ:

Գնացի: Լուռ քայլեցինք մինչև առաջին ծառը: Այնտեղ նա կանգ առավ, դարձավ ու ասաց.

---

[1]) Ավազանը:

— Ծո, տեսնո՞ւմ եք, պարո՛ն, պրատակոլ են կազմել տալիս․․ գեղացիք են, անկի՛րթ․․․ գանգատվել են թե դուք նրանց աղբյուրի ջուրը կտրում եք ․․․ Հըա կա՛ց մեկ ամենը ասեմ․․․ Հա՛, գյուղացոց դատաստանն էլ, գիտեք, նրանց կողմը կվճռի․․․ ե՛ս սուդ[1]), ե՛ս պրիստավ․․․ գլխացավա՛նք․ ջուրը կտրել անկարելի ա․․․ հավուզը չեն շինել, կռանտը կկապեն ու է՛լի ջուրը տակից հողդ կփչացնի․․․

— Այն ժամանակ յես կքանդեմ ավազանը, աղբյուրը․ յես թույլ չե՛մ տալիս աղբյուրը հողովս անցկացնել, ավազանը հողիս մեջը շինել․․․

— Անկարելի ա․․․ ածաղան-բարաղան շինածը չի քանդվի ու ըսենց հողիդ մեծ մասը կդառնա բալոտ[2])․․․

— Կստիպեմ դատաստանով, որ չինեն ավազանը․․․

— Ամիսներ, տարիներ կքաշի․․․ դանդա՛ղ, ելի պրատակո՛լ, պրիստա՛վ․․․ Դո՛ւք գիտեք․ բայց որ ինձ լսեք, յես ձեզ մի լավ, կարուկ բան կառաջարկեմ, որ մի անգամով ամեն բան վերջանա, աղբյուրն էլ շինվի, ձե՛զ էլ ջուր գա, նրա՛նց էլ, հողն էլ չփչանա․․․

— Առաջարկեք տեսնենք։

— Ա՛յ ասեմ․․․ Մի քիչ դենը գնանք․․․ Ես ի՞նչ լավ բռնել են էս ծառերը․․․ խնձո՞րի յեն․․․ փա՛հփա՛հ, ինչ էլ լավերն են․․․ Հա՛, են եյի ասում․․․ խո լսեցի՞ք, շինելու համար ե՛ն քիչը հիսուն մանեթ կնստի․․․ որ լավ վճռեն, ծախսի կեսը ձեր վզին կդնեն․․․ Հ՞ը․․․ վո՛չ, ըտենց էլ կանեն․ յես լավ գիտեմ մեր դատավորներին․․․ թե չէ, կռանտը կփակեն, հավուզը չեն շինիլ ու բալոտ կդառնա վողջ հողդ։

Բարկացած մի չարժում գործեցի։

— Հա՛, հենց ըտենց կըլլի, յես լավ գիտեմ․ դեղամեջումն էլ խոսել են ու ըտենց են վճռել․․․ յա 25 մանեթ պիտի ծախս քաշես, յա թե չէ հողդ ըսենց ջուր կկտրի, կռանտը էլ կփակեն․․․

— Վերջացրե՛ք․ հետո՞․․․

— Հետո էլ են, որ օրենքներից դուրս կա մի ուրիշ ավելի մեծ օրենք․ խո գիտե՞ք․․․ են վո՞ր բանն ա, որ աղամամութի մեջ դնես՝ լուս կտա․․․ ըտեղ ամեն բան ատարչինի ու իմ ձեռին ա․․․ վոնց ուզենանք՝ ընենց չուռ կտանք․․․ Հըա դուք եդ «լուս տվող» դաղի ծերը ցույց տվեք ու կտեսնեք․․․ ընենց անենք, որ ամեն բան եսօր յեվեթ դրստվի․․․ թանդ էլ չի նստի քեզ․․․ մի կարմիր ա ու մի կապուտ․․․

Մի վարկյան աչքեցի այդքան հանդգնորեն արված կաշառքի առաջարկի վրա։ Հետո, գլխանոց նայեցի աղոավլին, մեջքս դարձրի և լուռ՝ գնացի դեպի նախկին տեղս, առանց իսկ յետ նայելու նորից։

Անշուշտ գրագիրը սառած—մնացած պիտի լիներ և կամ ուսերը թոթված ու մի լավ հայհոյանք արձակած իմ հասցեյին։

Համենայն դեպս ուղի՛ղ դեպի ատարչինան գնացի և անվրդով, նստեցի ճոճի մեջ։

---

1) Դատարան։

2) Ճահիճ, ռուսերեն բառ է։

Ստարշինան նայեց ինձ, աչքերը կկոցեց, ապա դարձավ յեկող գրագրին և կանչեց.

— Հ՞ը, Սրապիո՛ն, պարոնի ծառերը տեսա՞ր, չա՞տ են...

— Չէ՛, ստարշինա՛, պարոնը սկի չուզաց էլ ծառերը ցույց տալ... վախենում ա վոր աչք դիպչի...

Ստարշինան դարձյալ նայեց ինձ: Ժպտում էյի: Կատարելապես ըմբռնել էյի թե նրա տված հարցի և թե՛ դրագրի պատասխանի իմաստը:

— Շատ խոստացա՞վ. ուզում եր հարցրած լինել պաշտոնյան:

— Չուզեց վոչինչ տալ, մերժեց. հասկացրել եր գրագիրը:

II

Յեվ այնուհետև վորոշված եր ստարշինայի բռնելիք դիրքն ու վերաբերմունքը:

Անմիջապես առաջ նա դեմքը կնճռեց, արագ շարժումով գլխի փափախը, յետևից զարնելով՝ իջեցրեց դեպի ճակատը, ապա կուրծքը ցցեց և յերրորդ շարժումով նստեց նստարանի վրա ու վոտները պարզեց դեպի ինձ:

Մտնում եր ստարշինական դերի մեջ: Սկսվում եր կոմեդիան: Հազիվ ծիծաղս զսպած՝ սպասում էյի յեղածին:

Յերբ այդ բոլորն արել եր Գիգոլը, մորակի կոթը ուսագլխից յետ պարզելով՝ կանչեց մոտ գրագրին, հազաց և խիստ ձայնով ասաց.

— Դե հմի գրի՛, պի՛սեր...[1]) Ձեր հրամանոց անո՞ւնը, պարոն Յերվանդ:

[1] Գրագիր։

— Սմբատ, ասացի ծաղրելով:

— Վո՞նց Սմբատ. ձեր անունը խո Յերվանդ ա...

— Բաս վոր գիտեք, էլ ո՞ւր եք հարցնում:

— Հանաքները թողեք, ասաց նա հոխորտաձայն — ըստի Վոլոստնոյ ստարշինան[1]) ա խոսում:

Ասացի անունս և ազգանունս:

— Հմի հրամանոցդ պաշպո՞րտը... Ամսիս 5-ից ուսիլնի—խրեն[2]) ա ուեզդը...[3]) ըտենց չի՞, պիսե՛ր...

— Հրամանք ես, ստարշինա՛, շտապեց ասել գրագիրը—անցյալ ամսի 5-ից ուսիլեննայա ախրանա ա դուբերնիի[4]) վողջ... առանց պաշպորտի մարդ չպիտի յերեք որից ավելի մնա... չունեցողին ետապով[5]) կղրկեն ուեզդնի նաչալնիկի[6]) մոտ...

— Վոր ա՛սում եմ... նեղություն կրի պաշպորտըդ ցույց տալ...

— Բայց չէ՞ վոր, ասացի— յերրորդ ամիսն է այստեղ եմ. ինչու մինչև այժմ չեյիք հետաքրքրվել:

— Մենք մեր բանը լավ գիտենք, պարո՛ն. պատասխանեց հպարտությամբ ստարշինան— պարտավոր էլ չենք ամեն հարցմունքի ջուղաբ տալ...Մերն էն ա, յերբ ուզենանք՝ հրամայենք ու պիտի կատարվի...

2) Շրջանական տանուտեր. շահապ. 2) Աղճատած **усиленная охрана.**—զորեղացրած զրություն. 3) Գավառ. 4) Նահանգ. 5) Վոտքով և զինվորներով ինչպես բանտարկյալ. 6) Գավառապետ.

— Համ էլ էդ քյո՛խվի պարտքն էր. մեջ մտավ գրագիրը:

Գյուղացիք այժմ թողել էին աղբյուրը և լըռ-ջաղեմ, պդալով որ «պաշտոնական գործողություններ» էին սկսում— մոտեցել ու շրջապատել էին մեզ:

— Հա բա՛ս... արեց ստարշինան՝ քյոխվին դառնալով— քեզ պրեդպիսանիյեն[1]) յեկել ա խո, էլ ո՞ւր ես առանց պաշպորտի մարդ թողում գյուղումը... դու մաղամ գիտե՞ս վոչ վոր հմի ուսնի—խրեն ա...

— Ուսիլեննայա սխրանա... ուղղեց գրագիրը:

Գզիրը մի բան մրթմրթաց քթի տակից, հետո կամենալով պատժել իր այդ հանդգնությունը՝ խակույն բերանը ծածկեց յերկար ցուպովը: Քյոխվեն չվոթվեց, ժպտաց ու ասաց.

— Դե ես մարդը խո փախստական չի՞. տնով տեղով ըստեղ ա...

— Միևնույն ա, արեց խստությամբ ստարշինան— ուսիլնի-խրենը Փիդաններին[2]) համար էլ ա... Մենք չե՛նք ուզում որ մեր վոլոստի մեջ ըտենց մարդիկ ըլին...

Ապա դարձավ ինձ ու կրկնեց.

— Հրամանքդ նեղություն կրիր պաշպորտդ...

— Լավ, ասացի յես,— տանն է. յեթե կուզեք՝ գնանք քիչ նախաճաշ անենք և ցույց կտամ:

— Զակուսկի՞[3])... փայլեց ստարշինի դեմքը,—

[1]) Հրաման։

[2]) Հեղափոխական։

[3]) Նախաճաշ։

հա տո՛, անիծվի մեր էս պաշտոնն էլ. էնքան գործ կա, որ մարդ մոռանում ա թե քաղցած ա... ընչի չե՛, գնանք... թե գինի կունենաս ո՛ւ...

— Ունիմ:

— Բաս լավ... Ասում ես պաշպորտ էլ ունիս ելի՛... Հը՞...

— Կա:

— Էդ լավ... Որ ըտենց ա, պարո՛ն, շուտ դանդատդ ասա, թող գրի պիսերն ու գնանք վորներս պնդացնենք քիչ:

— Ցես դանդատ չունիմ... յեթե գյուղացիք մինչև 15 որ էս չեն շինիլ ավազանը, այն ժամանակ աղբյուրը կքանդեմ, ջուրն էլ տավակ կշինեմ-կերթա:

— Հլա կա՛ց մեկ. ճշաց Խոլերան— էդ վո՞նց թե կքանդես. բաս մեզ առանց ջուրի՞ կթողաս:

— Ցեթե մաքուր ջուր եք ուզում, ավազանը շինեք:

— Կացե՛ք հլա... մեջ մտավ ստարշինան: Հետո վոտքի յելավ, ինձ դարձավ ու ավելացրեց.

— Ես սպորը զակուսկի վրա լավ կդրստվի... գնանք, տղե՛րք... ի՞նչ ա, բոլորի՞ն էս ղոնաղ անում, պ. Ցերվանդ:

— Ինչո՞ւ չէ. համեցեք բոլորդ էլ:

— Զոմարդ մարդ ա, յես իմ ասածը. ասաց ստարշինան քյլելիս՝ գյուղացոց:— Հը՞, ի՞նչ ա, խամ քաղաքացի՞ եք գտել, որ վրա եք տալիս... Սա մեզանից լավ ա հասկանում զակոնը... զակոնով պիտի վարվե՞նք թե վոչ... Թողե՛ք, ճաշի վրա կըվերջացնենք... Մարդը պաշպորտ ունի, Փի՛դան չի,

քաղաքավարի ինսան ա... Գնա՛նք, պ. Ցերվանդ, դու քեֆդ քյոք պահի, մենք չենք թողալ վոր գեղացի՛ք գլխիդ նստեն...

Քայլեցինք դեպի դուռը: Անմիջապես, զակուսկի անունից կակղացած ստարշինան թողեց ինձ առաջ անցնելու, հետո, մինչև պարտեզից դուրս գնալը՝ գովեց ծառերը, գյուղացոց դարձած՝ շեշտեց վոր նրանք շնորհակալ պիտի լինեին ինձ պես մարդ իրանց մեջ գտնվելու համար, վոր յես ջոմարդ մարդ եմ յերևում և վոր վերջապես գիտեմ «պատիվս պատվավորաց և հարգս հարգավորաց» տալը...

Այս բոլոր միտումավոր ակնարկներով լի գովեստները նա անում եր հանդիսավոր, աչքերը անընդհատ կկոցելով. իսկ գրագիրը, վոր թուղթը գըրպանն եր կոխել, այժմ գլուխը կախ՝ գալիս եր նրա յետևից:

Գնացքը փակում եր գզիր Սահակը՝ իրանից կրկնակի մեծությամբ ցուպը միշտ ուսին դրած:

Յերբ տուն եյինք մտնում, տանտերը, վոր լուսամուտից նայում եր, կանչեց.

— Բա՛հ-բա՛հ, եդ ի՞նչ խաբար ա. եսքան մարդիկը վո՞րդիանց վորսացիր, պարոն Ցերվանդ... Սաղ ուեզդի[1]) մեծանոնքը թափ ես արել-բերում:

— Յեկել են պրատակոլ կազմելու:

— Դու քո աստվա՞ծը... ի՞նչի, տո՛, են վո՞ր չան վորդին ա գանգատել քեզնից:

— Գյուղացիք:

— Ա՛յ կասես... Համա՛ չըլլի՞ են անտեր աղբյու-

1) Գավառ

րի համար... Հլա կացեք գամ տեսնեմ եդ վո՞նց բան ա...

— Համեցե՛ք, հրավիրեցի յես— համ ել տեսեք ձեր գինուցը մի-յերկու չիչ ուղարկեն մեզ:

— Ցերկո՞ւ,— ծիծաղեց ստարշինան,—ուղտերին ուզում ես գտալո՞վ ջրի:

— Տո ջաննե՛րդ սաղ ըլլի... կանչեց տանտերը մոտենալով մեզ,— հրեն կարասը ընդի՞ չի... պարոն Ցերվանդին վախեցնել չես կարա. վողջիդ ել գինու մեջ կխեղդի:

— Տո ուր ա բաս մեկ որ ել մեզ չխեղտեց. ասաց քյոխվեն ծիծաղելով:

— Դո՞ւ ինչացու յես, դո՛ւ. ծաղրեց նրան տանտերը,— ընչի՞, մուֆթա գինի՞ ա գտել պարոնը... Դե՛հ, հլա մեկ համեցեք ոթախը...

— Ասաց և առանց սպասելու վոր յես կարգադրություն անեմ տանս մեջ, մտավ սրահս առաջ և հետո ինձ ներս թողեց:

Կանչեցի ծառային: Սեղան դրին, բերին ինչ վոր կար և քիչ հետո բաժակները լցվեցին:

Ահա հենց ա՛յդ ժամանակ եր, վոր մեկե՛ն աղբյուրը անցավ յերկրորդ պլանի վրա, վորովհետև մի նոր խնդիր յեկավ գրավելու ստարշինային:

Մեզ ծառայում եր սեղանի վրա մեր Սիսակ անունով ծառան, վոր միևնույն ժամանակ և վարպետ այգեգործ եր, ճարպիկ մշակող:

Մշտապես խռովկանի դեմքով այդ յերիտասարդը չրթունքները կախ, հավիտենապես դժգոհի չարժ-վածքներով գնում-գալիս եր առանց ուշադրություն դրավելու իր վրա:

Սակայն յերբ մի անգամ, յերևի կամենալով իր խոնարհությունը արտահայտել՝ գինի լցրեց սառարչինայի բաժակում, Գիգոլը հանկարծ դարձավ, աչքերը ճաճանչանելով նայեց նրան ու գոչեց.

— Փիե՜... ես Սի՞սակը չի.. ձեզ մո՞տ ա ծառայում:

— Հրամանք ես, սառա՛րչինա, յե՛ս եմ... Դե ել ի՞նչ անեմ, ո՞վ ինձ հաց կտա կպահի. Գրիգորն ել վոր ընենց զուլում արավ ինձ...

— Կաց հյա... Քեզ հետ գործ ունիմ... Աղա Սրապիո՛ն, սրա անունը են թղթումը չկա՞ր...

— Կար, սառարչինա՛:

— Բաս լա՞վ...

Աղա փափախն իջեցրեց ճակատին, խիստ կերպարանք ստացավ, պարզեց ձեռքը դեպի Սիսակն ու ասաց.

— Պասպո՞րտդ... Հմի սլինի-խրեն ա:

— Ուսիլեննայա-ախրանա, ա՛յ սառարչինա, ուղղեց նորից գրագիրը:

— Դու ձենդ քե՛զ քաշի հմի. բարկացավ այս անգամ պաչտոնյան— լեզուն իմն ա՝ սլանի-խրեն եմ ասում... Ծո՛, ա Սիսա՛կ, պաչպորտդ բե՛ տենա՞նք...

— Յա՛... գունատ յետ քաշվեց ծառան,— ի՞նչ պաչպորտ...

III

Ալեքսանդրապոլի գյուղերից բերված վորբ տղա յեր Սիսակը: Միայն մի յեղբայր ուներ, վոր անտառապահի ոգնական եր: Մանկությունից մեծացած Դուզանում, տեղացիի նման եր դարձել: Խնամել եյին նրան տանտերս, Ջրաղացի քարերով առևտուր անող Մելիքը և մի քիչ ե՛լ ուրիշները:

Այժմ, մոտ 25 տարեկան, մտադիր եր ամուսնանալ և տնփեսա լինել Դուզանում. ասում եյին վոր մինչև իսկ նշանվել եր, բայց մի քանի ամսից ի վեր, ինչ-վոր դժտություններ նրա և աներոջը մեջ՝ Սիսակին թողել եր չվարած, դռնե դուռ ընկած: Գովել եյին ինձ վորպես լավ այգեգործի. վարձել եյի նրան, պարտեզիս մի անկյունում հենց ինքը մի խրճիթ եր կառուցել ցցերով և նրա մեջն եր ապրում:

Իսկ թե նոր ի՞նչ եր պատահել, ինչո՞ւ հանկարծ նրանից անցագիր եյին ուզում (ինչ վոր չեյին ուզել 20 տարուց ի վեր)— դա զարմացրեց թե՛ ինձ և թե իրան— Սիսակին:

Ըստ յերևույթին մյուս գյուղացիք բոլորն ել գիտեյին պատճառը: Վոմանք ժպտում եյին, մյուսներն անտարբեր՝ սպասում եյին լինելիքին:

— Պաչպո՞րտ.. կրկնեց նորից Սիսակը կակազելով,— ի՞նչի, բա յես յա՞դ եմ... Դու ինձ չե՞ս ճանաչում, սառարչինա՛:

— Դուս մի՛ տալ, ա՛յ չաչ... կանչեց նրա վրա պաչտոնյան,— յես, հլա դու մեկ մատ լակոտ եյիր, վոր գյուղումը ականջներդ քոքել եմ... Ամա հմի սլինի-խրեն ա, ասացի, ու առանց պաչպորտի չի՛ ըլի...

— Յա՛... վո՞նց թե խրեն ա... բա ինձի՞ ինչ... կանչեց վրդովված Սիսակը,— բա դու չե՞ս իմանում, վոր յես պաչպորտ սկի չեմ ել ունեցել:

— Եդ ա ե՛ե՛... Դու հլա ըստեղի վրան գրված

չես, բա ո՞ւր ես ըստեղ վեր ընկել առանց բիլեթի, հը՞... փալաս-մալասդ հավաքի դե, ու գնա յա բիլեթ հանի, յա թե չէ՝ է՛լ ես դեղի ղրաղովը անց չկենաս... Սա մեր հրամա՛նն ա...

Հարկ համարեցի միջամտել։ Թշվառ Սիսակը յերերուն՝ կարկամել եր ու քիչ եր մնում լաց լիներ ղայրույթից։

— Լսեցե՛ք, պարո՛ն Գիդըլ, ասացի,— ելի՛ դուք տարօրինակ բաներ եք անում. այս մարդը վաղուց այստեղ է, հասարակության անդամ է, ինչո՞ւ յեք վռնտել ուզում։

— Ըտե՛նց ա զակոնը, ասաց դրագիրը,— առանց պաշպորտ չի կարելի. պաշպորտ չունի՝ թող գնա իր տեղիցը հանի։

— Համ էլ եդ սինի-խրեն ա, ի՞նչ ղահրումար ա, ավելացրեց ատարչինան— փի՛ս բան ա ըլել, վոր մեջ տեղ ընկավ, ասում են, առանց պաշպորտի մարդու բաներն ու քշելը մեկ ա ըլում...

— Կա՛ց հլա, գոլովա՛. խոսեց տանտերս— չի՞ ըլիլ, վոր մի կերպ անենք ես խեղճ տղի համար... մնա ըստեղ ու գիր գրի վոր ղրկեն։

— Չէ՛, չէ՛, վո՞նց կըլի... Թող գնա գեղխոս. մեկ էլ տեսար պրիստավն իմացավ... Լսեցի՞ր, Սիսա՛կ, եգուցվանից էլ առանց բիլեթի ես գեղումը, իմ վոլոստումը[1]) սևի չերևլաս, թե չէ ետապով քեզ քշել կտամ։

— Խմի՛ր, առ. բաժակը նրան պարզեց տանտերը— լա՛վ ա, մի՛ բարկանալ, հասկացանք... Կեր-

1) Համայնք.

թա է՛լի, ի՞նչ կա. կերթա պաշպորտ կհանի ու էլի կգա... յանի դրանով խո Սիսակից չազատվեցի՞ն...

Ու աչքով արեց Սիսակին, վոր սենյակիցը հեռանար։ Դեռ մութն եր ինձ համար. տանտիրոջս ակնարկություններից յերևում եր, վոր մի ինչ վոր ինտրիգ կա խնդրում...

— Իմ գործերը կմնան. խոսեցի յես— քյալամի բուկը տալու[1]) ժամանակն է.. Յեթե մի քանի որ ժամանակ տաք, յես ինքս կգրեմ և կաշխատեմ վոր անցագիրը ուղարկեն։

— Չէ՛, վո՞նց կլի... Հը՞, Սրապիո՛ն, ըտենց չի՞— չի՛ ըլիլ... են ղահրումար պրեդպիսանիան վո՞նց ա ասում, դո՛ւ ես կարդացել։

— Ասում ա, խոսեց ծանրակշիռ՝ դրագիրը,— առանց պասպորտի չի՛ կարելի. վո՛ր գեղումն էլ վոր ելավ՝ քյոխվին պողասուդ[2]) կտան, կպատժեն...

— Փիե՛... վոստնեց քյոխվեն— թող գնա սա՛դ ըլի գլխիցս է՛ե՛. ինչի՞, յես գի՞ժ եմ, վոր նրա պատիժը քաշեմ... Ադա՛, Սիսա՛կ, վա՛կորներդ խուրդ ու խաշ կանեմ թե եդուց առավոտ քեզ ըստեղ տեսել եմ...

— Տո գնա՛ է, Սիսա՛կ... գնա՛ վորդի, գործիդ գնա ու թող տեսնենք ընչի՞ են կապել մեր մեծանոնքը... Գնա՛ վորդի, մեր խանումին էլ ասա՝ թե իշխան ձկնիցը կա, մի քիչ մաղացու ղրկի... ես գինիներն էլ պրծան։

Սիսակը լուռ՝ շշերը հավաքեց ու գլուխը յերերցընելով դուրս գնաց։

1) Հող լցնել բույսի տակը. окучивать.

2) Դատի տակ.

Ոչ ոք չխոսեց մի բոպե: Ստարշինան կռացել էր շաքարով շինած սալաթի վրա, մյուս գյուղացիները սենյակս էյին զննում, իսկ ուստա Համոն փառակազմ գրքերին պլշած իր կապույտ աչքերը, ակներև կերպով զարմանում էր թե արդյո՞ք յես համբերություն էյի ունեցել ծայրեծայր կարդալու այն հաստափոր հատորները:

— Հը՛մ... արեց վերջապես ստարշինան— ես սալաթը լավ բա՛ն ա ըլել... Կասես սկի ղինի խմած չլեմ... Թրի՛ պես կտրեց...

— Ցանի դու սրանք վողջ կարդացե՞լ ես... չկարողացավ իրան զսպել ուստա Համոն և դարձավ դեպի ինձ:

— Չե հա՛... արեց Խոլերան— մարդ հարյուր տարի ապրի, եսքանը կարող չի կարդալ...

— Բալքի աստվածաշունչնի յեն. դիտեց յերեցփոխը:

— Զակոնի գրքեր կլեն. պնդեց գրագիրը:

— Բառարաններ են. ժպտեցի յես— ինչ խոսք ուզենամ՝ միշտ կգտնեմ... Ա՛յ, կուզե՞ք հենց գտնեմ եդ ուսիլեննայա-ախրանա բառը և ասեմ թե վոնց են նրա օրենքները:

— Հյա՛... գոչեց տանտերս— դո՛ւ քո աստվածը, մեկ նայի տես՝ թե ստարշինան իրավունք ունի՞ Սխակին գեղիցը քշել:

— Տո ի՛նչ իրավունք, ճայնեց ստարշինան— իրա՞վունքը վորն ա. զակոնն ըտենց ա— պրծավ գնաց. էլ ըստեղ իրավունքի բան չկա:

— Դե զակոնն էլ իրավունքն ա է՛լի. ասաց յերեցփոխը:

— Չե հա՛... ծիծաղեց քյոխվեն— տո մարդ էլ իրավունքիցը կդողա՛ շան պես. ամա արի տես, վոր զակոնի անունը չե՛ն տալիս— դողը ջանդ ա ընկնում. կասես խոլեր բռնած ըլի քեզ:

— Դե հա՛լբաթ, ավելացրեց Խոլերան— զակոնն ո՛ւրիշ ա, իրավունքն՝ ուրիշ...

— Ցանի ա՛յ Գիդոլ, ասաց տանտերս,— արի ու դրուստն ասա... եդ սլինի-խըրե՞նն ա քեզ սոխպում, թե՞ նրանից ավելի... ընենց ել՛... Հը՞, դո՛ւ ըլես էն ս. Գեվորգը...

— Ուրիշ ի՞նչ պիտի ըլի... ասաց խստությամբ ստարշինան— ասի քեզ՝ վոր զակոնն ըտենց ա հմի... իգուր խո չի՞, վոր ինձ ստարշինա են արել, վոլոստնի ստարշինա[1])... յես պիտի զակոնը պահեմ...

— Չե՛, չե՛, դու էն ասա, յանի՛ ըտի խո Գրիգորի, էն չոլախ քաֆթառի մատը խառը չի՞... Հը՞ ... ընենց, ուզում ա Սխակին ռադ անի, նրա աչխատանքն ուրանա, իր խոստմունքը մոռանա... կըլի վոր ուրիշ փեսացու էլ գտած ըլի...

Ստարշինան մի ումպով դատարկեց բաժակը, յերևի վարկենական շփոթությունը ծածկելու համար. հետո աչքերը ճպճպացրեց ու ասաց.

— Չե՛, Գրիգորը ըտի գործ չունի... ինձի՛ ինչ, վոր աղջիկը էլ Սխակին չի ուզում տա... աղջիկը իմը խո չի՞...

— Այո, բայց մի ամբողջ տարի վոր Սխակին բանեցրել ե խաբելով՝ թե աղջիկը նրան կտա, տընփեսա կշինի...

---

1) Շրջանական տանուտեր

— Ե՛հ դու էլ, պ. Ցերվանդ, ասեց քյոխվեն— ի՞նչ ես Սիսակին ականջ դնում:

— Լավ ա՛, հերիք ա... վեր կացավ սեղանից ստարշինան և ինձ դարձավ.

— Շնորհակա՛լ ենք ախպեր... Ա՛յ աղա, դուք ես ի՞նչ տեսակ մարդիկ եք. յեկանք վոր աղբյուրի գործը դրստենք ու չթողեցիք էլ... մարդու հացը կերանք ..

— Վոչի՛նչ. միջամտեց քյոխվեն— պարոնը մե՛րն ա, յո՛լա կտանենք:

— Չէ՛, էդ իմ գործն ա. ասաց ստարշինան— յես ու պ. Ցերվանդը հմի քիչ բաղը կերթանք, ծառերը, յաշչիկները կտեսնանք ու ընտեղ էլ բանը կըվերջացնենք... Հը՞, պարոն, ընենց չի՞...

— Լավ. ասացի յես ժպտելով:

— Դե՛, խա՛լխը, դուք գեղամեջ գնացեք. յես էլ վերջացնեմ ու մեկ կես սհաթից կգամ... Աղա Սրապիո՛ն, դու էլ գնա Մաթոյին ասա, վոր չան վորդին դուքանների առաջը դա իմ հրամանին, թե չէ կերթամ դամչիկով դլուխը կջարդեմ... Գնա՛նք, պ. Ցերվա՛նդ, գնանք մեկ ծառերը տեսնենք. ասում են՝ լավն են...

Բոլորս դուրս յելանք, իսկ ստարշինան հուսալից՝ վոր դրստի չարածը ինքը կհաջողեցներ, ինձ հետ պարտեզ իջավ:

IV

Վիճակված էր. այդ որը ստարշինան կաչաղ չպիտի ուտեր: Վորովհետև հազիվ մտել էյինք պարտեզ, վոր Սիսակը վազելով յեկավ հայտնելու թե քաղաքից յերկու հյուրեր էյին յեկել ինձ մոտ:

Յերկու ծանոթներ, վորոնք ոգտվելով մի քանի որվա տոներից— յեկել էյին գյուղ՝ ջրերը հանգըստանալու, գուցե և իմ նոր կյանքը տեսնելու:

Ստարշինան ստիպվեց գործը մի ուրիշ որվա թողնել և հեռանալ:

Հյուրերս իջան և յերբ հանգստացել էյին, յերեկոյան դեմ պարտեզ տարա նրանց: Մեղվի փեթակներ մոտից յերբե՛ք չէյին տեսել: Սիսակի հետ միասին բացինք մեկը, ցույց տվի ամեն ինչ:

Հետո, յերբ պարտեզի ներքևում կանգ առած, մայրի անտառն էյինք դիտում և ծառան մի քանի քայլ հեռու սպասում էր, հանկարծ նա մոտ յեկավ, կպավ թեվքիս ու ասաց յերկչոտ.

— Աղա-ախպե՛ր...

— Ի՞նչ կա, Սիսա՛կ:

— Մեկ գետի ղրաղը դուրս գնա՛նք...

— Ինչո՞ւ, ի՞նչ կա:

— Ընենց... Մեկ բան պիտի ցույց տամ ձեզ:

Այնքա՛ն աղաչանք էր գրված այդ խղճուկ դեմքի վրա, վոր բոլորս էլ հետևեցինք նրան և գետափն յելանք:

Այդտեղ նա մեզ տարավ դեպի աջ և յերբ հասել էյինք գետակի մեջ հոսող առվակին, ցույց տվավ նրա մյուս կողմը գտնվող մի այգի և ասաց հուզված, լացի ձայնով.

— Դուք ու ձեր աստվա՛ծը, աղա-ախպերնե՛ր, մեկ գնացեք մտեք էդ բաղը, մեկ լավ մտիք արեք թե ինչքան աշխատանք էր պետք, էն էլ մի հոգու— մինակ մարդու աշխատանք, վոր չյոլից ընենց բաղ շինվեր:

— Ո՞ւմ պարտեզն է այդ, հարցրեց հյուրերից մեկը:

— Գնացեք՝ թե խիղճ ունեք. շարունակեց Սիսակը ավելի ու ավելի հուզված— առաջ մեկ տեսեք ու յերբ դաք՝ ամե՛նը կպատմեմ:

Յես հասկացել եյի: Իրավ է, յերբեք առիթ չեյի ունեցել տեսնելու այդին, բայց լսել եյի վոր այդտեղ եր նրա աներոջ այն հողը, վոր շնորհիվ Սիսակի հսկայական և անդուլ ջանքերի, ճահիճից փոխվել եր պարտեզի:

— Բայց չէ՞ վոր կարող են մեզ ներս չթողնել. առարկեցի յես նրան:

— Կթողան... հրե՛ն, տերն էլ մեջն ա... Մեկ գնացեք հենց էդ պառավիցը հարցրեք, թե ո՞վ ա էդ ծառերը տնկել, մեշիցը շալակով ցախ բերել ու չափառը քաշել, բաղի դուվրը փոսը փորել... հարցրեք թե ի՞նչ եր առաջ էդ բաղատեղը, ո՞վ ա չորացրել, ո՞վ ա պատրուսնին արել, էդ կարտոֆելը, էդ մարգերը... Հարցրեք թե ո՞վ ա, վոր գիշեր-ցերեկ, վողջ մեկ տարի փորել ա, չորացրել, տնկել, մաքրել ու հենց վոր չյոլիցը բաղ ա դարձրել, վզակոթին տվել են ու շան պես դուրս քցել... Հմի էլ ուզում են ըտենց, նամարդի պես քշել գեղիցը ու աշխատանքը վայելել...

Հուզմունքը շատանում եր, սկսել եր լալ գրեթե. ձայնը դողում եր շրթունքների հետ:

— Գնացե՛ք, շարունակեց նա— յես ըստեղ կուչ կգամ էս քարերի մեջ... ձեր դատաստանին կթողամ. թե կասեք «Սիսա՛կ, ձենդ կտրի, իրավունքը քոնը չի», գլուխս դեմ կտամ վոր խփեն...Սկի աջա-

լա[1]) չանեք, աղա՛-ախպերներ, մեկ լավ տեսեք, մեկ լավ հարցրե՛ք...

Հյուրերս զարմացած եյին և ինձ եյին նայում հարցական դեմքով: Ակնարկեցի սպասելու, հետո, յերբ հիրավի Սիսակը կկզեց քարերի մեջ ու նըստեց— հրավիրեցի նրանց հետևելու ինձ:

Սաստիկ խղճում եյի հարստահարված յերիտասարդին, և, քանի վոր իր դատը նա մեզ եր հանձնում, մտածեցի չմերժել: Բացի դրանից, իմ մեջ էլ կուտակվում եր զայրույթ ա՛յն մարդու դեմ, վոր մի ամբողջ տարի խաբելով, տնփեսա շինելու հույսեր տալով՝ շահագործել եր վորբին և այժմ, յերբ ճահիճը մի շքեղ, արդյունաշատ պարտեզ եր դարձրել— այժմ վռնդում եր նրան և մինչև իսկ կաշառքի ույժով դրդում ստարշինային՝ գյո՛ւղից էլ քշելու:

— Գնա՛նք, ասացի հյուրերիս—հետաքրքիր բան է:

Յեվ ավակը չանցած, բավական մանրամասն պատմեցի նրանց յեղելությունը:

— Տո գնանք է՛ մեկ, գոչեց Գևորգը (հյուրերից մեկը)— գնանք այդ անպիտան ծերուկի մորուքը թափ տանք քիչ:

— Արժեր դրան մի լավ դնքսել, ավելացրեց Հակոբը (մյուս հյուրս)— չեյի կարող յերևակայել ա՛յդ աստիճանի հարստահարություն գյուղում:

— Սա դեռ մեկ յերևո՛ւյթն է. գյուղում տեղի ունեցող հարստահարությունը այնպիսի մեծ չափե-

---

[1]) Չշտապեք:

լով է լինում, որ գյուղացին ցանցի մեջ բռնված՝ ծծվում է ու չորանում...

Վոստնեցինք առվի վրայից և մոտեցանք պարտեզին: Հիրավի, լեռնադաշտի ո՛չ մի գյուղում չեյի տեսել այդքա՛ն խնամքով և ճաշակով շինված պարտեզ: Զարմացած կանգ առինք մեծ բաց դարպասի առաջ:

— Ոհո՛, գոչեց Հակոբը— սա ի՛նչ սիրուն պարտեզ է. կարծես մասնագետի ձեռքի գործ լինի:

Վանդակաձև մեծ դռան կողքից ձգվում եր ավազածածկ մի լայն ծառուղի դեպի ներս: Պարտեզն ամբողջ նախ շրջապատված եր փշալից խիտ ցանկորմով, իսկ հետո՝ առած ուռիների շրջանակի մեջ: Ապա, անասունների մուտքը լիովին արգելելու համար՝ պարփակված եր լայն խրամով: Յուրաքանչյուր թիզ հողը ներսում մշակված եր ու մաքրված: Անտառից բերած վայրի խնձորենիների կոճղերի վրա պատվաստած ընտիր ճյուղերն այժմ լավ բռնել եյին և ծաղկել. մի կողմը— կեռասենիք, սալորենիք, մի ուրիշ գծով՝ արքայամորու բազմաթիվ թըփեր, վարդենիներ. ավելի ցած՝ լոբիի ցցերը զինվորների պես կանոնավոր շարքերով՝ կանաչ եյին կապել, իսկ նրա առջևում, գետնախնձորի մաքուր ու լավ ակոսներ, ցույց եյին տալիս ամենալավ տեսակի տունկեր:

Ինչե՛ր ասես չկար.— ընդեղեն, կաղամբ... Ու այդ բոլորը շատ կանոնավոր տեղավորած մաքուր մարգերով. ո՛չ մի փուշ կամ քար:

Գինձի մարգի մեջ կուչ յեկած քաղհանք եր անում Գրիգորը: Կուզ ու կարճ մի ծերունի, որ մեր

ձայնը լսելով՝ դարձավ նայեց, հետո վոտքի յելավ քաղհանը ձեռքին:

— Բա՛րև, ծերունի՛:

— Աստծու բարին... Ես վո՞նց ելավ, պ. Յերվանդ, վոր յեկաք բաղս տեսնելու... համեցե՛ք:

— Դրացի յենք դրեթե. ասացի յես— չգիտեյի վոր այսքան մոտիկ, այսպիսի գեղեցիկ պարտեզ կա. իմ պարտեզը սրա մոտ անապատ է...

— Ընենց ա. ժպտեց ծերունին— ուրիշի ձեռքով արած բանը բա ի՞նչ պիտի ըլի. մարդ իրա՛, իրա՛ ձեռքով պիտի շինի, իրա՛ քրտինքը պիտ թափի հողի վրեն...

— Բայց մի՞թե այս բոլորը քո՛ իսկ ձեռքով, քո՛ քրտինքովն ես շինել ու մշակել. հը՞, ծերո՞ւնի. հարցրեց տաքությամբ Հակոբը:

— Հա՛... արեց ծերունին բավական համարձակությամբ— բաս ուրիշ ել ո՞վ ունիմ:

— Ղո՛չաղն ես յեղել, դիտեց Գեվորգը ծաղրով— լա՛վ ել այդեպան:

— Կանես՝ կսովորես... Ճշմարի՛տ ա, ես բոլորը—ասած կլինի պարոնը—իմ ձեռքովս չեմ տնկել—շինել, ամա յե՛ս ել շատ քրտինք եմ թափել ըստեղ:

— Այսինքն ի՞նչ, գոչեց Հակոբը— գուցե այս ծառե՞րն ես դու պատվաստել:

— Չե՛:

— Կամ այս պա՞տը դու քաշել... չլինի՞ խրամը քո փորածն է...

— Մարգերը դո՞ւ յես կազմել, գետնախնձորը դո՞ւ մշակել... ավելացրեց Գեվորգը:

— Կամ այս մորիների թփերը դո՞ւ բերել անտառից...

— Գուցե այդ ուռենե՞րը դու տնկել, այդ ծառուղինե՞րը...

— Չե՛, աղանե՛ր, հաջողվեց ասել ծերունին խոսքերի այդ կարկուտի տակից— չե՛, ետո՛նք իմ չինածները չի... իմ.... իմ մշակն ա, իմ նոքյա՛րն ա չինել։

— Ի՞նչ նոքյար․ զարմացավ Գեվորգը ինձ դառնալով— ուրեմն վարձատրե՞լ ե։

— Սպասի՛ր, ծերո՛ւնի, միջամտեցի յես— խոսքըդ Սիսակի համա՞ր ե... լա՛վ, թող նոքյարդ յեղած լինի․ իսկ վորքա՞ն վարձ ես տվել նրան․ տվե՞լ ես որինակ այնքան, վորքան յես տալիս եմ․ ինչո՞ւ ուրեմն ամսական 10 ր․ առնելով ինձնից, նույն ջանքով չի մշակում պարտեզս։

— Վո՞նց, գոչեց ծերունին— տարեկան 120 մանե՞թ ես տալիս... փիե՛... հա՞ցն ել, տո՞ւնն ել...

— Այո... կոշիկ, մի ձեռք ել հագուստ։

— Ասում եյին— չեյի հավատում... բա եդ վո՞նց ա վոր քո բաղը սրանից լավ չի չինել... Ի՞նչ ղալբն[1]) ա ըլել, տո՛...

— Լսի՛ր, ծերո՛ւնի, միջահատեց Հակոբը— դու են ասա թե դո՞ւ ի՞նչքան վարձ ես տվել նրան, դո՛ւ...

Ծերունին շփոթվեց, փորձեց ժպտել, խոսքը կտուրը ձգել, բայց Հակոբը ամուր եր բռնել նրան, իսկ յես ու Գեվորգը ծիծաղում եյինք։

1) կեղծ մարդ․ խաբեբա։

— Փիե՛... արեց վերջապես ծերունին— քո ի՞նչ բանն ա եդ, ախպե՛ր, դու նրա վեքի՞լն ես... յես գիտեմ ու նա... եդ մե՛ր գործն ա...

Ու Հակոբը սկսեց․ «թափահարել» նրան մի ֆիլիպիկանով, ուր խառն կային և ծա՛ղր և կծու հարձակում, և՛ բարոյախոսություն։ Ո՛րինակ․

— ... Քանի՞ տարեկան ես, ծերունի... վաթսո՞ւն... Տե՛ս, ել սև մազ չկա գլխիդ․ մեջքդ ել կամուրջի նման ծռվել ե․ մեկ ել տեսար՝ մի որ ընկար ու վոտքերդ պարզեցիր... հը՞, ի՞նչ ե, կարծում ես են աշխարհումը քեզ հարցնող չի՞ լինելու թե՝ «ա Գրիգո՛ր, ա՛յ ծերուկ, ինչի՞ Սիսակին խաբեցիր, վողջ տարին բանացրիր, ճահիճդ այգի՛ չինել տվիր, աղջկադ խոստացա՛ր․ նա ել կարծեց թե՛ իր աշխատանքի պտուղն ի՛նքն ե վայելելու, վողջ ջահելության ույժը դրեց հողիդ վրա, բայց դու վռնդեցիր նրան ու աշխատանքը խլշտեցիր»... Հը՞, ի՞նչ ե, չի գտնվիլ մեկ սատանա, վոր եդ մորուքիցդ մի բռնի, են կպրե կարասը կոխի ու հանի, յա քեզ քարեքար խփի, յերկնքից գետին շպրտի...

— Փիե՛, փիե՛... անում եր յետ-յետ քաշվելով ծերունին— տո յեկել եք ինձ խեղդելո՞ւ... տո՛ դուք պրի՛ստավ եք, ստարշինա՛ եք...

— Հը՞, չե՛, դու այն ասա՛․ մոտենում եր նրան Հակոբը սպառնալից— կարծում ես են թարս վոտներով, պոզերով ու պոչերով սատանաները քեզ բա՞ց կթողնեն․ յա թե չե, հենց ես կյանքում, դու չե՞ս մտածում վոր յեթե Թիֆլիզում ձեռքս ընկնես, քեզ ծեծելով թան կչինեմ, եդ մազերդ կսեվացնեմ մուրով... Ցա թե չե, Սիսակն ե, կատաղեց ու մի որ

ել բռնեց քեզ հենց այստեղ խեղդեց, ես բաղն ել քար ու քանդ արեց, տրորեց ու ինքն ել կորավ, գընա՞ց...

— Տո ձեռք քաշի ե՛... մեղա՛ աստուծո... տո յես ի՞նչ եմ ասում... հլա թող գնա պաշպորտ բերի...

— Պաշպո՞րտ... քայլեց դեպի նա Հակոբը— տո դու անաստվա՞ծ ես, մլթո՞նի յես. քանի տարի գյուղում մեծացած մարդուց պաշպո՞րտ կուզեն... տո՛ դու չե՞ս կարդացել Ավետարանում, վոր կաշառք տվողին դժոխքումը քանի անգամ հալած արճիճի մեջ են թաթախելու, հարյուր չորս չամչա[1]) կրակ են լցնելու բերանը, ամեն որ յերեք անգամ ձեռքերը դաղելու յեն, կաշառք տվող ձեռքն ել շների առաջ են քցելու... տո բաս դու Ավետարանի՛ն ել չես հավատում...

Մենք, յես ու Գեվորգը ծիծաղից չգիտեյինք ինչ անել, տեսնելով ծերունու լրջորեն վախենալն ու յետ-յետ քաշվելը, իսկ Հակոբի ծաղրով լի ըսպառնալիքները:

— Հա՛մ ել վոր, վերջացրեց սուր խաղով Հակոբը իր խոսքերի կարկուտը— ես ե, յես քաղաք գնալիս՝ ղուբերնատորին ասելու յեմ, վոր քեզ բռնեն հոգիդ հանեն... ի՞նչ ե, դու ի՞նչ ես կարծում ինձ. կարծում ես վոր քի՛չ փող ունիմ կաշառելու բոլորին ու քեզ քշել տալու գյուղիցը... Բայց ամենից առաջ յես քեզ մի լավ կծեծեմ եղուց. հենց ըստեղ կգամ քոթակ կտամ, թե աղջիկդ չես տվել Սիսակին...

Կատարյալ մոլյերական բռնի ամուսնության

---

1) Շերեփ.

կերպարանք եր ստանում հարցը: Ծերունին կարկամել եր. վերցրեց գետնից բահը, մի վոստյուն գործելով դուրս թռավ ծառուղուց և ծածկվեց ծառերի յետևը:

Իսկ մենք մի մեծ քրքիջ բարձրացրինք և այդպես եր, վոր դուրս գնացինք պարտեզից:

Այդ ամենն անշուշտ բավական զվարճալի կլիներ, զվարճացրած իմ հյուրերին— յեթե միայն քարերի մեջ սպասելիս չլիներ թշվառ Սիսակը, վոր դուցե հույս ուներ մեր միջամտության վրա, դուցե կարծում եր վոր յերեք «աղա» քաղաքացիները պիտի կարողանային ջարդել ծերունու համառությունը, պիտի հաջողվեյին վերականգնելու իր իրավունքները և վերջ տալու տանջանքներին...

Այդ մտածությունը յերևի բոլորիս իսկույն համակեց այգից անցնելուն պես, վորովհետև անմիջապես լրջացանք և լուռ՝ քայլեցինք դեպի գետակը:

— Շնծե՛րը... բացականչեց Հակոբը— ասված ե վկա, վոր վաղը գնալու յեմ նրան դնքատեմ. թող ինչ ուզում ե լինի:

Վոչ մեկս չխոսեցինք: Քարերի վրա կուչ յեկած՝ անշարժ նստել եր Սիսակը՝ դեմքը ձեռքերի մեջ: Զլսեց մեր մոտենալը. գետի խոխոջը չեր թողնում:

Ի՞նչ ասել այժմ նրան, ի՞նչպես մխիթարել:

— Սիսա՛կ...

Դարձավ ու վոտքի յելավ:

Հուզմունքը ծածկել անհնար յեղավ: Լացել եր. լաց եր լինում և գունատ դեմքը թրջված եր աղի արցունքով:

Հիրավի... վո՛րբ, վռնտվա՛ծ, հարստահարվա՛ծ և անտուն. անցյալում հույսերով լի՛, յերիտասարդության ամբողջ ույժը դրած մի հողի վրա, վորը իրանն եր կարծել և ահա այժմ կողոպտվա՛ծ ու նետվա՛ծ...

Գուցե և ա՛ղջկան սիրում եր նա, յերազներո՛վ ու հույզերո՛վ լի ապրել եր տարիներ ամբողջ և այժըմ հանկարծ ամեն ինչ խարխլված, ամեն ինչ կորցըրած՝ արտասուքն եր միայն մնացել մխիթարիչ...

— Միսա՛կ, գոչեցի հուզված— ամո՛թ ե...

— Ինչո՞ւ ամոթ, աղա-ախպեր, ինչի՞. ասաց արտասվալից— ել ի՞նչ ունիմ, ել վո՞րտեղ գնամ, վո՞ր քարին գլուխս դնեմ... Գիտեմ, դո՛ւք ել չկարացիք բան անել... փող ունի— զոռբա յա, տալիս ա, իրավունքի ձենը խլացնում... աստված ել խա չա՛տ հեռու ա... բա ել ի՞նչ անեմ վոր լաց չըլեմ...

— Կաց տո՛, ձեռքը դրեց նրա ուսին Գեվորգը նույնպես հուզված— կա՛ց, ի՞նչ ես կնկա պես լալիս. տղամարդ ես, մի բան մտածի՛ր...

— Ցա թե չե գնա բռնի խեղդի...կանչեց կատաղությամբ Հակոբը:

— Թե ի՞նչ... գլուխը շարժեց Միսակը— գլանով աղջիկը կտա՞ն, հողս կտա՞ն... Չե՛, աղա-ախպերներ, յես կորած մարդ եմ, յես սկի մարդ ել չեմ... վոչ վոք չունիմ, ամենքը զուլում են անում ինձ, ամենքը նրա՛ կողմն են, հարուստ մարդ ա, իրանց գեղացին ա... Ստարշինա՛ն ել, քյո՛խվան ել, պրիստա՛վն ել... Աղջի՛կն ել. աղջիկը հոր կողմն ա... առանց հոր իրավունքի՝ յերեսիս նայել չի ուզում... Ախր յես ո՞վ եմ, տո՞ւն ունիմ, ծնո՞ղք, ազ-

գակա՞ն ունիմ թե՞ փող՝ վոր սրան նրան խեղդեմ, վորին ուզեմ քշել տամ, պատժել տամ... Իմը լացն ա. ամա հմի լացի վրա՛ ել են ծիծաղում...

Ասաց, նստեց դարձյալ քարերի վրա և ձեռքերով գլուխը ծածկեց:

Մթնաշաղի, վերահաս գիշերվա մեջ, յերկա՛ր նրա սև կույտը հեռվից յերևում եր խոխոջող գետափին՝ անշարժ ու հուզիչ...

ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

I

Այդ առավոտ շո՛ւտ եյի զարթնել:

Արևը նոր եր ծագել. սահուն և կտոր-կտոր ամպերը հաճախ ստվերում եյին նրա ճառագայթները. շրջակա անտառոտ լեռներն ամբողջովին դեռ պատած եր թանձր մշուշով. աշնանային խոնավ, անձրևոտ այդ օրերը ցեխ եյին շինել, թացության մեջ ծածկել շրջակայքը...

Յերբ դուրս յելա, դռան առաջ տան տերս հանդիպեց: Սայլի վրա յերկու չուլթ բարձել, վորդու հետ մոտակա արտն եր ուզում գնալ՝ աշնանացան անելու:

Առաջարկեց ընկերանալ: Սայլը յելա, սերմացուի տոպրակը նստարան շինեցի և մի այլ յերիտասարդի հետ, վոր գալիս եր ոգնելու, գյուղից դուրս գնացինք:

Մոտ եր արտը. թաց եր, բայց շատ ցեխ չեր. հարմար եր չթելու և ցանելու: Հարմար էլ չլիներ— ժամանակն եր:

Յեվ յերբ հասել եյինք, իսկույն գործի ձեռնարկեցին:

Լծեցին արտի կխից. տան տերս ցած գլորեց ցորենի տոպրակը, մի մեծ սպիտակ գոգնոց կապեց ուսից, խնդրեց իմ ոգնությունը և մի փիթաչափ սերմ հավաքելուց հետո, վոտքի յելավ:

Բայց, նախ քան սկսելը, ծանրացավ մի վոտքի վրա, դեմքը դեպի արևելք դարձրեց, խաչակնքեց ու աղոթեց:

— Ո՛վ Մարիամ աստվածածին, դո՛ւ բարեխոս լինես միածնիդ... մեկին հազար անես...

Ասաց, բո՜ւռը լիքը սերմ հանեց գոգնոցից ու շպրտեց դեպի հողը:

Մինչ այդ՝ յեզներն էլ քայլեցին: Արտի յերկու ափերից գործիքների ծայրերը մխվեցին փուխր հողի մեջ:

— Հո՛, հո՛...

— Բո՛զոլ, Բո՛զոլ...

Յեվ գոռչ հողը պատռելով՝ դիզվում եր ակոսների կողերին:

Նստել եյի թմբաձև մի հողակույտի վրա ու նայում:

Սկսել եր փչել թարմ, գրեթե ցուրտ քամի: Արևը հաճախ ծածկվում եր վազող ամպերի մութ կտորներով: Առջևս— ցածում փռվում եր գյուղը՝ իր կարմիր-կղմինդրյա տանիքներով, սիրուն ծառաստանների մեջ թաղնված. ապա, ավելի հեռուն՝ դաշտը, դեղին և սև քառակուսիներով ակոսված մինչև լեռների ծայրերը, յերբեմն միայն բծավորվում եր կանաչ փոքրիկ տարածություններով: Հո—

րիզոնում, հնձված և նուրբ մշուշով խառն հեռանը-
կարը ծածկվել էր մոտակա թաց հողերից յելնող
գոլորշիների քողաձև վարագույրով...

Այնքա՛ն անուշ էր օդը, այնքա՛ն մաքուր, վոր
գյուղից պարզ հասնում էին մեզ սագերի, շների և
մանուկների խառն ձայներ. աքաղաղն էլ իր ժանգոտ
կանչովն էր պատռում օդը:

Կողքում, քիչ ցած, գետնախնձոր էին հանում:
Կին, մանուկ կռացած, փորում էին, կողքին փոք-
րիկ կրակ էին կազմել թարմ գետնախնձոր խորովե-
լու և ծուխը թանձրացել էր նրանց շուրջը: Ավելի
ցած՝ բլուրների վրա էլ վարում էին. այնտեղից
լսվում էր «հորովելի» մելամաղձիկ ձայնը:

Ցել սերմնացանը կաղն ի կաղ, պարբերաբար,
բուռ ցորեն էր սփռում արտի վրա. լսվում էր նրա
ընկնելու ձայնը, անձրևի նման:

— Ծա՛նր, ծա՛նր քշի Ջխս... կանչում էր չըթ-
վորներից մեկը:

— Հե՛յ, յես քու տիրոջը... նեղանում էր մյուսը
յեզների վրա:

II

Քայլում էր ու ցանում: Բայց և խոսում էր նա:
Ինձ՝ մի քանի բառ, չըթվորներին՝ նկատողություն...
Այդ բոլորը նա անում էր առանց կանգ առնելու,
միապաղաղ ձայնով:

— Վոտդ ո՞ւր ես հուպ տալիս:

— Գնում չեն...

Ու անցնում էր, մուշտուկով պապիրոսը բերնին:

Անցնում էր մոտովս. ցորենը շղշղալով ընկնում էր
վոտներիս առաջ:

— Փե՛շքեշ... ասում էր ինձ:

— Հազարո՛վ լինի. բարեմաղթեցի յես:

— Ալյոշկա՛, արի՛... գոչում էր չըթվորը— Ալ-
յոշկա՛, ա՛րի, ա՛րդյալ Ալյոշկա՛... Տո ինչի՞ յես
սատկում, ա՛րդյալ արի է՛է՛...

— Ի՞նչ բան է «արդյալը». հարցնում եմ:

— Անվարել հող. բացատրում է սերմնացանը:

Իսկ յերբ քիչ հեռանում են, տանտիրոջ վորդին,
կարծես մի կիսատ թողած խոսակցություն վերանո-
րոգելով, ճնշում է վոտքը շուլթի կոթի վրա և ա-
սում հորը.

— Մելիքին յե՞րբ ենք փող տալու, վոր ասում
ես 3 մանեթ էլ կա... Քարը վոր տարար, փողն ա-
ռա՞ր...

Հայրը քիչ լռում է, մի յերկու բուռ ես նետում,
հետո, հեռացած, նույն միապաղաղ ձայնով պատաս-
խանում.

— Քեզա՛նից բեխաբար... բաս 3 մանեթը դա,
իսկ մյուս յերե՞քը:

Միմյանցից հեռանում էին ավելի, ուստի և
ձայները քիչ բարձրացնում, վոր լսելի դառնան:

— Բաս վոր մի որ յեզնիքը տարանք քարհա՞նք
... առարկում է վորդին:

Ու լռում են: Հայրը վոչինչ չի պատասխանում:

— Հո՛, հո՛... դարձյալ լսվում է մյուս չըթվորի
ձայնը— Բողո՛լ, հո՛, հո՛... Ա՛յ տղա, կասես ա-
կանջները կալած ըլի. յեռեսուն հետ Բողոլ եմ ա-
սում, մի հետ ականջ չի անում...

— Դե՛նը դնա, դե՛նը... ձայնում է մյուսը:

Քիչ հետո սերմնացանը հասնում էր արտի ծայրին: Մտածեցի՝ վոր մի կողմը վերջացրել էր և պիտի կեսիցը դառնար յետ: Բայց նա նորից սերմ լցրեց և նորից նույն կեսի վրա սկսեց:

— Յերկու անգա՞մ ես ցանում նույն տեղը. հարցրի յես:

— Վոր խիտ լինի, հավասար. ասաց նա:

Ապա, յերբ հասել էր ինձ, նետեց պապիրոսը և ավելացրեց.

— Առանց են էլ մի բան չի դուրս գալիս... խո տեսա՞ր գարնանացանը:

— Տեսա:

Մեծ մասը գիժ-ցորեն է. մնացածն էլ անձրևներից՝ կալի մեջ ծլել է:

— Այո: Ավելի լավ չի՞ լինիլ յեթե յերբե՛ք ցորեն չցանենք. ամեն տարի այդպես է:

— Ապա ի՞նչ անենք:

— Ձեր հողերը ցորենի հող չէ. անձրևներ, հողը վա՛տ...

— Հա՛. լավ խոտի, վարսակի հող է:

— Յեվ կաղամբի, գետնախնձորի:

— Ճիշտ է:

— Դուք էլ ուրեմն միայն վարսակ, կաղամբ ու գետնախնձոր ցանեք:

Յերեսիս նայեց ժպտուն ու ցանելով անցավ: Յերբ քիչ հեռացել էր, առանց դառնալու՝ ասաց.

— Լավ ես ասում. բաս գա՞րման:

— Գա՞րման. ուրեմն միայն դրա համա՞ր ցանել:

—Ապա ի՞նչպես. ասաց նա:

Ջթվորներից մեկը, վոր մոտեցել էր և չուլթը չուռ տված՝ յերկաթի ցեխն էր մաքրում, միջամըտեց.

— Վոր գարման չլինի, ասաց նա— տավարը խոտով չի ապրիլ:

Այլևս վոչ վոք չխոսեց:

Արևին այդ միջոցին հաջողվել էր քիչ ցանուցրիվ տալ մշուշը: Այժմ էլ վարվող հողիցն էր գոլորշի յելնում և գետնի յերեսը քարշ գալով գնում: Գյուղից լսվում էին ավելի և ավելի ձայներ. յերևում էին սայլվորներ, տավարներ: Մի ինչ վոր, գոմեշներ լծած սայլ էլ, լեռներից էր իջնում:

— Ունանենց քոչն է, դիտեց տանտիրոջս վորդին— սարից են իջնում:

— Պիտի գան, բա՞ս. ասաց յերկրորդ չթվորը հանդեպից անցնելով— անձրևները ո՞ր են տալիս վոր:

— Ադա ո՞ւր էք կանգնել, քշեք է՛. ձայնեց հեռվից սերմնացանը— յես էս ա պրծնում եմ մեկ կողմը:

Ու կաղն ի կաղ մոտենում էր: Գոգնոցի սերմը պրծել էր, բայց նախ քան նորից լցնելը, նստեց ինձ մոտ՝ քիչ հանգստանալու, մի պապիրոս շինեց, վառեց ու ասաց.

— Ե՛հ, հի՛մար բան է, մարդ ափսոսում էլ է այսքան աշխատանքը:

— Ինչո՞ւ, մխիթարեցի յես— ասում են վոր աշնանացանը գիժ ցորեն չի տալիս:

— Ճշմարիտ է. բայց տված ցորենն էլ մի բան

չի... Էհ, ապրուստ խո չի մեռը, դժոխք է, դըժո՛խք... Ցանում ես, տանջվում և վոչի՛նչ...տո՛թ, մկնե՛ր... գետնախնձորն էլ, հրե՛ն, կեսից ավելին փչացել է:

— Հա՛, այս տարի ամեն ինչ վատ է չեղել... բայց ամենքը քեզ պես չեն գանգատվում... Ա՛յ, Մաթոսը, որինակ. յերեկ ասում եր վոր— «փառք ըլի աստծուն, ի՞նչ կա, ամեն տարվա պես տարի յե, ե՛լլի»...

— Կասի բաս, ինչո՞ւ չասի. ժպտեց գաղտնությամբ սերմնացանը— նրա շա՞տ մեկ վեջն ա, վոր արտը վոչինչ չտա: Ուրիշների հողին թող դուրս գա. նրա՞ն ինչ. ինքն ու տղեն խո սովորել են ուրիշների տունը քանդելով հարստանալ...

— Հա՛, ասում են վաչխառու յե, տոկոսով...

— Հմ, տոկո՞սը վորն ա...տոկոսը ելի բան ա. ուղղակի խաբեյությունով... Անցյալ որերը չե՞ր վոր բողազիցս բռնեց ու 20 մանեթի տեղ 10 սայլ խոտը խլեց ձեռքիցս... Ե՛հ, ույժն էլ նրա կողմն է, իրավունքն էլ...

— Եդ նրանից է, ասացի յես— վոր դուք ձեր իրավունքները պաշտպանել չգիտեք. վոչխա՛ր եք, վոչխա՛ր... խուզում են ձեզ լավ...

— Չեն խուզում. ո՛ւտում են գայլերի պես... Աշխարհումս մարդիկ յերկու են լինում— գայլ ու վոչխար. դե՛հ, իհարկե գայլը վոչխարին կուտի:

— Դուք էլ վոչխար մի՛ լինիք. մարդուս իրա՛ն ձեռքն է այդ...

— Հա՛... արեց նա մտախո՛հ— իրա՛վ է, մարդուս իրա՛ն ձեռքն է ինչ անասունի ասես՝ նմանվելը... մարդ կա վոր ոձ է, մարդ՝ վոր խոզ, մարդ էլ կա՝ վոչխար է...

— Վոչխարը ուրեմն վոր ուզենա, գա՞յլ էլ կըդառնա:

— Կդառնա, ինչո՞ւ չէ:

Հետո վոտքի յելավ ու քայլեց դեպի ցորենի տափրակը: Հետը գնացի. ուզում եյի տուն վերադառնալ:

Ցեվ յերբ չոքել՝ լցնում եր, ասաց.

— Սպասի՛ր, քեզ մի բան պատմեմ, պարո՛ն... Ուզում ես գնա՞լ:

— Չէ, պատմի՛ր:

— Մեկ պապիրոս էլ ծխիր, մինչև յես պատմեմ... Հա՛, են եյի ասում... Մեր գյուղումը, ըսրանից տարիներ առաջ, մի խեղճ մարդ կար, Հարութ եր անունը: Մեզ պես ցանում եր, հնձում, դիժցորեն ուտում— հիվանդանում. և քա՛նի ընտանիքը մի կողմից ավելանում եր, այնքա՛ն նրա արդյունքը պակասում եր, անձրևը կալը փչացնում, հիվանդությունը և խոտի պակասությունը տավարը վոչնչացնում... Քիչ եր մնում ամեն բան թողնի ու գլուխն առնի կորչի... Մի որ էլ, յերբ այսպես, դառն մըտածություններով լի, յեկել եր աշնանացանի, հազար անգամ որն ու հողը, անձրևն ու իր ցանքը անիծելով՝ կռացել սերմացվի տափրակի վրա՝ ցորեն եր լցնում գոգնոցը, ի՞նչ տեսնի լավ է... հանկարծ տեսավ վոր տափրակից մի սատանա դուրս թռավ ու առաջը նստեց...

Ի՞նչ ասել կուզի վոր Հարութը խիստ վախեցավ, գոգնոցի միջինը վեր ածեց և ուզեց փախչել:

— Ո՞ւր ես փախչում, տո՛. ասաց նրան սատանան— յես խո քեզ չե՞մ ուտելու. կա՛ց հալա...

Հարութն էր. ձողը ջանն ընկած՝ կանգնեց:

— Մո՛տ արի, ախմա՛խ, ձենեց սատանան— ինձ խո ճանաչեցի՞ր:

— Հրամանք ես:

— Յես խղճացի քեզ, նրա համար էլ չեկա: Շատ էլ լավ չի որդը, հը՞... Ցանում ես՝ դիժ է սառցվում, ծնում ես՝ մյուս կողմից ավրուսադ է քշանում... Կուզե՞ս, արի քեզ հարստացնեմ:

— Բաս չե՞մ ուզիլ:

— Դե լավ, վոր ըտենց ա, առաջ մեկ էդ սերմացու ցորենի վրա վոտքդ դիր ու մի լա՛վ տրորիր...

— Վո՞նց, բա մեղք չի՞...

— Հիմա՛ր... բա դու մեղքը չե՞ս... Տրորի՛ր, ասում եմ:

Հարութի սիրտը խփում էր, բայց դե, սիրտ արավ ու տրորեց: Տրորելուն պես վոտքը ծռվեց ու կաղ դարձավ:

— Վա՛յ, վա՛յ, կանչեց նա— վոտքս ծռվեց:

— Վոչի՛նչ, ծիծաղեց սատանան— կաղ վոտքը չի խանգարիլ հարուստ լինելու... ըտենց, դե հիմի մոտ արի ու սերմացուխդ տոպրակի մեջն էլ մի լավ թքի՛ր...

— Բո՛ւ... չէ՛, էդ կարող չեմ. ընտանիքս կերակրող տո՞պրակը...

— Տո թքիր է՛, քեզ ասում եմ. վողջ ընտանիքդ ե՛նպես հարստացնեմ, վոր սաղ դյուղը վոտներդ լզի...

Հարութը կռացավ ու թքեց: Բայց հենց վոր թուքը ցորենին կպավ, մի ցորեն թռավ մտավ աչքը ու իսկույն քոռացրեց:

— Վա՛յ, վա՛յ, կանչեց նա. աչքիս մեկը քոռացավ:

— Վո՛չինչ, քրքջաց սատանան— էն մեկ աչքովն էլ կտեսնես վոսկիները... Դե՛հ, հիմի մնաց մեկ բան էլ անելու, պիտի ապականես հողը...

— Չէ՛, յես էդ բանը չե՛մ անիլ... հողը բա կապականե՞ն, կպղծե՞ն...

— Տո արա՛, ախմախի ճուտ, էլ հողի հետ ի՞նչ գործ ունես. էնքան վոսկի տամ քեզ, վոր մեռնելիս էլ նրա մեջ թաղվես:

Դե՛, Հարութն էր, ապականեց: Բայց հազիվ արել էր, մարմնի վրա իսկույն այնպիսի վերքեր դոյացան, վոր թե ինքը չազատվեց նրանից և թե ցեղից-ցեղ նրա սերունդը ող չտեսավ այդ վերքերից...

— Վոչինչ, ասաց սատանան— լավ լավ չորեր կհագնես, վերքերդ չեն յերևալ...

Ասաց, իր չանգերով կնքեց Հարութի սիրտն ու ճակատը և խրատեց:

— Դե հիմի՛, ասաց նա— գնա տուն. դրացուդ, Գալոենց տան պատերի մեջ վոսկի կա, քանդիր տունըն ու վոսկի՛ն առ... Բայց տես, մինչև վոր սաղ տունը քարուքանդ չանես, վոսկին չես գտնելու... Յեթե Գալոենց վոսկին քեզ չհերիքի, մյուս դրացիներիդ, սաղ քո թաղի, գեղի և աշխարհի տներում վոսկիներով լիքն է, քանդիր ու վերցրու...

Հետո մի լավ, կուշտ ծիծաղեց ու անհետացավ:

Հարութն էլ գնաց: Մյուս օրն յեվեթ Գալոենց

տունը քանդեց, հետո դըրացիներինը և մինչև այժմ էլ ինչ տուն տեսնի՝ կքանդի, վոր վոսկի գտնի...

Պատմեց սերմնացանը և վոտքի ելավ՝ գոգնոցը ցորենով լի:

— Հետո՞. հարցրի յես— ինչո՞ւ այդ բոլորը պատմեցիր:

Ցերեսխ նայեց ժպտելով ու ասաց.

— Հարուստը վոչխար եր, գայլ դարձավ, ե՛լի...

— Իմ ասածն այդ չեր:

— Գիտեմ... բայց ինձ լսիր: Ասենք՝ յես ուզում եմ ճանապարհ գնալ. փուշ ե՝ ջարդում եմ, քար ե՝ դեն եմ շպրտում, բաս վոր սարը գա, վո՞նց անեմ. կարա՞մ քանդել...

— Վոչ մենակ, բայց միասին և համառ աշխատանքով կարող եք նրա տակը փորել...:

— Միասի՛ն... համա՛ռ...

Ցերեսխ նայեց դարձյալ, մի վարկյան լուռ մտածեց, հետո բուռը կոխեց, հանեց սերմը և ցանելով հեռացավ...

Լուռ՝ յես էլ հեռացա:

Մշուշը իջնում եր դարձյալ, արևը թաղնվել եր և ցուրտ քամին սաստկանում: Ջթվորները ճնշում եյին գործիքների կոթերը և ակոսելով անցնում:

— Բողո՛լ, Բողո՛լ, ա՛րդյալ արի...

— Հա՛յ յես քու տիրոջը...

Վերևում լսվում եյին կռունկների ձայներ: Մի գույժ եր այն, վոր կռկռալով սավառնում եր դեպի անտառոտ լեռները:

ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

Անտառ մտնելուն պես, յերկինքը պարզվեց:

Ամպերը չցրվեցին, վոչ: Կապարի նման ծանրությունը միայն փարատվեց բարձրում, փոթորիկ գուշակող մռայլ կարպարանքիցն ազատվեց յերկնակամարը:

Գետից հետո, վայրենի խնձորենիների, տանձենու և կաղնիների մի խառնուրդ՝ յեզերում եր անտառի կուրծքը մխրճվող շավիղին:

Այնքա՛ն գրավիչ երցածում փռվող հեռանկարը, վոր մի քանի րոպե կանգ առինք բարձրության վրա և զննելու մնացինք հորիզոնի կանաչ կապած դաշտը:

Մեզ հետ կային մի քանի գյուղացիներ: Մելիքն եր՝ իր ճակատի տակի հայացքով և յափունջու մեջ պարուրված. հետո՝ մեր տանտիրոջ վորդին— Գրիշոն, այլ և այն յերկարահասակ ու նիհար Թեվոսը, վորին գյուղում «ուզուն ախմախ» (յերկարահասակ տխմար) եյին կոչում:

Թեվոսն այդ օրը իր ամբողջ յեռանդն եր ցույց տալիս մեզ ոգնելու և առաջնորդելու մեջ: Հիմար ժպիտը դեմքին, ինքնակոչ կերպով առաջնորդության դերը ստանձնած՝ քայլում եր առջևից, դեպի հունը

ցույց տալիս. շալակեց ինձ ու ջրից անցկացրեց, յերեխաներին ամբողջ ժամանակ գրկած տարավ, իսկ յերբ դեռ եյինք անցնում, ավելի գործունյա, գոռում եր աջ ու ահյակ.

— Ադա՛, ո՞ւր ես կանգնել, քո՛ւ Գրիշո, չե՞ս կարում յերեխաներին դեսը բերի… Կա՛ց, պ. Ցերվանդ, կոշիկդ մի՛ հանի… ա՛յ, արի մեջքիս վրա ընկի՝ տանեմ քեզ… Կացե՛ք, կացե՛ք, խանումներ, հրեն գոմշի սել ա գալիս. վրեն կնստացնեմ ու ջուրը անց կկենաք…

Ու յերբ անտառն եյինք մտնում այդ բոլորից հետո, կանգ առավ մի խնձորի ծառի տակ, ձեռքը տարածելով մեծ շրջան գծեց օդում ու ասաց ինձ:

— Հրես ա՛յ, սա՛ ա Մելիքի գավթած հողը…

— Ագա ո՛ւզում ախմախ, կանչեց նրա վրա Մելիքը բարկացած— գա՛վթածս վորն ա… են ա իմ հողն ա, ելի՛. իրեք տարի ա, համ չութով վարում եմ, ակոսներ քցում մեջը, հողը շուռ տալիս, համ դիփ եդ վերի (վայրենի) խնձորտեքանց վրեն պատբուսնի եմ արել, համ ել ա՛յ, են ձորումը ընենց կաղնքի յեմ կտրատել— ցած քցել, վոր ամեն մեկը 10–15 մանեթի տախտակ կհանի… Հողն իմն ա, վոր կա. հասկա՞նում եք… Ինչուք հմի, են ա շտրաֆ ա (տուգանք) վոր տալիս եմ… Հրես մի քանի որից հետո ել կհաստատվի ինձ վրա՝ կպրծնի…

Այդ բոլորը ասաց Մելիքը ձեռքի լայն շարժումներով, յափնջին յետ քաշած ու իր հողի մեջտեղը կանգ առած:

Ապա, յերբ պրծել եր, մոտ յեկավ ինձ, յա-

փունջին հանեց, ծալեց, ուսի վրա նետեց ու ավելացրեց.

— Գնանք, պ. Ցերվանդ, տես թե վո՞նց հող ա… քեփդ կգա…Կուզես տամ քեզ, մեջը ծառ քցի, վարի, ցանի… Մենակ 200 հատ խնձորի կա մեջը. ընե՛նց կաղնքի ցույց տամ, վոր բերանդ բաց մնա… Դիփ կտրատելու եմ, վոր ջառմաները տամ… Բա վո՞նց, ինձ ջառմայով կվախացնե՞ն… ընչի՞ պտի ջրիցս տամ. են ա, կտամ մի–յերկու կաղնըքի վեր կքցեմ, կքշտեմ, կծախեմ ու ջառման ել կհանեմ, մեկ բան ել ավել…

— Իսկ յեթե վրա հասնեն ու կտրատած ծառերը տեսնե՞ն…

— Ո՞վ, արե՞շչիկը[1])… Տո հրեն ե՛. մեկել որը ըստեղ մենք խորոված եյինք ուտում ու գինի խմում, կողքներիս ել մեկ կաղնի ծառ խփում եյին ցած քցում… յանի արեշչիկը վոր կա, իմ նոքյա՞րը չի, քի՞չ ա ինձանից խեր տեսնում.. հա՛մ կաշառք, հա՛մ քեֆ…

— Բայց յեթե ինքը— անտառապա՞հը տեսնի:

— Լեսնիչի՞ն…[2]) Նա ակի գալի՞ս ա վոր ես կողմը… Տեսնա ել, ի՞նչ կանի… յես ի՞նչ գիտեմ ով ա կտրել. արեշչիկը չի տեհել — չի իմանում… գողացել են…

Պարզ եր այժմ: Մելիքը կատարելապես իր կողմն եր քաշել անտառի պահապանին և այս ու այն ձեվով՝ հաջողվել եր պետական անտառին յերերող հողերից մոտ 4 դեսյատին զրավել: Նախ, չութով ա-

[1]) Անտառի պահապան [2]) Անտառապահ:

կոս էր գծել նրա շուրջը, հետո՝ ցախով կարճ շրջափակ դրել, հետզհետե, հեռավոր, խուլ կողմերից սկսած՝ ծառերն էր կտրտել, խնձորենիները պատվաստել... Մի խոսքով՝ հողին տիրացել էր ու դատաստանական վճիռներից խուսափել էր տուգանքներով, ավելի շատ՝ կաշառքներով...

Մնում էր մի բան: Դատի պիտի կանչեյին, քըննություն բանային: Յեվ ի՞նչ պիտի յերեվան գար: Վոր Մելիքը 3 տարի ամբողջ՝ այդ հողը մշակել էր, ծառերը կտրտել, նոր ծառեր տնկել, հողին գործնականապես տիրացել: Մի լավ տուգանք— և հողը պիտի մնար Մելիքին... անշո՛ւշտ կաշառքների ույժով:

Մենակ խո Մելիքը չէ՞ր: Ամբողջ Դուզանը այդպես էր ընդարձակում իր հողերը: Ճար չկար: Գյուղը մեծանում էր, բազմամարդ դառնում, իսկ 50 տարի առաջ տրված հողից ավելին չեյին ուզում տալ նրան:

Մնում էր գողանալ: Յեվ գյուղացիք արդեն մոտ 60 դեսյատին հող խլած, այժմ մտնում եյին անտառի կուրծքը, գրավում եյին բացվածքները:

— Դա գողություն է. բարոյախոսեցի յես:

Մելիքը ժպտեց, հրավիրեց մեզ նստել մի ծառի ընկած կոճղի վրա, հրամայեց Գրիշոյին, վոր խանումների նստելու համար յափունջին գետին փռի, հետո պահ մի պապիրոս շինեց ու ասաց.

— Ըստի մտիկ տու՝ ինչ կասեմ, պ. Յերվանդ ... Դու գիտնական, կարդացող մարդ ես... Դու քո աստվածը՝ դրուստն ասա. եդ յերկինքը, յա եդ արեգակը (վոր չի էլ ըրեվում հմի) յա եդ ոդն ու ջուրը, հենց եդ փշերն էլ հետը՝ վորի՞նն ա...

— Ամենքինը:

— Շատ ապրես... դուրս ա գալիս, վոր ոդն ու արեվը վոչ վոքինը չի... համ էլ՝ ամենքինն ա... աստծունն ա, աստված էլ ամենքի համար ա, նրա տվածն էլ ամենքի համար ..., ըտենց չի՞:

— Այդպես է:

— Աստված էլ տվել ա մարդկանց, վոր վայելեն... Բաս վոր հանկարծ դու վեր կենաս ու զոռով եդ ամենը խլես ինձնից, ասես վոր քոնն ա, դիփ էլ զավթես, վորդոց-վորդի սկի մեկին չթողաս վոր մոտ գա... էն վախտը յես ի՞նչ պիտի անեմ...

— Այդ ի՞նչպես կարելի յե. վո՛չ արեվը կարելի յե զավթել և վո՜չ էլ ոդը:

— Ինչի՞ չի կարելի, ծիծաղեց Մելիքը—ա՛յ, ըսենց չորս պատ կքաշեմ, յա փոս կփորեմ, քեզ մեջը կդնեմ... ու վո՛չ արեվ կտեսնաս, վոչ էլ ոդ կծծես ... ելա՞վ ...

— Յեղավ, ճիշտ ես ասում... Հետո՞...

— Հետո էլ ի՞նչ... յանի վոր ղորթանց քեզ ըտենց անեմ, դու ի՞նչ կանես:

— Բայց դա անիրավություն կլինի. ոդից ու արեվից չէ կարելի զրկել վոչ վոքի...

— Կարելի ա... Զոռի բան չի՞... գլխիդ խփելն ու փոսի մեջ գցելը մեկ կլինի... հա՛ դու գոռա՛, հա՛ դու լաց ըլի, յա գանգատ արա... զոռն իմն ա՝ ինչ ուզեմ կանեմ: Ամա ասելիքս էն ա վոր, թե եդ փոսում յեղած վախտդ, բան ա, մեկ ծակ բաց արիր, վոր ոդ ու արեվ ստանաս մի քիչ — դու կըլես գո՞ղ...

— Խելոք չես խոսում, Մելի՛ք:

— Շատ էլ խելոք եմ խոսում... Դու ջուղա՛բ տու, ընչի՞դ ա... Հլա մեկ ջուղաբ տու... Հ՞ը, վոր ծածուկ, իմ քնած վախտը, յա մեկ ընենց ֆան-դով՝ բանտից պատը ծակես, օդ ու արեվ զափթես, վոր չմեռնես— դու կըլես գո՞ղ...

— Վո՛չ ի հարկե. ամեն մարդու իրավունքն է ապրելը, հետեվապես իրավունք՝ օդից ու արեվից վայելելը:

Մելիքը, չնայելով վոր յես ակնարկս դեմքին ուղղած՝ սպասում եյի, վոչինչ չասաց. միայն մի քմծիծաղ տվավ և սկսեց պապիրոս ծխել:

Հետո, յերբ մի րոպե լռություն եր տիրում, դարձավ կողքին ցցված Թեվոսին ու ասաց.

— Ադա, Թեվո՛ս, քա՞նի ջան ողլուշաղ ունես:

— Հինգ, Մելիք, հինգ ջան.

— Քանի՞ որավար հող ունես:

— Սկի՛ քանի. երկու որավար, մեկ էլ մի պոս-տիկ, բռանս չափ բաղ, մեջը մի—յերկու բալի ծառ:

— Քա՞նի կոտ ցորեն ես կալսում.

— Գի՞ժ ցորեն.

— Հա՛, հենց գիժը...

— Տարին գիտա... չա՛տ քիչ...

— Բա վո՞նց ես ապրում, ողլուշաղդ կերակրում.

— Լոբի ենք ուտում, խոտ, բանջար... գիժ հացն էլ՝ են ա մեզ սպանում ա... թե բանելու գործ ելավ, մի կերպ յոլա ենք գնում, քաղցա՛ծ, սո-վա՛ծ...

— Հիմա՛ր ես, ընդուր... վերջացրեց խոսու-թյամբ Մելիքը և դարձավ ինձ նայեց:

Ահա այդ իսկ միջոցին եր, վոր ցածից լսվեց անիվ-

ների դղրդյուն և մի յերկար կառք, մեջը լիք պաշ-տոնյաներ, ռուս կանայք, յերեխաներ՝ յեկավ ու սլանալով անցավ մեր կողքից: Կանանց ու յերեխա-ների քրքիջը, տղամարդկանց ուրախ ծիծաղներն ու յերգերը սփռվեցին կառքի անցած ճանապարհի վրա և անլսելի դարձան միմիայն 5–10 րոպե հետո, յերբ այդ բոլորը ծածկվեց— անհետացավ յեղեվնիների յետևում:

Մելիքը, վոր կառքը տեսնելուն պես վեր եր թռել և գլխարկը հանել — գլխաբաց մնաց մինչեվ անհե-տանալը: Հետո, դարձավ ինձ, ծածկեց գլուխը, նըս-տեց ու ասաց.

— Լեսնիչին եր... Քեֆի են յեկել... Լավ ա, վոր յերեկ խաբար եյին տվել. մեկ վոչխար ղրկել եյի աբեշչիկին...

II

Չգիտեմ ինչո՞ւ, Թեվոսն այնուհետեվ նկատելի կերպով փոխվեց:

Վո՛չ միայն դադարեցրեց յեռանդը՝ մեզ օգնե-լու, այլեվ սկսեց քիչ խոսել, բոլորովին չժպտալ: Սրախոսելու կամ կատակելու փորձերն իսկ մոռա-ցավ:

Գլուխը կախ, կապույտ աչքերը յերազուն՝ յեթե չեր լսում մեզ, գնում եր այս—այն ծառը զննելու, այս—այն յեղեվնու տակ կծկվել— նստելու:

Գրիշայի հետ մորթեցին գառը, քերթեցին, խո-րոված շինեցին: Իսկ յերբ կերել եր իր բաժինը, մի ումպով դատարկել մեծ բաժակով գինին, յերբ ա-

մենքս ուրախ խոսակցություն էյինք սկսել—հանկարծ նկատեցի վոր Թեվոսը անհետացել եր:

Ձորն իջանք, լեռնադաշտի բացվածքում թեյի նստեցինք, բայց Թեվոսը յերեվան չեկավ:

— Ես ո՞ւր կորավ ուզուն-ախմախը. նկատեց նայեվ Գրիշոն:

Ցերեկոյան դեմ հանկարծ ծառերի միջից յերեվաց «ուզուն-ախմախի» դեմքը:

Լուռ մոտ յեկավ, ողնեց հավաքվելու, գրկեց յերեխաներից մեկին և այդպես անխոս՝ հետեվեց մեզ մինչեվ գյուղը:

Պահ մի մտքովս անցավ թե դուցե մեկն ու մեկը իր կծու վարմունքով վիրավորել եր նրա ինքնասիրությունը:

Բայց կարծես մտածում եր: Վո՛չ խոսակցության եր խառնվում, վո՛չ էլ մոտ գալիս:

Ասենք Մելիքը սկի վո՛չ վոքի ժամանակ չեր տալիս խոսելու:

Պատմել եր սկսել նախ գյուղի մասին: Գետից անց՝ ձեռնարկեց այս ու այն գյուղացուն բամբասել: Ծաղրեց տանուտերին (քյոխվա), հայհոյեց ստարշինային (գյուղապետ):

Իսկ յերբ Բանդված—ժամի մոտով իջնում եյինք, պրիստավի անիրավություններից այնքա՛ն դեպքեր պատմեց, վոր մինչեվ տեր Սարգսի այգին հասնելներս՝ չեր սպրծնում:

— Ախր դու չե՛ս իմանում ինչ անիծածն ա ե՛ե՛ … վերջացրեց նա կամուրջի մոտ: — Գեղերը վողջ՝ ձեռին յեսիր ա չինել: Աջ խփում ա, ձախ՝ խփում … վա՛յ ա, թե որենքի անուն ես տվել: Վո՞նց,

որե՞նք… Ա՛ռ քեզ որենք… Մեկ, յերկու, տո՛ւր՝ վոր կտաս… Ղա՛մչին էլ ա մաշվել… Հրեն ստարշինան ընդրանից ա սարվել, վոր ում հասնում ա՝ ղամչով քյա՛լլին ա տալիս…

— Ցանի Մելի՛ք. միջամտեց հանկարծ Գրիշոն— էդ ընչի՞ ես ասում: Են ա վոր դու էլ ստարշինա ըլեյիր, դո՛ւ էլ կծեծեյիր, էլի… Բի՞չ ես ղամչիդ մաշել քյոխվա վախտդ… Մոռացած կլես դու, ամա դե յես չեմ մոռացել, վոր քամակիցս վազելեն՝ չուր ժամի դուռը, անաստոծ կապտացրիր ջանս… Ջուր հմի հրեն հլա ջանումս ա մրմուռը:

— Կա՛ց հլա. կանգ առավ Մելիքը— վո՞նց թե մոռացել եմ: Սկի էլ չեմ մոռացել: Բա թողեյի վոր Խեչոենց բաժնիցը կես արշին հողը խլեի՞ր… Բա լոենց գողությունը ղամչու արժանի՞ չեր:

— Դե տե՛ս, տե՛ս… տաքացավ Գրիշոն ու նույնպես կանգ առավ— հալիր վոր ասես թե Խեչոյիցը վոսկոռ էյիր կերել ու նրա թարաֆն էյիր բռնո՞ւմ … Են կես արշինը վոր կա, մերն ա ըլել, Խեչո՛ն եր մեզնից զավթել… Հրեն ա՛յ, ընչու հմի համ սեմիչկա[1]) եմ տնկոտել ընտեղ, համ էլ լոբու ակոսնին տարել վրեն…

— Աղա է՛յ. կանչեց նրա վրա Մելիքը և գլուխը դեմ տվավ— յանի վոր արիր, արածդ պակա՞ս գողություն դառավ… Ախմախ քյոխվա յես դառել. ընդուր էլ արել ես. թե յե՛ս կըլեյի քյոխվեն…

— Քյոխվա իր ե՛լի, ի՞նչ արիր… ճչաց Գրիշոն — ղամչուդ էլ դառ տվիր, ո՛ւշունց էլ տվիր… Ե՛լ հետ խո հողը մերը մնա՞ց:

1) Արևածաղիկ:

Ա՛յնքան նման էյին այդ բոլեյին խրար դեմ կռվի յելած և մխմյանց վրա նետվելու պատրաստ աքաղաղներին, վոր մերոնք բոլորն էլ չկարողացան ծիծաղները պահել: Մելիքը՝ յափունջին ուսերին, գլուխը դեմ տված ու բարկացայտ աչքերով. Գրիշոն՝ բոլորովին մոտ, պայուսակը վոտքերի տակ, ցցված, յերկար վիզը առաջ տարած...

Ինձ թվում եր, վոր յեթե կռիվ սկսեյին, ամենից առաջ գլուխներո՛վն էյին մխմյանց զարնելու:

Սակայն այդպես չեղավ: Ձայները ամենասուր խաղերի հասցնելուց հետո, հանկարծ Մելիքը ցնցեց յափնջին և ասաց.

— Գնա՛, գնա՛, շա՛շ... գնա փառք տուր, վոր յե՛ս չեմ քյոխվեն...

Ու յետ քաշվեց:

— Վոր ըլեյիր՝ շատ բան կանեյիր ա՛յ... ճչաց Գրիշոն: Ու պայուսակն ուսին առավ:

Սկսել եյինք կամուրջն անցնել. յերեք գերաններից կազմած այդ մաղե կամուրջը: Մելիքն ու Գրիշոն մխմյանց յետևից վոտ կոխեցին նրա վրա: Մելիքն ըստ յերևույթին կամենում եր անշո՛ւշտ վերջին խոսքը ի՛ր վրա պահել. տաքացած եր:

Այդ եր պատճառը, վոր կամուրջի մեջտեղում կանգ առավ նորից, դարձավ յետևից յեկող Գրիշոյին և ձայնեց.

— Գող եք է՛, գո՛ղ... Տո դուք վոր մարդ ըլեյիք, քո հերը վոր մարդ ըլեր, Մուկուչի արտիցը են ա հինգ-վեց արշին կվարեյի՞ք...

— Ըստի՛, ըստի հլա... բարկացավ Գրիշոն—աղա Մուկուչի աղվա՞կատն ես դու, թե՞ քյոխվա... Յա

թե չէ՝ էդ հինգ-վեց արշինը վոր վարել ենք, մեր հողի հետը խառնել, վրեն պակա՞ս ենք աշխատանք դրել... Հ՞ը... դո՞ւ եյիր քարերը մեկ-մեկ հավաքել, աղրել, դզել, հողը շուռ տվել, դուլթանել, չութել... Հ՞ը... ասա՛ է՛...

— Տո ընչի՞ եք հավաքում, աղրում, յա վարում ուրիշի հողը... Ձեզ ի՞նչ թե են մարդը իրա հողի կշտին հինգ-վեց արշին տեղ թողնում ա անվար ու ավարա... իրա՞նը չի, ինչ կուզի կանի, ելի՛...

— Բա դու ընչի՞ կալյոննի[1] հողը զափթել, չուլթով ակոսնի ես տվել, մի յերկո՛ւ խնձորըքի պատրուսել՝ ու հմի ասում ես թե էդ հողը քոնն ա, վրեն քրտինք ես թափել... Տերության հողը չի՞, քե՞զ ինչ թե նա՛ իրա հողը անվար, ավարա ա թողնում: Իրա՞նը չի, ինչ կուզի՝ կանի ելի՛...

Լավ եր բռնել ոձիքից: Կամուրջի մյուս կողմը կանգնած սպասում եյինք թե Մելիքը ի՞նչ կպատասխաներ:

— Վոր ասում եմ շա՛շ ես... գոռաց նա,— քեզ ասո՛ւմ եմ հողը նրա՛նն ա, ով վարում ա, ցանում, ով վրեն քրտինք ա թափում... հասկացա՞ր...

Բայց յերևի զգալով, վոր ինքն իրեն հակասում եր, Մելիքը լռեց մեկե՛ն, ձեռքը թափ տվավ ու անցավ կամուրջը:

Թեվոսը, վոր կանգնել՝ ուշադրությամբ հետեվում եր վեճին, յերբ Մելիքը մոտեցավ իրեն, խզեց լռությունը և խուլ ձայնով ասաց.

— Ցանի էդ վո՞նց, Մելի՛ք... Ում հողը ուզում

---

1) Պետական:

ա ըլի, թե ցանես, վարես, յա թամզես, ակոսնի տաս... մի խոսքով քյոթինք թափես վրեն՝ են ա դառավ քո՞ւնը...

— Վո՞նց թե ումը ուզում ա ըլի... չխոթվեց Մելիքը:

Ապա, գլուխը ցնցեց ու վճռականորեն ասաց.

— Հա՛ հենց... Հողը վոր կա, աշխատավորինն ա, նրա վրեն քյոթինք թափո՛ղինը... Ասենք յես ավելորդ հող ունեմ ու վո՛չ վարում եմ, վոչ բանեցնում— ա՛յ, վոնց վոր կալլոննի ենքան հողերը, յա թե չե՝ Խանաղենց 400 դեսյատինը— տո՛, դեղացին ըստի մեռնում ա սովից, հող չունի, վոր ապրի, մի կտոր հողի համար իրար գլուխ ա ճղում, իրար հորը գյուխը հանում... ընդի տենում ես կալլոննի հողերը խոտանոց են չինել, հլա խոտն էլ ա չեն հընձում, թե ի՞նչ ա— լեոնիչին իրա ողլուշաղով գա՝ քեֆ անի վրեն... Յա թե չե՝ Խանաղովը... ըտե՛նց ա. հողը պիտի աշխատավորի՛նը ըլի, գյուղացո՛ւնը, վարող—ցա՛նողինը...

— Բա լա՛վ, ընդհատեց վոգեվորված Մելիքին Թեվոսը— վոր բան ա, դու ըլիր Խանաղովը, յես էլ գայի ու քու ավարա հողիցդ վարեյի, վրեն քըրտինք թափեյի. դու չեյի՞ր գա գլխիս խփի ու ցանածս էլ ձեռքիցս խլի...

— Կարամ՝ պտի չթողամ, վոր վարես—ցանես ... Վոր վարեցիր, ցանեցիր, չատ-չատ՝ պտի դամ փայս ուզեմ. էդ չի՞... Բա վո՞նց, հողը ընդի մնա ավարա, դու քաղցած, ընաս աշխատես, հլա դան ձեռքիցդ էլ առնե՞ն...

— Բա հո՞ղը. համառեց Թեվոսը—ընդունց դենը

յանի հողը ի՞մը կըլի, իմ սեփականո՞ւթյունը...

Յերեկվա Մելիքը, բոլոր ասելիքները արտահայտելիս, անշուշտ միտքն իր գրաված պետական հողի կողմն էր: Թեվոսի հարցերը համարում էր ա՛յդ հողին վերաբերյալ: Մի վարկյան լուռ մնաց, հետո մի քայլ արավ և վճռականորեն ասաց.

— Հա՛, ի՛մը կըլի... ըտե՛նց ա. ա՛յ, վոնց վոր էն մեչի հողը հմի իմն ա...

— Թե թողան. ասաց Գրիշոն չարախնդաց—հըլա կաց մեկ աբեչչիկը, յա լեոնիչին թողի՞:

— Ո՞վ. զայրացավ Մելիքը — պըլա՛ն եմ չինել տվել, պյա՛ն... Հրեն եգուց-մեկել կհաստատեն ու պրծավ գնաց:

— Թե հաստատեն:

— Ջաները չի՞ դուրս գա...

Մյուս օրը գյուղական հրապարակ գնալով, Թեվոսին չտեսա յուր սովորական տեղում: Խեչոենց խանութի դռան մոտ էր կանգնում միշտ:

— Էս ո՞ւր ա Թեվոսը. հարցրի Խեչոյին:

— Ո՞վ ա իմանում. հալբաթ բանի ա:

Յերկրորդ օրն էլ չերևաց Թեվոսը: Իսկ յերբ կիրակին յեկավ, հատկապես ուշադրությունս գրավեց ուզուն-ախմախի կատարյալ և արտասովոր բացակայությունը:

Գյուղացիների ուշադրությունն էլ հրավիրեց այդ: Կիրակի և տոն օրերի զվարճության առարկաներից մեկն էր Թեվոսը: Ձեռք եյին առնում ու զվարճանում:

— Էս ո՞ւր ա մեր ուզուն-ախմախը, տո՛... կանչեց Խոլերան՝ զարմացած-հիվանդ խո չի՞:

— Չէ՛, ասաց ալյուրոտ Զաքարը— յես տեսա․ ես ա իրեք-չորս որ ա բահը ուսին, մեշի կողմն ա գնում․ յերեկ էլ սելն էր լծել —գնում․ հարցրի, ասավ խլարոտ[1]) ա բերելու:

— Փի՛ե... արեց յերեցփոխը — կիրակի որո՛վ ... բյալքի Շորագյալ[2]) ա գնացել...

Այստեղ խոսակցությունը փոխվեց և Թեվոսը մոռացվեց: Գործերի տաք ժամանակներն էյին․ աշնանացանը՝ մոտենում էր, ամեն վոք իր ցավն ուներ:

Իսկ Թեվոսը վո՛չ այդ որը և վոչ էլ հետեվյալ չաբաթ ամբողջ՝ գյուղում չերևաց:

Վոմանք ասում էյին թե անտառում փայտ է կտրում․ շատերը՝ թե Շորագյալ գնացած կլինի կամ ցորեն և կամ պտուղներ բերելու, վոր ծախի՝ մի բան աշխատի:

Մեկն էլ պատմեց ինձ, վոր հենց յե՛րեկ գյուղն էր յեկել Թեվոսը, չութը լծել յեզներին ու գնացել էր դեպի անտառը:

Իսկ թե ինչո՞ւ— վոչ վոք չգիտեր: Վոչ վոք էլ չէր հետաքրքրվում: Աշնանացան էր․ ո՞վ իմանա․ գուցե Թեվոսը իր հողը վարելու յեր գնացել:

III

Հոփարցի կոչվող փոքրիկ գյուղի մոտ, Դուզանի հողերին կից, չորս-հինգ որավարի չափ քարոտ մի տարածություն կար, վոր ցանցառ թփիկներով միանում էր անտառին:

---

1) Յերկար ճյուղեր՝ ցանկապատ շինելու

2) Շիրակ:

Արքունի սեփականություն էր այդ, սակայն գյուղացիք, վոր մի առանձին հաճույք են զգում այդպիսի հողերից վորևէ կերպ ոգտվել—արժան իսկ չէյին համարում այդ կտորին ձեռք տալ, վորովհետև, ծայրից ծայր քարերի մի հոսանք ծածկել էր նրան: Տավարները անգամ չէյին մտնում այնտեղ: Փուշ, տատասկ—վորքան կուզեք:

Մի քանի որից ի վեր սակայն, Հոփարցիները ապշելով նկատում էյին, վոր մի ինչ վոր գյուղացի, սայլը լծած, անտառից յելնելով, գալիս կանգ էր առնում այդ հողի ծայրին, յեզները բաց թողնում, իսկ ինքը, հողի վերին ծայրիցն սկսած, ձեռնարկում էր մի առ մի ժողովել քարերը, դեզ առ դեզ կիտել, փուշ ու տատասկն էլ պոկ տալ ու յեզրերքներին շարել:

Սոսկալի, «անմիտ» աշխատանք էր սկսել «խենթ» գյուղացին:

— Ադա՛․ խո չի՞ գժվել էդ ուզուն-ախմախը․ ասում էյին հեռվից անցնողները միմյանց— էն ո՞ւր ա քարերը կիտում ըտենց:

Մտքերովն անգամ չէր անցնում, վոր Թեվոսը մտածում էր հողը մշակելի դարձնել, հերկել ու վարել: Շատերը յենթադրում էյին թե անշուշտ ուզուն-ախմախը պետք ուներ քարի կամ փշերի:

Մի քանիսները սակայն կռահեցին ու ծիծաղում էյին: Նախ վոր, պետական հող էր, յերկրորդ՝ յերբե՛ք չհերկած․ խոպան, անբերրի: Յեվ հետո, մի՞թե հիրավի Թեվոսը ընդունակ պիտի լիներ հողը չու տալ դուլթանով, ազբել, ա՞յդքան փուշ ու տատասկը

արմատախիլ անել, ճիլ դարձած չերտերը քրքրել և վարեվլե բանի գործածել:

Ու այլևս անուշադիր՝ անցնում եյին:

Ճիշտն այն եր, վոր Թեվոսը վճռել եր մշակել այդ հողը: Հո՛ղ եր հարկավոր նրան: Գիտեր վոր համառ աշխատանքով կարող եր ամեն հողից ոգտվել: Յեվ վերջապես ամեն տարի յել խո չպե՞տք եր մուրացկանի նման, գեշ հացով թունավորել իրեն, ընտանիքին. սա-նրա դուռն ընկնել, ձմեռը՝ սովել, գարնան՝ չնչին գնով այս—այն հարստահարողի մըշակը դառնալ...

Վո՛չ, հարկ եր աշխատել, հող ունենալ: Ի՞նչ ե, Մելիքի չա՞փ էլ չկար: Նրա նման հարուստ չեր, վոր հաջողվեր անտառի կուրծքից կտրել, աբեշչիկին կաշառել, խլած հողի ծառերով տուգանքները վճարել, պետության դեմ դատի յելնել...

Բայց ահա, գտել եր մի հող, վոր լիովին անպետք, խոպան, վո՛չ-իսկ հարոցի համար գործածել, վո՛չ վոքի ուշադրությանը չեր արժանացել:

Համոզված եր վոր տերությունն անգամ չեր փորձիլ արգելք լինելու: Ինչի՞ն եր պետքը. վո՛չ անտառ կար վրան, վո՛չ խոտ կարելի յեր հնձել, ինքն էլ քարո՛տ, հավիտյանս—հավիտենից խոպան մնացած:

Յեվ վերջապես մի՞թե իր քրտինքն ու աշխատանքը բավական չեր՝ հողին տեր դառնալու համար: Հող, վոր երբ անպետք՝ դեն եր ձգված և վորը, իր աշխատանքով, նա պիտի դարձներ պետքական, արժեք ունեցող և հողի աշխատավորին կերակրող:

Այդպիսի մտածումներով եր, վոր Թեվոսը ձեռնարկել եր գործի:

Ծրագիրը այսպես եր. մաքրել հողը քարերից, դիզել կույտ-կույտ, սայլով դուրս տանել և ապագա պարիսպի համար հավաքել. փշերն ու տատասկները արմատախիլ՝ ցախի տեղ բանացնել, պարսպի վրա դնել՝ տավարների դեմն առնելու համար. հետո՝ գութանով շուռ տալ հողը ծայրից ծայր, կըտրտել—հաշմել հողի միջի արմատները. ապա թողնել վոր ձյունը գար վրան, մի լավ փխրեր, իսկ գարնանը՝ գետնախնձոր անկել:

Գետնախնձոր, այո՛: Ահա միակ միջոց՝ հողը փափկացնելու: Յեվ յերբ անպետք տարածությունը այդ բոլորից հետո դառնար վարելահող՝ պետք եր աղբել նախ, ապա մեկ ցանել վարսակ, մյուս տարին՝ գարի և հուսկ ուրեմն, մի քանի տարուց հետո Թեվոսը հույս ուներ տեր դառնալ ցորենի համար բավականաչափ լավ, մեծ և իր ընտանիքը կերակրող արտի:

Այդ ծրագիրը գտնում եր իրագործելի, մտածելով, վոր վո՛չ տերությունը պիտի վորևե արգելք լիներ և վո՛չ էլ ինքը պիտի աշխատանք խնայեր:

... Յերբ լսեցի թե Ուզուն-ախմախը, հիրավի ձեռնարկել ե այդ անսովոր աշխատության, սաստիկ հետաքրքրվեցի տեսնել հողը, տեսնել հողի աշխատավորին—և պիտի ասել՝ հսկա աշխատավորին, վորովհետեվ գիտեյի թե վորպիսի տաժանելի, տոկուն և մեծ աշխատանք եր հարկավոր՝ ցորեն ունենալու համար մի այդպիսի խոպան տարածությունից:

Աշունը գրեթե սկսել եր Դուզանում. ամպամած

օրեր, անձրևով մաղող շաբաթներ, խոնավ, մշուշոտ, ցեխ և ճնշող եղանակներ:

Այնուամենայնիվ հաջողվեց ինձ հասնել Թևլոսի հողին:

Ուզուն-ախմախն արդեն կեսից ավելին մաքրել էր քարերից ու տատասկներից և ձեռնարկել՝ այժմ այդ կեսի հողը շուռ տալ դութանով:

— Բարե՛վ, Թևլո՛ս:

— Ա՛յ աստծու բարին, պ. Երվանդ:

— Ա՛յ տղա, կանչեցի նրան— ինչո՞ւ չթողեր գարնան հերկելու. հողը գո՛նե քիչ կկակղեր:

— Վնաս չունի, պ. Երվանդ, գոչեց Թևլոսը՝ առանց մաճը ձեռքից թողնելու— անձրևները կակղացրել են. գարնանն էլ կհերկեմ, կթամբեմ, հետ կփոցխեմ էլ ու կարտոֆիլ կցանեմ... աստծով լավ կըլի. փխս հող չի. կասես մեջի հող ըլի...

Ու շարունակեց հերկել: Վորդուն նստեցրել էր լծի վրա. վարձել էր չորս զույգ գոմեշներ և գութանի տակ հողը արագությամբ շուռ գալով՝ խոր ակոսներ էր կազմում:

Հիրավի, անտառային հող էր երևում տակի շերտերում: Ըստ երևույթին շա՛տ առաջ այստեղ անտառ եղած պիտի լիներ: Թևլոսը չէր սխալվել, և եթե շարունակեր այդպիսի անդուլ գործունեությունը, մյուս տարվա վերջերին իսկ կարող էր մի աշնանացան փորձել նրա վրա:

Մնում էր տեսնել այժմ թե տերությունը՝ անտառապահն ու պահապանը ինչպես կվերաբերվեյին Թևլոսի «հափշտակությանը»:

— Թևլո՛ս, ասացի ես. բաս ի՞նչ կանես, եթե գան ու հողը ձեռքիցդ խլեն:

— Վո՞նց. ասաց նա և մաճը ձեռքից բաց թողեց— յանի ինչի՞ պիտի խլեն. պակա՞ս աշխատանք եմ դնում վրե՛ն... հյուլ էր, քարո՛տ, փշո՛տ, դո՛ն փչած հող... քրտինքո՛վս կակղացրել եմ, էս ձեռներովս քարերը մեկ-մեկ հավաքել, փշերը դուրս ավել... բա ընչի՞, մադամ թալա՞ն ա էս աշխարքը վոր գան ու աշխատանքս խլեն ձեռքիցս...

— Տերության հող է, քեզ խո իրավունք չե՞ն ավել մշակելու. մեկ էլ տեսար եկան, վզակոթիդ խփեցին ու...

— Ո՞վ, արեջջի՞կը... կանչեց Թևլոսը.— չի՛ կարալ... եդքան զակոնը գիտենք...

Ապա ժպտաց, սրբեց քրտինքն ու եկավ մոտս: Նստել էյի քարակույտերից մեկի վրա:

— Չի՛ կարալ. ավելացրեց նա անվստահորեն— շատ-շա՛տ՝ դանդատ կտա, պրատակոլ կշինի, կկանչեն՝ հրե՛ն այ, են կեսը ցույց կտամ... իրա՛նք էլ կտենան վոր անպետք, դեն գցած հող էր, կծիծաղեն արեջջիկի վրա ու... բան չեն ասի:

Գլուխս երերցրի: Միամի՛տ Թևլոս: Ըստ երևույթին երբե՛ք գործ չէր ունեցել այն անհամար չինովնիկների հետ, վորոնք ծիծաղել գիտեն միմիայն իրենց զոհերի ճիչերի վրա, վորոնք վո՛չ մի առիթ չեն փախցնում Թևլոսներին անգամ տանջելու, ճզմելու...

IV.

Ապահո՛վ էյի, վոր Թեվոսի արածը գաղտնիք մնալ չեր կարող: Անշուշտ անտառի թե՛ պահապանը և թե ոգնական հսկողները լսած պիտի լինեյին: Մի որ գյուղում, իմ ներկայությամբ իսկ, յերբ Նիկոլը հարցրեց աբեշչիկին, թե գիտե՞ր նա արդյոք «ուզուն-ախմախի» արածը — պահակը ժպտաց ու ասաց.—գի՛տեմ: Թող ա՛նի, ի՞նչ կա: Տերությունը ուրախ կըլի, վոր իրա հողերը ըտենց մաքրեն ու պետքական դարձնեն:

Գյուղացիք միմյանց նայեցին, հասկացան ու քրքջացին:

Բայց, յերևի, ա՛յնքան էլ անխիղճ չեր աբեշչիկի ոգնական Ավագը, վոր մի որ հրացանն ուսին՝ տնկվեց հանկարծ Թեվոսի առաջ ու գոչեց:

— Ադա, էտ ի՞նչ բանի ես, ա՛յ ուզուն-ախմախ:

Թեվոսը մաճի վրա ընկած, գոմեշները քշողների «հոռովելին» եր ձայնակցում: Թեյեվ տեսավ Ավագին, բայց չլսեց ասածը:

— Բո, քեզ հետ չե՞մ... էդ ինչ բանի ես է՜ է՜ ...

— Հո՛, հո՜... կանգնեցրեց գութանը Թեվոսը և դարձավ դեպի յետ:

— Ի՞նչ կա, Ավա՛գ, խե՞ր ըլի:

— Ադա՛, ձայնեց ոգնականը—բա դու խո չե՞ս դժվել: Էտ ո՞ւր ես կազյոննի հողը վարում կասես քոնը ըլի:

— Ցանի՛ վո՞նց... ժպտեց չփոթված Թեվոսը— էս խո անպետք, դեն քցած հող ա:

— Վո՞նց թե դեն քցած, ձայնն ավելի բարձրացրեց Ավագը —տո քե՞զ ինչ, տերությունը չի՞. կուզի անպետք կթողա, կուզի՝ կվարի:

— Դե յես էլ վարում եմ է՜լի...

— Փի՜... բացականչեց Ավագը զարմացած—էն խա՛չը վոր դժվել ես, ա՛դա: Ընչի՞, բա չե՞ս իմանում, վոր կազյոննի հողը թողալ չեն, վոր վարես:

— Հըա կա՛ց, Ավագ, ասաց Թեվոսը, թողեց մաճը և պահապանի ոգնականին մի կողմը կանչեց. դու քո ասվածը, յանի էս հողը քարոտ, փշոտ, անպետք ու ավարա հող չե՞ր:

— Հա՛, դրուստ ա. հետո՞:

— Հետո էլ էն՝ վոր յես թամզել եմ, հողը շուռ եմ տալիս, դարնանն էլ կաղբեմ...

— Ցա՛... արեց Ավագը— տո վո՞նց թե...

— Կա՛ց, կաց. ընդհատեց Թեվոսը—դեն քցած հող եր. հարոցի անպետք, ծառ՝ սկի՛ չկա վրեն. տերությունը վո՛չ մի խեր չկար սրանից: Դե՛, յես էլ ա՛նհող, քաղքա՜ծ... Ցես վարում եմ, քրտինք թափում վրեն, վոր բյալքի մի քիչ հաց հանեմ... Բա դուք ինսաֆ չո՞ւնեք, ողլուշաղի տեր չե՞ք... Թե մե՛ղքը, Մելիքի պես զաիթեյի—վըխս տվեք, առեք. սմա դե, ըհը ա՜յ, խո տեսնո՞ւմ ես, ես ձեռվի՜րով եմ տակռիքը մեկ-մեկ հանել, քարերը խոտակել, ճլոտ հողը քրքրել...

— Տո փի՜... գոչեց տաքացած Ավագը— ո՞վ քեզ կանչեց վոր անես. ո՞ւր եյիր հողի վրեն քըրտինք թափում:

— Արի ու ղորդն ասա, Ավա՛գ, հողը ո՞ւմն ա:

— Տերությանը:

— Էտ ա վոր չես իմացել է՜... Հողը վոր կա՝

աշխատավորինն ա, վրեն քրտինք թափողինը: Հրեն ա՛յ, տերությանը աշխարքի չափ հող ունի անպետք՝ վեր քցած. ամա դե յես սկի՛ հող չունեմ. Համ էլ ուզածս ի՞նչ ա որ, մեկ ըսենց քարոտ, անպետք կտոր...

Ավագը, իրավ է, հուզվեց տեսնելով թե վորպիսի՛ հսկայական աշխատանք եր գործ դնում միամիտ Ուզուն-ախմախը՝ մի կտոր հող ձեռք բերելու համար, սակայն գրեթե համոզված եր վոր «կազյոննի հողը»— լիներ՝ իսկ ամբողջ աշխարհը միասին վերցրած— կազյոննի յեր, հետեվապես՝ անմատչելի:

— Գժվել ես, ե՛ն խաչը. ասաց նա քիչ մեղմ ձայնով— քանի չո՛ւշ ա, Թեվոս, ղոմեշները քաշի ու գնա տեղդ. իզուր կչարչարվես, հետո գլխիդ կտան ու էտ թափած քրտինքդ էլ վրա կերթա... Հրեն ա՛յ, աբեչչիկն ուզում ա եգուց պրատակո՛լ սարքի վրեդ...

Ասաց ու գլուխը յերերեցնելով գնաց:

Թեվոսը ժպտեց: Մելիքի վրա յել տարենը մի քանի անգամ պրատակոլ եյին սարքում, բայց ամեն անգամ այդ «թուղթ» գրվածքները մնում եյին առանց հետեվանքի և Մելիքը շարունակում եր հողը ձեռքին պահել, ծառերը ուզածին չափ կտրատել:

«Պրատակոլ սարքելը» անշուշտ՝ աբեչչիկի, լեսնիչու պաշտոնն եր. պիտի աներին: Ո՞վ չի իմանում թե քանի՛ դեզ թղթեր են գրվում ու դարսվում պաշտոնատներում: Բայց ո՞վ է նրանց բանի տեղ դնողը: Գրվեց ու պրծավ. շատ-շատ՝ մի քիչ տուգանք, մի յերկու հայհոյանք, մի քանի մանեթ ե՛լ կաշառք— և ամեն ինչ կանցներ:

Մյուս կողմից, չե՞ որ նրան հաջողվել եր արդեն այնքա՛ն քրտինք թափել հողի վրա, այնքա՛ն աշխատանք: Ուրեմն բնական էլ եր վոր հողի տերն ինքն եր: Ուրիշ ի՞նչ կերպ. չե՞ վոր հողը աշխատավորինն է և միմիայն աշխատավորինը: Պապենական այդպես եր լսել, Մե՛լիքն էլ հաստատեց այդ ու ամեն գյուղացի յել նույնը կպնդեր:

Ու յերբ Ավագը գնաց, Թեվոսը միայն մի քանի րոպե մնաց խոհուն ու տխուր: Հետո թոթվեց իրեն, մաճը ձեռքն առավ և վերսկսեց «հոռովելը»...

Այնուհետեվ մի ամբողջ շաբաթ, Թեվոսն այլեվս վոչ Ավագի յերեսը տեսավ, վո՛չ էլ աբեչչիկի: Յենթադրում եր, վոր ազատվել եր:

— Վախա՛ցրին. մտածեց նա—էնքան էլ խո քարասիրտ չեն. հալբաթ լեսնիչուն ասել են, յեկել-տեսել՝ վոր վարածս հողը անպետք, դեն քցած, վատ եր ու ասել են «թող մնա Թեվոսին, մեղք ա, ողլու-չաղլի տեր, հողը քիչ... Համ էլ մարդը գետի չափ, ախր, քրտինք ա թափել վրեն... Թող վայելի, խե՛ղճ ա»...

Յեվ ձեռնարկել եր հողի մյուս մասն էլ մաքրելու, թեյեվ արդեն ցուրտն սկսել եր և ձմեռը վրա յեր հասնում: Մտածում եր գոնե փշերից ու տատասկներից ազատել հողը այդ տարի, իսկ՝ գարնանը մի անգամ յեվս շուռ կտար փխրացած հողը, գետնախնձոր կցաներ, ապա կաղբեր, ե՛լի կվարեր... մի խոսքով մի լավ արտ կշիներ:

Բավական օրեր անցան դրանից հետո: Թեվոսին այլեվս չեյի տեսնում: Պատրաստվում եյի գյուղից հեռանալ և մոռացել եյի նրան:

Գնալուցս յերկու օր առաջ, մի յերեկո, յերբ տուն եյի մտնում, պատշգամբի մոտ կծկված տեսա մի փոքրիկ աղջիկ, վոր յերեվի ներս եր մտնել ուզում, բայց չեր վստահանում:

— Ի՞նչ կա, աղջի՛կ, հարցրի յես—ո՞ւմն ես ուզում.

— Քու խասնումին. հի՛վանդ կա:

— Ո՞վ ե հիվանդը.

— Հերս... դողա՛ցնում ա.

— Հերդ ո՞վ ե:

— Թեվոսը:

Հիվա՞նդ: Ի՞նչ եր յեղել արդյոք այդ յերկաթե մարդուն, վոր մի ամսի՛ց ի վեր, տաժանելի աշխատանքով՝ ուզում եր հողի տեր դառնալ:

Կինս մանկաբարձուհի, գիտե նայել ողնել թեթեվ հիվանդներին. գիտե գոնե քիչ ամոքել նրանց ցավերը:

Դեղատուն էլ ունեյինք: Շտապով, անհրաժեշտ դեղեր վերցրինք և հետեվեցինք փոքրիկ աղջկան:

Յերբե՛ք չեմ մոռանալ այն հուզիչ պատկերը, վորին ներկա գտնվեցի փոքրիկ, ցած, խոնավ և մութ խրճիթի մեջ:

Անկողնի վրա մեկնվել եր գունատ և նի՛հարած Թեվոսը խամրած աչքերով: Կինը արտասվալի՝ կըծկվել-նստել եր կողքին. յերեխաները վերահաս ցըրտից, մերկությունից և վշտից քար կտրած՝ մեզ եյին նայում անկյուններից:

Ու յերբ խնամում եյինք թշվառին, պատմե՛ց մեզ նա իր մարտիրոսության ահավոր պատմությունը:

Խլել եյին ձեռքից հողը: Թողել եյին վոր մաքրեր, հերկեր, թողել՝ վոր անպետք հողը իր քրտինքով փափկացներ, համառ կամքով՝ բերրիության հասցներ և ապա հանկարծ մի օր վճիռը տվել, անտառի պահապաններն ուղարկել, ծեծել եյին նրան, հողից դուրս շպրտել և թողել վոր ջարդված, ընկճված՝ նստեր արտի կողքին ու լար. և լա՛ր կսկծալից, աղիողորմ ու հուսահատ...

Ի՞նչ կարող եյինք անել այժմ վշտից և հուսաբեկությունից անկողին ընկած թշվառին, յեթե վոչ՝ միմիայն վշտանալ նրա հետ, հուզվել և զայրանալ թե՛ Թեվոսի միամտության և թե՛ այս աշխարհի խիստ անիրավ, չափազանց անարդար անհավասարության և ընկերական զզվելի՛ օրենքների վրա...

Հողի աշխատավորը կարծել եր, թե քրտինքն ու աշխատությունը նո՛ւյնքան արժեք ունեյին հողի տեր դառնալու համար, վորքան բանի ուժը կամ լըբությունը: Սակայն նրան չա՛տ ազդու կերպով հասկացրել եյին, վոր դեռ չեն յեկել այդ օրերը և վոր հողի տերը նա յե, ով ուժ ունի, ունի զարնո՛ղ ձեռք, կաշառելու, քծնելու վարպետություն, ունի մանավանդ բռունցք, կոպիտ, վայրենի՛, գազանային բռունցք...

ՁՈՐԱԳԼԽԻՆ

I

Գյուղաքաղաքի մեջ խճուղին ինչպես միշտ, այդ օր էլ քարուքանդ էր ու ցեխոտ: Սակայն, յերբ մըտնում էր նա դաշտերի կուրծքը, վորպես սպիտակ լայն ժապավեն ձգվում էր մինչև հորիզոնը և այնտեղից վոլորապտույտ մագլցում, հասնելու համար լեռնաշղթայի ամենաբարձր գագաթին:

Խոխոջուն վտակի կողքին բանակած պահակագունդը յերաժշտությամբ էր զբաղված. չեփորների անախորժ ու խառն ի խուռն ձայնը՝ միացած սրնգի սուր յելևեջներին, ստիպեց մեզ արագացնելու սայլի գնացքը: Իսկ յերբ անցել եյինք ավելի հեռու, Գեվորգը կպավ սայլապանի թեվքին ու ասաց.

— Հանդա՛րտ քշիր...

Հրճվում եյին հյուրերս մեր առջևը պարզվող շքեղ տեսարանով: Չեյինք խոսում, այլ լի թոքերով շնչում եյինք թարմ օդը և անհամար ծաղիկներից յելնող բուրմունքը:

Աջ կողմից արտերը իրանց ծայրերով հասնում եյին մինչև անտառոտ լեռների ստորոտը, ձախ կողմից՝ գնում եյին նրանք վոստնելու Քարկողի անդընդախոր ձորի վրայով և գոգաձև շարունակում կանաչ սփռել մինչև հեռավոր լերկ ու ձյունագագաթ շղթաները:

Ցերվներանդ, անհամար ծաղիկներ բծավորում եյին հարթավայրը. կապույտ զանգակիկների խոնարհած գլուխներ շերտեր եյին գծում, մանր-դեղին փնջավոր ծաղիկներ խառնված մարգի կանաչին՝ կապույտ ստվեր տարածում, իսկ հեռուն՝ կարմրին եյին տալիս խիտ պսակներով վիշապուկները, պլպլում արյան մեծ բծերի նման:

Դաշտն ամբողջ ծփում-օրորվում էր մեղմ քամու տակ, նազելի և գողտրիկ: Կարծես կանաչ կոհակներ լինեյին, վոր պարբերաբար յելնում-իջնում եյին՝ մե՛կ տերևների փայլուն, մե՛կ անփայլ յերեսներին ի ցույց հանելով:

Անցնում եյինք այդ բոլորի միջով. սայլապանը գլխարկը ծռել՝ յերգ էր մրմռում քթի տակից: Հակոբը շնչո՛ւմ էր, շառաչյունով շնչում, Գեվորգը գլխարկը հանել՝ ժպտում էր բնության, ժպտում զեփյուռին...

Արև չկար. յերկնը ամպերով ծածկված, ձյունոտ լեռներից սահող հեզիկ քամուն էր թողել լեռնադաշտը: Արտերի զուլալի շշուկը, թռչունների հեռավոր ճռվողյունը, ջրերի մե՛կ-մեկ լսվող կարկաչը միմյանց ձայնառու, միմյանց լրացնելով՝ ներդաշնակվում եյին այնքա՛ն հաճոյալից, վորքան և սիրուն էր շրջապատող լեռն ու դաշտը, ձորն ու բլուրները:

Բայց հազիվ դորշ խորքի վրա սկսել էր գծվել

հայկական մի հին ամրոցի տխուր ավերակների կույտը, հազիվ ամեն աղմուկից հեռու՝ միայն բնության ձայնն եր մեր ականջին հասնում, վոր հանկարծ մեր յետևից լսվեց նախ խուլ, ապա բարձր շառաչ, վոր գնալով մեծանում եր ու գալիս–մոտենում:

Սայլ եր, ահագին դղրդոցով թավալող մի մեծ սայլ (դրոգ), վոր չորս կատաղի ձիերով սրարշավ գալիս եր՝ ավազի, խճի և քարերի շատրվան ցայտեցնելով շուրջը:

Լցված եր նա բերնե բերան՝ գյուղացիներով, վորոնք կոկորդ պատռելու չափ գոռում եյին, աղմըկում, ձեռքեր ու վոտներ ցնցում օդի մեջ, յելնում-նստում եյին, միմյանց վրա ընկնում...

— Ի՞նչ է այն, գոչեց Հակոբը զարմացած:

— Մեր գյուղացիք են. բացատրեց սայլապանը, վոր կանգնել յետ եր նայում— բաս ե՛ն ա, պրծած կըլեն, վոր ըտենց ուրախությունով են տուն գնում:

— Դուզանցի՞ք են:

— Հրամանք ես. Ծաղկատարեցոց հետ սոր[1]) կար... կըգխենաք. ե՛սոր եր բաղըրը...[2]) լավ կոնծել են. բաս հա՛ղթած կըլեն...

Մինչ այդ, մոտեցող սայլի մեջ սկսել եյի նկատել հիրավի մեր գյուղից ծանոթ դեմքեր: Նախ յերկարավիզ Գեվոյին տեսա, հետո Գրիշոենց Մուկուչին. ապա Խոլերայի դեմքը յերևան յեկավ, կամաց-կամաց նորընտիր քյոխվեն, յերեսփոխը: Հաբեթ աղայի վորդին— «կչկչան Նիկոլն» ել կար մինչև իսկ:

---

1) Վեճ: 2) Դատավարություն:

Սայլը վարում եր կաղլիկ Ջավադը, վոր անխնա մտրակում եր ձիերին, վոտներ ցցում, գոռում եր և քիչ եր մնում գետին գլորեր կողքին նստած ալյուրոտ Զաքեյին:

Ձիերը սըրնթաց, կատաղի վազքով ցնցում եյին մեծ, խարխուլ, արկղի նմանող սայլը, վոր վոստնում եր, այս–այն կողմ թեքվում և քարի մանր խիճերով, սլաքների նման, շամփրում աջ ու ձախ:

Նկատեցին մեզ և ճանաչեցին յերևի: Կարմրամազ Սմբատը, բանից յերևաց, վոր մեջն եր, կառքի խորքումը կուչ յեկած և վիզը փորը ձգած: Ահա և վիզն ածիլած պայտար Խեչոն. նստել եր սայլի կողի վրա և ձեռքով ինչ վոր շարժումներ եր գծում օդի մեջ;

Գոռում եյին, բայց կառքի դղրդոցը չեր թողնում մի բառ իսկ հասկանալու:

— Հա՛յ–հա՛յ... լսվում եր միայն:

— Գժվե՞լ են, տո՛, գոչեց Հակոբը— աղա՛, մեր ղուլթին քիչ դենը տար՝ թե չե շուռ կտան:

— Հա՛յ–հա՛յ, յեկանք հա՛...

Ու Ջավադը, յերբ մոտենում եյին, բոլորովին յետ պառկելով՝ քաշեց սանձերը, ճգնեց կառքը կանգնեցնել:

— Եդ ո՞ւր բարին... լսվեց Խեչոյի ձայնը:

— Տլո՛ւ... ա՛յ յես ձեր... տլուս տո ե՛ ե՛... վիե՛, ես չան ալրանքները կատա՞ղել են... ալըռո՛ւո՛ւ...

Կանգնեցրին կառքը ճիշտ մերինի կողքին:

— Բարո՛վ, բարո՛վ... ձայնեցին ամեն կողմից

զվարթությամբ— համեցեք մե՛զ հետ... նստեք մեզ հետ...

Արբած եյին դրեթե բոլորը, բացի Խոլերայից և յերեցփոխից: Ու լավ հարբած:

— Տեսնո՞ւմ եք, հրճվեց Գեվորգը— կոնծել են ամենքը:

— Եղ. ի՞նչ խաբար է խմբով. հարցրի յես— ի՞նչ կա, վոր բազմությամբ, այսպես գործի ու՝ գյուղաքաղաք եյիք յեկել:

— Գործ ունեյինք, գո՛րծ... բաղբո՛ր միրավոյ պասրեդնի՛կ...[1]) լսվեցին խառն ի խուռն ձայներ:

Ամենքն եյին խոսում: Ցեվ խոսքերի հետ խառն՝ ծիծաղներ, աղաղակներ:

— Նստե՛ք, յեկեք մե՛զ հետ նստեք...

— Ապա՛ դե, տեղ վո՞րդիան ա, վոր կանչում եք...

Տո իրանք հրեն պակա՞ս սայլ ունին, դիժ խո չե՞ն, վոր ըստեղ գան...

— Ընչի՞ թող մե՛զ հետ նստեն...

Բայց մենք տեղներիցս չշարժվեցինք:

— Ձեզ հետ կգանք, դուք քշեք...

— Հա՛, ըտենց լավ ա, պարոննե՛ր, խորհուրդ տվավ յերեցփոխը—հրեն ձորագլխին ցած կիջնենք— ընտեղ կխոսանք...

— Քշի՛ր տո, Ջա՛վադ. ճչաց Խոլերան:

Ու յերբ կառքիկը մտրակում եր, աչքս ընկավ սայլի խորքին: Զարմացած նկատեցի մի ինչ վոր սև

[1]) Հաշտարար դատավորի փոխանորդ գյուղաքաղաքում. վարում է դատական գործերը:

յերկար բան, վոր անշարժ փռված եր այնտեղ, քիչ եր մնում գյուղացիք իրանց վոտները նրան կոթնեցնեյին:

— Դա՞ ինչ է. հարց տվի և գլխով ակնարկեցի:

— Սո՛ւղլիան ա, Սուղլիա՛ն...[1]) վռնաց Խեչոն:

Կառքը շարժվել եր տեղից:

— Դա ի՞նչ է յեղել. հաջողվեց ինձ հարցնել նըշաններով, յերբ սայլը դղրդյունով սլանում եր:

Այս անգամ Ջավադն եր, վոր քրքիջը բերնին, իր գիլ ձայնով հասկացրեց ինձ.

— Հա՛րբած ա, հարբա՛ծ:

Ու անցան: Գինու շոգիների ազդեցության տակ Ջավադն ավելի կատաղորեն մտրակեց ձիերին. ահագին ցնցումներով և խճային շատրվանի մեջ՝ կառքը սլացավ առաջ:

Սախպված եյինք բավական հեռու բանել մեր այդ սանձարձակ արշավանքից: Ցետ մնացած՝ ամեն րոպե սպասում եյինք թե ահա սայլի միջից դուրս պիտի վռատնեյին ջախջախվելու՝ վիզն ածիլած Խեչոն և կչկչան Նիկոլը, վորոնք թե՛ միմյանց և թե՛ կողերին եյին կառչել:

Բայց Ջավադը վարպետ քշող եր. չնայելով իր խակ ցնցումներին, սուր աղաղակներին— նրան հաջողվեց գնալ մինչև ձորաբերանը, ուր նա դուրս յեկավ խճուղուց, կատարելապես մեջքի վրա պառկելու չափ յետ կռացած քաշեց սանձերը, ճչաց, կանչեց և մի կիսաշրջան գործել տալուց հետո ձիերին կանգ-

[1]) Գյուղական դատավոր, վոր լինում է ընտրությամբ:

նեցրեց ձորի ամենամոտ ափի կանաչ հարթության վրա։

Մինչև մեր հասնելը, բոլորը դուրս եյին յեկել սայլից, նստել նրա կողքին, գինու մի փոքրիկ տիկ, ողու մի մեծ շիշ դրել կողքերին, հացն ու պանիրը պարզել՝ սկսել եյին քեֆի։

Սուլխային թողել եյին սայլի մեջ՝ յերեսի վրա փռված ու խռկալով։

Հրավիրեցին մեզ։ Հետաքրքիր եր իմանալ, թե ի՞նչ անելու եյին գնացել իրանց քյոխվայի, քեհյաների և սուլխայի հետ, թե ինչո՞ւ այդքան լավ տրամադրված՝ այդտեղ ել նստում եյին քեֆը շարունակելու։

II

Ասենք, ձորաբերանի այդ հարթության վրա անհնար եր չնստել, նո՛ւյնիսկ յեթե խմելու և քեֆի համար չլիներ։

Լեռնադաշտի ամենասքանչելի մի անկյունն եր՝ իր վայրենի տեսարանների հեռանկարով։

Ամեն գյուղաքաղաք գնալիս անշուշտ իջնում եյի այդտեղ և ժամերով կանգ առնում հսկա ձորի կատարին, լիզված ապառաժների, հոսանուտ ժայռերի բարձրության այդ կետին՝ դիտելու համար վոտքերիս տակ բացվող կրքոտ պատկերը։

Դեպի անդունդը պարզվող ապառաժի տակից, ուղիղ վոտքերիդ առաջ՝ իջնում են կնճռոտ ու դաժան լեռների շարքեր, վորոնք կռթնած միապաղաղ ժայռերի, գոգավոր կողերով գնո՛ւմ են ու գնում դեպի խորքը, սեղմելու համար փրփուրը բերնին արշավող գետակի կողերը։ Յուրաքանչյուր ճեղք, յուրաքանչյուր կնճիռ, անդունդի յեզրերից սկսած՝ խռիվ մազերի նման դուրս ե ցցում իր խորշերից բազմատեսակ ծաղիկներ ու թփեր։ Նուրբ, աննման փափկությամբ, գիջության մեջ ուռճացած բույսերը դեպ առ դեպ կախվել են կամար կապած ժայռերից դեպի վար. դեղնագույն ծաղիկների փնջերը վոլորտուն, բաղեղաձև գրկախառնված սպիտակ վարդենիների՝ սահում-շրջանակավորում են լպրծուն ապառաժները։ Ավե՛լի վար, ստվերի մեջ դոնվող ճախնուտը գրավված ե մեծահասակ շուշաններով. հոսանուտը գրավրեսին, փետրային նրբությամբ և թավշային փայլով՝ կանաչ սավան են կապել սպիտակ բծերով զարդարուն մանրիկ ծաղիկներ։ Յեվ հուսկ ուրեմն, այնտեղ-վարը, շա՛տ խոր, ջրի հետ անմիջապես խաղացող ափերի յերկարությամբ, վորպես լայն յերիզ՝ միապաղաղ հավասարությամբ մանրեական մամուռներ թափոր են կազմել՝ բաշը թոթվելով արշավող գետակի յերկու կողերին...

Յեվ դիմացը, գետափից վեր, միմյանց վրա գըլորված ապառաժների թիկն տվել՝ վիթխարի զանգվածով ցցվում ե լեզվակաձև, միաձույլ, խորշոմալից լեռը, վոր գլուխ պտտեցնող դահավանդներ ե կազմում յերեք կողմերից և գագաթին ունի հնամյա մամռոտ ավերակների մի տխուր կույտ...

Այդտեղ եր վոր գուղանցիք նստեցին քեֆի։

Մեղմ յեղանակը, մի քանի քայլ հեռվից դեպի անդունդն իջնող ջրվեժի կարկաչը, դալար կանաչությունն ու բավական քանակությամբ խմած գինին տրամադրել եր Ջավադին յերգելու։

Լա՛վ ձայն ուներ անպիտանը. զրնգուն, կրծքային հուժկու տենոր, որ թնդացնում էր շրջակայքը:

Վայրենի բնության նման նրա ձայնն էլ վայրենի, անմշակ թեև, բայց ուներ քաղցր շեշտ և հաջող ճկունություն:

Ու յերգում էր նա կանգնած՝ դեմքը ձորակին.—

Նպատակիս հասնեմ միայն,
Թող գլխս հանեն կախաղան...

— Գինի լցրեք տո՛... ձայնեց նա յերբ վերջացրել էր և կարմրած՝ մեր կողմը դարձել— ղոնաղների համար գի՛նի լցրեք...

— Ա՛յ ձայնդ անսպառ, ա՛յ դու շատ ապրես, չա՛ն տղա, գովեց նրան Խոչերան— լավ ձեն ունիս, յես ու իմ աստվածը, ամա փո՛ւչ տղա յես, փո՛ւչ...

— Լա՛վ, ամի՛, ձենդ կարի թե աստվածդ կսիրես. ի՞նչ վախտն ա Զավադին գովալը...

— Սուդխային ինչո՞ւ այնտեղ թողիք. հարցրեց Գևորգը:

— Բա ի՞նչ անեյինք. ծիծաղեց յերեցփոխը— տնաշենը ենքան կոնծել ա, որ թոփ էլ որաքացնես ականջի մոտը՝ չի զարթնի...

— Թոփից չի՛ զարթնի, սրախոսեց Խեչոն—ամա որ մեկ րյումկա արաղ մոտացնես քթին՝ վեր կըթռչի...

— Ղուրթ տո՛, տղե՛րք, մեջ մտավ քյոխվեն— սա սկի՛ լավ բան չի որ անում ենք մենք: Ցեկեք սուդին հանենք սելիցը, գլուխը մեկ ցածի սառը ջրով լվանք... թե չէ՝ ախր ես հալովը մենք վո՞նց գեղը տանենք նրան. բա ամո՞թ չի, հը՞...

— Տո ընչի՞ս ամոթն ա. քրքջաց կարմրամազ Սմբատը— յանի առաջին անգա՞մն ա...

— Չէ՛, քյոխվեն դրի՛ստ ա ասում, տղե՛րք. խոսեց Խոչերան— մեր սուդիեն ա, ամո՛թ ա... Հանե՛ք, մի քիչ յերես-մերեսը լվացեք, բալքի ուշքի գա:

— Հա՛, դրուստ ա. ավելացրին մի քանիսը և վոտքի յելան— թող տանենք ցած՝ քիչ ջրի տակին լվանանք գլուխը:

— Աղա տեղներդ վե՛ր ընկեք է՛է՛... ճչաց Նիկոլը— ընչի՞, գինի յա արաղ չա՞տ ունենք, որ նա յել ոյաղվի[1]) ու դա մեր կողքին նստի:

Սակայն վոտքի յելնող գյուղացիք չլսեցին նըրան: Մոտ գնացին սայլին, յերկու հոգի յելան, սուդխային քաշքշելով իջեցրին, այլուրոտ Զաքարը բռնեց խոտերի վրա դրավ և յերեսը դարձրեց:

— Տարե՛ք, տարե՛ք, ջրի մոտ տարեք. կանչեց Խոչերան— ա՛ Մուկուչ, բա եդքան խմե՞լ կըլի որ դու յես խմում... հլա վոլոստնի սուդխա[2]) էլ ես...

—Սուդի՛ա, սուդի՛ա... ցնցեց դատավորին Զաքարը, ջանաց ուշքի բերել և կխովին բարձրացնելով, գլուխը իր ծնկներին կռթնցրեց:

— Հը՛, ը՛մ... լսվեց դատավորի բերնիցը:

— Ուշքի՛ յեկ, քո՛ տունը շինվի, հերիք չի՞ քնես...

— Աղա ո՞ւր եք կանգնել, վեր կալեք ցած տարեք է՛է՛...

---

1) Ուշքի գա։
2) Գյուղերի մի վորոշ շրջանի դատավոր։

— Հը՛ը՛մ... ղ՛ղ՛ղ՛... փս՛ս՛ս՛. անում էր սուդխան:

Մի գյուղացի վճռական կերպով պլպղեց նրա առաջ, չալակեց, բարձրացավ և ընդհանուր ծիծաղների մեջ՝ սկսեց ձորն իջեցնել արբածին:

— Մուղայիթ[1]) կացեք սո՛... ձայնեց Նիկոլը— սուդին քըոլ չտաք ձորը, թե չէ էլ կաշի քերթող չենք ունենալ...

Գեվորգն ու Հակոբը զարմացած՝ Նիկոլին նայեցին:

— Հա բա՛ս... ժպտաց սա—գեղացին սկի կարա՞ յոլա գնալ առանց կաշի քերթողի... մորթված փոչխարին էլ վարպետ կաշի քերթող պտի՞, յա չէ...

— Ցե՛ս էլ գնամ. փոքրի յելավ Խեչոն այդ միջոցին— բյալքի արյուն առնելու բան ըլի... Քյոխվա, էդ դանակդ մի դեսը քցի...

Ցեվ այսպես էր ահա, որ յերեք-չորս գյուղացիներ, դանակը ձեռքին բռնած Խեչոյի հետ սուդխային ձորն իջեցրին և շուտով մեր աչքերից անհետացան:

Քիչ ժամանակ էլ նրանց ծիծաղների և աղմուկների ձայնը հասնում էր մեր ականջին խորքից, հետո ամեն ինչ լռեց:

— Ամա՛ ջրի կկապեն սուդի գլուխը հա՛... ասեց Ջավադը:

— Տեսնո՞ւմ եք, դարձավ մեզ յերեցփոխը— է՛ս էլ մեր սուդխան...

1) Զգուշ կացեք. հող տարեք։

— Ղո՛րդ ա, խոսեց Խոլերան— խմող ա, ամա լավ սուդխա յա... խելո՛ք, վարվո՛ղ...

Ու սկսեցին խմել այնուհետև: Սպասում էյի վոր Նիկոլը վորեվե բան ասեր, բայց նա լուռ՝ ողի յեր լցնում և չեր նայում մեզ:

— Խելո՛ք... արեց յերեցփոխը— դրուստ ա. վոր խելոք չըլի, վոսկոռների ծերերը վո՞նց կարա պահի...

— Ի՞նչ վոսկոռներ. հարցրի յես:

— Ընենց էլի՛... մռմռաց Ջավադը—վոսկոռներ...

— Լավ դե՛. կանչեց Սմբատը— էդ գինուցը դես ավեք պարոնների համար... էն ո՞վ ա վոր վոսկոռը չի սիրում... թե խելոք ա ջոնդերը[1]) կծածկի վոր մի՛շտ էլ ունենա... Ադա Ջավա՛դ, ձենդ էլի մեկ գլուխդ քցի, բյալքի թե քեֆը նորից չաղանա...

Ջավադը հիրավի «ձենը գլուխը քցեց» և յերբ քիչ հետո ձորն իջնող գյուղացիներից յերեքն էլ յեկան մեզ միանալու, բաժակները յերբեք դատարկ չեյին մնում:

Կեսօրը բավական անցել էր. գյուղացոց տրամադրությունը հետզհետե լավանում էր. մոռանում էյին սուդխային. իսկ խմած ողին ու գինին ա՛յն աստիճան ազդել էր, վոր յերգում էյին, կանչում, ղոռղոալով վիճում:

Խոսակցությունը դառնում էր ինչ վոր հողաբաժինների վրա, վորոնց մասին նրանք վեճի մեջ

1) Ծայրերը:

էյին ծաղկաարեցոց հետ և վոլի համար էլ խմբովին գյուղաքաղաք էյին գնացել:

Բանից դուրս էր գալիս, վոր գուղանցիք վաղուց ի վեր մտածում էյին անտառների վերեվում ընկած ընդարձակ արոտատեղիները ազատել ծաղկաարեցոց փոնաձգություններից. անդադար, ամեն տարի կռիվ էյին տալիս նրանց հետ, ծեծում էյին, ծեծ ուտում, աղմկում և վերջ ի վերջո, այս տարի վճռը դատաստանի էյին ձգել:

— Ծա՛ն փորդիներ... կանչում էր Խոլերան— էս ա 30 տարի, քանի մխոս ա, էդ չիմանըդը[1]) մե՛րն ա ըլել, մե՛ր տավարն ա ընտեղ արածել. հմի կանգնել էյին թե բա՝ «մե՛րն ա, դուք գո՛ղ եք, ավազակնե՛ր եք»...

— Տո գո՛ղն էլ իրանք են ու ավազակներն էլ. ճչաց Քյոխվեն— բա ինչի՞, յես մեռե՞լ եմ, վոր ծաղկաարցիք մեր չիմանըդը խլեն և հլա մեր չոբաններին էլ ծեծեն... Այ, ըտենց կանեմ հա՛... Տեսա՞ք, ա՛, խալխը, խո տեսաք թե վո՛նց պրխատվի մոտ նրանց բերանը փակեցի...

— Ադա՛. ձայնեց Զաքարը— բա էն մածուն ուտող Վարդոն են ի՞նչ էր ասում... Վո՞նց թե յանի մեր պլանը[2]) սո՛ւտ ա, հետո ա չինած, թե լենիչի[3]) ողնականը կաշառք ա կերել...

— Տո կարա՞ն, թող իրա՛նք էլ ուտացնեն... Ընչի՞, կաշառքը յանի փի՞ս բան ա... Հրե՛ն, հմի թող գան ու տենանք վո՞նց են դափտում հողերը....

1) Արոտատեղի:

2) Հատակագիծ, մակարդակ:

3) Անտառապահ:

— Տո լավ ենք արել, լա՛վ... գոռաց Զավադը— հողիներն էլ հանել ենք. հլա մեկ տես՝ յես վո՞նց եմ քեֆ սարքելու լենիչի ողնականի համար...

Շատ հետաքրքրվում էյին հյուրերս՝ իմանալու այդ բոլոր խառնի միջից ճշմարտությունը:

Շատ էլ մաքուր չէր յերևում գործը: Ըստ յերևույթին մեր գյուղացիք լավ միջոցների չէյին դիմել, թեև այժմ ցնծում էյին իրանց տարած հաղթանակով:

— Ինչպե՞ս է գործը. հարցրի յես— պատմեցե՛ք, պարոններն էլ իմանան:

— Թող յես պատմեմ. բռնեց Թևլիցս Խոլերան:

— Թող քյո՛խվան պատմի. մեջ մտավ Սմբատը:

Քյոխվան նախ մի բաժակ գինի կոնծեց, բեխերը սրբեց, մի մեծ բրդուճ հաց ու պանիր կոխելով բերանը՝ թշերն ուռեցրեց և ուտելով՝ ասաց.

— Հըմ... հա՛, պա՛տմեմ, ընչի՞ չէ... հա՛ հա՛մ....

— Տո մեկ բերանինըդ կուլ տուր հլա է՛. ծիծաղեց նրա վրա Զաքարը— խո աջալա[1]) չի՞... էն ա յես ասեմ, էլի...

— Չէ՛... յես...

Սրեց քյոխվեն, մարմնի մեծ ցնցումով կուլ տվավ բերնի յեղածը և ասաց.

— Ըսե՛նց... հմի պատմեմ... Հա՛, ի՞նչ էյի ասում... Ամա՛ դրուստ, հլա ակի բան էլ չեմ ասել... Տո՛, կասես, հարբել եմ, հը՞... խմածս ինչ էր վոր. հարբելն ընենց կըլի ա՛յ, վոնց վոր

1) Շտապողական:

սուդիեն ա... Հա՛, տղաներիս ասեմ վոր, եդ չա՞ն տղերքը— ծաղկասարեցիք, մեր կողքին չիմանըղ ունեն... մթամ թե[1]) քիչ ա գալիս, կամաց-կամաց վրա յին տալիս մինչի կա՛թնաղբյուրը. մեկ էլ են տեսնանք, վոր մեր չոբաններին ծեծում են թե՝ մինչի կաթնաղբյուրը իրա՛նցն ա, ի՞նչ իրավունքով մեր տավարները դենն ենք արածացնում...

— Ադա՛, դրուստ վոր հարբած ես. միջահատեց Խոլերան— բա ըտե՞նց կպատմեն... ի՞նչի բաս չես ասում թե 30 տարի ա եդ 17 դեսյատինը մե՛զ ա տված, հլա մեկ վախտ էլ մեր քոչն[2]) եր ընդի...

— Եդ կասեմ էլի՜... Հա՛, ըտենց ա, ղորթ ա. մեր քոչն ընդի ա ըլել 30 տարի առաջ...

— Տո չե՛, չե՛. զայրացավ Խոլերան— յերկու տարի առաջ չե՞ր, վոր քոչն ընդի յեր...տո մո՞ռացել ես, քո տունն էլ ընդի չե՞ր... բա ըտե՞նց ես վկայություն տալու...

— Հա՛, տո՛, ղորթ վոր մոռացել եյի... Թամամ յերկու տարի առաջ... վողորմած հոգի մերս էլ հլա սաղ եր, են տարին բոլ լոռ[3]) չինեց ու կերանք ձմեռը... Հա՛, բա՞ս, Թամամ հինգ տարի առաջ... հի՞նգ թե յերկու, ա՛մի...

— Ը՛մ յես քո հարբած գլխիդ... արեց ուժգնությամբ Խոլերան— լավ ա, ձենդ կտրի մեկ, թե աստվածդ սիրես... ընե՛նց կոնծել ա, վոր մի՛տն էլ չի թե քոչը յե՞րբ եր Կաթնաղբյուրի մոտ...

---

1) Իբր թե։

2) Ամառը լեռ գնացող գյուղացիք։

3) Մոթալի նման մի պանիր, վոր շինում են թանից։

— Դե լա՛վ, ա՛մի. արեց Ջավադը չարախնդաց— քյոխվա ա, գործ շատ ունի, վո՞ր մեկը միտը պահի... Դե ձեր քյոխվեն էլ ես ա ե՛լի. ախպորս չհավանեցիք, հմի սրա՛ լաղաթն առեք... Վոնց ե՛ր, քյոխվա—դարձավ նա հեգնությամբ քյոխվին—վոնց ե՛ր... Հինգ տարի առաջ, վողորմած հոգի մերդ բո՛լ լոռ չինեց... Ա՛յ, դտար հա՛, մալադեց[1]), քյոխվա...Ա՛ռ, առ մեկ ե՛ս էլ կոնծի, բյալքի հինգ տարին ե՛սհետ տասը չինես...

— Փո՛ւչ, փո՛ւչ... կանչեց նրա վրա քյոխվեն — ըստեղ էլ խո տեղը չի՞. մեկ էլ տեսար պլետը[2]) յեկավ հա՛ա՛...

— Լա՛վ ա, լա՛վ... քրքջաց Ջավադը— հրեն պլետդ Մարտոի միկիտանումը[3]) վեր ընկած. դու գի՛նիդ խմիր, ա՛ռ...

III

Մինչ այդ՝ խճուղու վրա անցուդարձն ավելանում եր: Անշուշտ ժամը 4-ը պիտի լիներ, վորովհետև միմյանց յետևից, դղրդոցով անցան գյուղաքաղաքից յերկաթուղու կայարանը գնացող ամենորյա «պադվոդները»[4]) անցորդներով լեցուն:

Նրանցից հետո յերևվացին ու անցան որորուն՝ մեր յետևում գտնվող «խախոլների»[5]) Ալեքսանդրովկա գյուղի խոտաբարձ սայլերը, գյուղաքաղաքից

---

1) Ռուսերեն բառ «կեցցե»։ 2) Մտրակ։ 3)Գինետուն։

4) Մեծ սայլ ձիերով լծած։

5) Մալոռուսներ, վորոնցից Կովկասում մի քանի գաղութներ կան։

զանազան գյուղեր վերադարձող ձիավորներ՝ բռննրով, յեզան սայլեր՝ ճռճռալով, այլև հետևակներ։ Իսկ դեպի մեր կողմը, խճուղուց իջնելով, յերեվացին յերկու նո՛ր գյուղացիներ։

— Փի՛ե... բացականչեց Ջավադը նկատելով նրանց— հլա՛ մտիկ տվեք մեկ... Տո են ծաղկասարցի Վա՞րդոն չի՝ մեր Հարությանց Վոսկանի հետը...

— Ի՞նչ Վարդո, տո՛. ասաց Նիկոլը— հասաբացի Մաթոն ա։

— Չե հա՛, խմածդ գլխիդ ա խփել... Վա՛րդոն ա վոր կա՞. են էլ, հրե՛ն, Վոսկանն ա իր մեծ փափախովը։

— Վա՛րդոն ա. հաստատեց Սմբատը— են էլ Վոսկանն ա վոր կա... ե՛ս վո՞նց ա ըլել վոր իրար հետ են...

— Այդ ի՞նչ Վարդո յե. միջամտեցի յես— այն վոր ասել ե թե ձեր պլանը կե՞ղծ ե և դուք լենինչի ոգնականին կա՞շառք եք կերցրել։

— Հա՛, հենց են ա. ասաց Զաքարը — մածուն ուտող Վարդոն...

— Թող գա մեկ է՛... վոտքի յելավ քյոխվեն միրավոյ պարեդնիկի առաջը չուզեցի նրան մեկ լավ ուշունց տամ... ըստեղ էլ խո պրիցուտվենի[1] տեղ չի՞...

— Ադա՛, ամո՛թ ա, մեջ մտավ յերեցփոխը, տե՛ղդ նստի, վո՛րդի, ղոնաղը վոր թշնամի՛դ էլ ըլի, պտի պատվես՝ յերբ սուփրիդ վրա ա գալիս...

1) Պետական պաշտոնատուն. աղավաղած պրիսուտստվեննիյ բառից։

— Տո ի՞նչ պատվել, ի՞նչ գադ, բարկացավ Զաքարը—նա ո՞ւմ չունն ա, վոր ասի թե մեր պլանը սուտ ա...

— Ցա թե չե՝ մենք լենինչին կա՞շառք ենք տըվել... ավելացրեց Նիկոլը,— վոր ուսում առած, կարդացվոր ըլի, պտի մեր գլխին նստի՞...

— Ադա՛, կարդա՞ցվորս վորն ա, ճչաց Ջավադը — քի՞չ ենք կարդացվորներ տեհել... յա թե չե հենց մենք, պակա՞ս կարդալ-գրել գիտենք...

— Տո փուչ, կանչեց յերեցփոխը նեղացած—քո դուշմանն ա, քեզ հետ հմի նա դա՛վլի[1] ունի, դու ավելի պտի նրա հետ քաղաքավար ըլես... լողը ի՞նչ կասի. տասը հողով, նամարդի պես վրա եք տալիս...

— Ղո՛րդ ա ասում ամի՛ն. պնդեց Գրիշոենց Մուկուչը— մի՛ անպատվեք ղոնաղին...

— Նստի՛, քյոխվա՛. ձայնեց յերկարավիզ Գեվոն— նստի՛, ամոթ ա. թող գալիս ա՝ գա. թե ինքը ձեն չի տա՝ դու էլ բան մի՛ ասի...

Քյոխվան, վոր յելել և մի քայլ առաջ եր գնացել, չկարողանալով զսպել իրան, թեև չսկսեց հայհոյել, սակայն կանչեց հեռվից։

— Ես յանի վո՞նց ելավ, Վարդո՛, վոր սուտ պլան ունեցողների սուփրի վրեն ես գալիս...

Ու յերկու վոտքի վրա լարված, աքաղաղի նման կռվի հրավերը կարծես նետած, ձեռքերը մեջքին կանթեց և սպասեց վոր յեկողները մոտենային։

Վարդոն անշուշտ լսեց, հասկացավ դրդռիչ հր-

1) Վեճ։

բառերը, բայց լուռ շարունակեց մոտենալ և յերկու քայլ հեռու կանգ առավ:

Վոսկանը մոտ յեկավ, քայլելիս կանչելով հեռվից.

— Փո՛ւհ ձեզ ի՞նչ ասեմ... Աղա՛, բաս ընդեղ հե՞րիք չեն ձեզ, վոր ըստեղ ել սուփրա եք սարքել:

— Այ համեցե՛ք, Վոսկան ամի. ձայնեց նրան Ջավադը— կխսաա խո պտի չթողայինք քեփը:

— Բարեվ ձեզ, արեց Վարդոն՝ մի քայլ ետ մոտեցած:

— Աստծու բարին. պատասխանեցին նրան մի քանիսները:

— Համեցի՛ր, Վարդո. դարձավ նրան յերեցփոխը— համեցիր կողքիս յեկ, մեկ ստաքան գինի՛ անուշ արա...

— Չե՛, շնորհակալ եմ. ասաց Վարդոն տեղից չշարժվելով և կարմրած—Վոսկանի հետ եյինք... Ասաց մեկ գնանք... Թե դու մնալու յես, յես մենակ գնամ, Վոսկան:

— Ո՞ւր ես շտապում, ա՛յ տղա. կանչեց Վոսկանը— կաց մեկ ստաքան գինի խմենք ու միասին պատվողով քեզ ել կտանենք:

— Մթնով կմնամ...

Մյուս գյուղացիների՝ սառը վերաբերմունքը, Ջավադի լիրբ ծիծաղն ու ակնարկները սրան-նրան՝ բարկացրին ինձ: Ճանաչում ել եյի Վարդոյին. իսկույն մոտ գնացի, բարեվեցի և սկսեցի հետը խոսել:

— Ծանոթացե՛ք. ներկայացրի նրան հյուրերիս.

— Աղա՛, կանչեց այդ միջոցին Վոսկանը իր խռոխտ ձայնով—ղորդ վոր ղուզանցի ենք հա՛... Կե-

սորից առաջ գործներդ պրծել, հրես իրիկու ա դառնում, հլա գե՛ղն ել չեք հասել:

— Ցանի դի՛վ մե՞կ չի. արեց Ջաքարը— որը կորսված ա...

— Բաս սուղիեն ո՞ւր ա, տո՛:

— Հարբած եր, քարափի տակը տա՛րան, վոր հով տեղում մի լավ քնի... ծաղրեց Ջավադը— համ ել մի քիչ շա՛տ պինդ եր խումփացնում...

— Փո՛ւ յես ձեր... ծիծաղեց Վոսկանը— սկի տեհա վոչ վոր եդ շան տղեն ոյաղ հալով գեղ մըտնի...

Վարդոն, կիսովին ականջը մեզ, աշխատում եր լսել նաև ղուզանցիներին: Կցկտուր պատասխաններ եր տալիս, զգալի կերպով նեղվում եր:

Հյուրերիցս՝ Հակոբը թողել եր քեփ անողներին և անդունդի ծայրից կռացած հիացմունքով նայում եր դեպի խորքը, իսկ Գեվորգը զննում եր նոր դեմքերը, մանավանդ Վարդոյին:

Զննելու ել դեմք եր այդ: Միջահասակ հիսնամյա գյուղացի, թեև նո՛ւյն կոշտ դիմագծերը, արեվակեզ դեմքն ուներ, բայց բավական զանազանվում եր մյուսներից:

Հագել եր քաղաքացու նման. ամեն ինչ հնամաշ եր նրա վրա. սկսած գլխի «կարտուզից», վոր գունազուրկ եր և տրորված-մինչև կարկատաններով լի յեվրոպական կոշիկները:

Անընդհատ ծխում եր, մուշտուկով պապիրոսը միշտ յերկու դեղնած մատերի մեջ, ծուխը միշտ հասա բեխերի կարմրած ծայրերին, ձեռքն ել տարորինակ կերպով դողդողալիս:

Կարծես քնից նոր էր վեր կացել. մի տեսակ ուռած կոպերով ու խամրած հայացքով աչքեր ուներ: Ուրիշ կերպ չէյի տեսել նրան: Ժպտելիս՝ տխուր ծալքեր էյին կազմվում աչքերի անկյուններում և այտերի մաղոտ ցցվածքներն ավե՛լի չեշավում:

Թվում էր որ սաստիկ խմող պետք է լիներ, յեթե վո՛չ արդեն ալկոհոլիք: Նշանները պարզ էյին. ձայնը խռպոտ, ձեռքերը դողդոջուն, դեղնության նշմարներ, մրսկանության յերևույթ և կաշվի մի տեսակ հատկանշական յուղոտ փայլ:

Ակնարկը մեզնից-զուզանցող, նրանից դեպի մեզ, անընդհատ ծխում էր, շատ կարճ, ակամա պատասխաններ տալիս և փոքրիկ, անցողակի ժպիտներ կազմում դեմքի վրա:

— Դո՞ւք էլ սրանց հետ եք. հարցրեց նա մեզ՝ քիչ հետո:

— Վո՛չ, մենք ճանապարհին պատահեցինք և յեկել ենք ձորն իջնելու:

— Այո՞... աչքերը փայլեցին— իսկ ինչո՞ւ չեք իջնում. չէ՞ որ հետո ուշ կմնաք:

— Ի հարկե, արեց Գեվորգը— գնանք իջնենք. ի՞նչ ենք այս մարդկանցը կպել. Հակոբն էլ ահա անհամբերությունից կարծես ուզում է իրան ձորը շպրտել:

— Գնա՛նք, ասաց Վարդան— յե՛ս էլ կգամ ձեզ հետ:

— Համեցե՛ք, և յեթե կուզեք՝ մեր կառքով ձեզ մինչև Ծաղկասար էլ կտանենք... այնպես չէ՞, դարձա յես Գեվորգին:

— Լա՛վ, ասաց Գեվորգը, յերեք հոգի ենք, թող չորս լինենք:

— Շնորհակալ եմ... արեց Վարդան,— գնա՛նք ուրեմն:

Շարժվեցինք տեղներիցս:

— Ե՞դ ուր բարով, պ. Յերվա՛նդ, ձայնեց Խոլերան:

— Ձորը:

— Հա՛... գնացե՛ք, ընչի՞ չէ...

— Դու էլ ես գնում, Վարդո՛. հարցրեց Վոսկանը:

— Այո՛, պատասխանեցի յես նրա փոխարեն— մենք միասին կիջնենք, հետո մեր կառքով նրան իրա գյուղը կտանենք...

— Հը՛մ... լա՛վ...

— Ինչ որ ա... արեց քյոխվան, որ նստել էր — յերթաք բարով... ամա լա՛վ պրծար, Վարդո՛... գնա՛, գնա՛, քեզ հետ ուրիշ վախտ կտեսնվենք:

Վարդան նայեց նրան, մեղավորի նման ժպտաց ու հետևեց մեզ: Իսկ Ջավադը մի մեծ քրքիջ արձակեց և ձայնեց.

— Կարդացվորները գնացի՛ն...

Առանց պատասխան տալու՝ քայլեցինք դեպի ձորաբերանը և ձայն տվինք Հակոբին:

Ու յերբ ուզում էյինք իջնել, լսեցի դարձյալ կաղլիկի ձայնը, որ կանչում էր մեզ.

— Ըստեղ մոտիկ տվե՛ք, պ. Յերվա՛նդ, թե սուդին ռասատ փաք, սաեք թող դա, ես ա գնալու ենք...

Դարձա և նայեցի նրան բարկությամբ, բայց

պատեցի ինձ և չորս էլ նեղ արահետով իջանք դեպի ձորը։

Դուդանցիք անհետացան այլևս մեր աչքերից։

IV

Քանի իջնում էինք, գետի կարկաչն ավելի՛ հնչուն, ժայռերն ավելի լպրծուն, կանաչն ավելի առատ ու թարմ և արահետն ավելի դժվարանցանելի յեր դառնում։ Դիմացի կնճռոտ, կարծես արհեստական կերպով լեռը ճնշող, հսկա մեծություն էր ստանում՝ կռացած անդունդի վրա։

Մշտապես ստվերալից անկյուններում, ժայռերի ճեղքերից անընդհատ կաթկթող ջրերի տակ, մազերի նման փռված ու կախված՝ աճել էյին դինջությունով ուռճացող բույսերի թփեր. խոշոր ապառաժներ լզված ջրերից սահել—հասնել էյին ուզում գետակին և աջ ու ձախ, անվերջ ու ահավոր խորությամբ՝ ձգվում էյին գլուխ պտտեցնող անդունդներ...

Շա՛տ չնչին, շա՛տ փոքրիկ էինք յերևում մենք բնության այդ վայրենի հսկայության առաջ։ Մե՛նմի քարն այդտեղ մեծ էր մեզանից, ամեն մի թուփը ավելի խոշոր։

Յեվ այդ բոլորը— խիճ, քար, ապառաժ ու թուփ միահամուռ ձգտում էյին իջնել—հասնել ու դեպի խորքը, ներքևում արշավող փրփրալից գետակին, վոր գալարվում էր քարոտ անկողնի վրա, վոստումներ գործում...

Գուցե տասներորդ անգամը լիներ իջնելիս այդտեղ, բայց ինչպես միշտ, այս անգամ էլ փոփոխու-

թյուններ էյի նկատում շուրջը։ Բուսականությունը ավելի՛ առատ էր դարձել և ճոխացել. վայրենի շուշանները ծաղկել էյին իրանց լայն ու լեզվաձև տերևների մեջ. վարդենին սպիտակ վարդերով պճըն-վել, դեղին ծաղիկների փնջերը յերկարացել՝ դեպի մեզ էյին կռանում, յերիցուկները անհամար քանակությամբ, խոշոր և պարարտ՝ գրավել էյին խորշեր ու ծերպեր, իսկ յերեք—չորս նոր ջրվեժներ վոստյուններով գահավիժում էյին ժայռերն ի վար, պայթում քարերի վրա, ջրի փոշի ցանում ամեն ուղղությամբ։

— Բայց սա հրաշալի՛ք է...ձայնում էր Հակոբը։

— Վայրենի՛, կրքոտ և արբեցուցիչ է՝ ինչպես գնչուհի. ավելացնում էր Գեվորգը։

Իսկ Վարդոն գլխարկը ձեռքին, գլուխը կախ և քիչ կթոտելով իջնում էր լռությամբ։

Արահետը վոլորապտույտ էր՝ յերբեմն ժայռերի միջով, նեղ, հազիվ մի վոտնաչափ, իսկ հաճախ այնքա՛ն մոտ քերում էր անդունդի ափը, վոր ստիպված էյինք կառչել քարերի և թփերի։ Վոստնում էյինք ջրերից, մագլցում կամ սահում և յերբ քըրտնաթոր՝ հասել էյինք հոսանուտ խիճերի դաշտին, կանգ առինք գետից հիսուն քայլ վեր— համեմատաբար տափարակ մի տեղ ու նստեցինք հանգչելու։

Վարդոն մի՛շտ լուռ նստարան չինեց մի մեծ քար, Հակոբը ցցվեց սուր ապառաժի գլխին, Գեվորգը փռվեց խիճերի վրա, իսկ յես մնացի կանգնած։

— Դուք չհոգնեցի՞ք. ասացի գյուղացուն դառնալով։

— Վո՛չ, խոսեց նա— իջնելը չի հոգնեցնում... բարձրանալը հոգիս է հանում...

— Այդպես է. փիլիսոփայեց Հակոբը— իջնելը միշտ հեշտ է, բարձրանա՛լն է դժվար...

— Հը՛մ... արեց Վարդոն և ծխախոտի տուփը հանեց— իջնելը, այո՛, հեշտ է, բայց մեկ էլ տեսար տեղն ու տեղը մնացիր... և այն մնա՛լն է վոր կըմնաս...

Ու սկսեց պապիրոս չինել՝ կռացած տուփի վրա:

— Ձեզ համար գուցե, առարկեց Գեվորգը— շատ էլ առողջ մարդ չեք յերևում, թեև գյուղացիք եք:

— Հիվանդ չեմ, խոսեց Վարդոն— շո՛ւնչս չի բավականանում:

— Յեվ ձեռքերդ ու գուցե վոտքերդ էլ դողում են:

— Վոտքերս քիչ, իսկ ձեռքերս՝ միշտ... Խմելուց է:

— Կասկածում եյի... ուրեմն խմո՛ղ եք դուք:

— Այո՛. արավ Վարդոն պապիրոսը վառելով— ողի շա՛տ եմ խմում:

— Լավ չէ. բարոյախոսեց Հակոբը:

— Գիտեմ, ժպտեց գյուղացին— բայց ճա՞րն ինչ... խմում եմ:

— Ինչո՞ւ ուրեմն մերժեցիք, յերբ վերևում գյուղացիք առաջարկեցին ձեզ ողի, հարցրի յես:

— Զկամեցա: Նրանց հետ խմելը չարժե... Միշտ մենակ եմ խմում. վո՛չ վոքի հետ...

— Յեվ շա՞տ:

— Շա՛տ... Ուրիշների հետ, յեթե պատահի,

զոռեն՝ միայն մի ռյումկա... Գյուղացոց հետ՝ յերբեք. ընկեր չեն. ողիդ են միայն խմում և հարբելուդ վրա ծիծաղում... Առհասարակ վա՛տ են յեթե չահ չունենան քեզնից— կամ կծաղրեն կամ կըվնասեն... Մի բաժակ ողիի համար քծնում են...

Կցկտուր, խռպո՛տ ձայնով խոսում եր նա՝ պապիրոսը յերբեմն բերնին, յերբեմն մատների մեջ: Չեր նայում մեզ, այլ միշտ դիմացի գետին և լեռներին:

— Ձեր անունը Վարդո՞ յե. դարձավ նրան հանկարծ Գեվորգը, վոր սկսել եր ավելի հետաքրքրվել:

— Վո՛չ, Վարդան է... «մածուն ուտող» Վարդան:

— Մածուն ո՞ւտող. ծիծաղեց Հակոբը— և ինչո՞ւ այդ տիտղոսը. յերևի մածուն շա՛տ եք սիրում:

— Այո. միս սակա՛վ եմ ուտում:

— Դուք յերևի ուսում առած էլ եք. ժպտեց Գեվորգը — գյուղացիք ձեզ «կարդացվոր» կոչեցին:

— Ծաղրում եյին... բայց ունել եմ մի ժամանակ... Ներսիսյան դպրոցումն եմ յեղել... Գյուղացիք չե՛ն սիրում ուսածների:

— Այդ վա՛տ է, վոր ուսածներին սկսել են ծաղրել. Նկատեցի յես— յերևի շատ եք խմում և ձեր պատիվը իջեցնում...

— Վո՛չ, այդ չէ. ասաց Վարդոն— ուրիշների մոտ յես չե՛մ հարբում... տանս միայն. խմում եմ և չեմ դուրս գալիս... խմում եմ ու կարդում, քընում... Այդ չէ: Ծաղրում են, վորովհետև իրենց գործերը տեսնում եմ և... ավելի հասկանում եմ

իրանց աղտերը... Տանե՛լ չեն կարող, վոր իրանց գյուղացին ավելի զարգացած լինի և մաքուր, վոր իրանցից շա՛տ ավելի աղքատ, գրեթե անկուտի Վարդանը համարձակվում է ավելի բան հասկանալ ու դատել, վոր նա էլ մյուսների նման չի՛ քծնում, քյոխվի վրա գոռում է և մասնակից չէ գծուծ գործերի...

— Այդպես է․ ասաց Գեվորգը— քանի մարդ տգետ է, այնքան հաճույք է զգում իրենից հասկացողին ծաղրելու առիթ գտնել:

— Այո՛... Քյոխվան բարկանում է, վոր չի կարող ինձ էլ մտրակել, ծեծել... և դիմում է ծաղրի... գզիրը ծաղրում է... վորովհետև ինձ հեռու եմ պահում նրանց կեղտոտ արարքներից և կամ ճշմարտությունն եմ ասում... Պրի՛ստավն էլ․ յերբ տեսնում է վոր առանց օրենքի ինձ հետ վարվել չի կարող՝ ծաղրի յե դիմում, ճգնում է ստորացնել ինձ, գյուղացոց առաջ պստիկացնել...

— Յեվ իհարկե, ասում են ձեզ ամենքը:

— Ասում են... Ծաղրով, նույնիսկ անտեսապես ճգնում են «տրորել» ինձ... Յեվ յերբ խմում եմ— նրանց քեֆն է գալիս․ սիրում են տեսնել «ուսումնականին» անասունի հալում, թուլացա՛ծ, հարբա՛ծ... Կուզենային գտնել ինձ փողոցի ցեխո՛ւմ թավալվելիս...

— Եվ ինչո՞ւ յեք մեղադրում գյուղացոց, առարկեց Հակոբը— քանի վոր ինքներդ եք ձեզ անասնացնում և ծաղրելի դարձնում... Հիրավի, ուսում առած հարբեցողից զզվելի բան չի կարող լինել:

Վարդան ժպտելով նրան նայեց մի րոպե, թանձր ծուխով պատեց բեխերն ու ասաց․

— Չե՛մ մեղադրում... Բայց ասեմ ձեզ, վոր նույն արբեցողն եյի նաև չորս տարի առաջ, յերբ մեր վեց գյուղերի ստարշինան եյի, տերության պաշտոնյա․ մտրակը ձեռքիս, շղթան վզիս և միշտ հարբած, այն էլ փողոցներում, հրապարակում, դատ տեսնելիս... ու չեյին ծաղրում․ քծնում եյին, գտնում վոր «ուսումնական հարբեցողը» սկի՛ էլ ծաղրելու չեր, այլ շա՛տ պատկառելի, հարգանքի արժանի... Մի շուն ունեյի— մինչև իսկ նրան էլ գգվում եյին, հարգում... Ստրկական հատկության արդյունք է․ սերնդից-սերունդ մտրակի տակ ծնած պիտի քծնեն զորեղի առաջ, պիտի շողոքորթեն, լիզեն... Դուք տեսե՞լ եք սարդի վոստայն...

— Շա՛տ...

— Վոստայնը սարքած, թաղնված մի անկյունում՝ սպասում է․ անմեղ ճանճը ընկնում է հանկարծ, շա՛տ դես ու դե՛ն խփվում, ճգնո՛ւմ է ազատվել... գուցե և գոռում է, ոգնության կանչում... Յեվ յեթե բան է, մի ուրիշ ազատ ճանճ լսի նրան և մտածի ոգնության գալ— ընկնում է ինքն էլ և նրա բախտը վոչնչո՛վ չի զանազանվում առաջինից... մի քիչ ավելի ուշ է ուտվում, ծծվում...

— Այո, խոսեց Գեվորգը— գյուղն է այդ... ցանցը և գյուղի ըմբոստը:

— Գյուղն է, պնդեց Վարդանը— վո՛չ միայն գյուղը, այլ ամբողջ յերկիրը... Ցանց է, վոստա՛յն... և սարդերը ագա՛հ, սարդերը գիշատի՛չ,

վո՛չ մի անկյուն ազատ չէ... Ի՞նչ կարող է անել Թեկուզ «ուսած, հասկացող» ճանճը... Ավելի շուտ կբռնվի, ավելի շուտ կվոչնչանա, և նրա կոտրած չնչին թևը նորից կնորոգվի ու ճանճերը կբռնվեն, կծծվեն...

— Հասկանալի յե· ասաց Հակոբը:

— Իսկ ուր վոստայն կա, շարունակեց Վարդոն— այնտեղ կա միմիայն ուտվո՛ղ ճանճ... Ծընվելուն պես գիտե նա վոր ցանց կա... Մնում է մի հնարք... լինել քծնող, խորամանկ, խաբեբա և գըծուծ՝ սպրդել կարողանալու թելերից և գոնե քիչ ավելի ուշ ուտվելու համար... Անցյալ որը մի գիրք եր ընկել ձեռքս, կարդում եյի... Շա՛տ լավ գիրք եր: Թիֆլիս եյի գնացել՝ մի ծանոթս տվավ...Կարդում եյի ու մտածում վոր շա՛տ լավ կլիներ, յեթե դարվինիզմով բացատրվեր մեր գյուղացու ներկա հատկությունները...

— «Դարվինիզմ» գի՞րքն եք կարդացել

— Այո՛... լա՛վ, պա՛րզ գրած գիրք է... և ճիշտ: Ինքս գիտել եմ շատ բան...Վորոշ միջատներ իրանց միջավայրի գույնն են ունենում, վորովհետև այդ գույն ունեցողնե՛րը միայն կարողանում են ազատվել սարդից... Ներեցեք, առհասարակ ուտողներից ուզեցի ասել...— և հառաջացնել իրանց նըման սերունդ...

— Վորոշ միջատներ էլ, ավելացրեց Գեվորգը— տերևների մեջ ապրելով ստանում են տերևների նըմանություն այնքա՛ն, վոր զանազանել չի կարելի...

— Այո՛... շարունակեց Վարդոն— ապրում են և բազմանում միայն նրանք, վորոնք նմանվում են իրանց շրջապատող տերևներին. այդպիսի ընտրականություն մի քանի սերունդից հետո հառաջացնում է տերևաձև միջատների մի տեսակ և այդ նոր տեսակի միջատը կզարմանա, յեթե պատմես իրան, վոր տերևների ձևից ավելի լավ ձև կա...

— Մեր յերկրի գյուղացինե՞րն էլ նույն որենքին են յենթարկվել ուրեմն ձեր կարծիքով.— հարցրեց Հակոբը:

— Նույն... Ըմբոստները թշվառ են, ապերջանիկ... Նրանք այլանդակություններ են և շո՛ւտ են ուտվում...Ավելի ուշ ուտվելը դառնում է իդեալ... Մտածե՛լ եյի այդ բոլորի մասին, բայց բացատրել չեյի կարողանում. գիրքը հասկացրեց.

— Բայց, ասացի յես— պատռեցե՛ք ցանցը...

— Պատռե՞նք... ժպտեց Վարդոն—ինչո՞ւ չէ... Բայց նախ հարկավոր է վոր ամենքը զգան թե ցանցը նեղիչ է և թե նրանից դո՛ւրս էլ կա կյանք ու ավե՛լի լավ կյանք... Հետո, շատ էլ ճիշտ չէ պատռելը. առաջին զգացողին սարդը խսկո՛ւյն կլանում է... Մի ճանճը վոչինչ անել չի կարող. մի ըմբոստը, յեթե չփշրվի յել, ինձ նման՝ ողիի կդիմի կամ ծաղրելի կդառնա... պետք է ամենքը... իսկ այդ «ամենքը» ունենալ դյուրին չէ...

Ասաց, ուժգին կերպով փչեց մուշտուկի մեջ, պապիրոսի մնացորդը դուրս շպրտեց ու վոտքի յելավ:

— Զգնա՞նք...

— Գնա՛նք...

V

Շատերը, յեթե մտաբերեն, դուցե հիշեն իրանց պատահած այսպիսի մի յերևույթ:

Վիճում ես մեկի հետ. դիմացինդ պարզում է քեզ իր հայացքը վորոշ խնդրի մասին և հաջողվում է համոզելու չափ փաստեր տալ: Զգում ես վոր ճիշտ են ասածները, այնուամենայնիվ դեռ կասկածի մեջ ես, վորովհետև իրական կյանքում նրա պատմած փաստերը անձամբ, քո աչքերովը չես տեսել:

Յեվ ահա չե անցնում մի քանի օր, յերբեմն իսկ մի քանի ժամ, վոր դիպվածով, ներկայությամբ հենց քեզ հետ վիճող պարոնի—ականատես ես լինում նրա ասածը հաստատող ապացույցին:

Այդպես ստորոտի մի պատահար եր ահա, վոր հաստատելու համար Վարդոի խոսքերը, դեմ առ դեմ տեղի ունեցավ ձորագլխում, յերբ այնտեղ վերադարձանք:

Պետք է վոր ժամը 6-ը լիներ, յեթե վոչ ավելի ուշ, յերբ ձորից յելանք ու մտածեցինք գյուղ գընալ:

Դուզանցիները չկային. գնացել եյին: Հարթության վրա մնացել եր միայն մեր սայլը: Սայլապանը պարզված նրա մեջ՝ քնել եր գլուխը դրած մի յերկար փայտի վրա:

Զարթեցրի նրան:

— Վե՛ր կաց, գնում ենք:

Յելավ, աչքերը տրորեց ու իջավ սայլից:

— Հա, յե՞կաք, ասեց նա— բա ընչի՞ եսքան ուշացաք... հրես կմթնի:

— Վոչինչ, լուսընկա գիշերներ են, սանձերը կարգի դիր ու նստենք:

— Ղորդ ա, առարկեց նա մոտենալով ձիերին— ամա դե չա՛տ ուշ մնացինք ե՛... Վողջ օրը կորավ. ասի քիչ շուտ յետ դառնանք, բալքի թե մի-յերկու սել խոտ ել ա տուն տանեմ:

— Վնաս չունի, խոսեց Վարդոն— ուրիշ սել ել ունիս. ախպերդ հմի նրանով տարած կլինի:

— Դո՞ւ ել ես գալու Դուզան. ասաց սայլապանը խեթ-խեթ նրան նայելով:

— Չե, ասացի յես— առաջ մեկ Ծաղկասար կիջնենք, հետո Դուզան կբարձրանանք:

— Եդ վո՞նց կըլի, փոկերից մեկը ձեռքին՝ ինձ նայեց սայլապանը— եդ խո ջլի՛ս մթանը կմնանք... Չե՛, եդ մեկը սկի չի ըլիլ. յես Ծաղկասար չեմ գընալ:

— Տո պրծիր ե՛, ձայնեցի յես—մի բան ել ավելի կտանք, հը՛... Մի մանե՞թ չի հախդ, Ծաղկասար գնա ու յերկու մանեթ ստացիր:

— Վո՞նց թե մի մանեթ... զոչեց նա— ընչի՞, բաս մի մանե՞թ եք տալու:

— Ի՞նչ է. զարմացա յես—մեր Սիսակ ծառան քեզ հետ չի՞ խոսել այդ մասին. չե՞ վոր սովորաբար հենց մի մանեթ է և վո՛չ ավելի:

— Ղորդ ա, խոսել ա... կմկմաց գյուղացին— ամա դե մի մանե՛թ...

— Չեյիր ուզում՝ թող չլծեյիր... պրծի՛ր, պըրծի՛ր, խոսալու ժամանակ չկա...

Գյուղացին պահ մի լուռ, առանց մեզ նայելու սանձերը կարգի դրավ, հետո հանկարծ դուրս յեկավ

ձիերի միջից, անցավ սայլի մյուս կողմը, վճռականորեն ինձ նայեց ու ասաց.

— Չէ՛, պարո՛ն Յերվանդ, էտ ըլելու բան չի. յես Ծաղկասար գնացողը չեմ՝ ես մեկ, համ էլ յերեք մանեթից պակաս չեմ առնի՝ ես քեզ վրա յերկու...

Յես և հյուրերս միմյանց նայեցինք զարմացած:

— Ա՛յ տղա, դու խո չե՞ս գժվել, յա հարբած խո չե՞ս. զայրացավ Հակոբը— հենց մեզ մո՛տ էր վոր Սիսակը յեկավ ու ասաց թե մի մանեթով է խոսել հետդ...

— Ղո՛րդ ա... բան չե՛մ ասում, մի մանեթ խոսեց... ամա դե յես էլ ասի վոր յերեք կառնեմ...

— Ե՛, վոր ասիր ինչո՞ւ յեկար կամ ինչո՞ւ գնի մասին մեզ հետ նախ չվերջացրիր ու հետո բերեյիր. հը՞...

— Դե վո՞նց անեմ յես...ասի աղա մարդիկ են...

— Հիմար մի՛ լինիլ. միջամտեցի յես— միշտ գնացել յեկել եմ, յերբեմն 4–5 հոգով, մինչև մութը մնացել ենք ու միշտ էլ միայն մի ռուբլի յեմ տվել... Վորոշված գինն էլ դա՛ յե...

— Այդպես է, հաստատեց Վարդոն— տաքսան[1]) մի մանեթ ա:

— Ի՞նչն ա մեկ մանեթ.. բացականչեց գյուղացին զայրացած դեպի նա դառնալով— յանի ձեր Ծաղկասարեցին կտաներ հա՞... թե ընենց փչում ես...

Ապա համառ ու խիստ ինձ նայեց ու ասաց.

— Յերեք մանեթից պակաս չի ըլի, պ. Յեր-

1) Վորոշված գինը:

վանդ. թե Ծաղկասար էլ գնալու ըլեք չորս մանեթ... կուզեք կտանեմ, չեք ուզի, հրեն ձեր չեյերը[1]), սելֆը վեր դրեք՝ յես գնամ...

Այլևս համբերել անհնար էր. չափազա՛նց հանդուգն էր դառնում գյուղացին: Անմիջապես կորդեցի վար դրի մեր պայուսակն ու զորգը և ասացի.

— Լավ. դե հիմի գնա՛. մինչև գյուղը չորս վերստ է մնացել. ինչպես լինի կգանք, բայց դու այլևս կո՛պեկ չես ստանալ ինձնից:

Սայլապանը յելավ սայլի վրա, խարազանը ձեռքըն առավ, սանձերը ժողովեց ու մի տեսակ համարձակ ժպիտ դեմքին՝ կանչեց.

— Կստանամ... արխեյին[2]) կաց...

— Գնա տեսնենք ի՞նչպես կստանաս... Դատի դիմիր յեթե կուզես:

— Ինչի՞ դատաստան. ասաց նա— իմ դատաստանը հրես ա՛յ, իմ պլետն[3]) ա...

— Ինչպե՛ս...

— Ընենց... իմ դատաստանը յես իմ ձեռքովս կտեսնամ... հրես ա՛յ, պլետս սաղ կենա:

Արյունը գլուխս խփեց. վարկենական զարմանքից հետո, չգիտեմ ի՞նչպես յեղավ, վոստնեցի դեպի նա, բռնեցի ցույց տված «պլետի» ծայրից, քաշ տվի, խլեցի և նրանով ուժգնությամբ սկսեցի հարվածներ տեղալ գլխին:

Սոսկման ու զարմանքի մի ճիչ դուրս թռավ գյուղացու բերնից, ճգնեց սանձերը ժողովել, բայց

1) Իրեղենները:
2) Միամիտ: 3) Խարազան:

շփոթվեց. և վորովհետև յես շարունակում եյի հարվածել՝ ցած թռավ սայլից:

Կարծեցի պիտի պաշտպանության դիմեր, սայլի մեջ դրած ցուպը վերցներ, վրաս հարձակվեր...

Այնուամենայնիվ յես չքաշվեցի:

Այստեղ սակայն Գեվորգը, վոր ապշած կեցել եր, վարակվեց ինձանից, անմիջապես կորզեց ձեռքիցս խարազանը, ընկավ գյուղացու վրա— և տո՛ւր թե կտաս...

— Շա՛ն վորդի, սկսեց նա հարվածների հետ— դու համարձակվում ես պլետով սպառնալ հա՞... սպասիր մեկ քեզ սատկացնեմ...

— Յա՛, յա՛... սկսեց յետ-յետ քաշվել գյուղացին— յա՛ սպանելո՞ւ եք ինձ...

— Պիտի սպանեմ... ահա՛ քեզ... ահա ելի՛...

Յեվ վո՛չ իսկ մտածեց մի րոպե ձեռքը ցուպին տանել գյուղացին, այլ մեկեն մեջքը դարձրեց ու ճչալով սկսեց փախչել դեպի խճուղին, Գեվորգը նրա յետևից՝ խարազանը ճոճելով օդի մեջ...

Վո՛չ միայն փախչում եր սայլապանը, այլ և կանչում եր.

— Փի՛ե... տո սպանելո՞ւ եք... ախր յես ի՞նչ արի ե՛... տո յես ղալա՞թ արի վոր մի բան ասի...

Գեվորգը հասել եր յետևից, հայհոյում եր ու զարնում:

— Վա՛յ, վա՛յ... սկսեց աղաչել գյուղացին:

Կանգ եր առել ու կծկվելով, պալարվելով ուտում եր հարվածները, առանց ձեռքը իսկ շարժելու զարնողի դեմ:

— Վա՛յ, վա՛յ... գոռում եր նա— յե՛ս մեղա

աստծո, աղա՛... ախպե՛ր, ինչ կուզեք տվեք... տանե՛մ, տանեմ, ել ո՞ւր ես խփում... կա՛ց հալա...

— Դո՛ւ անպիտան, դո՛ւ սողուն... կանչում եր Գեվորգը զարնելով— ե՛ս րոպեյիս մեր պայուսակը մեջը դիր ու մեզ գյուղը տար, թե չե...

— Տո տանեմ, տանեմ ելի՛... յա՛...

Հետո հանկարծ վարմունքը փոխեց, կծկվեց, աղաչավոր, սարկական ժպիտ կազմեց դեմքի վրա ու ասաց.

— Դե վոր ուզում ես սպանել, ըհա՛, խփի՛ր... դո՛ւ քո ինսա՛ֆը...

Այստեղ մենք միջամտեցինք, Գեվորգն ել իջեցրեց խարազանը:

— Թող, Գեվո՛րգ. ասացի յես— թո՛ղ, շա՛տ զզվելի յե:

— Յեվ ինչպե՛ս զզվելի... կանչեց նա խարազանը հեռու նետելով,— քիչ եր մնում խեղդեմ, սատկացնեմ այս սողունին... փոխանակ ճանկերով լինի, ատամներով լինի՝ ինձ բզկտելու, դողում ե այս բարակ, թելի նմանող քոսոտ խարազանի առաջ. փախչում ե, կծկվում ե, աղերսում. քիչ ե մնում վոտներս լզի... Ո՛ւ յես քու կերած հացին ու ծածկած փափախին... Մո՛տ արի շան վորդի, լաչա՛կ ծածկեմ գլխիդ, լաչա՛կ...

— Ընչի՞, աղա՛. կանչեց գյուղացին հեռվից— մոտ չեմ գա, ելի՛ կծեծես...

— Արի ասում եմ ե՛... արի՛ սայլը բարձրացի, թե չե վողջ մարմինդ կջարդեմ...

Գյուղացին մի քայլ առաջ յեկավ քծնող ժպիտը դեմքին, կանգ առավ խոնարհ՝ և ասաց.

— Յանի ի՞նչ եյի արել, ա՛ղա, վոր եղքան ծեծեցիր:

— Հալա ելի կծեծեմ, սողո՛ւն, կանչեց նրա վրա Գեվորգը: Տո, դու մա՞րդ ես, ջիգար ունի՞ս... տո դու սկի ամոթ յա սիրտ չունի՞ս... Հ՞ը անիծած, համ պլետ ես ցույց տալիս, համ էլ եղքան փախկոտ ես...

— Դե բաս ի՞նչ անեմ, աղա՛, յես կարո՞ղ եմ ձեզ պես աղաների հախիցը գալ... Կերթաք ստարշինի, պրիստավի ու... էլ վողջ տարին ջամա[1]) քաշելուց չեմ պրծնի...

Հետո մոտ գնաց սայլին, արագությամբ մեր իրեղենները դարսեց տեղը, խոնարհաբար հրավիրեց մեզ նստելու և յերբ սանձերն էր ժողովում քշելու համար, քծնող ժպիտը դեմքին ինձ դարձավ ու ասաց.

— Դե աղա, են վոր ծեծեցիք էլ, յերկու մանեթը կտա՞ք, չէ՞... թե Ծաղկասար կուզեք՝ իրեքը...

— Լա՛վ, լա՛վ, քշի՛ր...

— Քշիր ու ձենդ կտրի՛ր, շա՛ն տղա. բարկացավ Գեվորգը— հիմա ավելի փիս կծեծեմ թե խոսել ես:

— Յա՛...արեց գյուղացին— դե քշում եմ է՛լի, էլ ինչի՞ յես ուշունց տալիս, յա թե չէ՝ ծեծել ուզում:

— Քեզ նման սողունի վոսկորներն է՛լ վոր փշրես՝ դեռ քիչ է:

Գյուղացին Վարդոին նայեց զարմացած ու հարցական. կարծես կամենում էր հարցնել նրան թե «ի՞նչու յե բարկանում այլևս այդ քաղաքացին»:

[1]) Տուգանք:

Վարդոն, վոր մինչև այդ լուռ, իսկ կառք նստելուց հետո գլուխը քաշ՝ պապիրոս շինել— վառում էր, նայեց Գեվորգին ու ասաց.

— Չի հասկանալ ձեզ պարո՛ն, իզուր եք փորձում ստրկային զգացմունքները զզվելի հանդիսացնել իր առաջ... Քանի բարկանում եք— նա ա՛յնքան ավելի չի հասկանում ձեզ...

— Իսկ բնա՞զդ, ինքնապաշտպանության կամ անձնասիրության բնա՞զդ անգամ չունի, գոչեց Հակոբը— չէ՞ վոր ամեն անասուն ունի դրանից:

Յեվ մինչ կառքը սլանում էր ու խճուղին յեղնում, Վարդոն առանց ժպտելու, ծուխը բեխերի մեջ՝ պատասխանեց.

— Այո՛, ունի... բայց ինքնապաշտպանության բնազդները տեսակ-տեսակ են լինում: Փախչել, կըծկըվել, թաքնվել՝ հարվածից խուսափելու համար, աղաչել, լալ... Դրանք էլ ինքնապաշտպանության բնազդներն են: Ստրկական ինքնապաշտպանության բնազդներն են մեր մեջ զարգանում միայն. իսկ անձնասիրությունը անհա՛յտ գաղափար է այս կողմերում... Ամեն ինչ միաբանած՝ ժողովրդին կրթում են այդպես...

— Անասունը գոնե կծում է, մռմռաց Գեվորգը— ինչքան էլ ուժեղի պատահի, նախ կծում է, հետո մեռնում... Մեղուն իր մահվան գնով պաշտպանում է իր հասարակությանը...

— Ճի՛շտ է, շարունակեց Վարդոն— մե՛նք էլ կծել գիտենք... մեզնից թույլերին, մեկ մեկու կծել.... Մարդը կարծում էր թե հոխորտալով կհաջողվի կողոպտել ձեզ. այժմ քծնում է, վորովհետև

զգաց վոր այդ ձևն ավելի նպաստավոր է... Ու հաջողվեց, հավաստի յեմ վոր կտաք նրան ուզածին չափ. ծեծեցիք և դա ճնշում է այժմ ձեզ. խղճահարությունից՝ ուզածը պիտի տաք...

— Իսկ վոր ծե՞ծ կերավ...

— Վոչի՛նչ, սովոր է մեր մեջքը, ժպտեց դառնությամբ Վարդոն— կոշտեր են գոյացել մեր մեջքերի վրա այնպես, ինչպես վոտքերի մատներին՝ նեղ կոշիկների մեջ ճնշված... Վորպեսզի ծեծը բարկություն դրդի, նախ հարկավոր է վոր կաշին նուրբ, զգայուն լինի և կոշտերից ազատ: Իսկ կոշտերից ազատվելու համար...

— Ազատվելու համա՞ր...

— Միայն մի հնարք կա... լայն կոշիկներ հագնել, նեղ կոշիկները ընդմիշտ դեն շպրտել... Այո՛, լա՛յն, շա՛տ լայն...

Խ Ա Ղ

Գյուղի այդ ծայրում, վերջին տներից և ծառաստաններից հետո, խճուղու յեզրից սկսած, դողաձև բարձրանում է մի ծործոր, վոր որվա մեծ մասը գրեթե ստվերի մեջ է թե՛ յետևի և թե՛ յերկու բլուրների շնորհիվ:

Ստվեր ձգող այդ շրթունքների առապարներից ցած, ամբողջ տարածությունը բռնել է մի ծաղկալից մարգագետին, վոր մշտապես որորվում է փչող սյուքից և գնալով ավելի դալարագեղ դառնում վըտակների ափերին:

Բծավորված սպիտակ վարդենիների և հեռվից խոշոր, մենավորիկ ժայռերի նմանող մամուխի թուփերով— հասնում է նա մինչև փրփրոտ գետակը, վոստնում վրայից և մխրճվելու գնում հորիզոնի վրա ճապաղված անտառի կուրծքը:

Այդ տեսակ ծործորներով է չերտավորած գյուղի ամբողջ թիկունքը՝ Սարչենից սկսած մինչև գյուղաքաղաք:

Ամենալավ արոտատեղիներ լինելով, լեռնալանջի այդ կողերի վրա միշտ կարելի յե տեսնել արածող

ցանուցրիվ նախիրներ, այլև խոտերի մեջ վազվզող կամ միացած ու թիկն տված խոսակցելիս՝ գյուղացի մանուկներ, վորոնք տավարը հսկելու յեն գալիս և ստվերալից կողերի վրա հավաքվում:

Հուլիսի այդ որերին, Դուզանի լեռնադաշտի նըման ծաղկալից անկյուն դժվար է յերևակայել:

Հարյուրավոր գույնզգույն չերտեր բծավորում են անծայր հարթավայրը: Այստեղ՝ պուտն է մի ամբողջ տարածություն արյան պես ներկել, այնտեղ նուրբ ու քնքուշ սպիտակ խնձորածաղիկը արշալույսի կարմրորակ լույսո՛վ կարծես վողողել բլուրների կուրծքը, քիչ հեռու ինչ-վոր ծաղիկների խումբ, լուրջ գույնով յերկնքի մի կտոր հանդչեցրել արտի վրա, նրա մոտը, մանիշակագույն քմահաճ վոլորտուն յերիզներ գծել խխարուկը, դաշտ փոսիկներին ու կանաչ ակոսների նմանող խորությունների թավշյա ոձի՛ք են կազմել բուղածաղիկները և գաճաճ վիշապուկների միջից գլուխ դուրս պարզել՝ ցնցվում են դեղնորակ խոշոր ծաղիկներով չուշանները, այլև թասաձև և խոշոր պսակներով բոխածաղիկները...

Սիրո՛ւմ եյի ամեն առավոտ լուսածագին գնալ այդ կողմերը, մանել նախ Սարչեն, վոր միայն մի վերստ հեռու յեր մեր գյուղից, հետո դրսանքի քայլերով վերադառնում եյի և հաճախ, լեռնալանջի կողերից մեկի վրա ընկողմանած, կամ նրանց փոսությամբ դալարների մեջ մեկնված՝ մնում եյի՛ յերազկոտ ժամեր անցկացնելու, ակնարկս դիմացի ցըցուն գագաթներին և լույս մանիշակագույն մշուշի մեջ թաղված անտառներին:

Այդ որ սակայն— մի արեվալից և լավ որ— չատ

հեռու չգնացի: Խճուղուց վեր յելա, մինչև ծնկներս խոտերի մեջ՝ առաջ քայլեցի և մտածեցի դիմացս յերեվցող առաջին թփիկի տակ նստել:

Մամուխի մացառ եր այդ, բավական խոշոր, կոտարածված և ծաղկած: Շրջապատում խոտերը խոտված-ջարդված եյին. աջ կողմում նույն իսկ լպրծուն եր դարձել դեպի կչկչացող, յերկու թզաչափ վտակն իջնող՝ զառիվայրը:

Թփին չհասած, նկատեցի սագերի յերամներ, վորոնք որորուն, սպիտակ ամպերի շա՛րժուն քուլաների նման՝ սահում եյին խոտերի մեջ:

Հետո աչքիս խփեցին մի քանի սև, թավոտ գըլուխներ և բանից դուրս յեկավ, վոր տավարածների մի փոքրիկ խումբ, ինձնից առաջ գրավել եր թե թուփը և թե նրա չրջապատը:

Կարմիր ու դեղին հագուստներով փոքրիկ աղջիկներ եյ յերեվացին, միմյանց մոտ չարքին կանգնած՝ յերկար ճիպոտներ ձեռքերին:

Մոտենալով, համրեցի. 7—8 տղա եյին, 4—5 աղջիկ: Ըստ յերեվույթին, ամբողջ լեռնալանջի վըրա գտնվողներն եյին, վոր տավարներին թողել հանելու մինչև բլուրների ծայրերը, իրենք միմյանց ձայն եյին տվել և մամուխի թփի մոտ, սադարած աղջիկների չուրջը ժողովել:

Այդպես եյ եր. աղջիկները ինձ տեսնելիս՝ կանգնել եյին, իսկ տղաներից մեկը յեռեսի վրա փռվել, մյուսը կկզած, մի քանիսն եյ մամխի յետեր կանգնած՝ դիտում եյին գնալս: Յերկուսն եյ քարակուտեր կազմել, աթոռ եյին դարձրել ու վրան հեծել:

— Բարեվ, տղա՛յք. կանչեցի հեռվից:

Մեկը, որ ամենից առաջ էր նստել, դարձավ մյուսներին ու ձայնեց.

— Պ. Ցերվանդն ա եկել, տո՛... յես էլ ասի թե ես քաղաքըցին ո՞վ ա, որ գալիս ա դեսը...

— Ցեկել ես մա՞ն գալու. հարցրեց քարակույտի վրա նստողներից մեկը:

— Համեցե՛ք. արեց մի յերրորդը,— ըսենց լավ տեղ սկի՛ չես գտնիլ...

— Իսկ դո՞ւք ինչու յեք հավաքվել այստեղ. հարցրի յես մոտ գնալով:

— Հրեն ա՛... արեց մեկը և ձեռքի փայտը դեպի վեր պարզեց,— են տավարները մերն ա... արածացնում ենք:

— Հացըր ասես սինձ ենք ուտում. ծիծաղեց պառկողը և առաջ կիտված խոտերի փնջերից պոկեց ու սկսեց ծամել:

Մոտեցել էյի բոլորովին: Ամենքը ժպտուն ինձ նայեցին և «տեղ տվին»:

Ծիծաղելի տեսք ունեյին բո՛լորն էլ: Հագել եյին պատառոտուն, տասը տեղից կարկատաններով լցուն, ամեն կողմից ծվեններ կախված արխալուղ. վարտիքի փոխարեն՝ ինչ որ աղտոտ կարճ կտավ մինչև ծնկները, վոտերնին տղմուտ, բոբիկ. գլխնին կարտուզ եր կամ փափախ, սակայն վորպիսի՛ կարտուզ և ի՛նչ որի ընկած փափախ, յուղոտ, ճմրտկված, ճաթրտած ու կոտրտած, կեսը ընկած, մյուս կեսը ցնցոտի դարձած կարտուզ, բուրդը գդգդված, կեսիցը կարծես տապարած և աղտի մեջ թաթախած փափախ, վորոնք ով գիտե ինչ աղբանոցից եյին գտել-հանել...

Ջնայելով հագուստներին, ձեռք-յերեսի, վոտների և բաց կուրծքերի աղտին, ամենքն է՛լ ժպտուն ու զվարթ՝ իսկույն զանազան դիրքեր բռնեցին չուրջըս:

Մեկը կկզեց և մռութը դրավ ծնկներին. յերկրորդը փռվեց յերեսի վրա՝ դեմքը դեպի ինձ, յերրորդը մամխի թփի մեջ մտավ և սմքվեց այնտեղ, չորրորդը կողքի վրա ընկողմանեց... ու ամենքն էլ շարունակեցին ծամել ու ծամծոտել սինձը, վորոնցից փունջ-փունջ ունեյին ձեռքներին կամ թևերի տակ կոխած:

Ատամները սևացել բույսից. շրթունքները սպիտակել, դեմքերը արևակեզ, մազերնին թափթփած, առատ ու թավ, աչքերնին պսպղուն, սնդիկի պես, միշարժուն չարաճճիները, յերբ յես էլ նստել եյի, միմյանց նայեցին, քթթեցին, լուռ ծիծաղեցին, հետո թփի մեջ կծկվածը կանչեց հանկարծ.

— Ադա՛, բա ամո՞թ չի. ընչի՞ պ. Ցերվանդին էլ սինձ չեք թավազա[1]) անում... Համեցե՛ք, սի՛նձ կեր...

— Համեցե՛ք... արին ամենքը և առջևս նետեցին մի մի փունջ:

— Ես վորտեղի՞ց եք քաղել. չա՞տ կա այս կողմերում:

— Շա՛տ... արեց քարակույտի վրա նստողը,— հրեն վողջը սինձ չի՞... ամա ծաղկել ա հմի... դըլխի կողմիցը վոր ուտես, հլա դալա՛ր ա...

— Ես աղջիկնե՞րն ինչ գործ ունեին ըստեղ.

1) Մատուցանել

հարցրի յես նստելով,— սրա՞նք ել են տավար արածացնում:

— Չե. խոսեց նորից նույն մանուկը,— սրանք ղաղեր[1]) են բերել... դե՛, մենք ել ասինք՝ դանք քիչ հետները խոսանք... ընենց չի՞, ա՛ խալխը...

Ու այնպես ծաղրածու կերպարանք ստացավ և աչքը քթթեց, վոր բոլորն ել ծիծաղեցին:

— Հա՛մ ել, վրա տվավ նա հեգնական ակնարկներ անելով սրան-նրան — մեր նշանածնին են սրանք... Ա՛յ, են Թաղուշը իմ նշանածն ա...

— Վո՛ւյ, սատկես դու հա՛... չանչեց[2]) դեպի նա աղջիկներից մեկը— սուտ ընչի՞ յես ասում...

Այնքա՛ն տարորինակ մանուկ եր խոսող տղան, վոր առանձնապես զննեցի նրան, մինչ խոսում եր և ծամածռություններ անում:

Դրեթե կիսամերկ եր, կարմիր կտավե հին ու կտրտված շապիկ, նո՛ւյնքան կտրտված ու մինչև ծնկները հասնող վարտիքի հետ: Գլխին մի կարտուզ ուներ, վոր կասես շան բերանը տված ու ծամած լիներ. ծուռ կոխել մինչև ականջները, սնձից սևացած ատամները բաց, դեմքը արևից կիզված ու թեփոտած, մազերն ել չեկ:

Խոսելիս մեկ ինձ եր դառնում, մե՛կ ել ծաղրածու կերպով սրան-նրան ակնարկներ անում և քրքիջների առիթ տվող ծամածռություններ կազմում այլանդակ դեմքի վրա:

— Անունդ ի՞նչ ե. հարցրի միջահատելով նրան:

[1]) Սազեր

[2]) Ձեռքը տափակ՝ դեպի ուրիշը ցցել իբր նախատինք:

— Տելո ա:

— Դա ի՞նչ տեսակ անուն ե վոր...

— Տելամաք ա. մեջ մտավ յերեսի վրա փռվածը,— մենք Տելո յենք ասում:

— Աղա ո՞ւր ես մեջ ընկնում, լպստա՛ծ, կանչեց նրա վրա Տելոն,— քե՞զ ա խոսացնում, թե՞ ինձ.. ընչի՞ յես դիղա՞մ վոչ, վոր տերտերը ինձ Տելամաք ա կնքել:

— Տելամա՞ք, ասացի յես,— վո՞րտեղից ե գտել հայրդ այդ անունը:

— Հե՞րս ընչի. լայն ծիծաղեց Տելոն և ատամները ցցեց,— տե՛րտերն ա գտել. մեկ ղաֆթար ունի, ընդի կարդում ա ու յերեխեքանցը անուն դընում... Ա՛յ, ես գորտի անունը (ցույց տվավ առջևս փռվածին) Արատաշես ա դրել, մենք Արտո ենք կանչում:

— Նրա անունն ել Ասքանազ ա,— մեջ մտավ մի յերրորդ մանուկ և թփի մեջ սմքվածին ցույց տվավ — ամա մենք Քանազ ենք ասում:

— Աղա ելի՞ մեջ մտաք. ճչաց նրա վրա Տելոն, — տո սա ձե՞զ ա խոսացնում, յա՞ ինձ... Ուզում ես վեր կենամ ու ջնջխե՞մ... ի՛նչ բեհայա[1]) խալխ եք, տո՛... Հա(դարձավ նա դեպի ինձ) ա՛յ, ե՛ն-մեկելի անունը Արտազ ա դրել, մենք Տազի ենք կանչում... Աղա, Տազի՛, ըռեխդ ցույց տու մեկ, ո՞ւր ես տավարի պես գլուխդ խոտերի միջին խրել:

Մինչ այդ, աղջիկները նստեցին և իրար կպած

[1]) Անամոթ:

ու լուռ՝ ինձ էյին զննում, միմյանց հետ յերբեմն էլ փսփսում, ամաչելով ծիծաղում:

Չորս էյին, թե հինգ. տասնից՝ տասներկու տարեկան կլինեյին. սև, աղտոտ, վոտաբոբիկ և տգեղ: Մեկն էր միայն քիչ սիրուն, կապույտ դզվող աչքերով և անմեղ մանկական ժպիտ միշտ դեմքին: Նա էլ այնքա՛ն սինձ էր ծամել, վոր ամբողջ բերանը սեվացել էր, ինքն էլ ձեռք ու վոտքով ցեխաթաթախ ու մրոտ դարձել:

Պարզ և հնամաշ կտավե շրջազգեստներ ունեին. գլուխնին ինչ վոր չթի նմանող թաշկինակի մեջ էր փաթաթած, սակայն բոլորի մազերն փոշո՞ւց թե ցեխից՝ բրդի նման կոշտացել–միմյանց էյին կպել: Ամենքի ձեռքը մի մի ճիպոտ կար, թևերի տակն էլ ուտելու բանջարեղեն— սինձ, շուշան, թրթնջուկ կամ քեղ:

Տաղին, վորին Տելոն այնքան կոշտությամբ հրավիրել էր մութն ինձ ցույց տալու, կամաց բարձրացրեց գլուխը, նայեց մեր կողմը, հետո փռթկացրեց և նորից մտավ խոտերի մեջ:

— Սա խո մեր Բաղրամի վորդի՞ն է. ճանաչեցի նրան:

— Հա՛, քյուրդ-Բաղրամի տղան ա. ասաց Տելոն ծաղրալից շեշտով,— հենց հորը պես էլ ընենց ճըչում ա, վոր կասես աքլոր ըլի...կու-կու-րի կո՛ւո՛ւ... Ի՞նչ ա ըլել, ա՛յ Տաղի... Սկի՛, յա կանչում ա թե՝ յեկեք, սնձի տեղ եմ գտել, յա թե չէ՝ մի հաստ շուշան ա քաղել. ա՛յ վոչ-փուչ ըլես դու, Տաղի՛, հլա մեկ խոսա...

— Աղա դե հերիք ա է՛է՛... ճչաց Տաղին գլուխը բարձրացնելով,— դո՞ւ ինչ ես դո՛ւ... խոզի պես՝ խըմ-խըմ-խը՛մ... թե ի՞նչ ա, քի՛թն ա վեր, քաշում սատարշինի պես... փուհ...

— Ջասի՞, չասի՞, ա՛ խալխը. բարձր ու հնչեղ քրքջաց Տելոն,— տեսա՞ք, տեսա՞ք վոնց հորը նման աքլարի պես ճչում ա...

Ապա վիզը ցցեց դեպի զայրացած Տաղին, ձեռքի սինձը ցած թողեց, թևերը թափահարեց, աչքերին խփեց ու աքաղաղի ձայնով ճչաց.

— Կու-կու-լի-կո՛ւ ո՛ւ...

Բոլորը քրքջացին. հիրավի շատ ծիծաղելի յեր այդ միջոցին Տելոյի դեմքը, վոր յերկարացել, ծաղրաշարժ գծեր էր կազմել:

— Խլնքո՛տ, խլնքո՛տ... աղաղակեց դեպի նա Տաղին:

— Փո՛ւ... արեց Արտոն,— բա ամո՞թ չի, տո ի՞նչ եք փիս շների պես իրար գզգզում:

— Դո՞ւ ինչ ես, դո՛ւ, դարձավ դեպի նա Տելոն, — վոզնի՛, քոլի՛ վոզնի...

— Վոզնի էլ ես, հլա խոզ էլ հետը...

Մոտեցի միջամտել, սակայն Քանաղը դարձավ դեպի աղջիկներն ու կանչեց.

— Ադա Թագո՛ւշ, աղջի բա չե՞ք տեսնում, ղազերը ձորն են թափվում է՛է՛...

Աղջիկները ցնցվեցին, վոտքի թռան ու փայտերը բարձրացրած՝ վազեցին դեպի սագերը, վորոնք կըչկըչալով ու խմբովին, գլուխնին ցցած՝ դիմում էյին դեպի ձորակը:

— Ա ղազը, եդ ո՞ւր եք գնում. ճչում էր մի

աղջիկ,— տո ձե՞ղ չեմ ասում... ա՛ ղաղը, ղա՛ղը...

— Ծարավ են հալբաթ. ղխտե՛ց Տելոն:

Ցեվ բոլոր մանուկները դարձան դեպի վազող աղջիկներն ու լուռ՝ հետևում էին նրանց հետապնդումներին:

Մի քանի րոպե սարալանջի վրա միմիայն սաղերի կչկչոցն ու թևերի թափահարումներ լսվեցին, հետո աղջիկների կանչերը, վորոնք իջնում էին դեպի ձորը՝ փախչող թռչունների հետ...

2

Այդ միջոցին էր, վոր խճուղու վրա յերևաց փոշու մի թեթև պտույտ, մղված Սարչենի կողմի քամուց: Հետո, միմյանց հետևից հայտնվեցին 4—5 արագավազ ձիավորներ:

Առաջին արշավողը աջ ձեռքով փայտը ծնկների վրա ցցած, չերքեզկայով յերկարահասակ անձ էր: Ծանոթ դեմք էր թվում, բայց հեռու լինելով ճանաչել չկարողացա: Կողքից քայլում էր սև չերքեզկա հագած, կիսափափախով մի նիհար ձիավոր, վոր մտրակն էր շարժում անընդհատ և խոսակցում առաջինի հետ: Նրանց հետևից գնում էր կուզ, կարտագով ու լիքը գեմքով անձ, իսկ ամենից հետո էլ յերկու ուրիշները, վորոնցից մեկը շրջանական վոստիկան զինվոր էր յերևում՝ հրացանը մեջքին, նշանագլխատով և յերկար սուրը կողքից:

— Հը՛, հը՛.. կանչեց Տելոն,— ընդե՛ մտիկ տվեք, տղե՛րք, ստարշինան, սուդիա Մուկուչը, էն մեկն էլ պխսերն ա...հլա ստրաժնիկ[1]) էլ հետները... էն ո՞ւր են գնում ըտենց քշելեն:

— Ստրաժնիկի հե՞տինն ով ա, տո... ասեց Քանաղը չոգած,— կասես քչքչան-Նիկոլն ըլի:

— Նա ա վոր կա. պնդեց Արտոն ու թփի միջից գլուխը դուրս պարզեց,— այ տղա, տեսնաս էդ ի՞նչ ա ըլել:

— Ի՞նչ պիտի ըլի. ձայնեց պառկած մանուկներից մեկը,— գնում են դեղը վառեն...

— Երեկ իրիկուն Մելիքենց տան առաջ քյոխվեն, դզիրը, Մելիքն ու Ռաքելը կռվչտորում էյին...բյալքի ընդի են գնում:

— Չե՛. արեց Տելոն,— ընդի չի ըլի. էն կռիվը ջաղացի քարի վրա էր. համ էլ բարըշեցին՝ պրծան:

— Բյալքի քչքչան Նիկոլն ա տանում դրանց... էն վոր քաղքըցին ու Նիկոլը քի՛չ մնաց իրար ծեծեյին. խոսեց Տագին,— յես տեսա. քաղքցու կնիկը ջուր էր շուռ տվել Նիկոլի օջախի մեջն ու կրակը հանգցրել. Նիկոլի ճղճղան կնիկն էլ մե՛կ ուշունց էր տալիս, մե՛կ ուշունց.. քաղքցին էլ՝ սա՛ս վոր կասես. չիլ Գայուշին ցեխը կոխեց ու հանեց...

Տագիի պատմածը իմ ծերունի ընկերոջ կռիվն էր, վոր տեղի յեր ունեցել յերկու որ առաջ, մեծ չափեր էր ընդունել և քչքչան Նիկոլի գնչվական ճիճերը ամբողջ որ զվարճացրել էր գյուղին:

— Կըլի վոր էդ ըլի. նկատեց Արտոն,— քչքչան Նիկոլը կռվի ա հենց բանդ. կնի՛կն էլ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ... մե՛կ ղարաչին ա, մե՛կ ուշունցի համրաթ...

1) Պահակ զինվոր:

Վոր աչքը, են չիլ աչքը չի՞ ծռում ու բերանը վըրվրռտացնում,— կասես ջաղու ըլի:

— Դուք սկի՛ բան չեք հասկանում, տո, ձայնեց Տելոն,— ըհը, կտենաք. էդ աստծու պատիժները դեղըն են գնում ուրիշ բանի համար: Տենաս էլի ի՞նչ զուլում են մտածել դեղը կրակ տալու... Ցաստո՞ւլը ուր են տանում բաս... Հլա պիսերը, սուդխան. փո՛ւ յես քու կաշի կտրած տրեխ յերեսիդ ի՛նչ ասեմ, սուդխա Մուկուչ. ես գիփ քո՛ բաները կըլլի... Կըտենա՛ք. նա՛ ա, վոր ոճի պես ըստի–ընդի բան ա սարքում, վոր ինչ ա՝ վոսկոր հանի միջիցն.. Տղերք, հլա մեկ իմ տավարին աչքը ածեք՝ յես գնամ դեղը տենամ ի՞նչ կա...

— Տո մի՛ գնա, մի՛... արեց Տաղին,— հերդ մեկ ընե՛նց գլխիդ կտա, վոր կարտուզը ե՛սհետ մինչև բերանդ կմտնի...

Տելոն, վոր պատրաստվում եր գյուղն իջնելու, կանգ առավ և սկսեց ծոծրակը քորել: Ըստ յերեվույթին, Տաղի խոսքերի դառն ճշմարտությունը կասեցրեց նրան:

Քանաղը ժպտելով նրան նայեց ու հանկարծ ձայնեց.

— Ցանի էլ ո՞ւր ես գնում, չե՞ս իմանում թե ալան–թալանը վոնց ա ըլում. ինքդ յանի քի՞չ ես քյոխվա ըլել...

— Հա՛ տո, արեց Արտոն,— յեկեք խաղանք էլի...

Մանուկները զվարթ ծիծաղով միմյանց նայեցին. պառկողները յելան–նստեցին, Արտոն մամուխի թփիցը դուրս յեկավ և մինչ աղջիկները սազերին յետ

դարձրած մոտենում եյին, սարլանջի վրա սկսեց կազմվել մանկական մի հետաքրքիր խաղ:

Անմիջապես Տելոն մոռացավ գյուղը, ուղղվեց ու կանչեց.

— Ցես ստարշինա...

— Ընչի՞, տո՛, գոչեց Քանաղը,— հենց ամեն վախտ դո՞ւ ես ստարշինա ըլելու... Ջե՛նք ուզում, դու փի՛ս ես ծեծում... ընենց չի՞, տղերք...

— Հա՛. եսհետ թող յե՛ս ըլեմ ստարշինա. ասաց Տաղին:

— Աղա դե ձեններդ կտրեք է՛է՛... ճչաց Տելոն,— յես ձեր քյոխվան չե՞մ ըլել մինչի որս, հը՞...

— Հա՛, հետո՞:

— Հետո էլ են, վոր եսօր էլ քյոխվությունից ստարշինա եմ ըլում... կուզենամ, հլա պրիստավ էլ կըլեմ. իմ ձեռքին չի՞:

— Փիե՛... արեց Արտոն,— ստարշինան յանի քի՞չ ա ծեծում, վոր հմի էլ ուզում ես պրիստավ կտրես գլխներիս... չե, ախպեր, վոր ըտենց ա՝ յես չեմ խաղում:

— Ա՛ խալխը, ձայնեց հանկարծ Տելոն ու սպառնալից՝ վոտնեց կանգնեց, խլեց գետնի վրայից իր ճիպոտը, կարտուզը պինդ կոխեց գլխին ու սրան–նրան նայեց— ինձ պրիստավ չե՞ք ուզում, ա խալխը...

Միանգամայն սարսափելի յեր փոքրիկ բռնավորը իր դուրս ցցած կրծքով, կատաղի հայացքովն ու բերնի յերկու չարք սևացած, գազանային ակռաներովը:

Ցերեխ բոլորն էլ վախեցան: Աղջիկները, վոր մոտեցել եյին միմյանց կպան:

— Վո՛ւյ... արեց մեկը,— կասես դել ըլի:

— Տո դել ել եմ ու արջ ել. գոռաց Տելոն,— բա ընչացո՞ւ քյոխվա եմ, ստարշինա, յա պրիստավ. Ձեր հե՛րը կանիծեմ, թե ինձ նաչալնիկ չեք արել... ընենց ոյին գնեմ գլխներիդ վոր... կթողա՞մ սկի վոր խաղաք...

Քանաղն ու Տաղին ինձ նայեցին, կարծես օգնություն խնդրելով:

— Դա՞ ինչ է, Տելո, միջամտեցի յես,— դու բռնավոր խո չե՞ս: Թող ընտրեն, ելի՛. թե քեզ ընտրեցին՝ կուզես թագավոր յեղիր:

— Ընչի՞ թագավոր. ճչաց Տելոն,— յես ամեն վախտ են ա քյոխվա յա ստարշինա եմ ըլել, ծեծոտել եմ, ո՛ւշունց տվել, փոսկոռ կերել, սրան պատժել, նրան հուպ տվել... ուզում ես վոր հմի մեկ ուրի՞շը ինձ ըտենց անի... Չե՛, թե պրիստավ ա՝ յես եմ, թե նաչալնիկ՝ ելի յես եմ... ուրիշի թողալ չեմ... ա՛րյուն կհանեմ...

— Հանդարտվիր, հորդորեցի յես,— արի՛ նըստիր կողքիս. գուցե ելի քե՛զ ընտրեն:

— Չե՛ն ընտրիլ. շա՛տ եմ յես դաղել դրանց... Ա՛յ, տեսնո՞ւմ ես, եդ աքլար Տաղին, եդ քյուրդի տղա Տաղին, համ ել եդ դորտ Քանաղը... իրա՛նք են ուզում համ քյոխվա, հա՛մ ստարշինա...

Տեսա վոր խաղը պիտի խանգարվեր, դարձյալ միջամտեցի, հորդորեցի և վերջիվերջո համոզեցի վոր վերջին անգամն ել Տելոն ստարշի՛նա դառնար, Քանաղը՝ քյոխվա, իսկ Տաղին՝ դզիր:

Սակայն հազիվ համոզել եյի ամենքին և Տելոն հաղթական՝ ատամներն եր ցցում դեպի աղջիկները— վոր սրանք ապստամբվեցին:

— Մենք չե՛նք խաղում. ասաց Թագուշը,— մենք կգնանք:

— Ընչի՞ ա՛յ աղչի. ասաց Տելոն,— վոր մեծանամ, յանի քո ստարշինան յես չե՞մ ըլելու... Ամա, ջհաննա՛մի դյոռը, վոր չես խաղում...պաշոլ[1]), գընա՛:

— Ո՛ւ, հողե՛մ գլուխդ, գի՛ժ Տելո. ճանչեց դեպի նա մի աղչիկ,— դել ես, դե՛լ...

— Դել եմ, բա՛ս... ծիծաղեց տղան,— ստարշինան վոր կա, պտի դել ըլի... չե՞ս հավանում ինձ, հրեն ա՛յ, չոսեն. պաշո՛լ դու ել...

— Կա՛ց, բռնեցի յես նրա թևիցը,— ուշունց մի տալ աղջիկներին... Յեկե՛ք, աղջիկնե՛ր, մոտս նըստեք, յես չեմ թողնիլ վոր ձեզ նեղացնի:

Աղջիկներն անշո՛ւշտ շատ եյին ուզում խաղին մասնակցել կամ գոնե ներկա լինել: Իսկույն յեկան մոտս և ուրախ՝ պաշտպանության տակը մտան:

— Ընչի՞, դարձավ ինձ Տելոն քիչ վախեցած, վոր իր իշխանությունը սահմանափակվում եր,— մաղամ[2]) դու նաչալնիկ ես...

— Վո՛չ, կատակեցի յես,—նաչալնիկից ել մեծ, գուբերնատոր[3])...

— Փի՛... արեց Քանաղը.— յանի նաչա՞լնիկից ել մեծը կա:

— Կա. գուբերնատորը:

— Ընդրանից մե՞ծը:

— Լավ, թողեք այդ. ասացի յես,— ձեր խաղն սկսեք: Յես միայն կնայեմ, վոչինչ չեմ լինի:

---

1) Կորի: 2) Միթե: 3) Նահանգապետ:

— Հա՛, էդ լավ ա․ արեց Տելոն միամտված,— բաս որ ըտենց ա, ըստի մեծը խո յե՞ս եմ...

Հետո մե՛կեն դարձավ դեպի Տաղին ու կանչեց․

— Աղա Տաղի՛, մեր հրամանն ա, վոր էս սհաթիս վեր կենաս ու վաղես սարի էն կողի վրիցը ձեն տաս, հրեն ա՛յ, չիմանըղըմը նստոտած Սրապին ու մեկ էլ տղերանցը... Թող շատ ըլեն, վոր խաղը լաղաթ տա... ըտենց չի՞ պ․ Ցերվա՛նդ։

— Դե էսքանս էլ հերիք ենք․ առարկեց Տաղին, — էլ ո՞ւր ես սաղ դեղը գլխիդ թափում։

Տելոն ամբողջ մարմնով շուռ յեկավ դեպի նա, աչքերը վոլորեց ու փայտը այնպե՛ս սպառնալից բարձրացրեց, վոր Տաղին վախիցը յետ վոստնեց։

— Ա, շան տղա․ գոռաց նրա վրա Տելոն,— դու ընչացո՞ւ ես վոր հրամաններիս ջուղաբ տաս․ դու գլխի՞ր ես, թե՛ պրիստավ... ուզո՞ւմ ես, էս սհաթիս կաշիդ քերթեմ... ըստի քեզ գլխիր են դրել, վոր սարչինի դեմը դողաս, հալվես...

— Ո՛ւյ... արջն ա, խա՛նը, մեչի արջը... մըռմըռաց աղջիկներից մեկը կծկվելով ու կպնելով ընկերուհուն։

— Էն ո՞վ ա վոր սարչինին արջ ա ասում․ վորոտաց Տելոն,— կջնջխե՛մ...

— Այդ չեղավ․ Տելո․ դարձյալ մեջ մտա՛ յես,— շատ վատ սկսեցիր․ վոր այդքան գոռաս, էլ ձեն չի մնա վրադ... Համ էլ աղջիկներին հանգիստ թող։

Տելոն նայեց ինձ, ժպտեց, հետո նորից դայլային դեմք ստանալով՝ քայլեց դեպի Տաղին ու կանչեց․

— Հըլա կանգնե՞լ ես...

— Ո՛ւ, ո՛ւ, յես քու... արեց Տաղին ու գնաց դեպի բլուրը։

— Վոր շատ ըլենք, ղորթ ա, լավ կըլի․ ասաց Քանաղը,— թող յես էլ գնամ կանչեմ...

Ապա յելավ մի քարակույտի վրա, դեմքը դարձրեց դեպի մյուս սարալանջն ու սկսեց ձայնել խուլ, կարծես փորիցը դուրս յեկող ձայնով։

— Ե՜ է՛յ... է՛յ Սրապիոն․ Սրա՛պիոն, Սրապիոն ե՛է՛ է՛յ...Գրիգո՛ր, ա՛յ Գրիգոր, է՛յ Գրիգո՛ո՛ո՛ր...

Լեռնային կոչի այդ ձևը, վոր լավ յուրացրել եր Քանաղը, մոտից թեև հնչեղ չեր, բայց այնքան հաջող յելեվեջներ (intonation) ուներ, վոր գնալով աճում եր, ալիքների մղման նման զորեղ ցնցումներ գոյացնում, թրթռում եր օդի մեջ ու միմյանց բաղխելով՝ մեծանում եր հեռուներում։

Անշո՛ւշտ լսեցին այնտեղ․ մանավանդ վոր Տաղին էլ մագլցել եր ամենաբարձր կետի վրա և յելեվեջների ուրիշ տեսակ կոչ եր իջեցնում դեպի սարալանջը։ Այդ կոչն էլ իր ինքնատիպ ձեն ուներ։ Սկսում եր խորին բամբով, խաղերը հատ հատ՝ մղում եյին միմյանց, դողաձև մասում բաղխվում և զորեղ ալիքներով հասնում նպատակակետին։

Մինչ այդ, Տելոն թողել եր դահը, գլխարկի տակից ինչ վոր խոշոր դանակ եր հանել և նրանով մամուխի թփից կտրում եր բավական խոշոր ճյուղ։

Ձեռքերի ուժն եր ավելի կտրողը։ Վոլորեց ու կեղեվը պոկ տալով՝ հաջողվեց ունենալ դալար ճիպոտ։ Մաքրեց փշերից, կոշտերից, մի քանի անգամ նրանով օդը ծեծեց ու ասաց․

— Լա՛վ ա...

— Ի՞նչ պիտի անես. հարցրի յես:

— Ղամչի ա: Ստարշինան առանց ղամչու՝ վո՛նց վոր եշը առանց փալանի...

— Ե՛յ, կանչեց մանուկներից մեկը,— տե՛ս, վոր պինդ ես խփել, կղնքսենք քեզ հա՛ա՛... Եվ հերիք ա. ընենց վրա ես տալի, կասես ղորթանց հենց ստարշինա ըլես:

Տելոն բարկացած նրա կողմը դարձավ:

— Աղա սա՛տկած Կարո, ձայնեց նա,— վոր չըխոսաս, չի՞ ըլիլ. չես ուզում խաղալ— հիմիկանց պոշոլ... հրեն ենքան տղերք կան, վոր սկի լայեղ էլ չեմ անի ղամչուս ծերը քեզ կպցնի...

Ստվերն սկսում եր կարճանալ. ամենքս քիչ առվելի վեր քաշվեցինք ու տեղավորվեցինք խոտերի մեջ:

Մանուկները կանգնել՝ սպասում եյին մյուսներին: Տաղին ու Քանաղը վերադառնում եյին:

3

Բոկոտն ու կիսամերկ, աղտոտ, այրված, սնդիկի պես շարժուն և աշխույժ՝ միմյանց յետևից, գրեթե գլորվելով եր, վոր 5—10 րոպեյից հետո, ամեն կողմից ժողովվեցին մեր նստած տեղը:

Անպատճա՛ռ մի-մի ճիպոտ ձեռքներին, շատերը քեզ ծամելիս, մի քանիսն էլ մաստակ՝ փռվեցին խոտերի վրա: Տելոն նրանց մեջ տեղում կանգնած՝ ըսպասում եր վոր սարալանջերից դեպի մեզ վազողներն էլ հասնեյին:

— Դե՛հա, դե՛հա... անում եր նա,— աղա վազեք ե՛ե՛...

Ու գալիս եյին: Քիչ հետո, համրեցի մինչև քըսան մանուկ՝ զանազան հասակի— 10-ից մինչև 15 տարեկան:

Ամենքը նախ զարմացած՝ ինձ եյին նայում, հետո իրար մոտենում փսփսալով: Անշուշտ իմ ներկայությունը տարօրինակ եր իրանց. ի՞նչ կար, ինչո՞ւ եյի յեկել և յե՞ս եյի արդյոք ձայն տվողը:

Տելոն կցկտուր ու բարձր հայտնում եր յեկողներին, վոր «պ. Յերվանդը հենց ընենց, յեկել ա տենա թե մենք վո՞նց ենք տավարը պահում». կամ— «աղա՛, դե ի՛նչ կա, յեկել ա՝ յեկել, խո մեզ չի՞ ուտելու». և կամ— «դե լավ ա, ղոնաղ ա յեկել. մենք էլ մեկ որ նրա բաղը կերթանք, մեզ սեմիչկա[1]) յա քյալամի կոթ կուտացնի... ընենց չի՞, պ. Յերվանդ»:

Ու այսպես, ամենքին ժողովում եր չուրջը, բացատրում, վոր խաղ կազմեն:

Քիչ հետո, յերբ բավական վիճել ու գոռգոռացել եյին, խաղն սկսեցին:

Տելոն ու Քանաղն յեկան մոտս նստեցին, մանուկները ցան ու ցրիվ յեկան, նստոտեցին, կանգնած մնացին, ու Տաղի՛ն, վոր գզիրն եր, փայտը ձեռքին ման եր գալիս ամենքի մեջ:

— Աղա ե՛յ, քյո՛ւրդ Տաղի, ձայնեց մեկը,— ինձ չբռնես, թե չէ, աստված ա վկա, գեղամիջում կըբռնեմ ընե՛նց մեկ կտամ, վոր սաղ որը վնգստաս...

— Փիե՛... արեց Տաղին,— եդ յանի խա՞ղ էլավ... Վորին ասին՝ բռնելու եմ:

---

1) Արևածաղկի սերմ:

— Վոր բռնես ու գլխի հալովէ լավ ծեծ ուտես, վո՞նց քեֆիդ կգա. ծիծաղեց մեկը:

— Գլխի ա,— նկատեց մի ուրիշը,— գլխին էլ կբանփաչեն, ձեռքն էլ կկոտրեն... Պիտի դիմ'անա...

— Չե՛, ա՛խպե՛ր, ասեց Տալին,— թե թափվելու եք ծեծեք, են ա՛, չխաղամ:

— Աղա բա՛նիդ կաց, բանի՛դ... կանչեց նրան Տելոն,— մադամ ստարշինան մեռե՞լ ա, վոր դղրին ծեծեն...

Հետո աչք ածեց բոլորին, շոկեց իրան, նայեց ինձ և յերբ գտավ վոր ամեն ինչ տեղին եր ճչաց.

— Մի քիչ ղրաղ քաշվեք, ա՛յ աղա... Ով ուզում ա դանդատավոր ըլի՝ թող մեյդան գա:

Արևը հետզհետե բարձրանում եր բլրի յետևից, ստվերը քաշվում-կարճանում: Տեղներից սակայն չշարժվեցինք: Հովանոց ունեյի. բացի, թիկն տվի խոտերի վրա, գլխս կողմից արևի ճառագայթների դեմն առի և այնուհետև լուռ՝ միմիայն հանդիսատես մնացի մանուկների խաղին:

Յերեք-չորս հոգին մինչ այդ, միմյանց մոտ յեկած, ըստ յերևույթին պատրաստում եյին դանդատի նյութը. իսկ Տելոն և Բանաջը պաշտոնական դիրք ստացել՝ նայում եյին հպարտ, մտնում իրանց դերի մեջ: Նույն իսկ, կատարյալ լինելու համար, մանուկը սկսեց իսկական ստարշինայի ձևերն ստանալ — կկոցել աչքերը, քիթը վեր քաշել, ձեռքի ճիպոտով, իբր մտրակ, վոտը ծեծել:

— Բո՛ւ, ա՛յ տղա. գոչեց հանկարծ Տելոն, պահ

մի տեղից դուրս գալով,— բա պխե՞րը... ըտենց էլ բա՞ն եք տեհել. մոռացել ենք պխերը:

— Ես մեկ անգամն էլ թող պխեր չըլի. նկատեց Բանաջը:

— Վո՞նց... չե՛, ստարշինան առանց պխերի, վոնց վոր ավազակը՝ առանց թվանքի... Ա՛յ, Պետի՛ն թող ըլի պխերը...

— Հա՛, հա՛, Պետին թող ըլի... ձայնեցին ամենքը ծիծաղելով և դարձան յեկվոր մանուկներից մեկին, վորի վրա մինչև այդ՝ ուշադրություն չեյին դարձրել:

Տասնամյա, դուցե քիչ ավելի տարիքով մի շուտիկ եր այդ, վոր շատ հիշեցնում եր շարժուն միմիկա ունեցող լուրջ կոմիկի: Կարծես ահա բերնիցը մի սրախոսություն պիտի դուրս թռներ, ինքը— ասողը չպիտի ծիծաղեր և լսողները պիտի թուլանային:

Հագածից մինչև կեցվածքը՝ ծիծաղաշարժ եր: Մի կարճ, կտրտված արխալուղ, վրայից՝ խոշոր ծակերով յերկար, մինչև գետին հասնող լայն չուխա (անշուշտ հորդեն ձգածներ), գլխին ահագին գդգըդված, հողոտ ու աղտոտ փափախ, վոր նա ցցել եր ծոծրակի վրա և հաջողվում եր պահել այնտեղ: Կոշիկ չուներ. մի ինչ վոր կասկածելի գույնով շորի կտոր, վարի կողմից ատամնաձև ցնցոտիացած՝ վարտիքի տեղ եր ծառայում նրան:

Արտակետոնը դեմքն եր. այնքան խորամանկ հայացք կար աչքերի մեջ յերբ նրան հայտնեցին թե պխեր եր դառնալու, վոր մոռացավ մանուկ լինելը: Հոգին ամբողջ գծված եր ակնարկի ու բերանի շուրջը:

Երբ ամենքի ուշադրությունն իր կողմը դարձավ, նախ շրթունքները յերկարացան, հետո դեմքը, և կանացի զիլ ձայնով կանչեց.

— Հըա՛... քյաչալ Տելոն սատրչինա, գիժ Պետին. էլ ովխե՞ր... եդ խո հոգի՛ չենք թողալ. սաղ գեղը կվառենք...

— Դո՛րթ, տո՛. ասաց մեկը,— ես յերկուսը վոր իրար յեկան՝ մեզ կդաղեն...

Բայց «գիժ Պետին» ընդունել էր առաջարկը: Թեվքի տակ կոխած ցուպը հանեց ուսին դրավ, գնաց դեպի Տելոն ու ասաց.

— Դա՛րուլ, յես պի՛սեր. ի՞նչ ես տալու ամսական:

— Յերկու սիլլա[1]), հարյուր դամչի[2]), տասը քացի... ելա՞վ:

— Ելավ...

Ու նստեց, փայտը կողքին դրեց, մի լայն տերև ընտրեց խոտերից, քաղեց, յերկար փայտի կտոր էլ գրիչ շինեց և վորպես թե գրում էր, կանչեց.

— Հայդե՛ր, գոլովա[3])... Ո՞վ ա գանգատավորը:

Յերեք մանուկներ, վորնք քիչ առաջ միմյանց հետ խորհրդակցում եյին— առաջ յեկան, ժպտեցին, ծիծաղեցին և վերջիվերջո նրանցից մեկն ասաց.

— Վո՛ղջ կենա գոլովա աղան, յեկել ենք խընդիրք անենք...

Տելոն ավելի ծանրակշիռ դեմք ընդունեց, ուռեց, փքվեց, նրանց նայեց խստությամբ, աչքերը կկոցեց ու ասաց.

---

1) Ապտակ: 2) Մտրակի հարված:

3) Գլխավոր, սատրչինային այդպես էլ են կոչում հաճախ:

— Հը՞, ի՞նչ կա... ո՞ւր ա խնդիրքներդ, տ՛նանք...

— Խնդիրք չենք գրել. տերտերը հարբած եր, տիրացուն էլ այբը տեսնելիս՝ վոնց վոր գիժ հաց կերած...

Գիժ Պետին, վոր փայտի-գրչի ծայրն էր թքոտում անընդհատ— նման իսկական պիսերին— մեջ մտավ, ձեռքը պարզեց դեպի նրանց ու խորամանկ ժպիտով ասաց.

— Դես տվեք խնդիրք գրելու փողը՝ առանց խնդիրքի էլ յոլա տանենք... ըտենց զակո՛ն կա:

— Ըտենց զակո՞ն կա... քիթը վեր քաշեց Տելոն,— բաս հանեք մեկ-յերկու մանեթ տվեք ու առեք խնդիրքներդ:

Գանգատավորները, վոր սկզբից գիտեյին թե սատրչինայի մոտ առանց փողի գնալ չեր կարելի— մի բուռը տերևներ եյին ժողովել ձեռքներում. յերկու հատը հանեցին և պիսերի պարզած ափը դրին:

— Յերկուսը քի՛չ ա. ասաց Պետին,— վոլոստնի պիսեր եմ յես, ձեր հարբած տերտերը յա քու տիրացուն չեմ... յերկուսն էլ տվեք...

— Վա՛, չորս մանե՞թ, կանչեց գանգատավորներից մեկը,— եդ խո ջիլս թա՛լան ա...

— Զենդ.. կանչեց նրա վրա սատրչինան,— զակոնի դեմ ջուռաթ չանես[1]) խոսալը... Զակոնը վոր կա (քիթը վեր քաշեց), զակոն ա... (աչքը կկոցեց) ու էլ՝ հետ վոր զակոնը զակոն ա, (քիթը վեր քա-

---

1) Չհամարձակվես:

չեց) պիտի պահենք ու կատարենք... իմացա՞ք, ա՛ չան ողերք... կզա՛ղեմ թե չեք իմացել...

— Իմացանք, վո՞նց չիմացանք, գո՛լովա... Զակոնը վոր կա՝ զակոն ա...

— Զակոնն էլ՝ է՛լ հետ զակոն ա...

— Հրա՛մանք ես...

— Սրանց խնդիրքը գրի՛ր, պիսե՛ր:

— Ես ահաթիս... Վորի՞ցն ա ձեր գանգատը:

— Զորս հողուց:

— Փիե՛... արեց Քանալը,— ի՞նչ խաբար ա, տո՛...

— Դու ըստեղ հլա ձեն չունես, քյոխվա՛. ասաց նրան Տելոն,— հլա գործը քեզ չի հասել:

— Ի՞նչն ա շատ. նեղացավ պիսերը,— պտի է՛լ շատ հողի ըլեր՝ վոր ղալամս յեղա՛լեն գրեր... Ասեք, վո՞րից եք գանգատավոր:

— Շուն-ուտողենց Սաքոից... Գորտ-ծեծողենց խող Կարապետից...

Ընդհանուր ծիծաղը՝ բարձրաձայն քրքիջի փոխվեց:

— Կա՛ց, կաց... ընդհատեց պիսերը, վոր փաշտը արադությամբ, ծայրը միշտ թքոտելով՝ շարժում էր ծնկան դրած լայն տերևի վրա:

— Են մեկալոնքը չասե՞նք. հարցրեց գանգատավորը:

— Վո՞նց չէ... Կարաս՝ հլա մեկ-յերկուսն էլ ավելի ասա... Ամա կամաց ասա, վոր գրեմ... խող Կարապետը... Դե հմի ասա, հետո՞...

Սկսում էր զվարճալի դառնալ: Այնքա՛ն ճիշտ նոյին պատկերացնում իրականությունը, այնքան նման

շարժվածքներ, ձայն ու միմիկա եյին ընդունել փոքրիկ դերասանները, վոր քրքիջներին վերջ չկար:

Գանգատավորները ծոծրակներին եյին քորում, գլխարկները մե՛կ թևի տակ, մե՛կ գագաթի վրա դընում, մե՛կ վախեցած ձևացնում իրանց, յերբեմն ապուշի դեմք ընդունում և ապշության դիմակի տակ՝ կողմնակի աչք թարթում, խորամանկ ժպիտներ ցույց տալիս հանդիսականներին...

— Գրի՛, արեց մեկը,— գանգատավոր ենք Սման-լպստողանց քոռ Աբշակից, Տրեխի-կաշի գոմեշանց Արամից, Արաղի-բոչկենց Ստեփանից...

— Եդ խո հինգն ելավ... նկատեց հանդիսականներից մեկը:

— Քու ի՞նչ բանն ա. բարկացավ նրա վրա ստարշինան,— կուզի՝ թող տասը ըլի:

Իսկ պիսերը մի խեթ հայացքով շանթահարեց խոսող մանուկին և ասաց գանգատավորին:

— Ելի՞ կա... Դե հերի՛ք ա, միտս չի մնալ:

— Ցանի մաքումդ ո՞ւր ես պահում. խոսեց կծու հեգնությամբ գանգատավորներից մեկը,— են ա գըրել ես էլի...

— Կըլի վոր կարանդաշը[1]) կոտրվել ա՝ չի գըրում. ծաղրեց մի ուրիշը:

— Ձեր հո՛րն վողորմի. ասաց պիսերը,— հրես կարդամ՝ տես վո՞նց ա գրում... Շուն-ուտողանց Սաքոն... ես վրա մեկը... Ստարշինա, մեկ մատդ ծալի... ծալեցի՞ր... Հը՞, վո՞նց ա... կարանդաշ

---

1) Մատիտ, ռուսերեն բառ է

կո՞տրած ա... Արաղ-կոնծողանց Սանիվանը... Ն՛ա վրա յերկուսը...

— Հա՛, հա՛, հա՛... քրքջացին ամեն կողմից,— կարանդաշդ կոտրած ա, Պե՛տի... ըտենց մարդ չկա...

— Բաս վոր ասո՞ւմ ի․ արեց գանգատավորը ծաղրալից և խոնարհ,— կարանդաշը վոր մի քիչ թքոտեյիր՝ ըտենց չեր ըլիլ: Արաղի-բոչկենց Սանիվանն ա․ հա՛մ էլ, էդ վրա հի՛նգն ա, յերկուսը չի...

— Կա՛ց, կա՛ց, չխոթմվելուց բարկացավ պլխերը,— վո՞նց թե... թող մեկ տեսնե՞մ... Ամա հա՛, տո՛... մթնել ա՝ աչքս չի տեսնում... վրա յերկուսը՝ Գորտ-ծեծողանց խող Կարապետն ա... Ըլա՞վ...

— Ըլավ:

— Ստարչինա, բաս մեկ մատդ էլ ծալի... Հմի, աղիս ասեմ, վրա յերեքը՝ Աման-լպստողանց քոռ Արշակը... Մատդ ծա՞լում ես, դուրմա: Վրա չորսը՝ Տրեխի-կաշի գոմեշանց Արամը․ ես մեր փոչ-փուչ Արամն ա... վրա հինգն էլ Արաղի-բոչկենց Տեփանը... Վո՞նց ա, կարանդաշս կո՞տրած ա...

Ու փքված՝ ծիծաղեց:

— Ե՛տ ա, կարանդաշը լավ ա գրել:

— Գանգատներդ քանի՞ մանեթի ա․ հարցրե՞ց ստարչինան:

— Մանեթի բան չի, դուրմա...

— Փիե՛,— արեց ստարչինան,— էդ ի՞նչ գանգատ ա, վոր փող չկա մեջը... Մենք ըտենց գանգատ չենք ընդունում․ ընենց չի՞ պի՛սեր, առանց փողի՝ գալոնը չի բանի...

— Ըտենց ա, դիտեց պլխերը,— ամա կաց տեսնենք, կըլի վոր մանեթի ճոտը[1] յերևա...

— Հլա ասեք տեսնանք, աչքը կկոցեց ստարչինան:

Գանգատավորներից մեկը ավելի մոտ յեկավ, գլխարկը թևի տակն առավ, պահ մի ծոծրակը քորեց, հիմարի պես ժպտելով նայեց սրան-նրան, հետո խղճալի դեմք ընդունեց հանկարծ ու ողբողորմ ձայնով սկսեց․

— Յերեկ իրիկուն չոլումը մեր տավարն եյինք արածացնում, մե՛կ էլ տեսանք էդ չան տղերքը հարբած՝ Քարկողից են գալիս...

«Բարիկուն»— «Աստծու բարին»... «Ա՛ չան տղե՛րք, ես ո՞ւր եք տավարը վեր թողել մեր հարոցները»[2]... «Փի՞ե, ինչի՞ պիտի սա ձեր հարոցը ըլի․ սա կուլտո՛ւողանց հարոցն ա»...— «Ա՛ չան տղերք, դուք չե՞ք իմանում վոր Կուլտավող աղեն մեզ դոռուղչի[3] ա դրել... Ու տո՛ւր վոր կտաս․ փետները քաշեցի՛ն․ մեզ մի լավ դնգսեցին... իրանք էլ ծծաղում եյին... էլ կնի՛կ, էլ՝ հո՞ր գեռռը... մի լավ ջարդ ու խուշ արին ու ծիծաղելեն գնացին... Բա աստված վեր կառնի՞, վոր էդ հարբած չները մեզ ծեծեն...

— Կա՛ց, կաց, տո՛... աչքը բարկությունից կկոցեց ստարչինան— ո՞ւր եյիք բաս ձեր տավարը Կուլտավող աղի հարոցները վեր թողել, ա՛յա...

---

1) Ծայրը:

2) Խոտանոց. դաշտ, ուր խոտ են աճեցնում և կամ հատուկ պահպանում են, ձմեռվա խոտի պաշար հավաքելու համար:

3) Դաշտերի պահապան:

— Դե ի՞նչ անեյինք, տավարը քաղցա՜ծ, խոտ չկար... հա՞մ է՛լ ախր նրանց ի՞նչ բանն էր... սո՛ւտ էյին ասում թե ղոլուղչի են... հարբել էյին, լակել Ֆարկողումը. Մեղրոտ Գիղոլի հետ չան նման լակել...

Բարձրացավ ընդհանուր քրքիջ: Մեղրոտ Գիղոլ ասելով՝ գանգատավորը ստարշինային էր ակնարկում: Ամենքը կռահեցին:

— Ու՞մ, ում հե՞տ... դեմքը կնճռեց ստարշինան:

— Մեղրոտ Գիղոլ չան տղու հետը...

— Աղա եդ ո՞վ ա. վոր յես չեմ ճանաչում... ճչաց ստարշինան— դու գիտե՞ս, պխե՛ր...

— Վո՞նց չէ, գոլովա՛, եդ մի շունն ա, վոր սկի ոյաղ չի ըլում. վողջ օրը հա՜րբած, խոզի նման թավալ-թավա՜լ. ընենց հարբում ա, վոր կնի՜կն ա շորերը հանում ու մի չուլի տակ քցում՝ վոր մրսիի...

— Փի՜... արեց ստարշինան— եդ ի՞նչ խոզն ա, տո՛... Ամա դե՛ եդ թող մնա հլա... հա՛ (դարձավ նա դեպի գանգատավորը) բաս ասում էս էն չան տղերքը...

— Մեզ լա՜վ գլխկեցին, ուշունց տվին...

— Եդ հե՜չ... ծեծել են՝ թող ծեծեն, հմի քա՞նի մանեթի ջառմա[1]) էք ուզում վոր կապենք:

— Ջա՞սի. ծիծաղեց պխերը— հրեդ այ, մանեթների ճոթը յերեվաց...

— Հա՛ չատ... խոսեց գանգատավորը— ընե՛նց գլխկեցին, վոր հա՛րուրն էլ քիչ ա...

1) Տուգանք:

— Ամեն մե՞կիցը...

— Թող ըտենց ըլի, մեզնից ի՞նչ ա գնում վոր...

— Գրի՛, պի՛սեր... հինգ հարուր մանեթ...

— Բա իրանց չե՞ք բռնոտել տալու:

— Վո՞նց չէ... մի լա՛վ էլ կղնքսենք... Ամա խո գիտե՞ք զակոնը... Պտի դուք էլ 50 մանեթ տաք:

— Վո՞նց տո... մե՞նք ընչի պիտի տանք:

— Զակոնն ընենց ա, 500 մանեթի ծախսը 50 մանեթ ա... եդ փողին վո՞նց են ասում, պխեր:

— Վո՛սկոռ... արեց պխերը միշտ դրելով իրը թե-վո՛սկոր են ասում, գոլովա՛...

— Տո չէ, չէ՜, եդ հայերենն ա, բաս զա՞կոնը վոնց ա՛ ասում. վո՞նց պխեր էս, վոր միտդ չի:

— Բու... ձայնեց Պետրին—ընչի՞ միտս չի. օխտը հազար զակոնի գրքերը հրեն փորումս, բա ե՞դ էլ չիմանամ... զակոնը. եդ վոսկոռին ասում ա «արուն»...

— Եդ խո հայերեն ա. նկատեց Ֆանազը—յանի թե արուն, վոր կտրեն՝ արուն ա գալիս...

— Ա՛յ թե գիտես հա՜... ծիծաղեց պխերը— էն վոր կտրում են, էն ա՛րուն ա, էս՝ արու՛ն ա... ա՛րունը ուրիշ, արո՛ւնը ուրի՛շ... Ձեր խելքի բանը չի զակոնի խոսքերն իմանալը...

— Ինչ վոր ա... միջամտեց ստարշինան— 50 մանեթ պտի տաք... տաս մանեթ էլ մեռ՛րհի փող, մի-յերկու մանեթ էլ փրավլենու[1]) ծախսը... տվեք տենա՛նք...

1) Վարչություն:

Գանգատավորները սարսափահարների դեմքեր ընդունեցին և միմյանց նայեցին։

— Փի՜.. ձայնեց մեկը— համ ծեծը ուտենք...

— Նրանք էլ ծեծ կուտեն. վրա տվավ Տելոն։

— Համ էլ փո՞ղ տանք...

— Նրանք էլ կտան։

— Մե՞զ կտան։

— Վո՞նց չէ, ծիծաղեց պիսարը— ջառման փող կա՝ խազնինն¹) ա, ձեզ նրանից մի կոպեկ էլա չի հասնի։

— Բաս մե՞ր 50 մա՞նեթը...

— Է՛ն էլ խազնին կերթա... թե չնաց...

— Բա ըտենց բա՞ն եք տեհել, ա՛ խալխը... ճչաց գանգատավորներից մեկը —չե՞նք ուզում, էլ գանգատավոր չենք...

— Վոնց թե չեք ուզում, գոռաց Տելոն— տո զակոնին ձե՞ռք եք առել. զակոնի ձեռքը վոր ընկաք, էլ ազա՞տում ունի՞ք. պիսարը վոր գրեց՝ պրծավ... էլ հմի ուզեք—չուզեք՝ դուք էլ եք զակոնի ճանկն ընկել, նրանք էլ... փողը պիսի տաք... իմա-ցա՞ք....

— Տո իմացա՛նք, իմացա՛նք... ամա դե չե՛նք ուզում էդ զակոնը...

— Ձե՛նդ, հարամզա՛դա, վո՞նց ես ջուռաթ անում... հանեք շուտ 50 մանեթն ու ռա՛դ ըլեք... հանաք—մասխարու՞թյուն ա... Պիսե՛ր...

Սոսկալի յեր այդ միջոցին «օրենքի հսկողը». աչքերը վոլորում էր, քիթն ավելի շուտ-շուտ վեր

1) Պետական գանձարան։

քաշում, ձեռքի ճիպոտով վրան ուժգնությամբ ծեծում։

— Հրամայե՛ր, սարըշինա՛...

— Պրեդպիսանի ¹) ղրի քյոխվին, վոր առաջ է՛ս չան տղերանցից բռնի 100 մանեթ առնի, հետո էլ է՛ն հարբաններին բռնոտի, ձեռքն ու վոտքը կապի ու մեր հրամանոց դիվանխանեն ղրկի...

Ամենքը լուռ էյին, գանգատավորները կծկված՝ մի կողմն էյին քաշվել, իսկ Քանաղը ուրախ ժպիտ դեմքին՝ շարժվեց տեղից ու սրան-նրան նայեց։ Հերթը իրա՛ն էր գալիս այժմ։ Տալին իսկ առաջ յեկավ, բեմ դուրս գալու ժամանակն էր։

Պետին իր փայտի ծայրովը մի քանի բան խազ-խզեց տետրի վրա ու տվավ Քանաղին։

Սա դեմքը կնճռեց իսկույն, գլխարկը յետևից առաջ բերավ, ուշադրությամբ նայեց տետրին, մի «հը՛մ» արձակեց, վոտքի յելավ, չուխի ծայրերը ժողովեց ու խիստ դեմքով կանչեց.

— Է՛յ, գզի՛ր...

— Հրամայե՛ր, քյոխվա։

Ճի՛շտ Դուզանի գզիրի նման՝ յերկար փայտ ձեռքին, կծկված, ամենատխմար դեմք ընդունելով և ժպտուն՝ առաջ յեկավ։

— Ես սհաթիս, կանչեց նրա վրա Քանաղը—գե-ղամեջ կերթաս, մեկ-մեկ ձէն կտաս էդ հարբաննե-րին, վոր ես նմուտխ²) մեր հրամանոց դեմը դուրս գան... գանգատավորներ, ազա, 100 մանեթը մինչև

1) Հրաման։
2) Բոլոր։

եղուց կբերեք՝ կբերեք, չեք բերի՝ էլ տավար չեմ թողալ գոմերումդ... Գնա՛, գլի՛ր...

— Հինգ հոգուն էլ կանչե՞մ, քյոխվա՛։

— Հինգին էլ։

— Բա որ ինձ դնքսե՞յին։

— Թող հլա մեկ դնքսե՞ն... ընե՛նց ջարդ անեմ, որ սաղ տարին քաղցած պկռտան։

— Բա իմ ջի՞բը ինչ կմտնի։

— Գնա՛, չա՛ն տղա, կարաս, ջիրդ լցրու. թե քոթակ էլ տան՝ գլխր ես, պիտի դակոնի հրամանը կատարես։

— Բա որ չգա՞ն, քյոխվա...

— Տո յես էլ հենց էն եմ ուզում որ չգան է՛, է՛...

Տաղին ծոծրակը քորեց քիչ ու մտավ մանուկների մեջ։ Իրարանցումն ընկավ։ Խաղը կենդանանում էր։

4.

Ասպարեզը դեռ գլխրինն էր։ Նրա խղճիցն ու ճարպկությունից էր կախված գործունեության ձևը։ Պիտի ասել, որ Տաղին պատվական, «ամենալավ տեսակի» գլխր հանդիսացավ. ոչի՛նչ չխնայեց, ո՛չ ոքի չխնայեց։

Համարձակ գնաց ամենավերջին մանուկներին, կանգնեց նրանց առաջն ու գոչեց.

— Աղա՛, էյ, Աման-կլպստողանց քոռ Արշակ, քյոխվեն քեզ կանչում ա, վե՛ր կաց... Դո՛ւ էլ, Տըրեխի-կաշի Արամ, քեզ էլ ա ուզում, Արաղի-բուչկենց Տեփա՛ն...

— Վա՛յ, ձայն տվավ առաջինը—հենց մե՞զ տեսար, ա՛ չան տղա...

— Ուշունց մի՛ տալ դակոնի հրամանը կատարողին, ճչաց ներշնչաբար Տաղին— վե՛ր կաց գնանք։

— Չի՞ ըլի Տաղին. ասաց յերկրորդը— չի՞ ըլի, որ գնաս ասես թե գեղումը չեն, չգտար...

— Վո՞նց կըլի, աղա, քյոխվեն կաշիս կպլոկի։

— Տո գնա ասա քաղաք են գնացել, է՛լի...

— Չի՛ ըլի, չէ՛, վե՛ր կացեք... Դո՛ւ էլ, Շուն-ուտողանց Սաքո... Դո՛ւ էլ, գորտ-ծեծող Կարապետ։

Հինգ մանուկների մի առ մի մատնանիշ արավ և նրանք, ըստ յերևույթին, ընդունեցին խաղը։ Ամենքը ծիծաղում էյին։

— Յես չեմ ուզում, կո՛րի գնա. ասաց մեկը։

— Ցանի եդ խա՞ղ ելավ. ասեց Տաղին դերից դուրս գալով։

— Տո յես չեմ Սաքոն, հրեն այ, նրա անունն ա Սաքո։

— Աղա՛, յանի յես քո՞ռ եմ. հենց դո՛ւ ես, որ կաս շուն-ուտողանց Սաքոն... վեր կացեք ասում եմ ա՛ե, թե չէ, էն աստվածը, կերթամ կասեմ թե չեն գալիս...

— Փիե՛, արեց մեկը— գալիս ենք, գա՛լիս, հ՛ը... ա՛յ յես քու քյուրդ Տաղի ասողին հա՛...

— Աղա՛, յեկեք առաջ սրան մի լավ դնքսենք. առաջարկեց մեկը։

— Ի՞նչ, յետ քաշվեց գլխրը բավական վախեցած — դակոնի հրամանը կատարո՞ղին։

— Տո զա՛կոնս վորն ա, յանի չե՞նք իմանում վոր հոգիներս հանելու եք... ինչի՞ ա կանչում քյոխվեն:

— Ծեծել եք Սրապին, Մուկուչին, Գաբոին...

— Սուտ են ասում, մենք սկի նրանց յե՛րեսը չենք տեսել:

— Ես իմ բանը չի. արեց Տազին—սարչինան թուղթ ա գրել, վոր քյոխվեն ձեր ձեռքն ու վոտը կապի՝ ղրկի գավառխանեն, Բարկող:

Յեվ մինչ բացատրում էր, հանցավոր համարվողներից մեկը վոտի յելավ, մի կողմը քաշեց գզիրին ու ժպտալով ասաց.

— Ձի՞ ըլի, Տազի, վոր մի-մի բան տանք քեզ ու ռադ ըլես գլխներիցս... ըհ՛ը, մի մանեթն ինձանից:

— Փի՛, վո՞նց կըլի. ասաց գզիրը խորամանկությամբ — բա գնամ ի՞նչ ասեմ քյոխվին... համ էլ, ա՞րժի մի մանեթի համար...

— Տո ըհ՛ը, յերկուսը տամ:

— Չէ՛, Կարա՛պետ, ինձ փորձանքի մեջ մի գցիլ:

— Տո ասա հիվա՛նդ ա, մեռնում ա, յա թե չէ Կարապետը հրեն չոլումը... մի բան գտի է՛լի... յե՛րեք մանեթ կտամ:

— Չէ՛, չէ՛, արեց գզիրը քիչ կակղացած, սակայն գլուխը յերերցնելով—վոր գեղումը չըլեյիր, յա Սարչեն, Հա՛սար գնայիր... յերեք մանեթն ի՞նչ զատ ա, վոր ի՞զուր քյոխվի ուշունցներն ուտեմ...

— Ազա՛, ի՞նչ գելն ես... բա ուզածդ ի՞նչ ա, վոր պոկ գաս յախիցս:

— Դե յես ի՞նչ եմ ասում, Կարապետ, վեր կաց

գնանք ու սկի՛ մի կապեկ էլ մի տա... Հինգ մանեթն էլ հլա քիչ ա էն ուշունցների համար, վոր պիտի լսեմ... Մեկ էլ տեհար զամչին հենց վրա բերեց վո՞ր...

— Փո՛ւ յես քու... տո բաս հինգ մա՞նեթ ա ուզածդ:

— Չէ, մեղա՛ աստծու, յես սկի կա՛պեկ չեմ ուզում, վոր գաս գնանք. հազըր հինգ մանեթը ջբումըդ կմնա:

— Տո գի՛տում եմ, գի՛տում, քյուրդի լակոտ... ըհը 5 մանեթը, յախես բաց թող...

Գզիրը յերեսը շուռ տվավ ու ձեռքը պարզեց: Կարապետը նրա բռան մեջ իբր փող՝ մի տերեվ կոխեց: Տազին ծուռ հայացքով ստուգեց վոր ափի մեջ յեղածը հինգանոց եր, գրպանը կոխեց, ծոծրակը քորեց ու ասաց:

— Յանի Կարապետ, գնամ քյոխվին ի՞նչ ասեմ հմի:

— Տո ինչ կուզես՝ ասա... Յես գյուղումը չեմ, գնացել եմ Հասար՝ բանելու,— ամիսներով չեմ գալու... Գնացել եմ Լալի գեղը յեղ ու պանրի...

— Լա՛վ ա, ըտհենց կասեմ: Ամա տես, իմ արեխացուն գո՛ւ պիտի տաս հա՛... Հրեն ա՛յ, դռանդ առաջ մի ջուխտ կաշին իմն ա:

— Փո՛ւ յես քու... ըհը, էն էլ քեզ առ...

— Այ սաղ ըլես... Գնամ գնամ ասեմ գյուղումը չես:

Ասաց Տազին, յերեսը շուռ տվավ գնալու, սակայն խկույն դարձավ և ժպիտը դեմքին՝ ավելացրեց.

— Բա Կա՛րապետ, էն տարին դու խոստացար յերկու կոտ ցորեն... Էն էլ չե՞ս տա. կալը խո պրըծել ես:

— Տո յե՞րբ էյի խոստացել, ա՛յ քյուրդ... Թուլանելու՞ ես ինձ:

— Ինչի՞, մաղամ յես դա՞չաղ եմ... Կուզես մի՛ տա. ամա վոր քյոխվեն ինձ ղամչիեց ու էլ հետ յետ ղրկեց, էն վախտը վո՞նց անեմ...

— Վա՛յ յես քու... ադա բաս էլ ո՞ւր առար մանեթները, տրխացու կաշին:

— Կուզես յետ տամ, ախպե՛ր... քեզ խո լավություն չի ըլում անելը. յերկու կոտ ցորենի համար հորս էլ գյոռիցը կհանես:

— Ա՛ հարամզադա, ցորենը չոլի՞ցն եմ գտել. բա դու խի՞ղճ չունես, վոր էլի բան ես ուզում...

— Ինչի՞ ուզեմ, չեմ ուզում: Քյոխվեն ինձ ղըրկել ա վոր քեզ կանչեմ՝ անում եմ. չես ուզում գալ՝ գնամ ասեմ թե չի գալիս, համ էլ ինձ ուշունց ա տալիս:

— Տո ա՛ռ, արի, արի ցորենը տար, արի թա՛լանի, պրծի՛ր, տունս սաղ դարտկի... Ձեր քոքը կտրվի, քո՛նն էլ, քյոխվին էլ, ստարշինին էլ...

— Փի՛ե, փիե... էդ խո ընե՛նց ուշունցներ տվիր, վոր թազա ծնած գառներից մեկն էլ վոր տաս՝ էլի դո՛ւ պարտք կմնաս... Ամա՛, հանաքը դենը, Կա՛րո, էն որը գառներդ տեսա. լավն են հա... քե՛ֆս յեկավ. ի՞նչ կըլի վոր մեկը բախշես աղջկանս, հետը խաղա:

— Տո կորի է՛է. կորի՛, քանի կողքերդ չեմ

ջարդոտել. քի՛չ ա մնում կնիկս էլ քաշ տաս տանես:

— Կնիկ ի՞նչ եմ անում, մեկը չա՞տ եմ կարում պահի... Ուզածս մի պառ ա, ի՞նչ մաթահ դա՛դա, վոր ընենց կատաղում ես... Հրես, ս. Գեվորգի որն ա գալիս, կտանենք մատաղ կանենք... Յես էլ քյոխվին կասեմ, ընենց կանեմ, վոր աչքին էլ յերեվաս՝ մոռացած ըլի... Դու էդ գառը տուր, մի քիչ էլ—չատ չեմ ուզում, յերկու գլուլ—խոտ էլ հարոցիցը, վոր ուտացնեմ պառան, չաղանա ու լավ մատաղացու ըլի... Հը՞, սրան ի՞նչ կասես, Կա՛րապետ... աստված գիտի, ընե՛նց անեմ, վոր քյոխվեն հետդ նստի-կանգնի ու մոռանա թե քեզ սուդ են կանչել, յա թե դու հարբել ու մարդ ես ծեծել:

Հանկարծ Կարապետը խեղկատակ դեմքով դեմքը ծռմռեց, գլխարկը ուժգնությամբ գետին խփեց, ու վտանգի մեջ յեղած մարդու նման՝ սկսեց գոռալ...

— Հասե՛ք, ա՛ խալխը, աստված սիրողը հասնի, գզիրն ինձ թալանեց, տունս դարտկեց...

— Հա՛, հա՛, հա՛... քրքջաց Տաղին—ամա՛ հանաքչի ես ըլել հա՛, Կարո՛... Տո էլ ո՞ւր ես գոռգոռում, սաղ կեղը գլխիդ հավաքում: Յանի ի՞նչ ա ըլել, քեզ թալանեցի՞. տարածս մեծ բան ա— 5 մանեթ, մի ջուխտ տրխացու, յերկու կոտ ցորեն, մի գառը, յերկու բլուլ[1]) խոտ... Հը՞... հլա ռազի՞[2]) չես, վոր սյունից կախած են չուխեդ էլ չեմ ուզում... խմը քրքրվել ա... բա վոր քյոխվից, ստարշինից, պիսերից. պրիստավից ու նաչալնիկից ազատվելո՞ւ ես... էդ քի՞չ բան ա... ի՞նչ ա, յանի չու-

1) Կազմված գուցե «բլուր» բառից. նշանակում է դեզ:
2) Համաձայն:

խիղ հետ մի փախախ էլ չե՞ս տա, վոր գլուխս ծածկեմ...

Ու այնքա՛ն բնական եր Տալին այդ միջոցին, այնպե՛ս լավ իրան վիրավորված եր ձևացնում և դիմացինին հանդիմանական չեչոտը ճնշում— վոր ամենքն անխտիր՝ յերկար ծիծաղեցին:

— Աղա՛, կանչեց մանուկներից մեկը— ընենց ղորթ գլխը սկի՛ տեհել չեյի. մեր Սահակին կծալի ու ջիբը կդնի:

— Կասես Ջլի՛ս Բարկողի գլխին ըլի տո. նկատեց մի ուրիշը— տեհել եմ. եդ նա՛ ա, վոր ընենց՝ համ յեղ ա քսում գլխին, համ էլ մազերը մեկ-մեկ պոկոտում...

Պահ մի խաղը դադարեց, տեղի տալով Տալինին ուղղված ընդհանուր հիացմունքին:

Սակայն, դեռ ամեն ինչ չեր վերջացել: Իրա՛վն, Տալին մյուս հանցավոր համարվածներին թողեց առայժմ, բայց նա այդ բացատրեց, յերբ հեռանում եր:

— Հլա կաց ես մեկի համար քյոխվին իմաց տամ, հետո կգամ մնացածներին:

Ասաց ու քայլեց դեպի քյոխվեն: Ճանապարհին նա տղեքների կաշին (յերևակայական անշուշտ) պահեց խոտերի մեջ, ցորենի տոպրակը տարավ իրանց տուն (այդ բոլորը ձևացրեց նա), փողը թաշկինակի ծայրին պինդ կապեց ու գլխարկի տակը դրեց, հետո մտախոհ՝ մոտ գնաց քյոխվին ու լո՛ւռ կանգնեց նրա առաջ:

Քանաղը պաշտոնական կերպարանք ստացավ անմիջապես և հարցրեց:

— Հը՞, գլխի՛ր, բերի՞ր:

Տալին նախ հիմարի պես ատամները ցույց տըվավ քիչ, հետո դժգոհ դեմք ստանալով՝ ասաց:

— Չըբերի, քյո՛խվա... Առաջ Գորա-ծեծողանց Կարապետի տունը գնացի... Շորագյալից[1]) 10 մեշոկ լավ ցորեն եր բերել՝ դարսում եր, կնիկն էլ փոչխարի պանիր եր աղում... Տան առաջը սաղ բըռնել եյին գառներով...

— Աղա՛ քեզ բան եմ հարցնում, բարկացավ քյոխվեն— ընչի՞ չեկավ:

— Բա յես վո՞նց անեմ, քյոխվա՛, դեմքը յերկարացրեց գլխը... ցորենը բուռս առի, ընենց լավ ցորեն ա վո՛ր... մարդը զո՛րծ ունի... հլա թաղա չուխա էլ ա առել քաղաքիցը...

Քանաղը մեկեն փոխեց պաշտոնական խիստ կերպարանքը, շուրջը նայեց, ապա կռացավ դեպի Տալին ու ավելի ցած ձայնով հարցրեց.

— Աղա ղո՞րթ ես ասում... յանի տե՞սար՝ Շորագյա՞լու ցորեն եր...

— Են աստվածը... ընչի՞, քո՞ւ եմ... համ էլ սա՛րը մեշոկ, լիքը, տոպա՛լեն...

— Փի՛ե... հլա գնանք տեսնանք մեկ...

— Վա՛յ, չե, քյոխվա, չգնաս. ղաղալած[2]) ա:

Յեվ կռանալով դեպի նա, խորամանկ ժպիտով ավելացրե՛ց.

— Ինձ յերկու մանեթ տվավ... ուզում ա մի կերպ պրծնի, գործի տեր ա խեղճը, ի՞նչ անի:

— Աղա եդ ի՞նչ ես ասում... եդ վո՞րդխան ա

1) Շիրակ գավառը:

2) Սաստիկ կատաղած:

գտել եղքան փողը... բաս գնա սարքի տենա՞նք: Այ, 20 մանեթից պակաս չըլի հա... հինգ կոտ էլ ցորեն ... ու մի կես փութ էլ պանիր առնես՝ մի–յերկու կտորը քեզ:

— — Եդ չա՛տ ա, քյոխվա: Ջի՛ տալ. մեկ էլ տեսար ասավ թե՝ «կերթամ դիվանխանա»... ու գնաց, հետո՞, ձե՞ռքդ ինչ կընկնի... Հլա սատրչինան էլ ա պոկելու:

— Տո ի՞նձ ինչ. յես իմը կանեմ, սատրչինան ուզում ա, թող կաշին պոկի:

— Բա պրիստա՞վը, սուդե՞քը, պի՞սերը...

— Այա, նրանց ցավը մե՞ղ են տվել... ինչ ուզում են թող անեն. քանի հլա չեն սկսել, թող լավ պատառները հայը մեզ հասնի՛... Եա ա, 20 մանեթ, 5 կոտ ցորեն ու կես փութ պանիր. կարաս՝ մի հաս էլ գառը պոկ տու՝ տանենք մեշեն, քեֆ անենք:

— Դժա՛ր թե ըլի, քյոխվա՛. ծոծրակը քորեց Տալին— արի 10 մանեթի ու 2 կոտի կապենք... հլա մեկալոնք էլ կան. նրանցից էլ մեկ եղքան կառնենք՝ ու մի ջավ, յեղալի գործ կպառնա:

Քյոխվան ժպտուն՝ քիչ մտածեց, հետո ասաց.

— Աղա, քյուրդ Տալի, յանի ղրո՞ւստ, հենց երկու մանե՞թ առիր...

— Աստվա՛ծ, յերկինք...

— Ցորե՞ն, պանի՞ր...

— Մեղա՛ աստծո... վոր ուզեմ էլ— կա՞:

Բանաղը վոտքի յելավ:

— Հլա գնանք մեկ ինքս տենամ ի՞նչ կանեմ. ասաց նա:

— Վայ, չէ՛, քյոխվա, դեմը փակեց Տալին—

վոր գնացել յես՝ կկատաղի. մեկ էլ են տեհար՝ թարսվեց ու դուզ—դըրա սատրչինան գնաց. են վախտըն է՛լ ղադ չի ընկնի ձեռքդ. դիփ սատրչինան կուտի:

— Ադա ղորթ ես ասում... Բաս դու գնա, տենանք վո՞նց կսարքես ... ինչքան կարաս՝ պոկի հա՛...

. . . .

Ցավ ո՞վ գիտե, հետո ի՞նչ պիտի լիներ, քյոխվեն, սատրչինան և այդպես՝ փոքրից մինչև մեծը ինչպե՛ս պիտի թալանեյին մերկացնեյին գյուղացիներին — յեթե մի միջնադեպ վրա չգար և քարուքանդ աներ խաղը, վոչնչացներ ամեն ինչ:

Հանկարծ լեռնալանջի մյուս մասից մի խուլոտ, մի այլանդակ աղաղակ ռումբի նման յեկավ ընկնելու մանուկների մեջ:

— Ա՛ չան տղերք, ա բեհայեաննե՛ր, ա՛յ յես ձեր...

Դարձանք սարսափահար: Մի ինչ վոր մարդ, ահագին փայտը ճոճելով, կարտուզը պինդ կոխած գլխին, չուխի ծայրերը գոտկի մեջ՝ կատաղաբար վազում եր դեպի մեր կողմը և հայհոյո՛ւմ, հայհոյո՛ւմ...

Մանուկներն ահաբեկ՝ վոտնեցին, վարկենապես ամենքը լեղապատառ՝ նետվեցին ամեն ուղղությամբ, իսկ Տալին սոսկումով ճչաց.

— Ադա, քյոխվան ա, տավարնին հարցներն են մտել, վազե՛ք.

Հիրավի, յերբ վեր նայեցի, ի՞նչ տեսնեմ...Տավարները բլուրներից, կարծես խոսք մեկ արած,

խմբովին իջել-մտել եյին գյուղացոց խոտանոցներն ու ախորժակով հնձում եյին պարարտ խոտերը։

Քյոխվան, վոր յերեվլի գյուղից անցնելիս տեսել եր այդ, կատաղած, փրփրած, ցուպը սպառնալից յերերեցնելով՝ վազում եր ջարդելու փոքրիկ նախրապաններին, վորոնք գունդ ու կլոր՝ սլանում—փախչում եյին ամեն ուղղությամբ։

Սրա-նրա յետեվից ջանաց հասնել ահարկու իշխանը, փայտը գլխի վրա պտտեցնելով քանի՛ցս նետեց այս ու այն փախչողի յետեվից, հայհոյեց խոզային ճիչերով... սակայն վոչ վոքի հասնել չկարողացավ։

Քիչ հետո մնացինք յես ու աղջիկները։

Սրանք ել վոտքի եյին յելել։ Նայեցին ինձ, ծիծաղեցին և ճիպոտները վերցրած՝ գնացին դեպի տները։

Յեվ յերբ իջել խճուղու վրա դեպի յետ եյի նայում — տեսա դեռ են խուսափող վոտներ, կատաղությունից փայտը այս-այն կողմ նետող քյոխվին, վոր փորձում եր գոնե մեկին ծեծած լինել. բարձրանում եր բլուրներն ի վեր, իջնում ձորձորները... Նրա առջեվից, գնդակների նման արագ գլորվում-անհետանում եյին մանուկները, իսկ սագերը սարսափահար, ճիչերով ու թեվերի թափահարումներով՝ սահում եյին դեպի վտակը։

Սարալանջերն ամայացան. քյոխվի չոր, այլանդակ ստվերն եր միայն, վոր յերբեմն յերեվում եր այս-այն կողմ, նման հովի մեջ ավեր սփռող կատաղած գայլի...

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՄՇՈՒՇ

1.

— Վե՛ր կաց, Սամ՛վան, կես գիշեր յեղավ...

Ճրագի աղոտ ու ծխախառն լույսի մեջ, ավազոտ, սևցած, խոնավ տախտակների վրայից ծվենների մի կույտ ստվերացավ, բացվեց, ու նրա միջից գլուխը դուրս հանեց մի այլանդակ արարած:

Փոշոտ, միմյանց կպած յուղոտ մազերը ցնցվեցին յերկար ստվերով: Դեղնած, մրոտ ու պատառոտուն ցնցոտիներ պարզվեցին լույսի մեջ, և մի զույգ խամրած ու քնաթաթախ աչքեր, արևակեզ ճակատի, խիտ հոնքերի տակից՝ սևեռվեցին ձայնողի վրա:

— Վե՛ր կաց, ժամանա՛կն է...

Յեվ մինչ ցնցոտիները մի կողմ էյին նետվում, ձայնողը շտապով հանվեց ու գնաց կծկվելու մութ անկյունի սև խշտյակի վրա:

Մի ամբողջ խումբ եր այդտեղ, այդ գծուծ ու խարխուլ վորջի մեջ, յերկար սև թախտի վրա միմյանց կողքի շարված, անորոշ դույներով և կատարյալ յուղոտ վերմակների տակ կուչ յեկած:

Ցած առաստաղի և հողե հատակի նեղ տարածու-

թյան մեջ ճրագի լույսը, ծուխի և դրսից ներս հոսող խոնավ գոլորշու հետ, դերեզմանական մռայլ մշուշ էր գոյանում... Անկյունում դրված կուժը, այս-այն կողմ յերեվցող աղտոտ սնդուկները լիովին ծածկվել էին դեղին ավազով, նավթով ու ամեն կողմից ներս խուժող մուրի խոշոր, սեվացնող հատիկներով:

Ստեփանը յելավ: Կոճկեց հագուստը, անկյունից կուժն առավ, յերկու բուռ ջուր նետեց յերեսին, մի քանի կում խմեց, պահ մի կանգ առնելով հորանջեց, քորվեց, դալարվեց, ապա դանդաղությամբ գնաց դեպի դուռը:

— Շո՛ւտ գնա, լսվեց վերմակի տակից. Մկրտիչը քեզ է սպասում, վոր գա քնի:

Յեվ խրճիթի դուռը ճռնչաց:

Ստեփանը դուրս յելավ փողոց:

Անձրեվ էր: Շեշտակի, ծեծող ու խարազանող անձրեվ:

Սկսել էր մութը ընկնելուց: Այժմ ավելի սաստկացել՝ մղվում էր քամուց, բախվում նավթահորերի տախտակյա բուրգերին, ճղփում էր ամեն կողմ լճացած ջրի ու նավթի վրա, թրջում՝ սև, թաց, լպրծուն ու նավթից ճահիճ յեղած գետինը:

Մեքենաներից դուրս պոռթկացող շոգին ծանրացել՝ խողովակներից վժժող մրալի ծխի հետ էր խառնվում և ճնշիչ ու հեղձուցիչ՝ սփռվում գետնի յերեսին:

Յեվ այդ տխուր, թաց ու մթին գիշերվա մեջ, կապարագույն-միաձույլ յերկնքի տակ, նավթահորերի ճախարակները դռնչում էին աղմուկով, նասոսներից

նետվող շոգու սունյակները պայթում էին, բուրգերի կատարներին պտտող լիսեռները տխրագին սուլում:

Քիչ հեռու, հնոցները վիշապային բոցավառ աչքերով փռնչում էին կատաղի, կարմիր ու սովերախառն լույսով ներկում նավթի փրփուրը, գորշ, թանձր հեղուկը...

Հեռավոր, մութին մեջ գտնվող հանքերի միջից մի առ մի ոդն էին պատռում շչակների ձայները և տխուր ոռնոցներով կես գիշեր էին ավետում:

Յեվ այդ բոլորը խոնավության մեջ խլանալով, անձրևի բախման, մեքենաների ժամանակավոր դղրդյունի, ճախարակների հնչեղ յերերման ընկերակցությամբ՝ ծանրանում էին նորից Ստեփանի սրտի վրա:

Դեռ չէր վարժվել: Մի ամբողջ տարի յեր արդեն, բայց դեռ չէր սովորել այդ սոսկալի կյանքին:

Անընդհատ աղտոտ հագուստի մեջ, նավթով չաղախված՝ քնե՛լ էր նա այն վորջում. ցրտի, անձրեվի տակ ժամերով նստած՝ մեքենայի փոխանցող շարժումն էր դեկավարել, գետնի խորքերից սև հեղուկը հանել, նրա մեջ թրջվել եր-բորբոսնել, վո՛չ կիրակի յեր իմացել, վո՛չ տոն, վո՛չ ազատություն, վո՛չ էլ կանոնավոր, կշտանալու չափ հանգիստ...

Մի տարի յեր այդ ամենը: Դեռ չէր ընտելացել:

Ամե՛ն անգամ սիրտը ճնշվել էր, կոկորդը դառնացել: Մենակ նստած մութ բուրգի ամայության մեջ, աղմկալից մեքենայի կողքին, հաճախ լացել էր:

Խե՜ղճ Ստեփան...

Գիշերային այն միանվագ և մեքենական աղմու-

կի մեջ միշտ լսվում եյին նրա դաժան յերգերի կտորները, վորոնք խազ առ խազ դուրս եյին նետվում բրդի բաց դռներից և շատ ուրիշների վշտերի հետ՝ գնում եյին ծանրացնելու շրջապատող մեղսալից մթնոլորտը:

Այժմ էլ գնում եր նա նորից այն սև, վերևից սրտմաշուք կերպով ծորող նավթի տակ, մշուշոտ ու գազի խեղդիչ ոդով լեցուն բուրգի մեջ նստելու: Այժմ, մի տարուց ի վեր, գուցե և հավիտյան այդ նույնը, անվե՛րջ նույնը...

Յեվ վոտները լպրծուն ցեխի վրայից քարշ տալով, թրջված ու խոնավացած՝ անցավ նա հին ու կոտրտված գործիքների կույտի մոտից, ուր հսկում եր գիշերապահը լուռ, կծկված մի աղտոտ մուշտակի մեջ:

Անցավ ապա կաթսայատան մոտով: Բաց լուսամուտից յերևաց հնոցավարը: Նստել եր կրակի առաջ, աթոռակի վրա և թեյ եր խմում:

Նախանձեց նրա կյանքին: Գոնե տաք եր այնտեղ, չեր մրսում, չե՛ր թրջվում: Լուռ և տխուր՝ մտավ նավթահորի բուրգը:

Բարձր, հազիվ լուսավորված մի տարածություն եր այն՝ մթին անկյուններով, ուր աղմկում եր մեքենան, հնչում եր ճախարակը և տասը րոպեն մի անգամ լսվում եր նավթահան գործիքից դատարկվող հեղուկի շառաչը:

Ճախարակի մոտ, տախտակյա բարձր ծածկոցի տակ չեր յերևում Մկրտիչը:

Լսվում եր միայն նրա յերգի խուպոտ, ժանգոտ ձայնը:

Ստեփանը կամացուկ վոտքը դրեց տախտակե աստիճանին ու բարձրացավ:

Հերթը իրենն եր այժմ: Մկրտիչի տեղը պիտի բռներ:

Մկրտիչը տեսավ նրան և յերգը ընդհատեց:

— Յեկա՞ր, ասաց նա. սպասիր «ժալոնկան»*) հանեմ... Մեկ տակից կքաշես, յերկու՝ վերևից... Չայ խմե՞լ ես:

— Չե:

— Լավ, յես կբերեմ քեզ համար: Անձրևը սաստի՞կ է:

Ճախարակն այժմ ծանրությամբ եր գործում: Հեվալով՝ իր վրա յեր ժողովում հորից դուրս յելնող նավթոտ չվանը: Ցայտող հեղուկի ցնցուղները անպատիժ կերպով վողողում եյին նստողների հագուստն ու դեմքը:

— Քիչ այն կողմը նստիր, վոր շատ չթրջվես, խրատեց Մկրտիչը. գազը շա՛տ ե նեղացնում: Դուրսը խոնավ ե, չի ցրվում:

Խոսում եյին գոռգոռալով: Մեքենայի և ճախարակի աղմուկը խանգարում եր լսելու իրար:

— Ինչ էլ խո՛րն է... գոռաց նորից Մկրտիչը. տակի՛ցն եմ քաշում. կասես անտակ լինի... Չքնես, հա՛. թե չե ժալոնկան վոր գնաց վերեվ—էլ կառավարչի ձեռքիցը չես պրծնիլ:

— Չեմ քնիլ:

— Խաղ ասա, վոր չքնես:

Ժալոնկան դուրս եր գալիս:

---

*) Նավթահան գործիք:

Մկրտիչը թողեց վոր գործիքը հորի բերնից քիչ էլ բարձրանա․ հետո, յերկաթե յերկար ձողով մղեց նրան հեռու, իջեցրեց, և յերբ լեզվակը տախտակին առավ՝ հեղուկը սկսեց շառաչյունով հոսել տակառի մեջ։

— Դե՛հ, այժմ ա՛ռ, Ստեփանին տվավ զսպիչ կոթը․ յես գնամ չայ բերեմ քեզ համար։

Ստեփանը տեղավորվեց։ Գործիքը շարժեց, մեքենայի կաշին կոթովը մի անիվից մյուսն անցկացրեց և թողեց վոր ժալոնկան դղրդյունով իջներ հորը։

Ապա մեջքը տախտակին տվավ ու լուռ մնաց։

Քիչ հետո Մկրտիչը բերեց թիթեղյա թեյամանը, մի բաժակ, յերկու կտոր շաքար, հետո «բարի գիշեր» ասաց ու հեռացավ։

Մթին տարածության մեջ Ստեփանը մնաց մենակ։

2․

Ելեկտրական մի թույլ, տարածության ու բարձրության համեմատ չա՛տ աղոտ ճրագ եր, վոր նշմարելի յեր դարձնում մեքենայի փայլող մասերն ու ճախարակի շարժուն կույտը։

Ստեփանը թեյը լցրեց, բաժակը ձեռքն առավ ու սկսեց կում առ կում խմել՝ դիտմամբ ուշացնելով, շառաչյունով, բաժակը պնակին զարնելով։

Ապա մի քանի անգամ ուշադրությունը կենտրոնացնել ճգնեց նավթահան գործիքի յելևեջի վրա, սպասեց իջնելուն, հաշվեց թե մինչև քանի՛ համրելը յելնում եր դուրս։

Բայց այդ յերկար չտևեց։ Ուշադրությունը սպրդեց–հեռացավ գործիքից, հորից և Ստեփանը

սկսեց լիովին այլ, այլտեղից ու ամբողջ հանքերից դուրս բաների մասին մտածել։

Կատարվեց այդ անզգալապես, ինքն–իրեն։

Մտածեց նախ հետևյալ ազատ որվա մասին։ Տեսնե՞նք, ի՞նչ եր անելու վաղը։

Նախ, ի հարկե, մի կո՛ւշտ կքներ։ Ո՛հ, շա՛տ կուշտ, յեթե միայն մարմնի, հագուստի և անկողնի աղտերը թույլ տային, բնակարանի ճնշող ոդը, անհամար լվերը հանգիստ թողնեյին։

Կքներ, վոչինչ։ Սովոր եր այդ ամենին։

Ապա անշո՛ւշտ կիջներ քաղաք։ Ընկերներ կլինեյին։ Գինետուն կմտնեյին իսկույն։ Ել ուրիշ վո՞րտեղ, կամ ի՞նչ պիտի անեյին, յեթե յեղանակը մնար այդպես անձրևային ու խոնավ։

Գինետուն, խմել, այս խանութից այն խանութ, հայրենակիցների խղճուկ աներ, դարձյա՛լ խմել, թղթախաղ, ապա պոռնկատուն...

Յեվ վերջապես դա՛րձյալ դեպի նավթի թացությունն եյին գալու, բուրգի ամայության, շրջապատող աղտ ու մուրի մեջ...

Ճախարակը հևում եր․ գործիքը նեֆտով լի՝ վեր եր յելնում։ Հեղձուցիչ մի գազ մթնացնում եր լույսը։ Բուրգի յուրաքանչյուր տախտակից, ամե՛ն անկյունից նավթը կաթում եր, ծորում անընդհատ, ընկնում եր ու ճղփում լճացած կույտերի մեջ, լվանում ճախարակը, Ստեփանի նստարանը, խարխուլ ծածկոցը, վոտներն ու շորերը...

Մարդկային վո՛չ մի ձայն։

Մեքենան ու ճախարակը, անձրևի շառաչն ու լիսեռնի սուլումը, շոգու պոռկտոցը և հնոցի հեռավոր

մռնչյունը... Դրանք եյին ձայները, ձայների մռայլ համերգը:

Յեվ դեռ վորքա՛ն յերկար, յերկա՛ր պիտի նստեր այդ ամենի մեջ: Ամբողջ վեց անընդհատ ժամեր անշարժ, բուրդի յերեք դռներից փչող քամիների տակ, անկողնից նոր յելած, դողալով ու սրթսրթալով:

Ատամները կարկափում եյին, թմբիր եր գալիս վրան, քնել եր ուզում:

Ու չքնելու համար՝ սկսեց յերգել:

Յերգել ու մտածել:

Բերանը յերգում եր, իսկ միտքը գործում այլ ուղղությամբ: Վոստնում եր նա յերգից, նավթահանքերից, քաղաքից հեռու, չա՛տ հեռու: Մի վայրկյանում անցնում եր լեռ ու ձոր, գնո՛ւմ և գնում...

Ու հալվում եյին, մինչև վերջի՛նը անհետանում՝ մեքենաները, նրանց շռինդը, չքանում եր անգամ այն ահռելի համառությամբ և հողին հոշատող ծորը, վոր ուղեղն եր ծեծում անվերջ կաթիլներով:

Չկար նույնիսկ, չե՛ր զգում այլևս վոսկորների խորքը փորող այն խուլ ու սոսկալի ցավը, վոր սաստկանում եր ամեն անգամ...

Այժմ սլացել-անցել եր նա տարածության մեջ և գնում եր հրճվանոք կանգ առնելու մի ծառալից հովտի խորքում:

Յեվ այն՝ գարնանային շքեղ ու պայծառ որով, գով արևածագին, թռչունների զվարթ համերգի, առվակների հանգստաբեր խոխոջի և ծառերի մեղմ շշուկի գիրկը:

Գյուղն եր այն, իր գյուղը. ծանոթ ծառաստանն ու ջրերը, հովն ու համերգը, դաշտն ու հովիտը:

Ծաղիկների, այն անհամար, գույնզգույն ծաղիկների բուրմունքը լցրել եր ոդը:

Բուրում եր հողը, բուրում եր յուրաքանչյուր ծիլ ու խոտ:

Այլևս նավթ չե՛ր բուրողը, վո՛չ: Գետինն այդտեղ՝ զզվելի յուղոտ ու թաց հող չե՛ր ծածկողը. սև նավթակույտեր և կամ աղաջրի բաց արնեգույն լճակներ չե՛յին նրա շուրջը վխտում—այլ միմիայն ջինջ ու կարկաչուն առվակներ, պսպղուն, սառնորակ աղբյուրակներ, ցոլուն ու վե՛ր-վեր խայտանքներով ծփացող լճակներ... և այդ ամենին ստվերող շշուկալից ուռիներ, շքեղահասակ բարդիներ...

Ու տեսնում եր նա այդ ամենն իր շուրջը, գնում նրանց միջով, անհուն բերկրությամբ վայելում եր զեփյուռն ու կարկաչը, շշուկն ու համերգները և մոտենում գյուղին:

Իր գյուղն եր այն սարալանջի վրա ծիծաղկոտ կայտառությամբ պսպղացող, ծառերի հովանիով գուրգուրվող գյուղը:

Ծանոթ դեմքեր հաջորդում եյին միմյանց: Նախ՝ պայտարն եր, նստած իր խարխուլ խանութի դռան առաջ: Մուրճի ձայնը աշխարհքն եր բռնել: Մի կողմից պայտեր եր դարբնում, մյուս կողմից՝ մոտը նստած մուխսի Հակոբին, այն միամիտ ծերունուն, կլլեցնում եր իր հրեշավոր ստերով համեմված նորությունները:

Այնուհետև յերևում եյին մի քանի ուրիշ գյուղացիներ. խանութպան Խաչոն, տիրացու Սարոն, այլև ծալմաչ ու գունատ վերարկույով Տեր-Սրապիոնը, վոր ժպտում եր նրան և աջը պարզում համբույրի:

Ահա և ճռճռացող սայլեր, վորոնց քաշում են փնչալով քայլող գոմեշներ: Հետո՝ նախիրն է գյուղի: Միմյանց են խառնվել բառաչ ու մայուն, շների հաչոցներ ու հովիվների, նախրեպանների կանչեր...

Քիչ հետո տուն եր, վրան ջրաղացը: Գործում եր: Զաչանակի չոր ու արագ ճաթռտոցների հետ խառն՝ քարերի խուլ չխումը հասնում եր ականջին: Հասնում եր նաև աղացվող ցորենի հոտը. այն հատուկ ախորժելի բուրմունքը, վոր միշտ գալիս է ջրաղացներից:

Առվից նա վաստանում եր աշխուժով: Մոտ եր այլևս իրենց տունը: Բայց նա առաջ մեկ կռանում եր, ձեռքերն ու յերեսը լվանում սառնորակ ջրի մեջ ու դառնում դեպի իրենց խրճիթը:

Ո՛հ, հայրենական կիսավեր, մխոտ ու անպաճույճ սիրելի խրճիթ: Վորպիսի՜ հաճույքով նայում եր նա յուրաքանչյուր քարին, գերանին, վո՛տք եր դնում հողոտ պատշգամբի վրա, ժպտում եր ոճորքից կախ ընկած խնոցին, գգվում՝ աղտոտ ու քծնող դամփռին, նստում կոշտ նստարանի վրա, գիրկն առնում մեջքն ուռցնող ու քմսվող կատվին...

Յեվ մա՜յրը... Ահա՛ իր պառավ, իր կորաքամակ մայրը՝ մի՛շտ գործունյա ու չարժուն, ձեռքերը կոշտացած, մրոտ ու ալրոտ...

Նո՛ր եր թոնիրը վառել, աչքերն եր տրորում ծխից, սևցել եյին ձեռքերը. բայց նա վորքա՜ն հրճվանքով վազում եր դեպի նրա գիրկը, սիրով համբուրում ձեռքերը, գլուխը դնում նրա կրծքի վրա ու հեկեկում-լալիս եր կրած տառապանքները, քաշած տանջանքները...

Շրջապատում եյին ապա նրան՝ քույրերն ու յեղբայրը: Ամենքը ուրախ եյին, ակներև ուրախ, վոր իրենց Ստեփանը յեկել եր առողջ, տո՛ւն վերադարձել ու պանդխտության մեջ չեր մնացել՝ կորել կամ մեռել:

Սառան, մեծ քույրը, դուրս եր նետվում հո՛րն իմաց տալու: Դրացիները ժողովվում եյին. ներս եյին լցվում ազգականներ, ծանոթ կանայք, ամբողջ գյուղը գրեթե:

Ու նա ամենքին բարևվում եր, ամենքին ճանաչում: Ահա հորաքույրերը, մոր կողմի ազգականները, հորեղբոր ընտանիքը, տերտերակինն ու յերեսփոխի կինը...

Բայց հանկարծ նա տեսնում եր մի կին ևս, վորից սիրտն սկսում եր ուժգին կերպով բաբախել:

Թագուհու մայրն եր այն: Նա՛ ել եր աչքալուսանքի յեկել: Բարևում եր սիրալիր, համբուրում եր նրան իր վորդու պես, ժպտում եր, զննում բարեկամաբար:

Արդյոք վատ չե՞ր հագնվել: Վո՛չ, ինչո՞ւ,— վրան սև մետաքսե արխալուղ կար, մահուդե չուխա՛ յել ուներ այժմ, արծաթե գոտի կապած, յերկար ու փայլուն կոշիկնե՜ր, մորթե նոր գլխա՜րկ...

Ճշմարիտ է, յերկար եր տառապել նավթի մեջ, գրեթե բորբոսնել եր խոնավությունից, սակայն նա այժմ պիտի ցույց տար գյուղացոց, վոր ո՛ւնի հագուստ և վոր չի վերադարձել ձեռնունայն... Վորովհետև, վո՛չ, Ստեփանը վատ տղա չե և վո՛չ ել չռայլ ու մոլի...

Իրավ է, գունատ եր մի քիչ, դույզն և նիհար,

տգեղացած— բայց, ո՛հ, մի քանի ամի՛ս միայն իրենց սքանչելի լեռների ոդի ու ջրի մեջ, մի քանի ամի՛ս միայն հեռու նավթից ու ծխից—և նա, դաշտային աշխատանքով կազդուրված, կլիներ դարձյա՛լ նախկին հուժկու, լայնալանջ, առողջ Ստեփանը...

Այո՛, այդ անշուշտ կլիներ: Թագուհու մայրը հիմար կին չեր, նա՛ ել կարող եր մտածել այդքանը:

Բայց ա՛խ, վորքա՞ն կուզեր տեսնել իրեն—Թագուհուն:

Ո՞ւր կլիներ արդյոք այժմ: Տա՞նը, թե՞ ընկերուհիների հետ այգին և կամ բանջար ժողովելիս:

Ո՛, սքանչելի՛ յեր Թագուհին. իր ամբողջ եությունը համակող, մատղաշ սրտի սերը ղեկավարող այդ թարմ, իրենց լեռների պես փարթամ աղջիկը, վոր անուշ ե պարտեզի մանուշակի նման, ցանկալի, վորպես ջուրը՝ պապակվող շրթունքների համար և դողտրիկ՝ բարձր գագաթների ձյուների հալոցից հետո բուսնող ձնծաղիկի, կամ կակաչի նման:

Տեսնե՛լ, մի անգա՛մ տեսնել, հասկացնել վոր սիրում եր նրան՝ զգացմունքներից պայթելու մոտ իր սրտի ամբողջ թափով, սիրում եր՝ դեռ չհղփացած ցանկության բոլոր ուժգնությամբ:

Բայց ա՛հ, այն ի՞նչ եր, վոր հանկարծ տեսավ ահա այնտեղ, հետզհետե առաջ յեկող ու պարզվող մշուշի խորքում...

Սոսկո՛ւմ ու սարսափ: Կանայք եյին նորից, բայց վորպիսի՛ կանայք: Ո՛հ, այդ նրանք եյին: Նրանք, վորոնց մոտ եյին գնում ինքն ու իր ընկերները՝ գինետան մեջ անասունների նման հարբելուց հետո:

Ահա՛ շպարած դեմքե՛ր, լպիրշ ժպիտ շրթունքներին, խենեշ շարժվածքներով ու խռպո՛տ սարսուռ ազդող ձայներով...

Ու մոտ եյին գալիս, խառնվում յուրայինների մեջ, քսվում Թագուհու մորը...

Ո՛հ այդ կանայք, վորոնց մոտից յելնելիս ամեն անգամ նա լվացել եր իր շրթունքները, ուր դրոշմած եյին յեղել վարձու առած համբույրները:

Ամեն անգամ, իրավ ե, զզվանքով դուրս եր նետվել այդ կանանց մոտից, բայց և մի քանի որ հետո դարձյա՛լ հարբել եր և դարձյա՛լ գնացել՝ իր դրդվանքները շռայլելու նրանց:

Այդ ժամերը, այդ սոսկալի՛ որերը... Պատկերանում են ահա.— Գինետո՞ւն, պոռնկատո՞ւն, փողոցնե՞ր... և վերջապես ծորող նեֆտի տակ, հակադարձ քամիներով լի բուրգի մեջ՝ վոսկորները կրծող ցավերից գալարված...

Սակայն չե՞ վոր այդ բոլորն անցել եյին այլևս:

Չե՞ վոր նա իր գյուղումն եր այժմ, հեռո՛ւ՝ սերը վաճառքի դնող զզվելիներից. այնպիսիներից, վորոնք գերագույն վայելք համբույրը՝ փոխել եյին անարգ առևտրի դաշնադրության... Հեռո՛ւ գինետնից, չպա՛ր, խենեշ պարեր ու ամոթանք բերող պակշոտ շարժումներից:

Այժմ նա իր հայրենիքի մաքուր մթնոլորտի մեջն եր այլևս, պայծառ յերկնքի տակ, մորը կողքին, իր սիրած ու պաշտած Թագուհուց մի քանի քայլ հեռու, կարո՛տ նրա գգվանքներին, պապակող նրա համբույրներին...

Այժմ նա իր Թագուհուն, մի՛միայն Թագուհուն կուզեր, նրա՛ն եր ձգտում բուռն փափագով:

Այլևս նա չե՛ր տեսնիլ նավթն ու մրոտ շրջապատը, մուր անձրևող յերկինքն ու ծուխի մեջ սևացած գինետունը. այլևս չե՛ր քնիլ միշտ վախվխելով՝ թե ահա կզարթնեցնեն, անկողնից դուրս կմղեն, կնետեն մաղող անձրևի տակ ու կասեն.

— Վե՛ր կաց, Ստեփա՛ն, գնա՛ գործելու...

Վո՛չ այլևս չե՛ր վերկենալ նա անժամանակ, կես գիշերին: Կքներ կո՜ւշտ, ոհ, շա՜տ կուշտ, քունը չեյին խանգարի վո՛չ մեքենայի զնգյունը, վո՛չ ել անտանելի ճախարակի ճռինչը...

Հապա ժալոնկա՞ն, այն անիծյա՛լ ժալոնկան, վոր սպանիչ միապաղաղությամբ մտնում-յելնում եր. յերկրի խորքերը և շառաչյունով վոսկի՛ յեր հանում լցնելու... Նրա՛նց գրպանները, վորոնք վո՛չ մի րոպե չեյին նստում ծորող զարշ նավթի, մեռցնող խոնավության և հոշոտող քամիների մեջ...

Հեռո՜ւ, հեռու այլևս այդ ամենից:

Նա այժմ իր արտը կգնար, յեզները կլծեր, գութանի մա՛ճը ձեռք կառներ, հո՛ղը կակոսեր և լեռները կթնդացներ հնչեղ հորովելներով, զվա՛րթ յերգերով...

3.

... Սոսկալի մի շռինդ եր, վոր լսվեց առաջ: Հետո, կարծես շենք փուլ յեկավ և բազմաթիվ ռումբեր պայթեցին միմյանց յետևից:

Ցնցվեց Ստեփանը, գլուխն առավ տախտակե ծածկոցի պատին և նա վեր թռավ:

Սկզբում չհասկացավ թե ի՞նչ եր այն, վո՛րտեղ եր ինքը, ինչո՞ւ պայթումները շարունակվում եյին

կատաղի և տեվողական հարվածների նման և ինչո՞ւ շուրջը մութն եր, խոնավ...

Աչքերը տրորեց ու մի վայրկյանի շվարումից հետո՝ սկսեց ըմբռնել կատարվածը:

Բնազդաբար, արագ շարժումով դուրս մղեց ճախարակի կաշին, հետո ցած վռստնեց, վազեց դեպի մեքենան և շտապեց կանգնեցնել նրա տագնապալից պտույտները:

Յեվ յերբ վերջացրել եր այդ ամենը, վեր նայեց ու գունատվեց:

Ժալոնկան եր: Բարձրացել եր վեր, անցել լիսեռնից ու փշրելով բուրգի կատարը՝ շառաչյունով նետվել նրա զառիվայրի վրա:

Քնել եր: Մի րոպե՛ եր միայն քնել և այդ րոպեյի մեջ տեղի յեր ունեցել փորձանքը:

Ու գյուղ, լեռ և ձոր, կարկաչ, համերգ, սեր և հայրենի տան հրապույրը վայրկենապես ցնդեցրին վորպես շոգի, հալվելով անհետացան՝ վորպես շափաղա՛նց գեղեցիկ յերազ:

Նորից իրեն նա զգաց նավթի, խոնավ, մթին բուրգի միջավայրում, նո՛րից անտանելիորեն ծորող հեղուկն ու վոսկորները զալարող ցավերը մաշել սկսեցին նրա հոգին:

Առաջին յեկողը գիշերապահն յեղավ:

Աղմուկը հանել եր նրան իր կծկված դրությունից: Չեր հասկացել յեղածը, բայց աղմուկի մեծությունը յենթադրել եր տվել, վոր փորձանք է տեղի ունեցել ներսում:

Ու վազում եր ոգնության:

Մեքենան կանգ եր առել: Մեծ անիվը անշարժ՝

պտտվում եր։ Հաջորդել եր խորին լռություն։ Ծավալը, անսովոր լռության մեջ, կարծես ավելի յեր թանձրանում։ Հեռու անկյուններում մեկ-մեկ ցոլում եյին նավթի շիթեր, վորևե յերկաթե ձողի մի կող։ Անթափանց մութը ջնջում եր բուրգի պատերը և շրջապատն ամբողջ՝ անհուն տարածության վերածում։

Ստեփանը գլխակոր՝ մնացել եր կանգնած մեքենայի կողքին։ Վո՛չ իսկ մտածել եր կարողանում։ Մի տեսակ անտարբեր բթություն համակել եր միտքը։ Ծույլ կսկիծն եր միայն, վոր այրում եր վոսկորների ներսը, այլև քնելու, պառկել-քնելու ահռելի փափագը։

Գիշերապահը մոտեցավ, զննեց նրան մոտից ու ճանաչեց։

— Դո՞ւ յես, ասաց նա. ի՞նչ յեղավ, ի՞նչ աղմուկ եր այն։

Ստեփանը բութ հայացքն ուղղեց դեպի նա և անտարբերությամբ պատասխանեց.

— Ժալոնկան եր։ Դուրս թռավ...

Ծերունին հասկացավ։ Վեր նայեց։

— Վա՜յ, գոչեց նա. քնե՞լ եյիր։

Մի պահ Ստեփանը վոչինչ չխոսեց։ Հետո տրորեց ճակատն ու մրմռաց.

— Չգիտեմ... Մտածում եյի...

— Մտածո՞ւմ եյիր... զարմացավ գիշերապահը։

Հետո գլուխը յերերցուց, նայեց նրան մի պահ և խրատական ու հանդիմանական խառն շեշտով ասաց.

— Քեզ ի՞նչ կտալի ախըր մտածելը, հը՞... Շա՞տ հարուստ ես, վոր դեռ գործի ժամանակ մտածում ել ես...

Կարծես նախատել եր ուզում նրան՝ այդպես անորինակ շռայլության համար։

Դարձյալ գլուխը ցնցեց, շուռ յեկավ և դեպի դուռը գնաց։

— Պիտի իմաց տամ կառավարչին. ավելացրեց նա հեռանալով։

Ու Ստեփանը նորից մենակ մնաց մեքենայի կողքին արձանացած։

Բթության վայրկյանը սկսում եր անցնել. միտքը գործում եր այժմ։ Դառն իրականության գիտակցությունը գալիս եր հուզելու նրան։

Կգար կառավարիչը մի քանի րոպեյից հետո։ Կգար՝ քաղցր քնից ու փափուկ անկողնից կորզած, հանած, հետևապես դյուրագրգիռ, բարկացած, խիստ խոսքերը շրթունքներին և գուցե հենց, ճանապարհին, Ստեփանին դուրս նետելու վճիռն ել արած։

Ցավ ահա մյուս որը ստիպված պիտի լիներ դարձյալ ընկնել նավթահանքերը ու նոր տեղ վորոնել։

Կգտնե՞ր արդյոք շուտով նոր գործ, յերկար պարապ չե՞ր մնալ և չե՞ր ստիպվիլ խնայած դրամագլխ-ցը ուտել։

Ուներ, այո՛. մի հիսուն ռուբլի կար։

Պահում ու մեծացնում եր այն հույսով, վոր գյուղ կվերադառնար յերբևիցե և կվճարեր իրենց պարտքը։

Իսկ յեթե այժմ պարապ մնար յերկար, պիտի ստիպվեր ձեռք տալ գումարին։ Ու քանի պակսեր փողը, ա՛յնքան կհեռանար հայրենիք վերադառնալու հույսը։

Արդյոք չգնա՞լ հենց այժմ, վաղը։ Թողնել ամեն

ինչ, հավաքել յուղածը, բավականանալ վաստակածո-վը, գնալ և մնացած պարտքը այնտեղ, դաշտային աշխատանքով վճարել:

Ո՛հ, գնա՛լ, գնալ... Չմնա՛լ այլևս այդ սև ու մռայլ յերկնքի տակ, աղտոտ-մրոտ օդի մեջ և այն՝ միշտ տկա՛ր, տխո՛ւր...

Ու դարձյա՛լ տրոփել սկսեց սիրտը, դարձյա՛լ ախորժ ջերմություն համակեց անձը: Դեմքը, վոր ճրագի աղոտ շողքից հազիվ եր լուսավորվում, տար-տամ հույսերի, շվարման ու դառն մորմոքի ցոլքեր ունեցան հաջորդաբար:

Դարձյա՛լ յերազներն ու խոլ հույսերը խառնվում եյին գլխում: Դարձյա՛լ բերկրությամբ անձնատուր եր լինում յերջանիկ անուրջների, վորոնք նրա կարո-տանաց հմայքի տակ՝ ստանում եյին այնքա՛ն գունա-գեղ պատկերավորումներ:

Սակայն այլևս առաջվան նման վորոշ ու ջինջ չեյին նրանք: Անընդհատ մթնանում եյին՝ մռայլ բուրգերի, մրուր մաղող ամպերի և հուսանուտ մշու-շի քողավորումով:

Յեվ մնում եր նա այնտեղ, խավարի անսահմա-նության մեջ սքմած ու խորդացող մեքենայի առաջ կանգ առած:

Դատապարտվելուն եր մնում:

Անձնկությամբ, գրեթե այրող փափագով՝ սպա-սում եր խիստ խոսքերի, վռնդվելու:

Սուր պահանջ եր այդ: Զաղկվելու մարմաջ, վոր սփոփանք կլիներ նրա համար:

Ու հոգնած եր. ա՜խ, ինչպե՜ս հոգնած. մա՛հու չափ խոնջեցած: Գայլին ազատեյի՜ն նրան, դո՛ւրս

նետեյին, ծեծեյին նույնիսկ, միայն թույլ տայի՜ն գնա՛լ, հեռանա՛լ...

Չե՛ր հիշում վորքան տևեց այդ սպասումը, յերբ լսեց, վոր մեկը գոչում եր նրա յերեսն ի վեր:

— Ի՞նչ ես մեխվել այստեղ. գնա՛ կորիր գործիդ: Մինչև լույսը չբացվի, վոչինչ անել չի կարելի:

Վարպետն եր: Կառավարիչը և վո՛չ իսկ դուրս եր յեկել սենյակից: Հրամայել եր վարպետին իմացնել:

— Գնա՞մ ուրեմն. սթափվեց Ստեփանը և տեղից չշարժվեց:

— Հա՛, կո՛րիր... գոռաց վարպետը. իսկ վաղը կտեսնենք թե կառավարիչը ինչպես պիտի պատժի քեզ՝ քնելուդ համար:

— Չեյի քնել:

— Ուրեմն մի՛տքդ վրադ չեր:

— Այո՛, վրաս չեր:

— Յեվ վո՞րտեղ եր, հի՛մար, բարկացավ վար-պետը. ծառայում ես այստեղ, իսկ միտքդ գնում ե ուրի՞շ տեղ:

— Յես ի՞նչ անեմ... ուզեց արդարանալ Ստե-փանը նորից: Հենց ա՛յնպես, բնազդական քայլ եր այդ: Սովորություն միայն:

— Լռի՛ր, վորոտաց վարպետը. դեռ խո՛սում էլ ես: Ժալոնկայից բացի, ուրիշ վո՛չ մի բանի վրա իրավունք չունիս մտածելու, հասկանո՞ւմ ես: Ծառա-յում ես, փող ես ստանում աղայից, ուրեմն և միտքդ միշտ ծառայությանը պիտի լինի...

Ապա, յերբ Ստեփանը սփոփված կատաղի շեշտե-րից ու կծու խոսքերից՝ անցնում եր դուրս գնալու— վարպետը ձեռքը նրա ուսին դրեց ու ասաց մեղմ.

— Գնա՛, գնա...կասես հիվանդացար... մի կերպ կազատենք քեզ... Ասենք ճիշտ էլ կլինի. հիվա՛նդ ես... Այդ ի՞նչ է գույնդ. հա՛զիվ ես վոտքի վրա կանգնում...

Ստեփանը ինչ վոր բան մրմռաց քթի տակից՝ շնորհակալության նման:

Հոգնածությունն ու շվարումը կարկամեցրել եյին միտքը: Լեզուն էլ չեր գործում: Գլուխը ծանրանում եր հետզհետե և անտանելի բեռան պես՝ կքում մարմինը:

Վարպետը ձեռքը թափահարեց և դուրս գնաց:

Լսվեց պահ մի նրա վոտների հանած ճղփյունը թաց գետնի վրա, և քիչ հետո յերկար ստվերը անհետացավ մշուշի խորքում:

Ստեփանը կծկվեց դրսի խոնավությունից ու քայլեց:

Հարբածի նման անցավ լճակներից, վոստնեց առվակներից և քիչ հետո մտավ դեղին մառախուղով լի բնակարանը:

Առանց հանվելու ընկավ առաջին հանդիպած ցնցոտիների վրա: Այլևս ուժ չկար: Մարում եր:

Գլխի մեջ տենդոտ մի շրջապար, մտքերի և հուշերի այլանդակ մի հորձանք խառնվեցին իրար: Հրեշավոր, անկապ, միմյանց արագ հաջորդող և անմիտ պատկերներ մղում եյին միմյանց, վոստնում ու դալարվում, ապա հալվում եյին և անհետանում...

Քիչ հետո դրան հետևեց ընդհանուր մի անեություն, և թմիրն ու մոռացությունը իրենց խավարի մեջն առին, կլանեցին այդ ամենը...

4.

Միայն գործից դուրս հանեցին: Ուրիշ վո՛չինչ: Վո՛չ տուգանեցին, վո՛չ հանդիմանեցին: Կառավարչին յերեսն անգամ չտեսավ: Հաշվապահը կանչեց, հաշվեց, ռոճկի մնացորդը պարզեց նրան ու ասաց.

— Ուրիշ տեղ գտիր քեզ համար:

— Դո՞ւրս եք անում:

— Այդպես է հրամայված:

Զարմացավ, վոր չհուզվեց անգամ: Սպասածներից մեկն եր այդ: Բացի դրանից, կասես բթացել եյին ջղերը:

Առհասարակ, առավոտյան զարթնելուց հետո, զգում եր իրեն շա՛տ հոգնած, ջարդված ու թույլ: Ուղեղը չեր գործում. մշուշի մեջ եր ամեն ինչ. կարծես միտքն էլ տկարացել եր, մյուս զգայարանքներն էլ:

Առավ փողն ու գնաց:

Յերբ ընկերները տեսան—հասկացան: Լուռ մնացին: Վոչ վոք խորհուրդ չտվավ: Ինչո՞ւ խորհուրդ: Խորհուրդը չեր ոգնիլ այստեղ: Մխիթարա՛նքն անգամ ավելորդ կլիներ:

Բացի դրանից, տեսնում եյին վոր տղան վո՛չ հուսահատի դեմք ուներ, վոչ էլ դժբախտի:

Յենթադրեցին, վոր փո՛ւյթն անգամ չեր արտաքսվելը:

Յեվ իրավ, ինչո՞ւ հուսահատվել, վիշտն ու դժբախտությունը ոտարի առաջ պարզել: Ի՞նչ ոգուտ այդ ամենից: Չէ՞ վոր ամե՛ն բանվոր սովոր եր դրան և ավելի՛ վատերին:

Ունեցածը ժողովեց Ստեփանը, տեղավորեց սնդուկում:

Կարծես մեքենա լիներ. անզգա, դանդաղ, անգիտակցորեն գործող ինքնաշարժ:

Հետո պահ մի շվարած՝ յելավ կանգնեց բնակարանի առաջ, գնաց, նայեց խանութներին, ցրտի դեմ՝ նստեց ինչ վոր աղտոտ տախտակների վրա, մինչև իսկ մի ժամի չափ մնաց այնտեղ անձրևի տակ, թմրածի նման... և՛ վերջապես դարձյալ բնակարան մտավ ու քնեց:

Ավելի ճիշտ—թմրած ցած ընկավ: Մոտով անցնողը քիչ նայում եր նրա վախտ ու մեռելատիպ դեմքին, գլուխը յերերցնում ու անցնում:

— Հիվանդ ե, ասաց մեկը. պետք ե հիվանդանոց ուղարկել:

Ցերեկոյան դեմ սակայն, Ստեփանը զարթնեց ու յելավ: Հինգ րոպեյի չափ անկողնի վրա նստած, անշարժ հայացքով նայեց տարածության մեջ: Հետո իջավ, լվացվեց, հագավ մաքուր շորերն ու գնաց դեպի կայարան:

Տեսնող յեղավ, վոր սնդուկից թղթեր և ծրարներ ել հանեց, չուխայի ծոցը կոխեց:

Ընկերներից մեկը փորձեց խոսեցնել նրան:

— Գիտե՞ս, Ստեփա՛ն, հիվանդ ես յերևում, գույն չկա վրադ. գնա՛ բժշկի մոտ:

Ստեփանը կանգ առավ, լսեց, ապուշի նման մի րոպե նայեց խոսողին, հետո անխոս հեռացավ:

Սկսում եր մթնել: Աշնանային գզվելի, թաց ու անձրևոտ կարճ օրեր եյին: Փոքր ինչ ևս–ձմեռը

բախելու յեր դռները: Զգալի ցուրտ եր արդեն. մանավանդ՝ խոնավ:

Բայց Ստեփանը վոչինչ չեր զգում:

Քայլում եր. բարակ չուխա յեր հագինը: Առանց կրկնակոշիկի, ցեխերի ու նավթակույտերի միջով, նեղ ու լպրծուն շավղից եր գնում:

Կա՛րճ ճանապարհ եր այդ: Չեր շտապում. կհասներ միշտ վորևե գնացքի:

Շուրջն ել չեր նայում: Մի տեսակ անկչայություն համակել եր նրան: Սառն ու անտարբեր՝ թեթև ակնարկներ եր միայն նետում նավթահորերին, կաթսաների բոցավառ յերախներին ու անցնող աղտոտ-մրոտ բանվորներին:

Նույն անտարբերությամբ ել տոմսակը գնեց, իսկույն վագոն մտավ և կծկվեց մի անկյուն:

Հոգնած եր, անհունապես հոգնած: Կուզեր նստել, պառկել, վոչի՛նչ չտեսնել ու վոչինչ չզգալ:

Թվում եր թե յերազի մեջ եր կատարվում ամեն ինչ:— Գնացքը շարժվում եր, սլանում եյին մութ տարածության մեջ ճրագներ, տների ստվերներ, հեռու՝ դաշտ, թաց, ճապաղած ջրերով լի հարթություններ, ինչ վոր լճեր, ապա ծխի սյունակներ, բազմաթիվ կայծեր, շենքեր...

Նույն տեսակ, յերազի մեջ յեղածի նման՝ իջավ գնացքից, անցավ բազմության միջով, յելավ ինչ վոր փողոց ու քայլեց:

Գնում եր ստվերի պես, մշուշալից ուղեղով և մշուշոտ փողոցներից:

Մի քանի անգամ կանգ առավ ամայի և մութ ան–

կյուններում, ճակատը կնճռեց, ճիգ գործեց խորհելու՝ թե ո՞ւր եր գնում և ինչո՞ւ։

Ամեն անգամ սակայն մի բան արգելում եր մտքերի կապակցությանը։ Մտածությունները վոստոստում եյին, թերատ պատկերների մի քաոս եր գոյանում։

Գնալ ծանոթների մոտ։ Որինակ, Կարապետենց տունը։ Ընտանիք ուներ։ Բանվոր եր Սեվ քաղաքում։ Տանը չեր լինիլ, բայց կգար... Սակայն չխմե՞լ առաջ մի բաժակ ողի, մի տաք բան։ Մրսում եր. խոնավությունը թափանցում եր կուրծքը... Գամե՞լ եյին, ինչ ե, իրեն այդտեղ, վոր չե՛ր կարողանում շարժվել։ Չե՛ր ել ուզում գնալ։ Նստել կուզեր...

Գնալ այն կնոջ մոտ... Ա՛հ, ա՛յո, գնալ։ Նվագել, պարել, խմել... Արդյոք յե՞րբ եր մեկնում գնացքը դեպի իր գյուղը... Գնա՞լ գյուղ... Իսկ շորերն ու սնդո՞ւկը... Վո՛չինչ, յեղածը ծոցումն եր... փո՞ղը, այո, ծոցումն եր բոլորը...

Փորձեց շարժվել տեղից։ Ույժ տվավ, քայլեց։

Չուխան ել չեր ոգնում։ Խոնավությունը մտնում եր կարծես վոսկորների մեջ։ Կուրծքի վրա կարծես մեծ քար եյին դրել... Ո՛հ, վորքա՜ն դժվար եր շնչում։ Ո՞դ չկար, ի՞նչ ե։

Բայց քայլեց, դանդաղ, քարշ գալով քայլեց և քիչ հետո չեր հիշում ի՞նչպես, ինչո՞ւ—դտավ իրեն մի մեծ դռան առաջ։

Կանգ առավ ու զարմացավ։ Ճանաչեց։ Չեր հիշում վոր այդտեղ գալու միտք եր ունեցել։ Բայց ո՞վ գիտե, գուցե մտածել եր գալ։

Մինչ այդ՝ մթնել եր կատարյալ։ Վոտքով անցուդարձը սակավացել եր։ Ավելի շատ՝ կառքեր եյին

փակված, թրջված մաղող անձրևից։ Ջուրն ու ցեխը ցայտում եյին այս-այն կողմ՝ գլորվող անիվների տակից։

Մի քանի անցորդներ տեսան դռան առաջ կանգ առած դունատ, յերերուն բանվորին։

Ժպտեցին ու անցան։ Հարբած եյին կարծում։ Գինետնից հետո այդտեղ՝ սովորական քայլն եր։

Դռնապանն ել ապակեպատ փեղկից տեսավ։ Դուռը բաց արավ ու ներս թողեց Ստեփանին։

Ներս մտավ, սակայն իսկույն նստեց նախադավթի նստարանի վրա։

Վեր յելնող սանդուխքի տակն եր։ Վերևից լսվում եր ինչ վոր անորոշ աղմուկ, դաշնամուրի խորդոց, քրքիջներ, յերգի բեկորներ, ու ընդհատ, խռպոտ խաղեր։

— Բարձրացի՛ր, ասաց դռնապանը ժպտելով. լավ ես կոնծել, հա՜...

Ստեփանը առանց հասկանալու՝ նայեց նրան ու վոչինչ չխոսեց։

Հետո, յերբ վերևում աղմուկը մեծանում եր, իսկ դռնապանը սպասում եր նրա յելնելուն-դանդաղորեն յելավ ու գնաց դեպի փողոցի դուռը։

— Ո՞ւր. կանչեց զարմացած դռնապանը— այդ կողմը չե ճանապարհը։

Ստեփանը յե՛տ իսկ չդարձավ։ Գնաց ու փորձեց փակված դուռը։

— Բայց լսի՛ր, բարեկամ, մոտեցավ նրան դռնապանը. այստեղից փողոց են գնում։ Ա՛յ, աղջիկները ա՛յն կողմն են. բոլորն ել սրահումն են այժմ...

Ստեփանը բաց արավ դուռը և փողոց յելավ։

Դռան առաջ կառք կար, ծածկոցն իջեցրած։ Մտավ այնտեղ և կծկվեց մեջը։

Կառապանը դարձավ, նայեց նստողին, ձիերի սանձերը ժողովեց ու հարցրեց.

— Վո՞րտեղ։

— Կայարա՛ն. ասաց Ստեփանը խուլ ձայնով։

Առավոտյանից ի վեր՝ առաջին անգամն եր լսում իր ձայնը. խուլ, խռպոտ, ինչ վոր դերեզմանային ձայն, վոր ցնցեց նրան ու սկսեց ուշքի բերել։

Ուղեղը ճնշող մշուշը փարատվում եր։ Զարթնումն եր այն։ Պարզվում եր այժմ շրջապատը։ Կառքի վոստոստումները փութացրին սթափումը։

Վո՞րտեղ եր գնում, ինչո՞ւ յեր քաղաք յեկել, ինչո՞ւ յեր կառքի մեջ։

Հիշեց բոլորը։ Վո՛չ, մոռացության մեջ և լիովին անգիտակից չե՛ր կատարվածը։ Աղոտ կերպով ընդնշմարեց յեղածը։

Վռնդել եյին իրեն. յեկել եր քաղաք հանգստանալու։ Հետո մտածել եր կանանց մոտ գնալ, բայց տեղ հասած՝ զզվանք եր զգացել։

Ու հայրենիք վերադառնալու մի հանկարծակի կարոտ համակել եր նրան։ Գնում եր կայարան։ Փողը մոտն եր։ Հարկավոր չեր վո՛չ աղտոտ անկողինը, վո՛չ ել հանքերի մեջ մնացած մյուս իրեղենները։ Վոչինչ չեր ուզում, միա՛յն հայրենական տունը, իր յերկրի մաքուր ոդը, պայծառ յերկինքը։

Այստեղ չեր կարողանում շնչել. ոդ չկար. յեղածը մութ եր, մշուշ, տանջա՜նք...

Կրծքի վրա քար եր ընկել, ոհ, սոսկալի մի քար, վոր ծանրանում եր, խեղդում...

Հիվա՞նդ եր արդյոք։ Չլինի՞, իրավ, մրսել եր գիշերը՝ հակադարձ քամիների մեջ։

Մի տաք բան լիներ գոնե. մի բաժակ ողի, մի ջերմ անկյուն, կակուղ անկողին և մի գուրգուրող ձեռք, ո՛հ, մի փափուկ աջ, վոր շփեր նրա այրվող ճակատը, կանգ առներ չորացած շրթունքների վրա ու մի քանի կաթիլ ջուր, հայրենիքի ջրից մոտեցներ բերանին, խմեցներ, անվե՛րջ խմեցներ...

Յեվ կամ լիներ մի գինետուն գոնե, ուր նա հարբեր, ընկներ զվարճության հորձանքը, մի բաժակ ոգու մեջ խեղդեր և՛ վշտերը, և՛ հույսերը, և՛ վոսկի յերազները...

Բայց կառքը սլանում եր, վոստոստում, ջրի և ցեխի շատրվաններ նետում աջ ու ձախ։

Կայարանը մոտ եր։ Գնա՛լ ուրեմն։ Հայրենի՛ք գնալ։ Այդպես առանց վոչնչի՞, միայն մի հիսուն ռուբլո՞վ։

Ո՛, վոչ. պետք եր ընծաներ քույրերին, յեղբայրներին, պետք եր դեռ հագուստ և մանավանդ փող, հոր պարտքը, իրենց պարտքը վճարելու փող...

Վո՛չ, դեռ պետք եր մնալ, դարձյա՛լ մտնել նավթի մեջ, մուրի տակ, դարձյալ խոնավության մեջ բորբոսնել, անքուն՝ մրսել քամիների տակ, տանջվել ու տանջվել։

Իսկ առայժմ, այդ րոպեյին նրան հարկավոր եր մի տաք տեղ, մի բաժակ թեյ և մի ծածկոց։ Անձրևը մաղում եր, խոնավությունը թափանցում եր մարմնի մեջ ամեն կողմից։

— Կառապա՛ն, գոչեց նա խռպոտ կանչով և դուրս պարզեց գլուխը։

Կառապանը դարձավ։ Ձայնը չէր լսել, բայց դիպել էին իրեն։

— Դարձիր յետ. ասաց Ստեփանը։

— Ինչպե՞ս։

— Յե՛տ դարձիր։

— Չեմ լսում, բարձր խոսեք։

Հիրավի, ի՞նչ էր այն, ի՛նքն էլ չէր լսում իր ձայնը։ Չե՞ վոր աղաղակում էր։ Կտրվե՞լ էր ձայնը, թե՞ անիվների աղմուկն էր պատճառը։

Ձեռքովը նշան արավ։ Կառապանը զարմացած՝ կանգնեցրեց կառքը։

— Ինչո՞ւ, ասաց նա. կայարան չե՞ք գնում։

— Քաղաք... ձեռքով ցույց տվավ Ստեփանը։

Գլուխը յերերցուց կառապանն ու դարձավ։

Ստեփանը փորձեց խոսել, փողոցի անունը տալ, Կարապետի տան հասցեն ասել—բայց կարծես հանկարծ մեկը բռնեց նրա կոկորդից և չոքեց կրծքի վրա։

Խեղդվում էր. կողքի սոսկալի մի խիթը շնչասպառ արավ նրան։

Ծիգ գործեց, բռնեց կառքի յերկու կողերից, կուրծքը ցցեց, ուզեց յելնել։

Բացավ բերանը, հուսահատ մի ճիչ արձակեց և թուլացած՝ յետ ընկավ կառքի մեջ...

Մութը թանձրանում էր հետզհետե. մառախուղը նստում էր փողոցներում։ Լապտերները աղոտ ու ցորնեգույն լույս էին տարտղնում փոքրիկ շրջանների մեջ։

Յեվ անձրև մաղում էր, սրտմաշո՛ւք կերպով մաղում անընդհատ, անվերջ...

5.

Վերջապես տաքանալ էր սկսում։ Դողն անցնում էր քիչ-քիչ։

Ավելի և ավելի փաթաթվեց մաքուր ծածկոցումն ու կամեցավ քնել։

Բժիշկը վոչինչ չէր տվել դեռ խմելու։

Հիվանդ էր։ Հաստատել էին այդ և ներս ընդունել, պառկեցրել։ Հայտարարել էին սակայն, վոր պետք էր մյուս առավոտյան սպասել։

Մտադրեց քնել։ Թեյ էլ էին տվել։ Խնդրել էր, բերել էին։ Լավ էր. տաքացել էր բավական։ Մրսե՛լ էր անշուշտ. գուցե թեյը քրտնեցներ։ Գիտեր վոր կարևոր էր քրտնելը։ Գյուղումն էլ պատահել էր նման դեպք և մայրը վերմակների տակ դրած՝ քրտնեցրել էր նրան ու լավացրել։

Ո՛հ, լա՛վ էր հիշում դեպքը։ Սիրելի՜ պառավը։ Անմիջապես հանվեցրել էր, կուրծքն ու մեջքը լա՛վ, այրելու չափ լավ շփել էր դեռ ճարպով, հետո վոտները տաք ջրի մեջ դրած՝ իրեն էլ վերմակով փաթաթել, ստիպել էր խմել յերկու բաժակ արքայամորու թեյը և ամենից հետո՝ պառկեցրել էր, տան մեջ յեղած վերմակները ծածկել վրան, ինքն էլ սնարին նստել ու հսկել էր մինչև լույս։

Յեվ լավացրել էր։ Քրտնեցրել ու լավացրել։

Ո՞ւր էր այժմ այդպես բան։ Վո՛չ տաք ջուր, վո՛չ վերմակներ, վո՛չ հայրենի սենյակն ու ծխից սևացած գերաններով առաստաղը...

Ճերմակ պատեր էին շուրջը։ Քիչ հեռուն մահճակալներ։ Մարդի՛կ կային նրանց վրա։ Փաթաթվել

եյին ու քնել։ Խորդում եյին, ղանաղան փչաքաղեցնող ձայներ հանում, տնքո՜ւմ, հառաչո՜ւմ...

Սակայն, ինչ վոր է, դողը անցել եր գոնե։ Տաքանում եր այժմ. մինչև իսկ չա՛տ տաքանում, չնայելով վոր վրան յեղածը միայն մի վերմակ եր։

Ուրեմն սենյա՛կն եր լավ տաքացրած, չա՜տ տաքացրած, վորովհետև շրթունքները չորանալ սկսեցին, լեզուն թաց չեր կարծես. այրվում եր նույնիսկ։

Խմել կուզենար։ Մի բաժակ ջո՜ւր։

Բայց վո՛չ, հիշում եր մոր պատվերը. այդպես ժամանակ սառը ջուր չեր կարելի։

— Համբերի՛ր, վորդի, ջուրը վնաս կտա։

Ու թեյ եր տվել, մեջը ինչ վոր թթվաշ բան խառնած։ Քաղցր ու թթվաշ։

Ո՜հ, յեթե նման բան տային այժմ ևս։ Բայց ո՞վ կտար։ Վո՛չ վոք չկար սենյակում։ Հիվանդներ եյին միայն։ Գիշեր եր։ Քնել եյին ամենքը։

Պետք եր ուրեմն քնել։ Ի՞նչ միտք ուներ արթուն մնալը։

Արդյոք կես գիշե՞ր եր, թե՞ ավելի ուշ։ Յերևի կես գիշեր, վորովհետև վոչ մի ձայն չկար. վո՛չ կառքի, վո՛չ խոսակցության։

Յեվ զգաց վոր ավելի և ավելի յեր տաքանում։ Հնո՛ց եր ամբողջովին։ Այրվում եյին այտերը, ձեռքերն ու շրթունքները։ Լեզուն չորանում եր, չեր շարժվում բերնի մեջ։

Իսկ քրտինք չկար։ Զարմանալի՜ բան։ Այդքան տաքություն և քրտինքի վո՛չ մի նշան։ Գոնե քներ։ Բայց մի՞թե քնած չեր արդեն։

Աչքերը բանալ չեր կարողանում։ Վոչ էլ գլուխը

շարժել։ Քնածի պես եր, բայց զգում եր վոր քնած չեր։

Միտքը գործում եր. արթո՛ւն գործում։ Աչքերն իսկ տեսնում եյին։ Փակ եյին, բայց տեսնում եյին։ Ահա հենց այդ լուսավոր շրջանները, վոր գծվում եյին աչքերի դիմաց միմյանց յետևից։ Կարմիր, բոցավառ շրջաններ եյին, մեծ կլորներ, վոր արագությամբ միմյանց եյին բախվում, մոտենում ու հեռանում։

Ողեր չեյի՞ն արդյոք միմյանց մեջ մտած, միմյանց կտրող։ Ճախրում եյին անասելի արագությամբ, ցոլքեր եյին նետում, փայլուն գծեր նկարում ոդի վրա...

Բայց վո՛չ, ողեր չեյին. լավ չեր տեսել։ Ոդն ինքն եր այդ, վոր չերտ-չերտ, ալեձև յետ եր մղվում։ Ճիշտ այնպե՛ս, ինչպես ջուրը՝ մեջը նետված քարի ժամանակ։

Յետ եր մղվում ամեն կողմից, ծալծալ ու յերերուն՝ ոլորվում... վորովհետև, այո՛, Ստեփանը սկսել եր թռնել, այլանդակորե՛ն թռնել...

Ահա՛, զգում եր նա. վոտները գետնին չեյին առնում այլևս. թռնում եր վո՛չ թե փռված փորի վրա ինչպես թռչուն, այլ ուղիղ կանգնած, առանց թևերի, առանց ձեռքերն իսկ տարածելու...

Ու սավառնում եր վայելչորեն։ Ոդը առջևից յետ եր մղվում, գեղեցիկ յերերումով հեռանում, արևի փայլի տակ ցոլում, վոսկի գծեր տպում տարածության մեջ։

Իսկ տներն ու դաշտերը, լեռներն ու ձորերը

վոտքի տակ, խորքում՝ հետևում եյին միմյանց, վազում յետ գնում...

Բայց հանկարծ ամեն ինչ փոխվեց։ Թռիչքը դադարել եր։ Ի՞ր կամքովն եր արդյոք, թե՞ մի անհայտ ձեռք եր արել այդ, սակայն իրեն գտավ այժմ էլ մի ահագին ձորի խորքում։

Ամենից առաջ՝ գետի շռինդն եր, վոր հնչեց ականջին։ Այդ դռնչոցը չդադարեց։ Խլացնում եր ամեն ինչ։ Մի տասնյակ թմբուկներ լինեյին կարծես, վոր մռնչում եյին նրա ականջների մեջ։

Ո՛հ կատաղի գետ։ Ինչպե՜ս փրփրադեզ գլորվում եր նա ժայռից-ժայռ, պայթում ապառաժների դեմ, ջրափոշի ցնցուղում օդի մեջ, նետվո՜ւմ դեպի մութ ծործորները...

Ահա և հսկայական ապառաժուտ կողեր, վիթխարի լերկ զանգերի նման փայլուն կատարներ...

Բայց վորքա՜ն տո՛թ եր այդտեղ, վորպիսի՜ հեղձուցիչ օդ, մեռելային անշարժություն... Շնչել չեր լինում։

Այնուամենայնիվ քիչ-քիչ դրա՛նք էլ հալվել սկսեցին։ Այո՛, հալվել։ Գետի ձայնն եր միայն, վոր թեև մեղմացած, բայց դռնչում եր ականջի մեջ։ Իսկ ապառաժներն ու ձորերը խառնվում եյին իրար, միապաղաղ սև զանգված կազմում ու հոսում անցնում...

Յեվ մռայլությունը հաջորդեց դրան։ Մի թանձր, ճնշող մռայլություն, վոր, չնայելով նրա ճիգերին, հրեշի նման պարզեց ճանկերը, հրաշեկ ճիրաններով խլեց իր թռիչքի միջից, վար նետեց և ծածկեց անթափանց խավարի տակ...

Հետո, մեկե՛ն յերևան յեկավ վերևից դեպի նրա

կուրծքն իջնող մի խոշոր, սոսկալի կռան, վոր գալիս եր համրորեն, զարհուրելի համառությամբ, գալիս եր առանց կանգ առնելու։

Մինչև մազերի արմատները փշաքաղվեց նրա մարմինը։ Սոսկումը կտրեց նրա շունչը։ Ճիգ գործեց փախչել, յելնել կամ յետ քաշվել, բայց չկարողացավ վոչ մի շարժում անել։

Ու մնաց այնտեղ գամված, վիթխարի զանգվածի տակ պառկած, վայրկյան առ վայրկյան փշրվելու, ճզմվելու վտանգի մեջ։

Ա՜հ, օգնեցե՛ք, ազատեցե՛ք թշվառին, ապրել է ուզում դեռ։ Գոնե մի քիչ, մի օր ապրել, ծնողներին տեսնել, հայրենիքի օդը շնչել, իր դաշտն ու լեռը վայելել... Մի հատ օր, միայն մի օր...

Բայց կռանը–հրեշը իջնում եր, իջնում անվրդով, անկասելի։ Նրա հանած շշուկը մահաշունչ քամու նման զգում եր արդեն... և սակայն վո՛չ մի օգնություն, վո՛չ վոք, վո՛չ մի ձեռք, վո՛չ մի ձայն...

Յեվ Ստեփանը գերբնական ու հուսահատ մի ճիգ գործեց, որհասական շարժումով ջանաց դուրս նետվել մղձավանջի փարումից, ջանաց ազատել կուրծքը, շնչել, գոռա՜լ...

Տասներորդ օրվա մթնաշաղին Ստեփանը իրեն լավ զգաց։ Չկար այլևս մղձավանջը։ Բայց շնչել չեր կարողանում։ Կարծես թոքերը հանել եյին կուրծքից։ Դատարկություն եր այնտեղ։

Չնայելով դրան, մշուշոտ չեր ուղեղն այլևս։ Հասկանում եր ամեն ինչ. տեսնում եր, ճանաչում հիվանդապահին։

Ճանաչեց նաև մի մաշված աղջկա, վոր խնամում

էր իրեն, իսկ այժմ իր շրթունքներին էր մոտեցնում բաժակը և մեղմ՝ ասում.

— Խմի՛ր, դեղդ է։

— Իսկ ո՞ւ, ասաց նա. ու չե՞ք կարող տալ ինձ, չկա՞...

Ժպտեց հիվանդի այդ ցավագին հարցի վրա սպիտակ հագած աղջիկը։ Ժպտեց դառն, վշտալից ժպիտով, չոր ձեռքը դրեց Ստեփանի ճակատին ու լուռ մնաց։

Հետո կամաց-կամաց տեսավ վոր վառեցին լույսերը։ Աղոտ եյին ու կարծես փոշոտ։ Նարնջի գույն ունեյին. կարմիր ու դեղին։

Գնացող-յեկողներ եղ յեղան սենյակի մեջ։ Ինչ վոր մարդ մոտ յեկավ, բազուկը առավ ձեռքի մեջ. պահեց, հետո ցած թողեց ու գնաց...

Դրանից հետո քիչ-քիչ լույսերը սկսեցին աղոտանալ. կարծես հեռանում եյին արագ, մի առ մի մարում։ Հետո՝ զգաց վոր հետզհետե հալվում անհետանում եյին նույնպես պատերն ու առաստաղը, մահճակալները, ամեն ինչ։ Բայց յերկինքը, պայծառ արևով վողողուն յերկինքը լողում անցնում եր նրա գլխի վրայով։

Յեվ նա սավառնում եր դարձյալ տարածության մեջ՝ իր սահուն ու կանգուն թռիչքով, անհունապես յերջանիկ, վորովհետև գնում եր իջնելու իր գյուղը, հայրենական տան հարկի տակ։

Սիրտը ուռում եր ուրախությունից, տրոփում եր պայթելու չափ։ Այնտեղ, իր շուրջն եյին նորից մայրն ու հայրը, քույրն ու յեղբայրները։ Այնտեղ եր նաև Թագուհին, իր կարոտած, իր ցանկալի Թագուհին.

վոր մոտենում եր նրան, ժպտում ու բարևում։ Ամենքը սիրալիր՝ շրջապատում եյին նրան։

Յեվ ուրախ եյին, ակներև ուրախ, վոր իրենց Ստեփանը յեկել եր առողջ, տուն եր վերադարձել և պանդխտության մեջ չեր կորել, կամ մեռել...

Այնքան մեծ եր իր ուրախությունն էլ, այնքան լի յեր կուրծքը բերկրությամբ, վոր շունչը բռնվեց և թվեց թե խեղդվում եր...

Բայց ահ, յերջանիկ եր, խեղդվում եր, բայց յերջանիկ եր։

Ու յերանավետ մի անդորրություն ահա սկսեց իջնել նրա վրա, թափանցել մարմնի մեջ։ Բոլոր անդամները թեթևանում եյին մի առ մի. կարծես այլևս չկային, գոյություն չունեյին...

Անեություն եր այն, յերջանի՛կ անեությունը։ Այլևս վո՛չ մտածություն, դառն խոհեր, վո՛չ զգայնություն-կսկիծ ու տանջանքներ։

Վոչինչ, միայն վոչինչն եր. յերջանի՛կ վոչինչը...

Յեվ այնուհետև եր, վոր մնաց նա անշարժ իր յերանավետ անդորրության մեջ, դունատ և տամուկ ճակատովը պառկած ճերմակ անկողնի վրա, անփայլ աչքերը տարածության մեջ մոլորուն, անդրաշխարհային յերազներով քողավորված։

Դեմքը, սպիտակ այն դեմքը այժմ սկսում եր ստանալ ծանր և լուրջ խաղաղություն։

Հարթվում, հղկվում եր ամե՛ն կնճիռ։ Չկային այլևս վշտալից ակոսները։ Շրթունքների անկյուններում միայն սառել-մնում եյին ինչ վոր խորունկ, խորհրդավոր գծեր, վորոնք բողոքի զայրագին շեշտեր

լինեյին կարծես՝ ուղղված մթնոլորտը չափազանց ճնշող անարդարությունների դեմ...

Դրսում մութը թանձրանում էր չարունակ. մառախուղը պատում էր փողոցները, լապտերների լույսերն այլևս ուժ չունեյին և անձրևը մաղում էր, սրտամաշո՛ւք կերպով մաղում անընդհատ...

ԻԿԱՐ

(ՊԱՏՄՎԱԾՔ)

Կայարանին շատ մոտ կատարվող գնացքի այդ խորտակումից հետո, ուսուցիչ Վահանյանը ինձ հետ էր մինչև ձորագլուխ բարձրանալը:

Այնտեղից նա թողեց ինձ, դեպի մեծ անտառները գնաց, և վորքան գիտեմ, այնուհետև այլևս վո՛չ վոք չտեսավ նրան:

Նրանց, վորոնք հետաքրքրվում են և Վահանյանի կյանքի այդ մասը լավ չեն իմանում, յես կհաղորդեմ այն, ինչ ինձ հայտնի յե:

1.

Գնացքը շատ էլ չէր խորտակվել: Առաջի յերկու վագոնները միայն ջարդվեցին: Կառաշարը դուրս նետվեց գծից և պառկեց փափուկ հողաթմբի լանջին:

Ճանապարհորդները իրար վրա թափվեցին, շատ ճիչ ու աղաղակ բարձրացրին, չնչին վերքեր ստացան, մի քանիսի վոտքն ու ձեռքը ջարդվեց, մեքենավարը գլորվեց յերեք քայլ հեռու թավալող գետակի մեջ,

բայց վերջապես ամենքը ուրախ եյին, վոր ո՛չ ծանր վիրավոր յեղավ, ո՛չ ել սպանված:

Յես ել բավական վախեցա: Պառկել եյի, հանկարծ շուռ յեկա և գլուխս ամուր խփեցի վագոնի պատին:

Բարեբախտություն եր, վոր այդքանով ազատվեցի: Ուսուցիչ Վահանյանը նույնպես այդ վագոնի մեջն եր: Թիֆլիսի կայարանումն եյինք իրար հանդիպել: Գնում եր վոտքով զբոսնելու գյուղերը և անտառները:

Ըստ յերևույթին նա՛ յել չեր վնասվել: Յերբ ամենքս վագոնից դուրս յեկանք, տեսա վոր ոգնում եր սրան-նրան, մանավանդ մանուկներին:

Շալակեցինք ունեցածներս և վոտքով կայարան գնացինք: Պետք եր յերկա՛ր սպասել, մինչև նոր կառաշար բերել տային:

Կայարանում սենյակներ կային. կար նաև խանութ: Պատսպարվեցին ամենքը:

Ներս չմտանք մենք: Մի թեթև պայուսակ յես ունեյի, Վահանյանը՝ իր վերարկուն:

Յելանք յերկաթուղու դարավանդի վրա ու նստեցինք:

Լույսն արդեն բացվել եր: Թեև ձորի յերկու ծայրերը դեռ քողավորված եյին մառախուղով, սակայն հատակը պարզ եր և պղտոր գետակը յերևում եր ցածում: Դիմացի կողի վրա և հեռուն գտնվող խրճիթների խորքերից լսվում եյին աքաղաղի խռպոտ կանչեր, կովի բառաչներ: Մշուշի միջից հապճեպով դուրս եյին նետվում գյուղացիներ և արկածի տեղը վազում. Թացության մեջ ճղփացող գետինը դրոշմած

եր պահում նրանց վոտքերի հետքերը: Թաց եյին տանիքներ, ժայռ, ծառ և խոտ: Թեթեվակի անձրեվել եր գիշերը:

Չնայելով ձորամիջի մռայլ տեսքին, արևը վոսկեզոծում եր արդեն հովիտը յեզերող բարձրաբերձ ու կնճռոտ կատարները: Մոխրագույն մառախուղը բարձրում կաթնագույն քողի նման լուծվում եր հետզհետե և թավալում ապառաժոտ լանջերն ի վեր: Մացառոտ կողերի արահետների վրա հայտնվում եյին գորշ վերարկուներով գյուղացիներ, մի յեզ, կամ մի բեռնավորված եշ առաջնին:

Չեյինք խոսում. նայում եյինք վեր, դիմացը, բարձր լեռնադաշտի յեզերքներին, ուր շարժվում եյին սև կետեր և վորտեղից հասնում եյին անորոշ, խուլ աղաղակներ:

Արևը վողողել եր նրա մեն մի ցցունքը. վոչխարները կայտառում եյին կանաչության մեջ, դահավանդի ծայրին մեկ-մեկ յերևում եր մի այծ, կամ մռութը դեպի ձորը՝ բառաչում եր մի կով և նրա ձգված, խուլ ձայնը յերերուն՝ իջնում խառնվում եր գետակի շշուկին:

Իսկ թռչուննե՛րը, այս-այն կողմ սլացող նրանց աշխույժ դայլայլն ու ճռվողյունները, վորոնք միմյանց ներդաշնակելով՝ հնչում եյին ծառերի վրա, ժայռերի մեջ...

Ամեն ինչ ժպտում եր այնտեղ, զվա՛րթ եր, կենսունակ: Արևի վոսկեգույն լույսը և ջերմությունը յեռանդ եյին ներշնչում բույսի, ծառի, նույն իսկ կնճռոտ ապառաժների: Գոլորշարձակ մարդերը փողփողում եյին դարաստաններին, մանրիկ առվակները

արծաթե օձերի նման գալարվում էին մացառների միջով, առապարների վրա կարմիր ու դեղին ծաղիկները ցողի ջինջ կաթիլներ էին ցնցուղում...

Հմայիչ էր, կենսալից այդ անկյունը: Դալար և ծիծաղկոտ այն բարձր կատարները յելնելու տենչանքը համակում էր մարդու:

Հիրավի, ինչպիսի՜ հաճույք՝ գնալ ու մագլցել այդ ապառաժներն ի վեր, թավիշ կանաչության, ծիծաղախիտ արևի վողողման մեջ՝ հասնել կուսակ ժայռերին, ցցվել նրանց գագաթների վրա, նայել այնտեղից անդունդի հատակում գալարվող գետակին և պահ մի զգալ, վոր հեռո՛ւ յես առօրյա վեճերից ու հոգսերից, հեռու՝ ներքևում տիրապետող ամե՛ն գծուծությունից, մանր հաշիվներից...

2.

Յերկուսս էլ չուռ յեկանք և իրար նայեցինք: Հասկացել էինք: Յերկուսիս մեջ էլ ծնել էր այնտեղ գնալու տենչը. նույն զգացմունքն էր համակել յերկուսիս:

— Վորքա՜ն լավ է այնտեղ. խոսեցի յես:

Վահանյանը յելավ, ծալեց վերարկուն, նետեց ուսին, ակնարկեց սարահարթին և ասաց.

— Գնա՛նք:

Վարանեցի: Մի ամբողջ կայարան ունեյի մինչև իմ ամառանոցի տեղը: Յերկար պտույտ կլիներ այդ կողմով գնալը:

Բայց համոզեց ինձ ու գնացինք:

Առաջ անցավ: Նկատեցի վոր նրա մշտապես, սո-

վորաբար մռայլ ու անժպիտ դեմքը մի տեսակ կենդանություն ստացավ. դժգույն այտերը կարծես գունավորվեցին:

Մի վոստյունով անցավ յերկաթուղու գծից և յեռանդուն քայլերով գնաց դեպի լանջերն յելնող արահետը:

— Բարձրանում ենք, ասաց նա— հոգիս ճնշվում էր այս մռայլ խորության մեջ. չո՛ւտ, դեպի արե՛վը...

Յերբ բավական յելել էինք և ընկել գյուղացիների սովորական շավիղի վրա, ընտրեց մի ժայռ ու նստեց: Արևը դեռ չէր հասել մեզ, բայց իջնում էր: Կայարանը մնացել էր խորքում. յերևում էր թե ինչպես մտնում-յելնում էին այնտեղ, գալիս էին դեպի նա գյուղացիներ բեռնավորված: Արկածի տեղից կրում էին ծանր բեռները:

Մեր մոտով անցավ մի գյուղացի: Յերիտասարդ էր: Ուսին պայուսակ, ձեռքին ցուպ:

Զվարթ, առույգ և աշխույժ դեմքը մեզ դարձրեց, պահ մի զննեց հետաքրքրվող աչքերով, հետո բարևեց ու անցավ:

Ակամայից՝ հաճույքով հետևեցի նրա լայն թիկունքին, հաղթանդամ մարմնին: Այնպես քայլեր էր դնում, վոր գետինը կարծես դողալիս լիներ:

Նույնպես ակամայից ակնարկս դարձավ Վահանյանի նիհար կազմվածքին ու դժգույն դեմքին:

Ինչպիսի՜ խորշումներ էին այն, վոր մթության մեջ չէյի նշմարել յերեկ և այդ առավոտ: Մաշված, ծյուրված դեմքը ծալծլվել էր սկսում կարծես՝ հին մագաղաթի նման. այդ՝ դեռևս յերիտասարդ թշվառը,

վոր 40 տարեկան չկար, նմանում էր 50-ից անց ծերունու:

Վշտալից ակոսները ճակատի վրա հարթություն չէյին թողել. ներքևի շրթունքը իջել, գրեթե մանիշակագույն դարձել՝ ցնցվում էր հաճախ, ինչպես և դողում էյին դեմքի մկանունքները:

Ի՞նչ համեմատություն անցնող գյուղացու և Վահանյանի, նույնիսկ իմ կազմվածքների միջև: Մենք նման էյինք ծառի այն պտուղին, վոր ճյուղի վրա խակ թառամած է, անհյութ է և անգույն, վոր թեթև արկածի յե միայն մնացել պոկվել-վար ընկնելու համար: Իսկ գյուղացի՞ն: Առույգ, հյութալից և ծիրանագույն, վայելում է բնությունը իր բոլո՛ր էյությունով, իր ամբողջ թափով...

— Վո՛չ, խոսեց հանկարծ Վահանյանը— դու խնդրին միայն մի կողմից ես նայում... Գիտեմ ինչ էյիր մտածում: Ցեվ յես մի րոպե այդ համեմատությունն արի ու սոսկացի: Բայց մի՛ շտապիր. սոոր, մանր, յերբեմն չա՛փ ավելի աղտոտ է դրանից, այդ առողջ մարդկանց կյանքը... Զանազանությունը նրանումն է, վոր միտքը չի՛ գործում այնտեղ՝ դառնելու և դառնալու համար:

— Նրանք սովոր են այդպիսի կյանքի. ավելացրի յես: Մե՛նք էլ ենք վարժվում:

— Նո՛ւյնպես, ա՛նշուշտ: Մենք— յես և դու— անբնական բաներ ենք, արտառոց, վո՛չ սովորական... Մենք ստեղծված ենք բացառությունների համար և վո՛չ թե որենքների... դրա համար էլ ամեն վիշտ, տանջանք, հալածանք կամ հակակրություն մեզ վրա ազդում է հարյուրապա՛տիկ ավելի ուժգնությամբ:

վշտերը մեզ քա՛մում են, մեր թևերը անխնա, պարբերաբար կտրտում... Բայց վե՛ր կաց. դեպի արե՛վը, դեպի արե՛վը...

Ու յելանք, քայլեցինք: Նա առջևից, յես յետևից:

Գնում էյի և մտքովս պատկերացնում Վահանյանի ամբողջ անցյալը: Գիտեյի: Թե՛ ականատես էյի յեղել և թե հենց ինքն էր պատմել ինձ զանազան ժամանակներում: Տեսել էյի թե ինչպե՛ս տանջել էյին այդ մարդուն, ինչպե՛ս յենթարկվել էր նա անվերջ հալածանքների, հետապնդումների:

Վիշտն ու անհասկանալի դառնալու տանջանքները նրա բաժինն էյին յեղել այն օրվանից, յերբ վոտք էր կոխել ուսուցչական ասպարեզը:

Քսանյերե՛ք տարի այդպես: Միակ մեծ սխալն ու հանցանքը հենց դա յեր յեղել— դառնալ հայ ուսուցիչ, հայ գործիչ. այսինքն նշավակ ամե՛ն վատազգի հարձակման, առավոտը շուտով տեղից վեր կացո՛ղ արհամարհանքի:

Վաղո՛ւց, շատ վաղուց էր սկսել այդ ամենը: Վարժվել էր դրության հետ: Հաշտվել էր այն մտքին, վոր ուրիշ սպասելիք չպիտի ունենար կյանքից: Ձախողակ էր ծնել: Անբա՛խտ մարդ էր:

Թշվառությունը նրանումն էր, վոր վո՛չ մի կերպ հարմարվել չէր կարողանում շրջապատող մթնոլորտին, կյանքին, մանավանդ՝ հասկացողություններին: Հիրավի, յեղել էր բացառությունների մարդ և վո՛չ թե որենքների: Ու որենքները քամել, հյութ չէյին թողել նրա մեջ:

Չկարողանալով հաշտվել շրջապատող կյանքին, նրա ամբողջ կյանքը հետևապես յեղել էր, միջավայրի

հասկացողությունների համեմատ, սխալների մի շարք: Չե՛ր ունեցել գրավիչ, սիրելի դառնալու, գոնե մի հատ հաջողություն իսկ ունենալու հատկություններից մեկն ու մեկը: Ընդհակառակն՝ ուներ իր դեմ դրդռելու, հակակրելի դառնալու բավական շատ հատկություններ:

Վերջերս սակայն նա հաշտվել էր այդ ամենի հետ, վորովհետև զգում էր, վոր անզոր էր փոխվելու և կամ շրջապատը փոխելու: Մինչև իսկ փիլիսոփայում էր, ժպիտով էր ընդունում հալածանք, ատելություն, նո՛ւյնիսկ վիրավորանք: Կռվել չէր կարող այդ հասարակության դեմ. վոչ ույժ ուներ, վո՛չ ընկեր: Փոթորիկնե՛ր, ուրագան բերող մրրիկնե՛ր էյին պետք՝ մաքրելու համար Ավգեասի այդ ախոռները:

Զրպարտությունների, ամբաստանությունների դեմ անգամ այլևս չէր պաշտպանվում: Հոգնել էր: Թողնում էր վոր ցեխոտե իրեն ամեն հասնող. միմիայն գլուխն էր վերարկույով ծածկում: Ասպարեզը սրիկայացել էր, հիրավի: Այլանդակություն չկար ուրեմն, յեթե սրիկաներն էյին այժմ կշռողները, և խեղկատակներ—հասարակական կարգ տնորինողները:

Մեկ-մեկ, ճշմարիտ է, հիշում եմ, վոր վրդովվել էր, յերբ անսպասելի կերպով, նույնիսկ իր ընկերակիցներից, ստացել էր վիրավորանք: Յեվ կամ, մանավանդ, յերբ իր սիրած անձերը «գործնական» խրատ էյին տվել նրան՝ մնալ ընդհանուր մակերևույթի վրա, լինել վարվեցող, ապրել ինչպես ամենքը և վոչ թե Թուխչքների մասին մտածել և ձողն առած հասարակական նեխած ճահիճը խառնել, գիրացող զեռուններին սարսափեցնել...

Վրդովվել էր, վորովհետև իր սիրած անձերը ա՛յդքան իջել էյին՝ այդպիսի հորդորներ անելու համար:

Ու զզվանքով, դարշանքով հաճախ մտածել էր թողնել միջավայրը, հեռանալ ընդմիշտ այդ հասարակությունից, չտեսնել վո՛չ մի ծանոթ դեմք, չլսել վո՛չ մի գործի մասին, մոռանա՛լ նույնիսկ վոր նա յերբևիցե յեղել է ուսուցիչ այդ տեսակ խուժանի:

Այդպե՛ս, նա յերբեմն հայտնել էր ինձ իր զայրույթը՝ պարզամիտ ուժգնությամբ. իսկ մի քիչ հետո մոռացել էր հալածանքները՝ մանուկի անհիշաչարությամբ:

Տարորինակ էր թվել ինձ նա միշտ նաև ա՛յն տեսակետով, վոր այլևս վոչինչ լավ բան չէր տեսնում իր շուրջը: Միշտ դառնացած, րոպեներով միայն յերեխայի պես զվարթ, հետո դարձյալ տխուր ու մռայլ—հաճոյալից կյանքի մասին գաղափար անգամ չուներ:

Նրան չէյին սիրում: Մանավանդ տղամարդիկ: Բարեկամ չուներ: Չե՛ր էլ կարող ունենալ, վորովհետև վոչինչ թաղցնել չգիտեր.— վո՛չ մտածությունները, վո՛չ արածները, վո՛չ իսկ անելիքները: Յեվ վորովհետև շողոմարար չէր ու ծածկամիտ—բարեկամ չէր ունենում:

Ու ինչե՛ր ասես, վոր չխոսեյին նրա մասին:

Քայլում էյի նրա յետևից և մեկ-մեկ հիշում բոլորը: Շատերը գուցե մինչև այժմ էլ մտաբերեն:

Ասում էյին, որինակ, վոր նա խենթ էր, աննորմալ. վոր նա վատասերված տիպ էր, խռովիչ էր, կռվարար, կրքոտ...

Վերլուծել այդ ածականները, գտնել նրանց աղբյուրն ու հեղինակները՝ դժվար չէր։ Պետք էր միայն աչքի առաջ բերել նրանց, վորոնք գիտեն կաղապարել հասարակական կարծիքները. կաղապարել ու ներկել այնպես, ինչպես իրենց շահերն են պահանջում։

Բայց Վահանյանի համար համառությամբ կրկընում էյին նաև, վոր սոսկալի Դոն-Ժուան էր, վոր վո՛չ մի կին, որիորդ նրա ուշադրությունից չէր վրիպում։ Կնախնդիր էր՝ ամենավտանգավոր տեսակի։

Յեվ դա, հիրավի, ինձ միշտ զարմացրել է, վորովհետև այդ մարդը չուներ այն գեղեցկությունն ու ճարպիկությունը, չուներ այն շնորհքն ու հաճոյանալու ձևերը, վորոնք անհրաժեշտ են այդպիսի դերի համար։

Ասենք ո՞վ գիտե կանանց հոգին. գուցե և վտանգավոր էր հենց նրա համար, վոր չուներ այդ ամենը։

Փաստն այն էր սակայն, վոր կանայք համակրում էյին նրան։ Այդ ի՛սկ պատճառով էլ, տղամարդկանց ատելությունն ու զրպարտությունները չափ ու սահման չէյին ճանաչում նրա վերաբերությամբ։

Բայց Վահանյանը սիրե՞լ էր և մանավանդ սիրվե՞լ արդյոք—այդ մասին վոչինչ չգիտեմ մինչև այժմ։

Ավելացնենք սակայն նրա մասին ասածների վրա և ա՛յն, վոր բանիմաց մարդիկ ցինիկ ու անպատկառ էյին անվանում նրան. վորովհետև, ասում էյին «նրա համար գոյություն չուներ ընկերական վո՛չ մի դաշինք, վո՛չ մի որենք»։ Նա բացարձակ կերպով իր

զզվա՛նքն էր արտահայտում միտքն ու զգացմունքը կաշկանդող վորևէ կապի դեմ...

Վոր իր միջավայրի համար Վահանյանը այլանդակություն էր— դա պարզ է։ Բայց այլանդակություն, վոր ինքն իրեն էր ավելի վնասում. պետք յեղածից ավելի՛ յեր տեսնում ու զգում և չէ՛ր կամենում հոգուտ յուր գործածել այդ ընդունակությունը։

Գրեթե բնազդաբար, հիրավի, բավական լավ թափանցել գիտեր նա իրերի և դիպվածների խորքը. ուներ նաև գուշակելու, հաջող հետևանքներ հանելու սրամտություն։ Յեթե շահագործեր այդ— անշուշտ պիտի հիացներ ամենքին։ Յեթե հոգուտ յուր շահագործեր և ուրիշների անկման վրա կառուցաներ իր հաջողությունը անշուշտ ամենքին պիտի պատկառանք ազդեր։ Այդպե՛ս էր միջավայրը։

Քի՞չ կային վարպետներ, վորոնք համբավ ունեյին, վարկ ու պատիվ, վայելում էյին հարգանք, հարստություն, գործերի գլո՛ւխ էյին կանգնած, ամբոխի սանձը ունեյին ձեռքներին...

Այդ ամենը գիտեր, տեսնում էր Վահանյանը։

Հիշում եմ, փորձել էր այդպիսի «վարպետ» ինտելիգենտների դիմակները պատռել, բայց ցեխակույտներ էյին նետել նրա վրա, խեղդել էյին ձայնը։ Աշխատել էր գոռալ— խենթ էյին հռչակել. ջանացել էր ապացուցանել— փաստերը նրա դեմ էյին դարձրել ու խեղաթյուրելով ճարպիկությամբ, մինչև իսկ ճակատին էլ զրպարտիչի տիտղոսն էյին դրոշմել...

Ու զզվել էր իր անճարակությունից, զզվե՛լ իր

տակտիկա ունենալու անընդունակությունից։ Զզվել էր, ձեռնթափ յեղել, հեռացել էր ամեն գործից, մեկուսացել, կղզիացել…

Վո՛չ հասարակական տեղեր էր հաճախում այլևս, վոչ էլ հասարակության մեջ յերևում։ Ոտարի յեր նման, յերբ յերևում էր մի տեղ։

Յեվ մենակ էր այժմ։ Մենակ՝ իր յերազների, վորոնումների ու թռիչքների հետ։ Արտաքին աշխարհից կտրվելով հետզհետե, ինքն իր մեջ ամփոփված, ապրում էր իր ներքին աշխարհովը միայն։

Ոտար, բնակությունից դուրս նետած անձի յեր նման, վոր անտուն ու անտեղ՝ չգիտե ուր գնալ։ Իր ուզած տունը շինելու ույժ չուներ այլևս. հոգնեցրել էին, ջլատել ույժերը ապարդյուն պայքարներով։ Ուրիշ հայրենիք վորոնելու յելնել—միջոցներ չուներ։

Աստանդական, վտարանդի, ձմեռը այս ու այն տեղ՝ դասերի, իսկ ամառը, բոպեյից մղված՝ գնում էր թափառելու լեռ ու դաշտ, գյուղ ու ավան. գնում էր, վոր յերազելու համար հանգիստ տեղ վորոնի բնակություններից հեռու. հետո դա՛րձյալ մտնում էր խուժանի մեջ, զայրույթ ու նողկանք կուտակում և նորից յելնում դեպի մենավորությունը՝ խաղաղացնելու վրդովված հոգին, հանդարտացնելու քայքայված ջղերը։

Թվում էր թե դառնալու և հանգստանալու հաջորդական մի մղձավանջ համակել էր Վահանյանին. մի անհրաժեշտ պահանջ վշտակրության, ուժգնացնելու համար թռիչքներն ու վոստումները, տենչալի դարձնելու՝ յերազները…

3.

Ինչպիսի՛ հոգեպարար բավականություն էր այն, յերբ սարահարթին հասնելով, մի քիչ հեռու գնացինք, կոշտ սալերի վրա նստեցինք և միմիայն բնությունը տեսանք մեր շուրջը։ Բնությունը՝ լայնարձակ, անշրջանակ, խաղաղ և վսեմ։

Գետնատարած ու դալարուն սև մի յերախ հեռվում ցույց էր տալիս ձորի տեղը. վոտքերիս մոտ, յետևում, շուրջներս ամբողջ՝ սփռված էր անհուն տարածություն՝ տեղ-տեղ լերկ ու սպիտակ ցցունքներով։ Հորիզոնի վրա դեզ առ դեզ գծվում էին մշուշալից լեռներ, անտառապատ կատարներ. ավելի մոտ՝ պայծառ կարմիր ու դեղին շերտերով բծավորած ընդարձակ դաշտե՛ր էին հաջորդում միմյանց. այս-այն ուղղությամբ փայլում էին կանաչ, զմայլելի տափարակներ ու ալեձև կույտեր, վորոնք մագլցում էին գագաթներն ի վեր՝ ամպերի քուլաների նման դողտրիկ վոլորտումներով։

Յերկա՛ր մնացինք այդտեղ։ Յերկա՛ր մեր յերազները թափառեցին հեռավոր անտառների, կապույտ գագաթների վրա, դաշտերի և ծաղիկների շուրջը։

Վերջապես Վահանյանը, վոր մինչև այդ՝ միայն հատիկ բառերով էր խոսել, կպավ թևիս ու ասաց.

— Նայիր այնտեղ… հեռուն, այդ ամենաբարձր, յերկնամերձ կատարին՝ անտառի մեջ…կարծես հսկայական արծիվ լինի, վոր սևաթույր թևերը աջ ու ահյակ, սավառնում է ամպերի տակ…

Այդպես էր. անտառի ընդարձակ կանաչության մեջ այդ ժայռը դուրս էր ցցվել հոխորդ շարժումով

ու նրա դիմախռիվ գանգի վրա հեռվից փայլում եր մի բացատ, վոր ձյունի նման սպիտակ, սակայն անփայլ, ուրարի պես ձգվում-հասնում եր մինչև անտառի ստորոտը:

— Գնա՛նք այնտեղ, խոսեց Վահանյանը:

— Ճանապարհից դուրս ե:

— Շա՛տ ավելի լավ:

— Յես չեմ կարող. կինս ու աղջիկս սպասում են ինձ:

Հետո, վորովհետև անոթացել եյի, բացի պայուսակս, հանեցի հաց ու պանիր և սկսեցի ուտել:

— Անոթի չե՞ս:

Մերժեց: Ակնարկը ուղղած իմ ուտելուն՝ սկսեց խոսել:

— Մի՞թե իրավ, ասաց նա մեղմ— մի՞թե դու չեյիր ցանկալ յելնելու այդ ամենաբարձր կատարին և... այնտեղից վորոնել ուրի՛շ բարձրություններ: Կանգ առնել սավառնող թևերի վրա, լայնածավալ տարածության կենտրոնին, ծովից ու դաշտերից շա՛տ վեր, քաղաքներից և մարդկանցից հեռու, առորյա կյանքը ընդմի՛շտ յետ թողած...

— Լավ կլիներ, այո՛:

— Մոռանա՛լ անգամ, շարունակեց նա՝ ակնարկը տարածության մեջ մոլորուն.— մոռանալ վոր նյութական մարմի՛ն ունիս բուսական կյանքի ձգտող: Անոսրանա՞լ՝ վորպես վերևի մթնոլորտը, վոգիանա՞լ՝ վորպես յերազ և մտովին սլանալ բարձր, ո՛հ շա՛տ բարձր, մինչև արևը...

— Իկարի նմա՞ն*):

— Այո, ասաց նա դողալով: Ջղային դող եր այն:— Իկարի նման, թռնել դեպի լույսն ու կրակը:

— Իսկ հետո թևերն այրել ու նորից ցած նետվել՝ վերջնականապես ջախջախվելու համար:

Լռեց քիչ, յերազուն աչքերը հեռուն՝ անշարժ մնաց բավական, հետո խուլ ձայնով ասաց.

— Մտային այն թռիչքները, վորոնք մոմով կպցրած թևերով են կատարվում, միշտ հալվում ու փոշնչանում են գիտակցության կրակի առաջ:

Հետո յելավ, վերարկուն ուսի վրա ձգեց, ձեռքը պարզեց ինձ ու ավելացրեց.

— Քո ճանապարհդ այլ ե. ցտեսություն:

Յեվ գնաց. հաստատուն, բայց հանդարտ քայլերով բռնեց դեպի անտառը ձգվող ուղին ու հեռացավ:

Յերկար նայեցի նրա յետևից: Չդարձավ անգամ. ուղիղ դիմում եր կատարներին:

Ու յերբ հեռու, դաշտերի հորիզոնում միայն շարժուն սև բիծ դարձավ նա— յելա, առի պայուսակս ու քայլեցի դեպի տունս:

Այդ եր իմ վերջին հանդիպումը ուսուցիչ Վահանյանի հետ:

Կմոռանայի անշուշտ յես նրան, ինչպես մոռացել եմ շա՛տ յերազողներ և շատ յերազներ, սակայն մի որ

---

*) Իկար, կամ Իկարիոս, դիցաբանական հունաստանում վորդին եր Դեդալոսի, վորը իրեն և վորդուն մեղրամոմից թևեր շինեց թռչելու համար. Թռչելիս Իկարը հորից ավելի բարձրացավ. արևի ջերմությունից նրա թևերն հալվեցին և նա թավալագլոր ընկավ ծովը, Սամոս կղզու մոտերը:

նկատից ստացա խոշոր կապոց թղթեր և զարմանքով տեսա, վոր Վահանյանը ի՛նձ եր ուղարկել իր հուշատետրը։

Թղթերի կտորներ եյին, մի հաստ ել տետրակ։ Մատիտով եր գրված․ մանր տառեր, անկանոն և դժվար կարդացվող։

Մի նամակ ել կար։— «Քեզ եմ ուղարկում հուշատետրս, ասում եր նա— կարդա և ինչ կուզես արա․ թղթի վրա անցկացնելուց հետո զգացածներս ու մտածումներս, այլևս ինձ պետք չեն նրանք։ Մարդ չկար, վոր հետը խոսեյի։ Եթե լիներ իսկ, գերադասում եմ լուռ, սիրալիր և հանդիստ ականջ դնող թուղթը, քան վորևե իմաստակի ու նախանձոտի թթուդեմքը, չարամիտ հայացքը և հեգնող անամոթությունը»։

4.

... «Անտառը քաշում եր ինձ․ քաշում եյին մանավանդ կատարները և նրանց մեջ՝ այն արծվանման ժայռը, վոր սպիտակ ուրար ուներ ուսերին։

Համակված ամբողջովին վեր սլանալու յերազով, այլևս վոչինչ չեյի տեսնում, չեյի հիշում․ միայն այնտե՛ղ, այնտե՛ղ...

Ու յելա, թողի ընկերոջս և քայլեցի։

Բայց յերբ ճանապարհի վրա յելա և արտերի միջով եյի գնում, կամաց-կամաց մտավոր սլացումներիս թռիչքներն իջան, մոտեցան գետնին։

Շուրջս նայեցի շփոթված։ Ի՞նչ եր այն, ի՞նչ եքս-

տազ եր մղում ինձ ամպերի մոտ, մշուշներից վեր․ այդ ի՞նչ ույժ եր, վոր մի վսեմ շարժումով ջնջել եր հիշողությունից, գոնե մի առ ժամանակվա համար, ներքևում կրածս ահավոր տառապանքներն ու վշտերը, վոր յերակներիս մեջ եր ներարկել յերանավետ աննյութ մի հեղուկ՝ հաշիշի նման արբեցուցիչ։

Եվ յես զգում եյի վոր ժպտում եմ։ Ժպտում եյի հորիզոնին, դաշտերին, կույտ-կույտ կանաչ բլրակներին, դողդրիկ որորվող արտերին ու նրանց միջից պչրանքներով վողջունող նազելի, ծիծաղկոտ ծաղիկներին...

Սիրտս ուռչում եր հրճվանքից, յերանությունը յե՛ռ եր բերում արյունս և յես ուզում եյի պարե՛լ, շնչե՛լ, վայելել ամենը․ վորովհետև սիրո՛ւմ եմ յես այդ հրաշակերտը— բնությունը, նրա մե՛ն մի անկյունը, մե՛ն մի շյուղը, նրա շշուկն ու շարժումը, մութ խորշերն ու գաղջ անկյունները անգամ...

Բնության բույրը, բնության շունչն եր այն, վոր գրավում եր եյությունս, յեռանդ եր ներմուծում յերակներիս մեջ»...

«Դերբուկներից հետո թումբե՛ր դեմ յելան՝ մացառոտ և խուխվալից կողերով։ Ապա անտա՛ռը ծայր առավ։

Սկսում եր դեպի ձորը խոնարհած դալար ծառերի և թփերի խառնուրդով, հետզհետե խտանալով մագլցում եր սարն ի վեր, ալեձև ծալքերի և խորշոմոտ ծործորների մեջ գալարվում եր և խորհրդալից խորշերով սողոսկում եր դեպի ժայռերի գագաթները։

Վո՛չ յերկինքն սկսեց տեսնվել այլևս և վո՛չ շրջակայքը: Ծառերի անվերջ շարքեր եյին, վոր հեռվում մթին զանգվածներ եյին դառնում:

Գետինը լպրծուն եր. փտած փայտ ու տերևներով ճղփացող շերտեր եյին սահում վոտքերիս տակ, քայլերս ծանրանում եյին, հետադնաց մղումներով դժվարացնում:

Սակայն յես գնում եյի, յելնում՝ կառչելով արմատներին, ճյուղերին, թփերին: Յերբեմն, հեվհեվ ընթանալուց հետո, պահ մի նստում եյի մի կոճղի վրա, կռթնում կնճռոտ մի կաղնու բունին և դիտում խտացող անտառը:

Բարձրաբերձ ծառեր եյին այլևս: Սովոր, ընդարձակ մի տարածություն՝ ցցված, յերերուն հսկաների, վորոնք վոտներով մխրճվել եյին խոտ ու թփի մեջ, իսկ թավոտ գլուխներովը վերևում աղմկալից համբույրներ եյին բաշխում իրար: Ու սաղարթներն այն ճկուն, ամանակավոր, ներդաշնակ որորումով հնչեցնում եյին անտառային մեղմ, ամպաճույճ նվագը:

Լսե՞լ ես դու յերբեք այդ խորունկ խայերի միալար թրթռումները, վոր բնության յերազանքն է արտահայտում այնքան խորհրդավոր ու վսեմ:

Ականջ եյի դնում անհագ զմայլանքով նրա անճեցուն յեղևեջներին, վորոնք մեռնող մրմունջից խուլ մռնչյունի եյին հասնում. հետո, վոլորտուն հապճեպով իջնում՝ մղում-քշում եյին խաղերին դեպի ծառերի խորքերը, հալեցնում մթության ծալքերի տակ:

Ու միալար ներդաշնակության հրապույրովը հմայված, յերազներից — յերազ արշավելով՝ սլանում եր միտքս մի հեռավոր աշխարհ, մի յերանավետ նոր

բարձրություն: Չկային այլևս վոչինչ ներքևից, վոչի՛նչ այս աշխարհային-մոգական մի մեղմ լույսի տակ, գվարթորեն թռչկոտում եյին այնտեղ թիթեռային թափանցիկ թևերով՝ գողտրի՛կ, դեղատեսիլ գլուխներ. և յես զմայլած, վախենալով կորցնել այդ տեսիլը, շունչս բռնած՝ վայելում եյի մեծ հաճույքը:

Վորքա՜ն անուշ, վորքա՜ն հոգեպարար են այդ յերազանքները բարձրերի, թռչող գլուխների, այդ բուռն տենչը անոսր կատարների և այդ ձգտումը՝ միշտ յելնելու, մագլցելու դեպի վե՛ր, վե՛ր...

Ինչո՞ւ միշտ դեպի վեր գնալու մղումը, յերազների մեջ անգամ թռնելու հաճույքը, աննկարագրելի հրճվանքը համակում է մեզ, յերբ սավառնում ենք բարձր, կարծես ազատված մեր մարմնի ծանրությունից, ազատված ստամոքսի ահավոր կշռից:

Յեվ գիշերային անուրջներից ա՛յն րոպեներն են քաղցր ու ցանկալի հիշողություններ թողնում, յերբ հաջողվում է մեզ ունենալ և տալ մեր մարմնին ցանկալի արագություն ու սլանալ գետնից բարձր:

Թռչուններին նախանձո՛ւմ ենք մենք և առանց հուզմունքի չե՛նք կարողանում տեսնել թե ինչպես կտրում են նրանք ոդը, նետվում առաջ, թևերը թափահարում և գնում սավառնելու խաղաղ բարձրության շերտերի մեջ:

Ինչո՞ւ առանց տենչանքի դողովը բռնվելու՝ մարդ չի կարող նայել վորևե բարձրության, այնտեղ յելնելու տենչանքի դողովը: Ի՞նչն է այն մղող մեծ ուժը, վոր հոգնածության, մեղկության հաղթահա-

րելով՝ տանում է մարդուն մագլցելու կատարները՝ թեկուզ կյանքի գնովը:

Քի՞չ են յեղել այնպիսիները, կյանքի հետ լա՛վ, ամո՛ւր կապված մարդիկ, վորոնք գնացել են իրենց մահը գտնելու կատարների վրա, սառույցների մեջ են մնացել, ժայռերի դեմ ջախջախվել: Սակայն նրանց որինակը վոչ միայն խրատական չե յեղել, այլ նույնիսկ ձգողական է դարձել, գրավել ավելի՛ շատերի:

Ի՞նչն է վոր թիթեռին մղում է դեպի կրակը թեվերն այրել— մեռնելու գնովը:

Բարձրություն, կատար ու գագաթ, մտավոր թըռիչք և անոսր ոդ ունենալու վսեմ ձգտումը մարդկանց բուռն տենչանքն է յեղել ամե՛ն ժամանակ:

Իդեա՛լ է յեղել այդ գաղափարը: Ունեցել է իր խորհրդանշանը, իր գրույցներն ու որինակները: Այդպես է. «Մարդկությունը առաջ է յեկել սողալով, բայց կվերջացնի թռնելով»:

Փոքր մի ես և նա կթռնի: Նա կունենա՛ միշտ բարձր յելնելու տենչանքը, բայց նա այլես իր թևերը մարմնին չի՛ կպցնիլ մեղրամոմով, վորպեսզի սլացումից առաջացող ջերմությունը հալեցնե նրանց: Նա Իկար կդառնա, բայց ավելի խելահաս և ավելի հեռատե՛ս Իկար…

Յեվ յե՛ս ուղեցի հասնել իմ տեսած ամենաբարձր կետին, այնտեղից ձգտելու համար ավելի՛ բարձր կետերի:

Լա՛վ է, շա՛տ լավ, յերբ մարդ մի՛շտ ունի իր ձգտումների առաջ մի ամենաբարձր կետ, վորին բուռն տենչանքով ջանա հասնել և դեպի վորը յելնելու համար գոյություն ունենան դժվարություններ:

«Լա՛վ է, յերբ կա մի բարձրություն, վորին դյուրին չե հասնել և վորին ամենքը չե՛ն կարող հասնել»:

Քայլեցի: Յերիտասարդ չեմ. հոգնած, վշտաբեկ, թռնելու համար թևերս ներքևի ծանր ոդի մեջ անոգուտ թափահարելուց թուլացած, ծնկներս տկար, կթոտած, լպրծուն գետնի վրայից քարշ գալով, մացառների դեմ արյունոտվելով, մկանունքներս ձգտած գնում եյի դեպի իմ արծիվը: Այնտեղ եյի ուզում. նրա ճերմակ գագաթի, գիսախռիվ գանգի վրա:

Կհասնեյի արդյոք: Դողում եյին վոտներս, բայց յետ դառնալ, իջնել անգամ մտքովս չեր անցնում:

Պոկեցի կաղնուց մի գավազան, նեցուկ շինեցի ինձ ու գնացի:

Գնում եյի և քաջալերում ինձ, սիրտ տալիս, հոգնածությանս ու թուլությանս մտրակում այն մտածությամբ և համոզմունքով, թե այո, բարձրանալը մարդուս մեծ ձգտումներից մեկն է, վոր ծնում է մտքի զարգացողության, հառաջադիմության թափը: Տգետ մարդը միշտ վախենում է բարձրությունից: Կան «զարգացած», գոնե ուսած մտքեր ևս այդպես: Սակայն այդ մտքերը ուսել են միայն ստամոքսը պարարելու, հեշտակյաց կյանք ստեղծելու նպատակով:

Բարձրի ձգտող մարդը չի կարող գիրանալ: Ցած տեղերն ու բուսական տափարակներն են պարարտացնում… Տիղմ ու փոսեր— ահա գիրանալու գաղտնիքը: Խրոխտ կերպով դեպի վեր, սովորական մակերևույթից ավելի բարձր նետվող միտքը չի կարող

ստամոքս ու մարմինը պարարել: Փորը մեծանում է միշտ ի վնաս ուղեղի. ստամոքսը— ի վնաս մտքի:

... Դատարկ, դատարկ և ուռուցիկ փիլիսոփայություններ:

Չե վոր առանց ուտելու վոչ ապրել կարելի յի, վոչ մտածել, վոչ թռիչքներ ունենալ և վոչ էլ ձըգտումներ:

Ուտել, ուտել: Ստամոքսն է միայն շարժիչը. առանց նրան— վոչ մի թռիչք: Ու նա, ստամոքսը, ժպտում է հեգնորեն, յերբ դու արհամարհում ես նրան:

Թռնել, բարձրանալ... բայց չե վոր ստամոքսը իր ամբողջ հսկայական ծանրությունովը դեպի ցած է քաշում քեզ, գետնաքարշ պահում: Յեթե յերբևիցե մեկին էլ հաջողվում է տանել իր հետ այդ ստամոքսը դեպի վեր— շատ շուտով ջախջախվում են նրա թևերը և փշրվում ներքևի ժայռերի վրա...

Ու յես կանգ եյի առել, նստել գետնին: Անոթի եյի: Խոսում եր ստամոքսը: Մի չնչին ցնցումով նետել եր նա ցած իմ բարձրունքներից, հանել եր իմ յերազներից:

Այո, անոթի եյի, ուտել եյի ուզում:

Սոսկումով ուշքի յեկա և տեսա վոր վոչ միայն ուտելու վոչինչ չունեմ, այլև բնակություններից շատ հեռու յեմ, անտառի խորքը, ճանապարհից դուրս:

Յեվ յերբ այդ էլ գիտակցեցի, անոթությունս ավելի սաստկացավ:

Ահ, շատ բարձր եյի թռել, այո, և ահա արևը

հալեցրել եր իմ մոմով կպցրած թևերս. ընկնում եյի, գլորվում վար, գլորվում սաստիկ արագությունով:

Ուտելու բան, գոնե բուսեղեն, պտուղ: Բայց վոչ արմատներ եյի ճանաչում, կամ վորևե ուտելու բանջար, և վոչ էլ պտուղի նշույլ եր յերևում անտառի մեջ: Վայրենի, անպտուղ ծառեր եյին միայն:

Շուրջս նայեցի, կռացա դեպի գետին, մտադրեցի ճանաչել ուտելու մի բույս: Իզուր եյի նայում, վորովհետև վոչ մեկը փույթ չեյի արել ճանաչելու: Վոչինչ չգտա:

Յեվ անոթության գիտակցությունը չեշտվում եր իմ մեջ ահավոր արագությունով, յետ եր մղում, մոռացնել տալիս ամեն ինչ, քանի չեյի գտնում ուտելիք:

Վոչ անտառի հրապույրն ու նվագը, վոչ ժայռերն ու բարձրությունները, վոչ յերազներ ու թռիչքն եյին այլևս աչքիս գալիս: Նսեմանում եյին նրանք բոլորն էլ հետզհետե ցավալի արագությամբ. աղոտանում եր ամեն այլ փափագ և յես մտովին տխրությամբ տեսնում եյի նրանց անհետանալը:

Իսկ դրանց փոխարեն անոթությունը հրեշավոր մեծություն ստացած իր ճիրանները մղում եր մարմնիս մեջ, յերակներիս միջի արյունն եր սառեցնում...

Ահ ուտել, ուտել, միմիայն ուտել...

Վոտքի յելա, պահ մի վճռեցի իջնել: Իջնելը միշտ հեշտ է և արագ է կատարվում: Կսահեյի ցած, կգնայի դեպի մի գյուղ, դրամ կար հաց կուզեյի, մի կտոր ուտելու բան:

Բայց վեր նայեցի և ծառերի միջից նշմարեցի յերկնքի կապտությունը։ Ուրեմն քիչ հետո արծվանման ժայռի վրա պիտի լինեյի։ Միայն մի քանի րոպե, մի տասնևհինգ րոպեյի վերելք։ Միթե չեյի կարող դիմանալ։

Այո, սակայն գնալ և չնստել այնտեղ, ինչ միտք ուներ։ Յեվ ահա մի յերկու ժամ անոթի։

Ստամոքսը սկսում եր բողոքել, անոթությունս սաստկանում եր, եյությունս ամբողջ համակում, զզվելի եյին դառնում անտառ, վերելք, ժայռ ու արծիվ։

Յեվ յես զզվելի եյի դառնում։

Վորոնեցի անտառային տանձ, խնձոր։ Մտածեցի թե արքայամորի կարող եր լինել։

Չկար, վոչինչ չկար։ Քաղցը նստում եր ուսերիս, շուռ եր տալիս դեմքս դեպի ներքև և մղում եր դեպի ցած։

Այլևս չեյի կարողանում դիմանալ։ Ժայռ, բարձրություն, Թռիչք... ջնջվում եյին հիշողությունիցս, այժմ դեպի վար, միայն դեպի վար, վորովհետև այնտեղ կլիներ ուտելու բան...

Չգիտեմ ով եր այն, ինչն եր—բռնահարեց ուսս, մղեց դեպի ցած, սահեցրեց— տարավ մինչև դերբուկները և դրավ անտառային ճանապարհի վրա։

Միայն մեկ անգամ յետ նայեցի դեպի ծառերի գանգվածը, ճնշված սրտով տեսա արծվանման բարձրությունը, աչքերիս առաջ շողաց նրա սպիտակ ուրարը... Հետո քշեցին ինձ դեպի ներքև ու յես իջա, գլորվեցի, գնացի կերակուր վորոնելու։

Յերբեք այդքան քաղց չեյի զգացել։ Հայհոյում

եյի ինձ, մտովին թքում ինձ վրա, անիծում թուլությունս, բայց գնում եյի ուտելիք վնտրելու։

Յեվ քանի նախատում եյի ինձ, այնքան ավելի անոթությունս ավելանում եր, գրավում ամբողջ ուժերս, մտածություններս, եյությունս...

Մի կտոր, միայն մի կտոր բան և յես դարձյալ կբարձրանայի, ահ, կգնայի դեպի արծիվը, կարյունոտեյի վոտներս, ձեռքերս, ծնկներիս վրա կմագլցեյի դեպի վեր, մինչև վերջին շունչս կընթանայի... միայն մի կտոր ուտելու բան։

Լռեցրեք ստամոքսին, այս սոսկալի բռնավորին, Թխմեցեք նրա կոկորդը, կորզեք մարմնիցս նրա ճիրանները, ազատեցեք ուժերս ու մտքերս նրա հրեշավոր ծանրությունից...

Լռեցրեք այդ աստծուն, վոր կաշկանդել ե միտքս այլևս վոչնչի վրա չմտածելու չափ, Թռիչքներս—դետնաքարշ փռվելու անկումով, և վորևե գաղափար միմիայն ուտելը հոգալու համար...

... Ինքնամոռացության մեջ, կիսամեռ, տղմաթաթախ և հազիվ քարշ գալով հասա անտառի ստորոտներում յեղած մի խրճիթի։

Ծուխն եյի յերևի տեսել և գնացել այդ կողմը։ Ածխագործ եր։ Յերևի շատ թույլ եյի, վորովհետև յերբ ուշքի յեկա, տեսա վոր պառկել եմ խոտերի վրա և մի սևադեմ մարդ կաթ եր խմեցնում ինձ։

Յեվ սկսեցի ուտել։ Նողկանք ու զզվանք. տենչանքներս ամբողջովին կենտրոնացրած ուտելու վրա, բերանս եյի լցնում ինչ վոր կար առջևս։

Ուրիշ վոչ մի մտածություն չեր մնացել գլխումս։ Ուտելու անասնական հաճույքն եյի միայն վայելում։ Զգում եյի, վոր վերակենդանանում եմ, սառած յերակներիս մեջ արյուն ե ներարկվում, ուղեղս մըթնացնող մշուշը ցրվում։

Շուրջս յեղածը տեսնում եյի այլևս, ըմբռնում եյի։ Ժպտում եյի ածխագործին, շնորհակալություն հայտնում։

— Հեռու յե գյուղը։

— Վոչ, միայն մի ժամ, դեպի ցած։ Ահա ճանապարհը։

Մաքերս պարզվեցին կամաց-կամաց։ Յելա, խմեցի ինձ պարզած ջուրը, վճարեցի, առի վերարկուս ու գավազանս և գնացի։

Վեր չնայեցի այլևս։ Վոչ անտառին և վոչ արծըվանման ժայռին։

Թվում եր թե անտառն իր շշուկը ծիծաղի յեր փոխել, իսկ ժայռը հեգնորեն ինձ եր նայում...

Գլխիկոր և ամոթահար իջա դեպի բնակությունները։ Թևերս մեղրամոմով եյին կպցրած, գլորվել եյի։

Գլորվել եմ, ճշմարիտ ե, սակայն չեմ ջարդվել։ Յեվ քանի ույժ մնացել եր դեռ վրաս, վճռում եմ անհետանալ մեր հասարակությունից։ Ատում եմ յես այդ հասարակությունը։ Ատում եմ նաև ինձ։

Գնում եմ նոր բարձրություններ վորոնելու, բարձրություններ, ուր կա ստամոքսի իշխանությունը սահմանափակող ույժ և վորտեղից պետք չի լինիլ ներքև սողալ ուտելու համար։

Իսկ յեթե կան այդպիսի գագաթներ և կամ յես չեմ հասնիլ նրանց— թող վոչնչանամ և ընդմիշտ ջախջախված անհետանամ...

Այդպես ե թելադրում ինձ իմ թռիչքների տենչը։

Այդպես ե միայն, վոր ուզում եմ ապրել յես դիտենալու, կամ գոնե մեռնել վոստնողներին պատվանդան դառնալու համար...

MORITURI*)

Այդ որ մենա՛կ էյի մտել յես անտառի խորքը։ Չեմ հիշում ինչո՛վ մտադրված, բռնել էյի բլուրների լանջը դրկող առվակը և հասել մինչև յեղեվնիների ստորոտը։

Այնտեղ, ջրի վրա, կամուրջի պես պարզված մի ծառ կա։ Յելա ու նստեցի։

Յերկա՞ր արդյոք մնացի այդպես։ Չգիտեմ։ Յերբ ուշքի յեկա, անտառին մեջ փոփոխություն էր տեղի ունեցել։

Վո՛չ ծառերի բացվածքներից գետնի վրա տարտղնած արևի շողքերն էյին մնացել այլևս, վո՛չ անտառային այն աճեցուն շշուկը, վոր տերևների սոսավյունից է գոյանում ծառերի կատարներին։

Առվակի մրմունջն էր միայն. հեզ և մինալար մրմունջ։

Վերևում, յերկինքը սևացած կապարագույն միաձույլ ամպերով՝ անտառի վրա յեր ծանրացել մեռելային և մթին անշարժությամբ։ Տերևները արագ և

*) Մեռնելու սահմանվածներ։

լուռ դողում էյին մանր սարսուռով բռնված։ Մեկ-մեկ, մի փոքրիկ թռչուն, սուր և կարուկ ճիչը բերնին, ոդն էր պատռում և անցնում։ Ահա և մի նապաստակ։ Նախ կանգ առավ ու լարեց ականջները, հետո վոստյուններով բլուրն ի վեր յելավ և յեղևինների հետևում անհայտացավ։

Ծառերի բացվածքներից յերևում էր հորիզոնը։ Անտառախիտ լեռներ էյին այնտեղ՝ կաթնագույն նուրբ քողի մեջ պարուրված. այս ու այն ձորակից դեպի վեր էյին սլանում սահանքների խուլ շշուկներ։

Մռայլ էյին հայվել ծառերն ու թավ թփիկները։ Բարձրում յեղած ժայռե՛րը նույնպես, այս և նրանց վրա խոնարհած խոշոր յերկճյուղ ապառաժը, մթնել էյին ու կնճռոտվել կարծես։

Առվակից սկսած, յեղևնիների ծառախումբը մագլցում— հասնում էր մինչև բլուրների տափարակը։ Այնտեղ, մի խոշոր ապառաժ ճեղքված ու վայրահակ, իրենից հեռու յեր նետել մի քանի կտոր ժայռեր։ Մամուռն արդեն պատել էր բոլորին. շուրջը խոտեր և թփիկներ պսակ էյին կազմել։ Յերկու յեղևնի, պահակների պես ցցվել էյին ապառաժների աջն ու ձախը. տափարակի մեծ կաղնին էլ իր խոշոր ճյուղերը պարզել՝ հովանի յեր սփռում նրանց վրա։

Այդտեղ էր ահա, վոր առվակից հետո սիրում էյի յելնել և մի քանի րոպե յերազելու պառկել։ Փոխանակ յեկածս ճանապարհով դառնալու, ա՛յդ ուղին էյի բռնում տուն գնալու համար։

Այդ որ էլ, առվակի մոտ յերկար նստելուց հետո, բարձրացա դեպի ապառաժները։

Յելնելու ժամանակ յերկու տեղ կանգ առի։ Հե-

ուներից յեկող ինչ վոր խուլ աղաղակներ վախ ազդեցին ինձ: Չգիտեյի ինչ եր, բայց սիրտս սեղմվեց: Արագացրի քայլերս ու վճռեցի առանց ապառաժների վրա նստելու՝ ուղղակի, կարճ ճանապարհով, տուն գնալ:

Սակայն յերբ ապառաժների մեկի կատարին եյի հավասարվել, ինչ վոր սև կույտ շարժվեց այնտեղ և մարդկային մի տարորինակ դեմք ցցվեց դիմացս:

Հազիվ կարողացա ճիչս զսպել: Հանկարծակիի յեկած՝ կանգ առի: Վայրկենական վախից հետո տեսա, վոր ամառանոցի հիվանդներից մեկն եր:

Սրտաճմլիկ բան եր, հիրավի, սև ու մաքուր հագուստի մեջ պարուրված այդ կմախքի տեսքը: Դեմքը հին, դեղնորակ մագաղաթի նման դժգույն, տամուկ ճակատը, մեռելատիպ, խոշոր և մրկվող աչքերը թախծով լեցուն՝ դժբախտ մի յերիտասարդ եր այն. անբուժելի ա՛յն հիվանդներից, վորոնց յեղենիների անտառն են ուղարկում յեթե վո՛չ բուժվելու, գոնե մեռնելու համար:

Հազիվ յերեսուն տարեկան եր յերևում: Մորուսը ածիլված եր, ընչացքի մազերը զարհուրագին ցցված, ձեռքերի յերկար մատները չոր, յեղունգները կորացած և անփայլ՝ ողեղ ճիրանների նման...

Ծանոթ չեյի. ամառանոցում միայն հեռվից եյի տեսել: Սիրտս սեղմվեց ցավագինորեն:

Յերբ մի րոպե դիտել եր ինձ, ասաց.

— Արդյոք ձեր սիրած տե՞ղն է, վոր գրավել եմ:

Ձայնը խռպոտ եր, խորունկ թախծով համակված. իսկ դեմքը կծկվում եր խղճալիորեն՝ ժպիտ կազմելու համար:

— Վոչի՛նչ. չտապեցի հանգստացնել նրան.— չպիտի՛ նստեմ այսոր. տո՛ւն եմ վերադառնալու:

— Վա՛րն եյինք. խոսեց նա ժպտելով.— տեսա: Յե՛ս ել ցանկացա գալ և առվակի մրմունջը վայելել: Սիրում եմ լռության մեջ սահող, թավշանման այդ կլկլոցը: Բայց վախեցա իջնել. վերադառնալ չպիտի կարողանայի:

— Կարող եյիք չվերադառնալ առվակի յեզերքով ուղիղ ճանապարհ կա մինչև ամառանոց:

— Այդպե՞ս... Ի նկատի կունենամ:

Հետո շուրջը նայեց և զմայլումով ավելացրեց:

— Ո՛հ, լա՛վ է, շա՛տ լավ է այստեղ: Սիրո՛ւմ եմ խիտ և թավ անտառը: Ուր բարձրահասակ ծառերը հսկաների նման կանգուն, հպարտ, համր և պատկառելի, տարածվում են անվերջ շարքերով՝ մինչև մթին, հեռո՛ւ խորությունները... Սիրում եմ ապա այս մամռոտ ապառաժներն ու մշուշոտ հորիզոնը՝ լեռների սավերագծերով...

Այստեղ նա մեկե՛ն ընդհատեց խոսքը, նայեց ինձ վախեցած և գոչեց.

— Ա՛հ, ներեցեք. ձեր գնալուն արգելք եմ դառնում:

— Վոչի՛նչ. ապահովեցրի նորից.— քիչ կնստեմ այստեղ:

Յեվ նստեցի գետնի վրա, թփիկների մոտ:

Գութն ու կարեկցությունը համակում եյին ինձ: Կարեկցություն, վոր ծագում է ինքնաբուխ կերպով, յերբ գտնվում ես մեռնելու սահմանված մի թշվառի կողքին:

Մեռնելու սահմանվա՛ծ... ինչպիսի՜ զարհուրելի մտածություն, հիրավի։

Դիմացդ, ղզա՛լալես, յուղասպառ կանթեղի ողորմածությամբ, մարում է մի մարդու ամբողջ կյանքը, որ քո կյանքի նման անշո՛ւշտ լի՛ է անսպառ հույզերով. որ ապրել է ու նպատակների ձգտել, որ կյանքի վայելքների տենչանքն ունի անհագորեն և գաղափարներ է սնուցել ու որորել իր մեջ՝ սրտատրոփ սպասումներով, և որ երազներ ու թռիչքներ է ունեցել վարդաշող լավատեսությամբ...Իսկ այժմ— ահա ամե՛ն, ամե՛ն ինչ խարխլվում է ու փլվում խըղճալիորեն. փլում՝ հնացած շենքի նման. և դու ոչի՛նչ անել չես կարող՝ կասեցնելու համար այդ վաղաժամ փլումը, փրկելու համար այդ կյանքը...

Թվում է քեզ թե հայացքովն ամբողջ մարմնացած աղե՛րս է այն հուսահատ, թեև համր, որ քեզ օգնության է կանչում, որ կառչում է ակնարկիդ՝ թե արդյոք չե՞ս ունենալ սփոփանքի մի խոսք, հուսատվության մի ապահովեցումն... Եվ դու— ոչի՛նչ, ո՛չինչ...

Ու էյությունդ ամբողջ վրդովվում է. ու թվում է քեզ թե դո՛ւ ես հանցավոր ես այդտեղ. թե քո՛նն էլ է մեղքը, մեղանչե՛լ ես ծանր կերպով և այժմ պարտական ես քավել, զոհի սի՛րտը գոնե առնել, գեթ ամբողջ կարեկցությունդ նվիրել նրան. ամբո՛ղջ գութդ...

Չէ՞ որ դահի՛ճն անգամ ունենում է այդ գութը, երբ մարդկային հանդիսավոր վայրենության զոհի վզի՛ն է անցկացնում չվանը՝ կառափնատեղիի վրա...

Եվ նստեցի՝ մտածելով չնեղացնել, ընդհակառակն, որքան հաճույք պատճառել հիվանդին։ Հասկացա որ խոսակցել էր ուզում. գոնե թույլ տալ՝ որ խոսեր և լսեի։

Գոհունակության ժպիտ խաղաց դեմքի վրա։ Շուռ յեկավ դեպի իմ կողմը և ասաց.

— Թույլ տվեք ծանոթանալ... Ուսուցիչ եմ յեղել. նույնիսկ գրչի մարդ։ Այժմ թոքախտավոր եմ միայն...

Անվանեցի ինձ ես։

— Այս ձմեռ յեղավ. շարունակեց նա։— Կուրծքս արդե՛ն թույլ էր, բայց ուժանակի աշխատանքները, հուզմունքներն ու խոնավությունը, նո՛ւյնպես և վատ ուտելիքը... միջավայրը... Morituri— ահա ի՛նչ եմ յես այժմ։ Գուցե ամառս, հավանական է որ աշնան տերևաթափին...

— Ձեզ չե՛ք պահպանում. ընդհատեցի նրան.— շատե՛րը բուժվում են՝ պահպանելով իրենց։ Խոնավ և անտառի խորքը. չպիտի գայիք։

— Եղևնիներ են. ժպտեց հեգնությամբ և ծառերը ցույց տվավ.— յերեկ յերեվան հանեցի այս ծառախումբը. մարդկանց ժխորից հեռու յե և բնության մոտ. ուզածս անկյունն է։

— Բայց խոնավ է. չեշտեցի յես.— յեղանակն էլ ահա փոխվեց։

— Այո. յերևի պիտի անձրև գա... Նշանակություն չունի։ Մի քիչ ավելի շուտ— ավելի լավ. տառապանքներին վերջակետ կդրվի։ Ուզում եմ բնությունը վայելել՝ մինչև վերջին շունչս։

— Այդքան սիրո՞ւմ եք բնությունը։

— Ամեն բանից ավելի... Ինձ հաճախ թվում է,

որ բնությո՛ւնն է ամենամեծ գիտությունն ու գիրքը, բնությունն է գերագույն գեղեցկությունը... Նկատե՞լ եք, որ չափազանց չնչին, մինչև իսկ զարշելի՛ յենք մենք մեր բոլոր ձգտումներով ու մեծությունով, յերբ գտնվում ենք բնության վսեմության դիմաց, յերբ համեմատության հանդգնությունով ենք բռնվում:

Լուռ մնացի: Ժպտեցի միայն:

— Նկատել ե՛ք անշուշտ. շարունակեց նա.— մըտե՛ք մի խոր ձորի մեջ և վեր նայեք դեպի ապառաժների վիթխարի զանգվածները. կանգնեցեք անտառի մեջ և կպեք նրա հսկա բնակիչներից մեկի պատկառելի բունին: Ի՞նչ եք դուք.— մի՛միայն մրջյուն. ի՞նչ է ձեր գեղեցկությունը— մի՛միայն գաճաճի այլանդակություն...

— Ճիշտ է:

— Բնության մեջ, վրդովվեց նա,— ամե՛ն ինչ գեղեցիկ է. նո՛ւյնիսկ մահը... Արժե մեռնել՝ վերջին ակնարկը նրա վսեմության հիացումո՛վ սառեցրած:

Հետո, յերևի նստելուց հոգնած, իջավ դեպի ինձ և մի քայլ հեռու, պառկեց գետնի վրա:

Թեև ուներ վերարկու, սակայն շատ խոնավ էր գետինը: Զգուշացրի:

— Բարի յեղեք մի անգամ ընդմիշտ թողնել հոգատարական խրատները. ասաց նա թեթևակի նեղացածի շեշտով.— ամեն հանդիպողից նման խրատներ եմ լսում: Չգիտե՞մ միթե, որ խոնավ է, որ պետք է ա՛յս անել, կամ ա՛յն չանել... Հիշեցնե՞լ է այդ, թե՞ պարտականություն... Գուցե «մարդասիրության գործ»...

Ապա շարժեց գլուխն ու ավելացրեց ուժգնությամբ.

— Չկա՛ մարդասիրություն... խո՛սք է դա միայն, որ բառարանի մի յերեսի վրա յե գտնվում... Առհասարակ, յեթե կուզեք, կասեմ որ սեր ասված զգացմունքը գոյություն չունի, յեթե նրա հիմքումը անձնական շահ չկա...

Ներողամտաբար թողի որ թափեր դառնացած հոգու մեջ կուտված պայթույթը:

— Չափազա՛նց հոռետես եք. ասացի մեղմությամբ:

— Ո՛չ, չեշտեց նա.— պայծառատես եմ: Պնդում եք որ կա՞ ուրեմն սեր՝ առանց անձնական շահի...

Յեվ չլսելով պատասխանիս, շարունակեց տաքությամբ.

— Չկա. կապացուցանե՛մ յես ձեզ այդ... Յես սիրահարված էի: Սիրում էի և ջերմապես սիրվում: Վեց ամիս առաջ էր այդ: Լա՛վ ուրեմն, յերբ աղջիկը համոզվեց թե թոքախտավոր եմ— թողեց ու հեռացավ. հեռացավ և գրեց, որ մեր մեջ այլևս ո՛չ մի կապ և զգացմունք չի կարող լինել և որ նա ցանկանում է ինձ առողջություն միայն... Կարճ է այս դրաման, չէ՞. շա՛տ կարճ...

— Գուցե աղջիկը ձեզ չե սիրել անկեղծորեն. առարկեցի յես.— գուցե միմիայն ամուսին է որոնել նա:

— Սխալվո՛ւմ եք դուք: Ունիմ ապացույցներ: Ջերմ էր նրա սերը և անկեղծ: Թողեց իր լավագույն պաշտոնը, որ ինձ հետ լինի: Ավելի գիտուն էր, քան յես. ամուսնություն չէ՛ր որոնածը: Ինչո՞ւ, չէ՞ որ

ինձնից ավելի շատ էր ռոճիկ ստանում և ավելի շատ էր գնահատված։

— Անհավատալի չէ վոր թողած լինի ձեզ։

— Թողե՛ց սակայն։ Թողեց հենց ա՛յն որը, երբ իմացավ վոր թոքախտավոր եմ։ Վախեցավ վարակվելուց։ Երբ մեկնում էր, այնքա՛ն վարպետությամբ վարվեց ու հրաժարական ողջույնը տվավ, վոր ազատվեց համբույրից... Նկատեցի, գոհ էր իրանից... Ու այլևս չերևաց...

Ասաց, ժպտեց դառնությամբ և լուռ մնաց։

Քիչ հետո, անշուշտ խոնավությունից սառած, ձեռքը մեջքին քսելու համար ելավ և ասաց․

— Հիրավի՝ թաց է այստեղ... Եթե կուզեք՝ տուն վերադառնանք։

Ելանք ու քայլեցինք։ Հետաքրքրվեցի կյանքի մասին։ Բարդ չէր։ Ուսուցիչ էր եղել տասը տարի։ Այժմ 35 տարեկան էր։ Ամուսնանալ նո՛ր էր մտածել․ ա՛յդ տարի միայն․ դժվար է չնչին ռոճիկով՝ ամուսնության մասին մտածել։ Դառնությունը իմացա։ Շա՛տ էր աշխատել— զարգանալու հոգսն էր ունեցել անընդհատ․ չէ՛ր գոհացրել նրան դպրոցը։ Սկսել էր զրկել իրեն՝ գրքեր և ուսանելու միջոց հայթայթելու նպատակով։ Երազել էր բարձրագույն դասընթացքների գնալ և կարողացել էր մի փոքրիկ գումար դիզել։ Ու 5—6 տարի իր երազներովը որորուն՝ ապրել էր այդ հրճվանքովը, դղյակներ էր կառուցել... Ո՛հ, ինչպե՜ս անհագորեն լափելու էր վճռել գիտությունները, ինչպե՜ս վորոշել էր չկորցնել վո՛չ մի րոպե, չքնանել, պտույտի չգնալ... Նույնիսկ ցավել էր, վոր

ստիպվելու չէր քնել գիշերները, փոխանակ ուսանելու, աշխատելու...

Բայց հանկա՛րծ... եկել էր հիվանդությունը։ Բժիշկների չէր դիմել հուսահատ աղերսով, ոգնություն էր հայցել սրտատրոփ... Հաստատել էին, վոր արագընթաց թոքախտ էր այն— ծյուրախտ։ Զրկանքներն ու տքնումները ավերել էին թույլ կուրծքը և ճարակել հիվանդության տրամադիր թոքերը։

Եվ ահա վե՛րջ ամեն բանի․ վերջ՝ երազների, թռիչքների, հրճվանքի և կյանքի․ վերջ—նույնիսկ սիրո... Պետք էր մեռնել այլևս, մեռնե՛լ, մեռնե՜լ... ուրիշ վոչի՛նչ։ Միմիայն մեռնել...

Ասաց թշվառը և կանգ առավ կողքիս։ Հուզմունքս ծածկելու նպատակով՝ կռացել էի վոր իբր թե քաղեմ խոտերի մեջ երևցող երկու բոսորագույն մորիները։

Կռացավ ինքն էլ, ծանրությամբ պոկեց մի կարմրավուն սունկ, վոր «թնջուկ» կոչված տեսակն էր, ձեռքը բռնած՝ ուղղվեց, նայեց նրան քիչ, նայեց ինձ և ավելացրեց․

— Այսքա՜ն մատղաշ և սակայն վորդերն արդեն հասել են ուտելու սիրտը ամբողջովին...

Հետո կոտրեց սունկը, ցույց տվավ վորդնոտած միջուկը, դեն նետեց դառն ժպիտը դեմքին և ասաց․

— Այդպե՛ս եմ և ես․ այլևս վո՛չ թոքեր ունիմ վողջ և վո՛չ էլ սիրտ․ երկուսն էլ կերված են ամբողջովին... Մեկին տանջանքնե՛րը կրծեցին, մյուսին—խաբեյությունը։ Մեկին ձգտումնե՛րս մաշեցին, մյուսին—զգացմունքներս հոշոտեցին... Միայն մի բան է մնում անել այլևս․ խոնարհել գլուխս մարդ-

կանց առաջ, ասել՝ «Morituri vos salutart»*)... ծածկե՛լ այլանդակված դեմքս և անհետանալ...

Ոչինչ ասել չկարողացա։ Ո՛հ, որքա՜ն նեղվում էյի։ Կուզեյի շո՛ւտ տուն հասնել, ազատվել այդ ընկերակցությունից, այդ դեմքից և այդ ձայնից։

Բայց դեռ ճանապարհ կար և կողքիցս հեվալով քայլում էր Թշվառը։ Քայլում էր և միաժամանակ վայելում անտառի և ձորերի տեսքը, շնչում էր ծառերից ու ծաղիկներից բուրող հանկուցիչ հոտը... Ջրի վո՛չ մի առվակ, վո՛չ մի աղբյուր չթողեց։ Կռանում էր, լինի մի բուռը՝ վերցնում էր ու բերանը դնում և գորովագին ըմպումներով արտահայտում վայելքը։

Չէր քաղում վոչ մի ծաղիկ։ Քնքշությամբ բռնում էր նրանց պսակները, իջնում դեպի ցած, շառաչյունով հոտ քաշում, զննում էր թերթիկները, հետո ինձ էր դառնում և ասում.

— Ո՛հ, գեղեցի՛կ է այս ամենը. ցավալի յե միմիայն սրա՛նց թողնելը. սրտի դառնությա՛մբ ախտոսամ, յերբ՝ այլևս տեսնելու և շնչելու ույժ չմնա վրաս... Կուզեյի ամառը մեռնել. մեռնել՝ ամբողջովին թաղված ծաղիկների կույտի մեջ, գլուխս նրանց տակ թաղցրած, նրանց նուրբ գգվանքներո՛վը շոյված և նրանց անուշ բուրմունքովը արբեցած...

Այդ օրվանից հետո այլևս չտեսա նրան։ Քաղաք իջա, մի ամսից հետո դարձյա՛լ յեկա ամառանոց, հիշեցի—իրա՛վ է—վորոնեցի մինչև իսկ սովորական

*) Մեռնողները բարևում են ձեզ։

վայրերում, դեպի ապառաժն ու առվակը գնացի մի քանի անգամ, բայց չգտա վոչ մի տեղ։

Չհարցրի։ Վախեցա հարցնել։ Ուզեցի անորոշության մեջ մնալ։

Յեվ այդպես, մինչև այժմ էլ չգիտեմ թե ո՞ւր և ի՞նչպես մեռավ նա։ Հայրենի՞ք արդյո՞ք վերադարձավ՝ աշնան տերեվաթափի՛ն մեռնելու, թե՞ հիրավի, ցանկության համաձայն, հանգա՛վ բնության կենդանության ժամանակ, գլուխը ծաղիկների կույտի տակ թաղցրած, նրանց նուրբ գգվանքներո՛վը շոյված և անուշ բուրմունքներովը արբեցած...

ԾՈՎԱՓԻՆ

Ա.

Որոշեցի Գելենջիք գնալ այդ ամառ: Բժիշկները ծովային բաղնիք եյին պատվիրել, այլև ծովային օդ և ափի ավազուտների վրա փռվելու անգործություն: Քայքայված ջղերս այդ կերպով միմիայն կարելի յեր հանգստացնել:

Լավ եր, գոնե յերեք ամիս կարող եյի ազատ մնալ այն ճնշիչ մթնոլորտից, ուր ամեն ինչ գնալով՝ գարշելի կեղծություններից և նվաստացնող համակերպություններից եր հյուսվում. ուր չե՛յին բավականանում միայն լուռ մնալովս, այլ պահանջում եյին գործակցություն՝ նոր սերունդին մղելու համար դեպի գծուծ և սորկամիտ բթություն, այլև ամեն լավ բանից, նույնիսկ գիտությունից խորշելու ապականությունը:

Ուսուցիչ եյի.— ահա բացատրող բառը: Ուսուցիչ՝ 1905 թվից. մի քանի տարի հետո, այն հետադարձ մռայլ ժամանակներում, յերբ պայծառ ու վոգեվորիչ որերին հաջորդում եյին թանձրացող խավարն ու լռությունը, ընդունակ մեղկացնելու ամենքին, ջլատելու ամեն կյանք...

Յերբ գնացք նստեցի, սկսեցի զգալի կերպով հանգստանալ: Ջանացի մոռանալ դպրոցը, վատասերվող աշակերտությունը և մանավանդ՝ իմ ընկերներին-ուսուցիչներին, զզվելի այդ խմբին, վոր, կարծես, ընտրած ու կազմած լիներ հատկապես հետադարձ շարժման ճտպետներից, մռայլ որերի գարշ վորջերից ծնած մարդագայլերից:

Ու մի անգամ ես սարսուռով մտաբերեցի ամեն ինչ: Հիշեցի բարձրաձայն, հանդուգն կերպով «կրթող» բթամտությունները, ընկերներիս քծնող դիրքը «իշխանության» առաջ, նրանց «ուղղիչ» սորկական դասերը աշակերտներին...

Պատկերացավ ապա թշվառ, դալարվող, ապականիչ բռունցքի տակ մանրացող նոր սերունդը, վոր հետզհետե կորցնում եր ամենայն վեհերություն, վոտքերի տակի կայանն եր դուրս սահում և գնում եր նա գլորվելու դեպի աննպատակության անդունդը:

Վերանորոգվեցին մտքումս, թե ի՛մ կրած տանջանքները այդ սոսկումների մեջ և թե՛ այն մի քանի ընկերակիցներիս ու դեռ չփչացած աշակերտների դրությունը, վորոնք ամեն ճիգ ի գործ եյին դնում ազատ մնալու մշուշից, ազատ ամքեցնող խավարից...

Բայց, այլևս բավական եր, չե՛յի ուզում այդ ամենը. այժմ պետք եր մտովի՛ն ես հեռանալ, գնալ այնտեղ-այն հեռավոր անծանոթ ափերը, մաքուր ոդի մեջ ապրել փոքր ինչ, պայծառ արևի տակ շնչել և կյանք վարել առանց կեղծությունների, առանց սրտմաշուկ ձևականությունների:

Ահ, այո՛, լավ եր, շա՛տ լավ: Սիրո՛ւմ եյի ծովը: Վաղուց եր վոր չեյի տեսել: Անտառից ու բաց դաշտերից ավելի՝ ծովն եյի սիրում:

Հրճվանքով սկսեցի մտածել, վոր պիտի ամբողջ

ժամերով նստեյի ջրի անհուն այն կապուտակ տարածության առաջ, ակնարկս հորիզոնին, ականջս մշտական որոտող շշուկին և հոգիս լի խաղաղ անեռւթյունով,. թեթևվացնող զգացումներով:

Յերրորդ օրն առավոտյան տեղ հասա: Սիրուն էր Գելենջիքի տեսքը: Սեվ ծովի խորշերից մեկի շուրթին էր պառկած՝ մացառուտ պուրակների և ցանցառ ծառաստանների խառնուրդի մեջ:

Ծոցը նման էր խոշոր ափսեյի. ավելի ճիշտ՝ սախական սափրիչների կոնքին: Գյուղը բռնել է նրա վերին մասը: Մի քանի յերկար, կանոնավոր, բայց փոշոտ փողոցներ եյին. ճերմակ ու պարտեզավոր տները, ցած ու ցրիվ ամեն ուղղությամբ, տաքանում եյին պայծառ, ջերմ արևի տակ:

Մի կողքը սահմանավորված էր թավոտ լեռների շղթայով, իսկ հյուսիսային մասը հրվանդաձև պարզված դեպի ծովը, յետևի կողմից դահավանդներ էր կազմում նրա բաց տարածության վրա:

Հեռվում յերևում եյին խիտ անտառներ: Մոտի յեղածները մեծ մասամբ փոշոտ ու փլոտ պուրակներ եյին՝ տոթագին և անստվեր խորքերով:

Արևվալից, ծիծաղախիտ այդ վայրը շատ դուր յեկավ ինձ մանավանդ, յերբ շոգենավից նավամատույց իջա և պահ մի կանգ առա դիտելու հրվանդանի տարածուն յեզերքները:

Խաղաղ եյին ծոցի ջրերը՝ միապաղաղ հայելու հարթությունով. տեղ-տեղ միայն հազիվ նշմարելի կնճիռներ եյին գոյանում, այլև արևի դդվող ճառագայթների տակ վոստոստում եյին բյուրավոր սպիտակ կայծեր:

Ափերի մոտ ջրերի պարբերական շարժումը խլրտոցով լվանում էր ավազը: Այդ իսկ չփումն էր, վոր այնքան հանկուցիչ և ախորժալուր հնչեց ականջիս:

Քաշում էր ինձ այդ ամենը. քաշում եյին մանավանդ այն հեռավոր անկյունները, ուր ժայռերի կույտերը հովանի եյին սփռում ծովափին և ուր կարելի յեր պարզվել ծովի առաջ, ջրի յերթ ու դարձի վողողումները վոտքերիս մոտ ունենալ և շառաչումների ամանակի տակ յերազել անվերջ...

2.

Սենյակ շո՛ւտ գտա: Ընդհանուր լողարաններից հեռու, անմիջապես ծովափին, կային լավ ամառաստաններ: Ծաղկավետ պարտեզներով շրջապատված մի տան մեջ տվին ինձ բնակարան և խոստացան ամեն հարմարություն: Թանդ չեր. վերնահարկ էր, ծովը դիմացս, անտառոտ լեռները դեպի աջ, լողարանի հատկացրած փայտյա խցի՛կ ծոցի մեջ և, վորն առավելն էր, խաղաղ ու լուռ տեղ լինելով, կարելի յեր անշշուկ հանգստանալ, գիշերները անվրդով քնել:

Յերբ տեղավորվել եյի, հագուստս փոխել ու լվացվել, իջա ծովափ և գնացի դեպի հեռուները:

Բնակությունները վերջանում եյին մի քանի հարյուր քայլ դեպի ձախ: Այնուհետև կանաչադեղ մարգերն եյին և վերջապես փոքրիկ փարոսը, վորի աշտարակն ու տնակը կառուցված եյին հրվանդանի վերջին ծայրին:

Հասնելով դաշտը, գնացի ծովափին մոտ ու ժայ-

ռերի միջով իջա դեպի յեզերքը։ Միապաղաղ շերտավորումներով բնական քարաժմբեր եյին այդտեղ։ Ժամանակի ընթացքում կտորներ եյին կորզվել նրանցից և գլորվելով դեպի ջուրը՝ խութեր գոյացրել։ Նման լերկ գանգերի, ժայռերից մի քանիսն ունեյին իրենց շուրջը ծովային ճապաղ բույսեր, վորոնք ծփում եյին ջրերի հետ և անընդհատ յերերումներով՝ նուրբ փրփուր մղում դեպի ավազները։

Այդտեղ նստեցի յես մի խոշոր սալի վրա և մտադրեցի վո՛չինչ չմտածել, վոչի՛նչ չհոգալ, վոչի՛նչ չզգալ ու, յեթե ջրի պարբերական շառաչը նինջ ազդեր—քնել ծովի ոդը թոքերիս մեջ լիաբերան, դեմքս պայծառ յերկնքին և վերևում ճախրող թռչունների ճռվողյունների տակ։

Ննջե՛լ... Ահ, այո՛, յեթե կարողանա՛յի մի անգամ գոնե քնել կուշտ, անհագորեն. յեթե մի միակ որ հաջողվեր ինձ լիովին անեանա՛լ քնի մեջ, չվրդովվել հրեշային անրջանքներով, մղձավանջների զոհ չդառնալ, քնել առանց վորևէ յերազի, առանց ջղային տքնումների...

Թիկն տված մի ժայռի, խոհերս ցան ու ցրիվ և վոստոստուն, ակնարկս ծփացող ջրի զանգվածին, լիովին անշարժ, և անփութության նվիրած մարմնով ամեն րոպե պատրաստվում եյի քնելու, յերբ հանկարծ մի խշրտոց լսեցի գլխիս վերևում և մեղմությամբ վրաս իջնող թմրությունը անհետացավ վայրկյանապես։

Սաստիկ զայրացած ու ջղայնացած շռկվեցի՝ տեսնելու համար, թե ի՛նչն եր այն զարշելի պատճառը, վոր մի անգամ ևս վրդովում եր հանդիստս, և ինչ-

պես միշտ, քնելու մոտ յեղած հետին րոպեյին գալիս եր տքնության մեջ նետելու ինձ։

Մի աղջիկ եր այն։ Մոխրագույն պարզ հրջազգեստ և բաց վարդագույն բաճկոն հագած մի կին, վոր ձեռքին հաստ գիրք ուներ, իսկ գլխի վրա ծածանում եր յերկու ծայրերը բաց թողած մետաքսյա նուրբ շալը։

Իջնում եր արահետով։ Արահետ, վոր հեռվից եր պարզվում դեպի այդ կողմը։

Ուղղվելուն պես՝ յերկուսիս ակնարկները հանդիպեցին միմյանց։

Աղջիկը կանգ առավ վարանած։ Չեր կարծում պատահել այդտեղ մեկին։ Յերևի կարդալու յեր գալիս. իր մենավոր անկյունն եր, վոր պատահմամբ բռնել եյի յես։

Սիրուն աղջիկ եր։ Շեկ, կապուտաչյա և վոսկեգույն մազերի գողտրիկ սանրվածքով։ Կամ ռուս պիտի լիներ և կամ ավելի շուտով՝ գերմանուհի։ Չնայելով սիրունությանը, դեմքի վրա կար ինչ վոր տխուր, մռայլ ստվեր։ Ժպիտի վո՛չ մի նշույլ, վոչ ել ծիծաղկոտության բնորոշ խորշոմներ։ Ընդհակառակն, ճակատի տակ, հոնքերի միջոցը ակոսված եր յերկու ուղղահայաց խոր գծերով, վորոնք դեմքին տալիս եյին խորհողի և զննողի կերպարանք։

Շատ մոտ չեր և այդքանը հազիվ կարողացա տեսնել մի ակնարկով. մանավանդ վոր աղջիկը յերբ տեսավ ինձ, պահ մի վարանած կանգ առավ, հետո դարձավ և հանդարտ ու վես քայլերով, առանց յետ նայելու՝ գնաց։

Գնաց, հասավ վեր, քայլեց նույն ծանր շարժում-

ներով ավելի հեռու և քիչ հետո շրջազգեստի վերջին ծայրն էլ ջնջվեց բարձրության վրայից:

Քունս փախել էր այլևս: Ճշմարիտ է, բուռն զայրույթս և քնել չկարողանալու սովորական ջղայնությունս շատ ավելի մեղմացել էին — վորովհետև, վորքան չլիներ՝ պատճառը մի որիորդ էր, մի սիրուն կին—սակայն այլևս չկարողացա վայելել dolce far niente, վորին այնքան անձկությամբ ձգտել էի:

Փորձեցի փոքր ինչ էլ մնալ անշարժ, աչքերս փակել, նորից ծովի շշուկին ականջ դնել, նրանով օրորվել, մոռացության մեջ ընկղմել... բայց անկարելի յեղավ: Աչքերս ակամա բաց արի և դեպի վեր, տարորինակ աղջկա անհետացած բարձրությանը ուղղեցի: Միտքս էլ այն կողմն էր գնում: Ու պատկերացնում էի յերևույթը:

Հիրավի, ի՞նչ էր այն, ո՞վ էր: Ինչո՞ւ արդյոք այնքան տարօրեն թվեց ինձ նրա յերևույթը. հանկարծականությո՞ւնն էր պատճառը, թե արդարև, աղջկա դեմքի ու շարժվածքների վրա կա՛ր նորանշան բան:

Վայելուչ ու շքեղ հասակով, վես քայլվածքով կին էր, ամեն ինչ համաչափ դեմքի վրա, հագուստը անպաճույճ, բայց գրեթե ոդային, թևերը բաց, ճերմակ ու գիրգ... Դե՛մքն էր, աչքերն ու ճակատն էին տպավորիչ. տմույն ճակատ՝ յերկու խոր ակոսների վրա հենած կարծես, իսկ կապույտ աչքերը ծովի նման անծայրածիր և խո՛ր...

Արդյոք մոտակա ամառանոցի բնակի՞չ էր, թե գուցե մի ջլախտավոր ինձ նման, վոր մենություն ու հանգստություն էր վորոնում ժայռերի խոռոչների տակ...

Չնայե՛լ արդյոք թե վորտեղ գնաց:

Իջա ժայռից ավազների վրա, մինչև իսկ մի քայլ արի վեր յելնելու համար: Բայց այդտեղ կանգ առա և ամոթ զգացի: Ուրեմն ահա, հետապնդելու էի գնում մի անծանոթ կնոջ. ճիշտ՝ ինչպես սովորական կնախնդիր. նրանցից, վորոնք վո՛չ մի շրջազգեստ բաց չեն թողնում առանց հետապնդման:

Վո՛չ, փոքր ի շատե լուրջ մարդը այդպես չէր անիլ: Պետք էր սպասել: Ամառանոցը մեծ չէր, հանդիպել միշտ կարելի յեր նրան ծովափնյա զբոսավայրերում, լողարանների առաջ, փողոցների մեջ և կամ մանավանդ նավամատույցի վրա, ուր խռնվում են ամառանոց յեկողները՝ ամեն շոգենավ գալու ժամանակ:

Չբարձրացա: Մինչև իսկ մտածեցի այնպես անել, վոր չհանդիպեյի նրան գոնե մինչև մի քանի ժամ:

Այդ էր պատճառը, վոր յերբ կամեցա տեղս փոխել, ուղղակի վեր չբարձրացա այդ կողմից, այլ ջանացի յեզերքներովը անցնել շատ հեռու:

Սեղմված ժայռերին, քսքսվելով կավոտ շերտերին, վոստնելով խութին-խութ գնացի հեռու և առաջին դեմ յելած արահետից յելա վեր հասնելու համար:

Հաշվովս՝ փարոսին մոտ պիտի լինեյի: Պահապանի շավիղը կարծեցի բավական դժվար, տեղ-տեղ մագլցելով յելնելու շավիղ, վոր չոքերս ապտտեց, ճակատս քրտինքով ծածկեց:

Վերջապես, հասա վերջին ապառաժին, պտույտ գործեցի նրա շուրջը և մի վայրկյան նստեցի հանգստանալու:

Բայց հաղիվ վոտքս դրել տափարակի վրա, ուղղում եյի և շունչ առնում, վոր դեմ առ դեմ յեկա դարձյալ նույն աղջկան և շփոթված կանգ առի:

— Ա՛, թեթև շարժում գործեց աղջիկը:

— Ներեցեք... կմկմացի յես:

Յերկուսս էլ նայեցինք միմյանց ու անցանք:

Ակնարկս խոնարհեցրել եյի աղջկա հայացքի առաջ և զգացել, վոր զայրույթից գունատվում եյի:

Զայրանում եյի այդպիսի հիմար զուգադիպության վրա: Հիմա ի՞նչ պիտի մտածեր աղջիկը. չե՞ վոր կարող եր կարծել թե հետապնդում են իրեն և այն էլ վոչ թե համարձակ, այլ գաղտագողի կերպով:

Վատ զգացմունքով լցված՝ շտապեցի հեռանալ այդտեղից և գնալ դեպի տուն: Վո՛չ, այլևս հրվանդանի այդ կողմերում չարժեր մենավոր անկյուն ունենալու մասին մտածել: Հարկավոր եր մյուս ափը անցնել, դեպի բաց ծովը: Գոնե չեյի հանդիպիլ մի առ ժամանակ այդ աղջկան: Փողոցում կամ մի տեղ էլ յեթե հանդիպեյի, վճռում եյի խուսափել նրանից, վրան չնայել, ապացուցանել, վոր ամենևի՛ն էլ չեյի հետապնդում, չեյի հետաքրքրվում նրանով և վոր յեղածը հիմար զուգադիպության խաղեր եյին միայն...

Բայց վոր աստիճան գունա՛տ եր այդ աղջիկը մոտից: Գունա՛տ: Վո՛չ, ավելի շուտով դեղնադույն եր ինչպես նորահաս ծիրան՝ կարմիր շերտերի ցայտումներով այտերի վրա: Աչքերը, ապա այն խոր, յերազուն աչքե՞րը, վորոնք կարծես անդրաշխարհային բաներ եյին վորոնում տարածության մեջ և վորոնք

այլանդակորեն հակասում եյին իրենց շրջանակավորող տխուր, ո՛հ, խիստ տխուր կնճիռներին...

Վո՛չ, այդպես չեր, լավ չեյի տեսել դեռ. այն դեմքերից չեր, վոր մի հայացքով կարելի լիներ ըմբռնել, բայց այն դեմքերից եր, վորոնց կամենում ես դարձյալ հանդիպել, դարձյալ տեսնել, զննել, հասկանալ... և սակայն միշտ դեռ չե՛ս հասկանում, կատարելապես չես զննել...

3.

Յերբ տուն հասա, կեսօրվա մոտ եր: Տանտիկինը պարտեզում մի ծառի հովանու տակ թիկնաթոռի մեջ ընկղմված՝ կարդում եր: Սուրճի պատրաստություն կար առջևի մեծ սեղանի վրա:

Տեսնելով ինձ, մոտ հրավիրեց, աթոռ հրամցրեց և սուրճ առաջարկեց:

— Ճաշը ուշ կլինի, ասաց նա— յեթե անոթի յեք, կերեք նաև կարագ և պանիր:

Կերա ի հարկե: Խոսեցնել սկսեց: Հարցրին ամեն ինչ: Շատ ցավեց՝ լսելով հիվանդությանս մասին: Խոստացավ ամեն հնարք գործ դնել, վոր խաղաղ կյանք ունենայի և գիշերները անվրդով քնելու հարմարություն:

— Ձեզ վերևումը դրացի չունեք, ավելացրեց սուրճ լցնելով. ներքևի՛ց միայն կարող եք աղմուկ ունենալ, այն էլ յերբե՛ք գիշերները: Սենյակներից մեկը վորդիս է զբաղեցրել, մյուսը իմն է ու աղջկանս, յերրորդը տվել ենք յերկու ուսանողների:

Դրանք ամենքն էլ,— աղջիկս թեև վո՛չ այնքան— զվարթ յերիտասարդներ են. սիրում են յերգել, պա-

րել, կանչել, շատ աղմկել և...անհամության չափ էլ սիրաբանել դրացի աղջիկների հետ... Ջահելություն է. անխուսափելի պահանջներ են դրանք...

Դուք մի՞թե չեք սիրում այդ ամենը:

— Ո՞րը, հարցրի յես ժպտով... սիրաբանելն ու աղմկե՞լը:

— Յերկուսն է՛լ. յերգե՛լ էլ, պարել էլ:

— Ո՛չ մեկն էլ դժբախտաբար չգիտեմ: Կուզեյի սովորել. գուցե հենց կազդուրվելու ամենալավ միջոցները լինեն դրանք:

— Շատ կարելի յե. Ջղերը հանգստացնելու ամենալավ միջոցն է՝ լինել, անհոգ, վարժվել անհոգության:

Յեվ այնուհետև յես սկսեցի հետաքրքրվել, թե ո՞վ էր այդ սոսկալի կերպով նիհար, կմախքի նմանվող տիկինը, վոր կարծես կովկասցի լիներ և վո՛չ ռուս:

Յերևաց վոր Նովոռոսիսկ բնակվող, իսկական մալարոտ էր, բավական մեծ կարողության տեր. ժառանգել էր ամուսնուց:

Ամեն տարի այստեղ էյին գալիս: Իրենցն էր տունը: Վորդին շուտով պիտի իրավաբանական ուսումը ավարտեր, իսկ աղջիկը սեպտեմբերին մտնելու յեր բժշկականության բարձրագույն դպրոցը՝ Պետերբուրգ:

Ունեյին կալվածներ, վորոնց կառավարում էր ինքը—տիկինը:

Ուսանողները Մոսկվայից էյին. մեկը իսկական ռուս էր, մյուսը եստոնացի: Մի՞թե եստոնացու յերբեք չէյի հանդիպել: Հետաքրքիր մարդիկ են. շատ

հայրենասեր—նեղ հայրենասեր մինչև իսկ, բայց լուրջ և յերազող մարդիկ: Լուրջ և յերազող, այո՛:

Դժվար է այդ յերկու հատկությունները միացած տեսնել, բայց այդ եստոնացին այդպես էր:

Այդ բոլորը տանտիկինս պատմեց շնչարգել ընդմիջումներով. տկար էր խեղճը: Հետո, յերբ վերջացրեց իր մասին, սկսեց ինձ հարցուփորձել:

— Իսկ դուք, հարցրեց նա— ի՞նչպես եք գտնում Գելենջիկը, դո՞ւր է գալիս ձեզ... Ասացիք վոր ուսուցիչ եք... Ներեցե՛ք, ինչպե՞ս է ձեր անունը... Յերվա՞նդ... Հենց այդպե՞ս, պարոն Յերվանդ. մի՞թե ձեզնում միայն անունն են տալիս... Այո, պարոն Յերվանդ, հասկանալի յե ինձ շատ լավ, թե ինչո՞ւ դուք ջղային հիվանդություն եք ստացել... Ո՛հ, ուսուցիչ լինել այսպես որերում... մեկ որ չէյի կամենալ...

Ու դարձյալ ինքը սկսեց խոսել: Պատմեց թե իր մի ծանոթը, վաղուցվա մի ծանոթ, վոր ջահել ժամանակ նրա ձեռքն էր խնդրել, բայց ծնողներից մերժվել էր— այդ մարդը ուսուցիչ էր Թիֆլիզի մի գիմնազիայում: Սոսկալի բան էր լինել ուսուցիչ գիմնազիայում, այո այն էլ տեղացի տղաներով լի գիմնազիա:

— Ուսուցիչ եմ հենց այդպիսի մի գիմնազիայում, ասացի յես դեմքս կնճռելով.— ծանոթ եմ յեղածների հետ:

Տանտիկինս ավելի ուրախացավ կարծես, և սկսեց պատմել տեղացի աշակերտների մասին:— Հարբա՞ծ գալ դասի, խռոված չինել դասարանում, ողի՛ խմել... Ո՛հ, վո՛չ դաս սովորել էր մնացել այլևս,

վո՛չ պատկառանք, վո՛չ վախ և վո՛չ ել իշխանության առաջ «դողալ»... Սրիկանե՞ր, ուղղակի սրիկաներ եյին դարձել նրանք. մտրակել եր հարկավոր, բանտ նստեցնել... բայց ինչ արած, ժամանակները այդպես եյին. ջղային տարիներ եյին, տակնուվրայության, անիշխանության շրջան եր...

Զգացի վոր արյունը գլխիս եր խփում, վոր ջղային դրության մեջ եյի ընկնում դարձյալ, վորովհետև նորից հիշեցնում եյին ինձ այն ամենը, ինչից յես փախել եյի այնքան հրճվանքով և ինչի մասին այդտեղ լսելն անգամ չեյի ցանկանալ:

Բայց Աննա Վասիլևվնան—այդպես եր տանտիկնոջս անունը— մտադիր եր դեռ շատ բան ասել. ցաված տեղ ուներ, շատ բաներ եր տեսել աչքովը, շատ նեղություններ եր քաշել «անիշխանական» դրությունից, նյութական վնասներ եր կրել...

Բարեբախտություն եր ինձ համար, այդ միջոցին պարտեզի դռնից ներս խուժող քրքիջն ու աղմուկը յեկան վերջ դնելու տանտիկնոջս վողբերին:

— Ահա՛, ահա. ահա վերջապես մեր չարաճճիները. ընդհատեց իր դանդատները Աննա Վասիլևվնան և նայեց այն կողմը—կծանոթացնեմ և պիտի տեսնեք վոր ձեզ ես պիտի վարակեն իրենց զվարթությունով

Դռնից պարտեզ մտնողները յերեք որիորդներ եյին և յերկու պարոն: Պակասում եր մի պարոն, ավելացել եյին յերկու որիորդներ:

Աղմկալից մուտքը շարունակություն չունեցավ սակայն:

Դեպի մեզ պարզվող ծառուղու սկզբում դադարեցին ծիծաղները: Որիորդները, վոր առջևից վազում

եյին, կանգ առին քրտինքները սրբելու. յերկու պարոնները ծղոտե գլխարկներին հանեցին և ժպտուն՝ նրանցով հովհարել սկսեցին թե՛ իրենց և թե՛ աղջիկների կարմրած դեմքերը:

Յեվ այդպես լուռ՝ քիչ հետո գնացին դեպի սուրճի սեղանը:

Ուսուցիչը վոտքի յելավ: Աննա Վասիլևվնան ծանոթացրեց ամենքիս:

Որիորդներից մեծը—սևահեր մի աղջիկ, տանտիկնոջն եր. մյուս յերկուսը—մանկահասակ և թխլիկ չեկեր, դրացի ամառանոցից եյին:

Պարոններն ուսանողներն եյին: Նստոտեցին և ռուսը: Տանտիկնոջ վորդին չկար հետները,

— Իսկ ո՞ւր ե Սերյոժան, հարցրեց մայրը:

— Թողինք ծովափի վրա, խոսեց չեկերից մինը— Ադելայիդա Իվանովնան տանը չեր. ասացին վոր գնացել ե ծովափ. մենք Սերյոժային հրամայեցինք վոր մինչև Ադդային չգտնի իրավունք չունենա մեր աչքին յերևալ:

Ու ծիծաղեցին՝ աչքերը քթթելով:

— Ո՛խ իմ խելոք աղջիկներ, գլուխն օրորեց տանտիկինը— կարծել եք պատժել Սերյոժային, բայց հե՛նց իր ուզած գործին եք դրել:

— Ե՛հ, մայրիկ ասաց աղջիկը— ո՞վ չգիտե այդ. Սերյոժան չի յել ծածկում. մանավանդ այստեղ:

— Մի՞թե այստեղ, խոսեց մայրը, դուք հիմիկվան ջահելներդ նույնն եք ամեն տեղ, ամեն ժամանակ. այլևս վոչ մի պատկառանք, վոչ մի շրջահայեցողություն...

Հետո, յերբ որիորդները ուսանողների ներսից բե-

լած աթոռների և իրենք-ուսանողներն էլ գետնի վրա տեղ եյին բռնել, Աննա Վասիլևնան դարձավ ինձ և ավելացրեց.

— Կնախնդրությունը այժմ ամենանորելուկ բանն է. յեթե չգիտեք, դուք էլ իմացեք այդ, պարոն ուսուցիչ... Ջահելների պչրանքն ու պարծանքն է այն. ամոթ է կնախնդիր չլինել, ասպետություն չգիտենալ, չունենալ մի քանի հատ «համակրություն»-ներ, վորոնց բարձրաձայն նվիրում են այնպիսի սիրալիր խոսքեր, վոր յեթե մենք լսեյինք մեր ժամանակներում, ամոթից գետինը կմտնեյինք, այո՛... Չե, չափազանց ազատամիտ է մեր այժմյան վուզի յերիտասարդությունը...

Ցեվ յելավ մեկնելու: Յերբ աթոռը հեռու յեր դրել ու պատրաստվում եր գնալու, ցույց տալով ինձ, ասաց.

— Խնդրեմ պատվել ու սիրել մեր նոր հյուրին, պարոններ. կովկասցի հայ է, ուսուցիչ... Ճաշը, տղայք, ժամը ճիշտ 2-ին. հետո, ով ցանկա-պտույտ դեպի կանաչ հովանդանը՝ Մարթայի կառքով:

— Այն տեղ կին կառապանը, ասաց ռուս ուսանողը:

— Վոր անգլիացու յե նման իր տղամարդի հագուստով և ժոքեյի գլխարկով, ավելացրեց եստոնացին:

— Այո՛, ասաց տանտիկինը, հետո վողջունեց և հեռացավ:

Նրա գնալուց հետո պահ մի խոսակցությունը դարձավ կին-կառապանի վրա: Ապա տանտիկնոջ աղջիկը, վոր ուշադրությամբ զննում եր ինձ, հարցրեց

իմ վորտեղացի լինելը, հիվանդության մասին տեղեկացավ և այլն:

Այնուհետև պահ մի ամենքն էլ հետաքրքրվեցին Կովկասի այն հեռավոր մասով: Եստոնացին ուզեց իմանալ հայերի մեջ տիրող վոգու մասին, թե արդյոք հետադարձ շարժումը զորե՞ղ հետևանքներ եր արտահայտում, իշխանությունները ավելի՛ խիստ եյին. իսկ սպանություններ, թալաններ ու հափշտակություննե՞րը... Ճշմարի՞տ եր օրինակ, վոր Թիֆլիզի մեջն անգամ որ չեր անցնիլ առանց մի քանի հափշտակությունների կամ սպանությունների:

Ասում են վոր մարդ մորթելը կամ հավ մորթելը միևնույնն է Կովկասում, ասաց չեխ ուսանողներից մեկը— ո՛հ, ինչ սոսկալի կյանք է ձեր կյանքը:

Ռուս ուսանողը ավելի խո՛րը մտավ և տեղեկություն ուզեց ունենալ ինտելիգենցիայի մասին: Արդյոք իմ հայրենիքո՞ւմն էլ մարդիկ, մանավանդ մտավորականները, հուսաբեկված ու հոգով տկարացած՝ կամ չնչինություններով բավականանալու չափ ընկել են և կամ վոտի տակի հողը կորցրած՝ իրենց քայլերը դեպի ճահիճներն են ուղղում և տիղմը իբր կայան ընդունելու վարժվում... Արդյոք այնտե՞ղ էլ, ինչպես յերկրի ամեն կողմերը, դպրոցները, ապագա սերունդը կաղապարող այդ հիմնարկությունները, սկսում են խավարի և իմաստականության իշխանությունը վերականգնել. ուսուցիչներն էլ ժամանակի հետադիմությանը հլու հպատակ, իսկույն համարվելով վորպես կամակատար դռնապանը իր աղայի, դարձել են գարհուրելի արարածներ «ավելի թունդ կաթոլիկներ, քան նույն ինքը պապը»...

Որսորդները թեև խմում էին այդ խոսակցության ընթացքում, բայց և յերբեմն դեպի իրար ականջը կռացած վորևե խոսք էին ասում և լուռ ծիծաղում: Տանտիկնոջ աղջիկը կանգնած սեղանի մոտ՝ լրջությամբ ականջ եր դնում, հեղնող ժպիտը դեմքին: Բայց յերբ ուսանողը իր խոսքերովը հիացած ու ինքն իրեն մոռանալով սկսեց ավելի հեռու արշավել— դպրոցներից էլ հեռու, որսորդը նայեց և ասաց նրան ձանձրացողի շեշտով.— Դադա՛ր առեք, Վալերիան Գրիգորևիչ, դադա՛ր առեք ի սեր աստծո: Մի՛ մոռանաք, վոր 1905 թվականը մնաց չորս տարիով յետ, վոր ձեզ լսողները, ավա՜ղ, այդ ամենը շատ լավ գիտեն արդեն և զզվել են, մեծապե՛ս զզվել ամեն հիշատակությունից՝ ախտի պծուծությունների, խավարի և խուլիգանությունների մասին... Մեկ ձեր շուրջը նայեք... ծաղի՜կ, արե՜վ, ծո՜վ. արտույտները ահա վերևում ճախրում են և յերգում անտառում հանկուցիչ ստվերներն են մեզ կանչում, մեր չորս կողմը լի յե դայլայլներով, ձեզ մոտ նստել է խաղ, ծիծաղ, յերգ և միմիայն սեր, միայն սեր վորոնող յերիտասարդություն և դուք հնադարյան մղձավանջնե՞ր եք պատկերացնում մեր առաջ... Թողե՛ք, թողե՛ք այդ ամենը, յետ մի՛ նայեք, այլ միշտ առաջ: Մի՛ տխրեք, այլ ծիծաղեք միայն. ապա թե վոչ աշխա՛րհը կծիծաղի ձեզ վրա: Ապրենք, մի՛միայն ապրենք ու կյանքը վայելենք. ուրիշ վոչի՛նչ, վո՛չինչ...

Ու ջղայնորեն ծիծաղեց. ծիծաղ, վոր ծաղրի յեր նման, քան խնդության և ուրախության:

Զգացի այդ, զգացի նաև աղջկա ձայնի դառն շեշտը և առանձնապես սկսեցի զննել նրան:

— Ո՛հ, այո՛ հաստատեց իր ընկերոջը ասածը շեկ որսորդներից մեկը— կյանքը շա՛տ կարճ է՝ տխրելու համար: Զարժե տխրել, հոգալ, մտածել... Ապրենք, խնդանք, յերգենք ու վազվզենք. ա՛յդ է լավը...

Ռուս ուսանողը, վոր իր վոգևորության ճեպընթացությունից յետ մղված՝ հանկարծակիի յեր յեկել. քիչ շվարած սրան-նրան նայեց խղճալի դեմքով, հետո ժպտաց, ձեռքը թափահարեց և գոչեց.

— Յեվ իսկապե՛ս... Գրողի՛ն թող յերթա այդ ամենը. խաղանք, պարենք ու սիրենք... Կեցցե՛ կյանքը...— Ահա այդպես. քրքջաց տանտիկնոջ աղջիկը.

— Դա ավելի յե սազում ձեզ ամենքիդ այժմյան յերիտասարդության... Թողե՛ք սոխակությունը այժմյան վարդերը (և նա ցույց տվավ յերկու որսորդներին) նոր ձևի դայլայլներ ու յերգեր են ուզում, ուրա՛խ, կենսաբո՛ւյր մոտիվներ և վո՛չ թե վողբեր ու վայնասուններ...

— Այ թե սոխակ... նման է, ինչպե՜ս չէ, ծիծաղեց որսորդներից մեկը— ավելի հնդկահավի յեր նման Վալերիան Գրիգորևիչը, յերբ խոսում եր... Գրողի՛ն թող յերթան ճառախոս հնդկահավերը...

Յեվ սկսեցին կատակներ. տափակ, յերբեմն էլ համով սրախոսությունները ծայր առին քրքիջ, կանչ, ուրախ աղաղակ՝ գնալով աճեցին: Հետո, յերբ նախաճաշը վերջացրել էին որսորդներից մեկը վազեց դեպի պարտիզի խորքը, ռուս ուսանողը հետապնդեց

նրան. ևստոնացին էլ յերկրորդի հետ իջան դեպի յափրուկների ափուն և յես ու տանտիկնոջս աղջիկը դիպվածաբար այդպես, մնացինք մենակ, նստած սեղանի առաջ:

Լիզա եյին կոչել աղջկան, չեյի մոռացել այդ: Բայց միայն «որիորդ Լիզա» ասելը քաղաքավարի չեր լինիլ ռուսների տեսակետով. հոր անունը պետք եր իմանալ:

Ահա ա՛յդ միտքս յեկավ առաջին րոպեյին, յերբ մենակ մնացինք: Հետո շփոթություն յեկավ վրաս. սովոր չեյի այդպիսի դիպվածական ու հանկարծական միայնության՝ սիրուն որիորդների հետ. մանավանդ վոր Լիզան չեր խոսում, ի՛մ էլ խոսելիքս չեր գալիս. ուղղակի բերանս չեր բացվում, թեև դարձյալ մտածեցի հարցնել նրա հոր անունը: Հարցնե՞լ արդյոք. այդպե՞ս սկսել խոսակցությունը: Գռեհի՞կ բան. վո՛չ միայն գռեհիկ, այլև տափակ, անհամ: Նստել եյի այդքան ժամանակ և շնորհք էլ չունեյի մի բան խոսելու...

Զարմանալի՛ գրավիչ աղջիկ եր, այո՛. նոր եյի միայն նկատում և նո՛ր ավելի մանրամասնորեն զննում: Գրավիչ և հմայող նույնիսկ: Թեև մարմնով նիհար եր յերևում, դեմքն ու ձեռքերը գիրգ եյին, ճերմակ. խնամքով սանրված մազերի, ճոխ մազերի. սևահեր եր, խոշոր, տուփալից և քաշող աչքերով: Հոնքերը խիտ. գրեթե արմատներով միմյանց եյին կպչում: Մրայոն եր. մի գեղեցկուհի, վոր ավելի կնո՛ջ եր նման, քան որիորդի. թե՛ մարմինն եր զարգացած և թե՛ կուրծքը. ապա շրթունքնե՛րը.—ուղղակի զարմանալի եյին այդ րոպեյին. բոսո՛ր, վորպես

նոր բացվող վարդ, այլև լիքը, դողդոջուն՝ կարծես համբույրներ եյին պահանջում...

Այլևս մոռացած վոր պետք եր խոսել, վոր անհաճ բան եր լուռ մնալը—ամբողջովին կլանված մնացի իմ զննողությունով. կլանված ու այնքան հմայված, վոր հուզմունքից ու ցնծությունից սկսեցի դողալ:

Բայց այդ բոլորը մի րոպե տևեց: Ույժ տվի ինձ, ամփոփեցի ինքզինքս, վայրկենական ինքնամոռացությունից հաջողվեց ազատվել և շտապեցի խզել լռությունը:

— Ներեցեք, որիորդ, խոսեցի քիչ դողդոջ ձայնով—կարելի յե՞ իմանալ ձեր հորանունը:

Լիզան ցնցվեց և ինձ նայեց հարցական զարմանքով: Չըմբռնեց հարցմունքիս պատճառը:

— Հարցնում եմ շարունակեցի յես՝ արդեն ինքս ինձ գտած և ավելի հանդարտ ձայնով— վորովհետև չգիտեմ ինչպես կոչել ձեզ. մեզ մոտ անունն են տալիս:

Լիզան վերստացավ իր հայացքը և գրավիչ մի ժպիտ դեմքին՝ ասաց.

— Միևնույնն է կոչեք այնպես ինչպես ձեզ մոտ ընդունված է: Սակայն հորս անունը Նիկոլա յե:

— Այդպես ավելի լավ է: Ներեցեք, Յելիզավետա Նիկոլայեվնա, բայց ինձ թվում է, վոր դո՛ւք էլ պիտի վազեյիք այդ մյուս որիորդի նման և կամ ծաղիկների մոտ իջնեյիք՝ այս յերկրորդի պես:

— Այդպե՞ս... ինչո՞ւ անպատճառ:

— Վորովհետև ինքներդ խրատում եք ուրիշի, ուրեմն և ամենից առաջ դո՛ւք պիտի գործադրեք.

մինչ դուք, ահա մնացել եք մենակ և նստած այստեղ:

— Ե՛հ, ի՞նչ արած, չարաճճի ժպիտով ինձ նայեց Լիզան.— միշտ չի՛ հաջողվում զույգ կազմելը. յես «կենտ» եմ այստեղ: Բայց յեթե ախորժակ ունեք վազելու համար իմ զույգը դառնալու...

— Ո՛հ, վո՛չ վազելու համար առայժմ... բայց ուրախությամբ ձեզ ասպետություն կանեմ, յեթե արդեն չունեք ուրիշը:

— Յերևում է վոր Կովկասից եք գալիս, ծիծաղեց աղջիկը— մեզ մոտ բազմասպետությունը պարծենալու նորույթն է. վորքան շատ ասպետ, այնքան մեծ պարծանք.

Ու դարձյալ քրքջաց իր այն ծիծաղով, վոր ծաղրի յեր նման, և դառնության չեշտ ել կար մեջը:

— Բայց, ավելացրեց նա—նորությունների սիրահար չե՛մ յես. չե՛մ ել սիրում վոր իմ ասպետը շատ տիրուհի ունենա... գո՛նե ինձ հայտնի:

— Խանդոտ եք:

— Այո՛, խանդոտ: Չե՞ք տեսնում հոնքերիս ձևը, ծիծաղեց Լիզան. ինձ ասել են վոր խանդոտները ա՛յդպես հոնքեր են ունենում:

— Ցավ վորովհետև ձեր հոնքերը այդպես է, կատակեցի յես—ուրեմն և դուք պարտք եք համարում խանդոտ լինել:

Ծիծաղեց՝ գգվող ակնարկը վրաս, վոտքի յելավ և ասաց.

— Կատակում եք: Այդ լավ է. կարծեցի թե մռայլ ու տխուր մարդ եք. ճի՛շտ ուսուցիչ-անշնորհք

և անճաշակ.. բայց վո՛չ... յերբ ասպետի պետք ունենամ...

— Ամե՛ն րոպե. ասացի յես:

— Վո՛չ այժմ. ժպտեց նա: Հետո հավաքեց բաժակները, գլխով նշան արավ, վոր պիտի տուն տանե և վերադառնա և հեռացավ վայելուչ քայլվածքով:

Բայց զարմանալի բան. հե՛նց վոր մի քանի քայլ գնացել եր, չը գիտեմ ի՞նչու, մտապատկերների վորպիսի՛ անըմբռնելի հաջորդումների շնորհիվ, թըվեց թե նա տանտիրուհու աղջիկը չեր, այլ առավոտվան, ծովափում տեսած որիորդը:

Զգայախաբության յենթակա չե՛մ յեղել յես, բայց այդ րոպեյին, յերբ, նայում եյի հեռացող Լիզայի հետևից, մի ամբողջ վայրկյան կատարելապես այն աղջի՛կը յերևվաց ինձ. նույն գորշ շրջազգեստն ու բաց վարդագույն բաճկոնը: Նույն վեհ քայլվածքն և ուղղաձիգ բռնվածքը:

Համոզվածի պես եյի նույնիսկ, վոր յեթե դառնար դեպի իմ կողմը, անշուշտ պիտի վրաս հառեր իր խորունկ կապույտ աչքերը, սառեցնող, ակնարկ խոնարհեցնող հայացքը:

Ու անախորժ զգացմունքով համակված, զգայախաբության պատրանքից ազատվելու դիտումով ուժ տվի ինձ և ակնարկս դարձրի դեպի յափրուկի ածուն: Եստոնացին և չեկ աղջիկը այժմ ավելի կռացած դեպի միմյանց, նստել եյին թումբի վրա և փսփսում: Ռուս ուսանողն ել յերկրորդ որիորդի հետ հասել եյին պարտեզի հեռավոր կողմերը, ուր թը-

թփուտներն էին և ունեյին անցողակի համբույրներ քաղելու համար խորշեր:

Գիտե՛յին այդ յերիտասարդները վայելել կյանքը լիաբուռն, ամեն քայլում: Գիտե՛յին առնել բնությունից՝ ինչ կարելի յեր.— ծաղկի բուրմունքը, ողի անուշությունը, արևի ժպիտը, այլև ապրելու այն մե՛ծ, վսե՛մ հրճվանքը, վոր սիրո համբույրների տակ է փթթում, բացվում և գիտե արհամարհոտ վեհությամբ քայլել փշերի վրայով, յեթե նո՛ւյնիսկ արյունոտվի...

Ողողվում եյին վայրկյանով: Հիրա՛վի զվարճանում եյին ու ծիծաղում աշխարհի վրա, ապա թե վոչ՝ աշխարհը կծիծաղեր նրանց վրա...

Յես նստած տեղից, չուրջս նայեցի և ափսոսացի, վոր չեյի կարողացել գրավել Լիզային ու մոտս պահել, մի յերրորդ զույգ ել յես կազմել առանց ժամանակ-րոպեն կորցնելու, գնալ դեպի ծովախորշերի ափերին գտնվող ժայռերի հովանիների, պարտեզների խորքերում կռացած խնձորենիների մթության մեջ և կամ թփուտների թաղստոցների հետևում՝ քաղել կյանքից հնար յեղածին չափ շատ և շատ ամե՛ն հաճույք, ունենալ կարելի յեղածին չափ ավելի՛ քաղցր րոպեներ և կենսապարար մոռացումներ...

Այդ իսկ միջոցին եր— զույգերին աչքիս առջևը տեսնելու նախանձի և նրանց նման անելու տենչանքի աճման րոպեյին, վոր պարտեզի դռան կողմից լսվեց տղամարդի մի հնչեղ ձայն, ծառուղու ծայրին նախ յերևան յեկավ մի ուսանող և նրա կողքին հայտնվեց վարդագույն բաճկոնով մի աղջիկ...

Նա՛ յեր: Յերրորդ անգամը լինելով՝ նա՛ յեր, ծովափում տեսած աղջիկն իսկ, վոր դարձյա՛լ դիպվածով դեպի ինձ եր գալիս, իր վես քայլերով, ծովանման ակնարկը կարծես անհունության մեջ մոլորուն:

Աղդան եր:

4.

Բնազդաբար վոտքի յելա և մնացի կարկված: Ակնթարթորե՛ն սթափված, մոռացա զույգերն ու իմ խանդը, մոռացա նույնիսկ տենչանքս՝ վայելելու կյանքը, զույգերի նման ոգտվելու յերիտասարդությունից և ծիծաղելու աշխարհի վրա...

Այս ամենը ցրվեցին այնպե՛ս, ինչպես առաջին անգամ Աղդայի յերևույթը ցրվել եր ծովափում վրաս իջնող յերջանիկ թմրությունն ու անեսությունը ունենալու հաճույքը:

Մոտենում եյին: Ինձ դեռ չեյին տեսել: Ուսանողը բարձրաձայն պատմում եր ինչ վոր մարդու մասին. լսում եյի, բայց վոչինչ չեյի հասկանում: Աղդան, գիրքը միշտ թևի տակ՝ քայլում եր ուղղաձիգ շարժումով. դեմքի վրա գոյացրել եր անորոշ մի ժպիտ: Յերբեմն ել ինձ անլսելի ձայնով մի-մի բառ եր արտասանում. շրթունքներն եյին շարժվում մի վայրկյան:

Քանի մոտ եյին գալիս, ա՛յնքան ավելի լավ եր հաջողվում վերջապես զննել այդ տարօրինակ աղջըկան: Առաջին շփոթությունս ու կարկամությունս անցած՝ նստեցի և սկսեցի նայել:

Ա՛յնքան մոմեղեն ու անշարժ չէր յերևում այլևս նրա կերպարանքն այժմ, վոչ էլ մեռելատիպ: Խոշոր կապույտ աչքերին հովանավորում էյին բավական թավ հոնքեր, հետո մի սովորական ճակատ էր, վորը յերկու կողմից, հավաքված վարագույրների նման, սարվածքը իջել՝ գնում ծածկում էր գրեթե ամբողջ ականջները:

Սակայն այդքան գողտրիկ, այդքան գրավիչ դեմքի և ուշադրության արժանի վայելուչ շարժվածքների վրա, նույնիսկ սիրուն ժպիտի մեջ՝ սավառնում էր ինչ վոր տխո՛ւր, հուսաբե՛կ ու սրտամաշուք ստվեր, վոր անպայման կերպով դերակշռում էր բոլոր մյուս տպավորություններին: Մարդ չէ՛ր կարող չհամակվել այդ թախիծովը, այդ գրեթե անհույս արտահայտությունով, վոր ընդունակ էր ամեն ծիծաղ սառեցնել շրթունքների վրա:

Բայց կողքից գնացող յերիտասարդը կամ այդ չէր նկատում և կամ, սովոր նրան, մինչև իսկ մի տեսակ նորօրինակ հրապույր էր համարում սիրուն կնոջ վրա. այնպե՛ս, ինչպես սուգի հագուստը՝ գեղեցիկ ու վայելչակազմ այրիի համար:

Յեվ ուսանողը լիաբերան քրքիջների հետ կատակներ էր ցրում ամեն ուղղությամբ, պատմում էր, կոտրատվում, սիրալիրություններ շռայլում...

Նրա ձայնն ու խնդումը իրենց հնչուոր յերանգներից դուրս կորցրին պարտեզի մեջ ցրված խմբերին: Թփուտներից դուրս յեկավ առաջին զույգը և յերկրորդն էլ, յափրուկի ածուից յելնելով՝ անկվեցին յեկողների առաջ:

— Ահա և Ադդան, ձայնեց հեռվից ուխորդներից մեկը և սկսեց վազել: Ռուս ուսանողն էլ յետևից:

— Այդ վո՞րտեղից գտաք նրան. ձայնեց մյուս չեկը:

Յեվ ամենքն էլ հավաքվեցին ածուների կողքին: Յես մնացի բավական հեռու, սուրճի սեղանի մոտ:

Ըստ յերեվույթին Ադդան նկատել էր ինձ, վորովհետեվ իմ կո՛ղմը նայեց կարճատեսի շոշափող հայացքով և մի բան հարցրեց աղջիկներից մեկին:

Այն ժամանակ եստոնացին յեկավ դեպի ինձ և ասաց.

— Գնանք մեզ հետ, պարո՛ն. ծանոթացնեմ ձեզ մի ուսանողուհու, վոր շատ ինքնուրույն տիպ է:

Ու յերբ գնում էյինք դեպի խումբը, ավելացրեց:

— Բժշկականության ուսանողուհի յե: Շա՛տ լավ աղջիկ է, բայց ո՛հ, շատ հոռետես և հիասթափված. ամեն բանի մեջ միայն վատն է տեսնում... արևի վրա անգամ սև բծեր է վորոնում, այո՛...

Մոտեցել էյինք: Ինձ ներկայացրին: Մեր ակնարկները հանդիպեցին և Ադդան նոր նկատեց (կամ նկատել ձևացրեց), վոր իր տեսած մարդն էյի յես:

Հոնքերը թեթեվակի պռստեց, բայց իսկույն հետո վերստացավ իր ժպտուն ակնարկը և ասաց.

— Յերրորդ անգամն է, վոր հանդիպում ենք այսօր, պարո՛ն:

— Ահա՛ թե ինչ. ձայնեց ուխորդներից մեկը- այդ վո՞րտեղ:

— Ծովափին:

— Փոքրիկ տեղ է, միջամտեց եստոնացին—չե՛մ

դարմանալ, յեթե մի ամսից հետո ամենքն այստեղ իրար այնքան հանդիպեն, վոր ատել սկսեն միմյանց:

— Ցերեկը յերկրորդ հանդիպումին յենթադրեցեք վոր հետապնդում եյի ձեզ. ասացի յես Աղդային:

— Մի րոպե—այո, ասաց նա. բայց հետո դաս թե զույգ ընդհակառակն, ինձնից խուսափելու համար եր, վոր նորից դեմ առ դեմ յեկանք... փարոսի մոտ յեղած ժայռի վրա կանգ առի և նայում եյի ձեր յետեվից. մի անգամ իսկ յետ չնայեցիք:

Խոսում եր թեթեվ դուրեկան ձայնով, բայց միապաղաղ առանց այն աշխույժ յելեվեջների, վոր կյանք ե ներշնչում ամեն խոսակցության:

Ժպիտը պաշտոնական եր, քաղաքավարական, իսկ խոսելու ձեվը սառը, չոր:

Բայց Սերյոժան նորի՛ց սկսեց և զվարթությամբ ասաց, դառնալով ուղեվորներին:

— Ահա հենց այդ ժայռի վրա յեր վոր տեսա յես Ադելայիդա Իվանովնային... Ասենք դժվա՛ր եր չեր իմանալ թե վորտեղ ե նա. առաջի՛ն, վոր որիորդը սիրում ե միշտ ջրի յեզերքներին նստել ու յերազել, յերկրորդը, վոր ձկնորսը անգամ պետք որիորդին, յերրորդ՝ ապետական իմ բնազդը...

— Լավ, այլեվս հերիք ե. ընդհատեց նրան քույրը, վոր այդ միջոցին վրա յեր հասնում:

Յերբ Լիզային տեսավ Աղդան, յետ քաշվեց, ադեմքը սառը կերպարանք ստացավ և թեթեվ գլխով բարեվեց: Նույնը Լիզան: Ձեռք չտվին իրար, վոչ եվ ժպտեցին:

Իսկույն նկատեցի, վոր առհասարակ, այդ յերկու աղջիկները բարեկամ չեյին միմյանց, ինչ վոր խուլ ատելություն եր տածում յուրաքանչյուրը դեպի մյուսը, բայց յերկուսն ել ճգնում եյին ծածկել ուրիշներից: Ասենք, նրանք բնավորությունով ել միմյանց հակառակ եյին: Վորքան Լիզան քաշող, հմայող ու գրեթե խելքից հանող ժպիտ, քաղցրախոսություն և բավական վայելուչ ձեվեր ուներ աչքերի անդիմադրելի հրապույրի հետ—նույնքան ընդհակառակն, Աղդան վանող, սառը շարժումներ ուներ և սարսռեցնող հայացք:

Տանտիկնոջս վորդին սակայն, ըստ յերեվույթին, շատ եր պտույտ գալիս Աղդայի շուրջը: Կամ, հիրավի, գրավված եր նրա խորհրդավոր գեղեցկությունով և կամ դոնե ժամանցի համար այդ ամառանոցում, իրեն տիրուհի յեր ընտրել ինքնատիպ աղջկան ու նրանով չքամոլություն եր անում, պարծենում եր:

— Վո՛չ, վո՛չ, բողոքեց Սերյոժան, յերբ քույրը դադարեցրեց նրան. վո՛չ յես դեռ չորրորդն ել ունիմ ասելու... պնդո՛ւմ եմ վոր լսեք ինձ, բողոքում եմ...

— Դե՛ լավ, դրողը քեզ հետ, բարբառիր ուրեմըն, ասաց ռուս ուսանողը— ով գիտե ի՞նչ խորություն պիտի ասես:

— Յեվ կամ նոր տեսակի չողոմարարություն, ավելացրեց եստոնացին:

— Բայց, պարոննե՛ր, որիորդնե՛ր, ձեռքերը բարձրացրեց Սերյոժան, իբր թե պաշտպանվելով հարվածներից. ի՞նչ արի յես ձեզ, վոր քարկոծում

եք ինձ... Մինչև յես հայտարարեցի՞, օրինակ հենց ձեր մասին, Եդվարդ Գուստավովիչ և օրիորդ Սուսաննա Պավլովնա, վոր մեր խեղճ ածուլի թումբերն եք տրորել և ծաղիկները ջարդելով սիրաբանել, չմտածելով թե մայրիկը ինչպե՛ս պիտի բարկանա...

— Ա՛յ դու խո՛զ... կանչեց եստոնացին:

— Շնորհակալություն... Իսկ ձեր մասին մի՞թե աֆիշաներ կպցրի, Վասիլի և օրիորդ Զինաիդա Ցավլովնա, թե թփուտների տակը մորի վորոնելու եյիք գնացել և թե այնտեղից չփչփոցների ձայներ եյին լսվում...

— Անպիտա՛ն, անպիտա՛ն, վազեց դեպի նա Զինաիդան կարմրելով,— տեսում եք, վո՛չ մի չփչփոցի ձայն չե՛ք լսել դուք...

— Դե՛, այլևս հերիք է, պարոննե՛ր, նորից միջամտեց Լիզան և կանգնեց յեղբոր ու Զինաիդայի միջև. բավական է այս ամենը. գտնե՛նք զբաղման ժամանցի ուրիշ նյութ...

Ապա դարձավ դեպի Ադդան և պաշտոնական դեմք ստացած, ավելացրեց.

— Յեղբայրս և այս պարոնները խնդրեցին ձեզ, Ադելաիդա Իվանովնա, վոր մեզ հետ ճաշեք այսօր և պտույտի գնանք Կանաչ հրվանդանի վրա:

— Քանի վոր յեկել եմ, ժպտեց Ադդան ավելի զգալի կերպով,— ուրեմն համաձայն եմ. Սերյոժան հայտնեց ինձ այդ:

Նկատելի կերպով Լիզան հոնքերը կիտեց և յեղբորը նայեց: Ինձ թվում եր թե նա նեղացավ, վոր Ադդան պարզապես «Սերյոժա» մտերմական ձևով եր կոչել յերիտասարդին:

— Կուզե՞ք, պարոններ, առաջարկեց Լիզան իսկույն ինքնիրեն զսպելով—կուզեք գնանք իմ լուսամուտի առաջ, այն մեծ վարդենու մոտ: Այժմ հովն ընկել է այնտեղ. ձեզ աթոռներ կտամ դուրսը նըստելու. իսկ յես ներսում կնվագեմ:

— Գնանք, ասաց ռուս ուսանողը— յես միշտ ախորժով է, վոր լսում եմ ձեզ, կարող եք հավատացած լինել:

— Իսկ յես, խոսեց եստոնացին,— ուղղակի սիրահարվում եմ ձեզ վրա, յերբ նվագում եք:

— Իսկ դո՞ւք, պարոննե՛ր, ասաց հմայիչ ծիծաղով Լիզան՝ դարձած դեպի օրիորդները— Դուք էլ յերևի սիրահարվում եք ինձ վրա, յերբ այս պարոնները հմայվում են...

Ապա քրքջաց և առաջ ընկավ: Կատակներն ու ծաղրաբանությունները նորից սկսեցին. հետո, վորովհետև ծառուղին շատ լայն չեր, կազմվեցին ինքնըստինքյան զույգեր և յես գտնվեցի ամենից վերջը, Ադդայի հետ:

Վո՛չ յես խոսեցի և վո՛չ նա: Իրար կողքի ընթացանք, առանց միմյանց նայելու: Սերյոժան եր յերբեմն, վոր իր կողքի ընկերուհին թողած, դառնում եր դեպի Ադդան և սրախոսություններ անում:

Ադդան լուռ եր՝ մշտական ժպիտը դեմքին. աչքերը այլևս չեյին նայում վոչ վոքի. ուղղված հեռուները, թվում եր թե ինչ վոր ստվերներ եյին վորոնում տարածության մեջ:

Ե.

Յերկար չտեվեց Գելենջիքի հետ ծանոթանալս։ Տասը օր բավական յեղավ տեսնելու ամեն բան։ Հարավային ափը ինձ ավելի դուր յեկավ։ Ուներ սիրուն պարտեզներ ու ամառանոցներ, ավելի ստվերամած եր, շնորհիվ թիկունքը պաշտպանող լեռներին, իսկ լողարանները այստեղ ավելի չքեղ՝ հարմարեցված եյին շրջապատում հանգչող հարուստ և ազնվական դասակարգի ճաշակներին։

Գյուղում շուկա էլ կար. նույնիսկ մի քանի խոշոր մագազիններ։

Փողոցների մեջ բավակա՛ն աշխույժ անցուդարձ եր յերեվում։

Տեղացիները, մեծ մասամբ հույներ, վարում եյին կես տաճկական կյանք։ Նստում եյին յերեկոները սրճարանների առաջ, տաճկական սուրճ եյին խմում, ներգիլե ծխում, ֆես ունեյին գլուխներին և մայթերի վրա, սեղանների շուրջը բոլորած՝ դոմինո եյին խաղում։

Մի յերեվույթ առանձնապե՛ս ուշադրություն գրավեց, և այնուհետև, ստուգելով էլ իրավացի գտա—այն եր, վոր Գելենջիքում, ի հարկե վո՛չ տեղացիների մեջ, այլ յեկվորների—շատ հազիվ կարելի յեր հանդիպել սիրունատես կնոջ։ Գեղեցկուհի—բոլորովին։ Տգեղությունը շեշտվում եր նաև նրանով, վոր արևի մեջ շրջակայելով և ծովի ջրից առնված՝ ամեն դեմք շուտով սևանում եր, կորցնում փափկությունը. հետո ամեն կին հագնում եր չթե պարզ պարեգոտ և առանց գլխարկի, միայն մի բարակ թաշկի-

նակ գլխին կամ մի հովանոց, նույնիսկ մուճակներով, անցուդարձ եր անում և յերեվում ամեն տեղ։

Մարդ հաճախ տրամադիր եր յենթադրելու թե Գելենջիքը հատկապես տգեղ ու անշնորհք, մանավանդ նիհար կանանց ժողովատեղի յեր։

Յերբ իմ այդ դիտողությունը մի անգամ հայտնեցի որիորդ Լիզային, ժպտաց խորհրդավոր կերպով և ասաց.

— Այստեղ չե՛նք յեկել մեզ հավանեցնելու. յեկել ենք բուժվելու և կազդուրվելու. վոչ վոք հոգ չի անում հագվել-զգվելը···

— Ներկելն ու քսմսվելը··· ավելացրեց մայրը, վոր լսում եր մեզ։

Սակայն Լիզան վոչ քսվում եր, վոչ ներկվում։ Բայց յերբ մոր խոսքերի վրա յես նրա յերեսին նայեցի, աչքերը կիսախուփ՝ պաշտելի մի ժպիտ ուղղեց ինձ և ասաց.

— Ո՛, վո՛չ, պարո՛ն, յես միայն փոշի յեմ գործածում, այն էլ յերբ քրտնած եմ։

— Աղջի՛կս, միջամտեց մայրը,— վո՛չ, չի քսվում. կարող եմ այդ վկայել. իսկ Զինաիդան և Սուսաննան— դրանք ուրիշ բան···

— Մա՛յրի՛կ··· լռեցրեց նրան աղջիկը՝ հանդիմանական ծիծաղով։

Որիորդ Լիզայի հետ բավական հաճախ հանդիպում եյի յես մենակ պարտեզում և կամ ծովափին։ Զրուցում եյինք, խոսակցում։ Սկսում եր անդիմադրելի կերպով գրավել ինձ այս աղջիկը։ Ամեն անգամ յերբ մոտս եր լինում, աչքերս չեյի կարողանում բաժանել նրա բոսորագույն շրթունքներից,

դողդոջ դեմքից և մանավանդ թովիչ կիսափակ աչքերից: Ցանկությունը յերբեմն գժվեցնում էր ինձ. հուզմունքից ու դրդումից դողում էր ձայնս, չորանում էյին շրթունքներս:

Հասկանում էր Լիզան այդ ամենը և հետզհետե աշխատում էր ավելի ու ավելի թովել ինձ, իր ճիրանների մեջն առնել: Խորագետ, խե՛լոք աղջիկ էր ու փորձված: Իմ հուզումն ու դրդումը վո՛չ իսկ վրդովում էր նրան: Ըստ յերեվույթին ինձ նման շատերի քթիցը արդեն բռնած՝ իր վոտքերի տակ էր բերել նա, տրորել ու նետել: Սովո՛ր էր պաշտամունքի. սովոր՝ վոր կենտրոն դառնար ամե՛ն ուշադրության, ամե՛ն հիացմունքի:

Բայց ինձնից դեռ քաշվում էր կարծես: Որինակ հենց չէր համարձակվում այնպես կատակներ անել, ինչպես անում էր եստոնացու և ռուս ուսանողի հետ.—Հովահարով յերեսներին էր խփում, հովանոցով խթում էր մեջքը, ճաշի վրա հացի միջուկից շինած գնդակներով ռմբակոծում էր և կամ հրամայում, վոր ընկած թաշկինակը վերցնեն, գնան ներսից շալը բերեն, վազեն մի բաժակ ջրի և այլն:

Ինձնից կամ պատկառում էր և կամ նրանց հետ վաղուցվա ծանոթ, վաղուց էլ նրանց ճզմել ու տրորել էր վոտքերի առաջ:

Այսպես կամ այնպես, Լիզան որեցոր թովում էր ինձ և ամբողջ կիրքերն իմ մեջ վերականգնում:

Սիրահարվել վրան՝ թվում էր թե չէյի կարող: Յերբ հայացքը վրաս էր և շրթունքները դողդոջ դեպի ինձ, յերբ թավշի նման դդվող ժպիտովը

շրջափակում էր հոգիս— քիչ էր մնում կորզեյի նրան, տանեյի ծովափի խորշերից մեկը՝ ծծելու համար նրա շրթունքներից այն մրկող տրփը, վոր անուշահոտ ու վոգելից գինու նման արբեցնում էր ուղեղս... Բայց յերբ չէյի տեսնում նրա դեմքը, յերբ նիհար մարմինն էր միայն յերևում աչքերիս— ինչ վոր խուլ, սրտիս խորքերու՛մը թաղնված անորոշ հակակրանք դուրս էր պոռթկում՝ դերակշռելու համար բոլոր մյուս զգացմունքներին:

Վա՛տ, վա՛տ բաներ էյի մտածում նրա մասին. թվում էր թե փչացած կին է, հղփացած, շրթունքները վաղո՛ւց վարժ կրքոտ հպումների, մարմինը մաշված՝ վայելումների մեջ...

Շարժվածքները, գրավելու ձևերն ու ժպիտները նույն իսկ մեկ-մեկ զզվանքի նման վայրկյան եյին առաջացնում իմ մեջ:

Կիսաշխարհային կնոջ էր նման. քաղքենի և ազնվական այն կանանցից, վորոնք իրենց ճիգն ու ջանքը գործադրում են մի՛միայն տրփի ու տենչանք գրգռելու համար տղամարդկանց մեջ...

Ու յերբեմն մռայլ, վո՛չ միայն դադարում էյի հաճոյակատար դառնալուց Լիզայի համար, այլև կոպիտ էյի լինում և խիստ:

Չեր զարմանում այդպես ժամանակ: Յերևի համոզված էր, վոր ներքնապես պայքարում եմ յես նրա հմայքի ազդեցության դեմ և անհաջող լինելուս համար անձնասիրությունս վիրավորված՝ տխրում եմ ու կոպտանում:

Այդ իսկ պատճառով հանդիստ էլ չէր թողնում ինձ: Միշտ հետաքրքրվում էր թե վո՞րտեղ էյի գնում,

վո՞րտեղից գալիս, ո՞ւմ հետ էր խոսածս և ո՞վ էր, օրինակ այն կինը, որի կողքին նստած էյի գտնվել պատահմամբ ընդհանուր լողարանի առաջը գտնվող նստարանների վրա:

Առաջ հարցնում էր—«կարելի՞ է իմանալ». հետո—«հետաքրքիր է իմանալ» և վերջապես մի օր էլ ուղղակի կտրեց առաջս, յերբ սենյակս էյի գնում և հարցրեց.

— Ահա թե ինչ, պարո՛ն, դուք արդեն սկսել եք ուրի՞շ տիրուհիների փորձել... Այն ո՞վ էր որի հետ ծովափի գերանների վրա բազմել էյիք ու լուռ յերա՛զում...

— Բայց օրիորդ, կմկմացի յես—այդ խեղճ կինը գերանի մի ծայրին էր, իսկ յես այս մյուս. իսկ յես ի՞նչ գիտեմ ով էր:

— Ստո՛ւմ եք, պա՛րոն, ասաց կես կատակի շեշտով—ուրի՛շ տիրուհի եք գտել... մոռացել եք որ դուք միմիայն իմ ասպետն եք... և որ յես խանդոտ եմ...

Ասաց, կոկետությամբ ժպտաց, մատը վրաս թափ տվավ ու հեռացավ:

Մնացի կանգնած և կատարելապես հմայված:

Շո՛ւտ սթափվեցի սակայն, անփորձ մի յերիտասարդ անշուշտ խելահեղ կլիներ այդ թովիչ վարմունքից: Հասկացա որ աղջիկը միմիայն ընկճել էր ուզում ինձ. ընկճելու հաճույքը ունենալ: Յեվ յեթե գտներ որ մինչև ականջներս իր գերին եմ, արհամարհաբար պիտի ծաղրեր ու ոտքովը դեն շպրտեր իբր այլևս դատարկ, անպետք անոթ, իբր շա՛տ չընչին բան և մի այլ կողմ պիտի գնար՝ փորձելու նորանոր հաղթանակներ...

Այդպե՛ս էյի համարում յես Լիզային և զգույշ էյի միշտ, խելքս չկորցնելու չափ ժամանակին ինքս ինձ զսպող:

Ինչ վերաբերվում է Ագդային, պիտի ասեմ որ տասնհինգ-քսան օրվա ընթացքում հազիվ յերկու-յերեք անգամ հանդիպեցի նրան:

Կանաչ հրվանդանը պտույտի գնալու օրվանից հետո նա այլևս չեկավ մեր ամառանոցը: Լիզան այնքա՛ն սառը, մայրն էլ այնպե՛ս անուշադիր վարվեցին հետը այն օրը, որ ըստ յերևույթին այլևս միամիտ չգտնվեց ընդունելու Սերյոժայի հրավերները:

Հանդիպածս ժամանակ առիթը չէյի փախցնում մի յերկու խոսք փոխանակելու հետը: Թեյև սառն էր, բայց չէր խուսափում: Մի անգամ էլ մինչև իսկ թույլ տվավ ինձ ընկերանալ իրեն մինչև Ցոտխալի մագազինը, գնեց այնտեղից մի քանի բան և հետո յեկավ զբոսնելու հարավային ափի զբոսարանում:

Մոտ մի ժամ տևող այդ ընկերակցության ժամանակ նա խոսեցուց ինձ, հարցրեց իմ մասին շատ բան, առողջության մասին տեղեկացավ և այլն: Այդօր ձայնը ավելի դուրեկան էր, վարմունքը ընկերական և պարզ: Շատ լավ էյի զգում ինձ նրա հետ. ձայնը ջերմացնում էր սիրտս և կապույտ աչքերի քիչ ավելի կենդանի հայացքը հոգուս մեջ էր ներածում ինչ որ մաքո՛ւր զգացմունք, որ մոռացնել էր տալիս թե Ագդան կին էր, շա՛տ սիրուն մի կին և թե յես տղամարդ էյի:

Թվում էր թե կողքիցս քայլողը սրտիս շատ մոտ,

սիրելի մի անձնավորություն եր, միաժամանակ և դյուրաբեկ մի անարատություն, վորի մասին ամենաչնչին վատ մտածությունն անգամ սրբապղծություն կլիներ և գարշանք:

Յեվ այնուհետեվ ամեն անգամ յերբ առաջս եր գալիս Ադդայի դեմքն ու քայլվածքը, մտաբերում եյի Մոսկվա տեսածս մի հայտնի հայ նկարչի Հուիփաիմն կույսը՝ չեկ մազերով ու կապուտաչյա, վոր սպիտակ պատմուճանով, ձեռքին ճերմակ շուշան, անդրաշխարհային խանդավառության յերազով տոգորված հայացքը վերամբարձ՝ քայլում ե կարծես դեպի մի աներեվույթ նպատակ, ուշք չդարձնելով շրջապատող աշխարհին և վորի տակի տատասկ ու փուշին...

... Այդպես եր ահա, վոր այդ ամառ գտնվեյի յես յերկու միմյանց հակասող—յեթե արտառոց չի՛ լինիլ ասել, նայեվ միմյանց լրացնող —զգացմունքների շրջանում:

Մի կողմից այդ կիրք հուրացնող կինն եր, վոր իր դրդռիչ ժպիտներով հրավիրում եր, քաշում, վորպեսզի տեսներ դեռնաքարշ պայքարումներս և քրքջար անկմանս վրա, իսկ մյուս կողմից կենսատու քաղցր և անարատ մի զգացմունք, վոր չեր զարթեցնում վո՛չ մի անասնային ցանկություն, այլ ընդհակառակն ազնվացնում եր խոհերս և ուսեցնում սիրտս՝ սիրելու, սիրային յերազանքով հրճվելու փափագներով:

Լիզային յես վորոնում եյի, բայց իսկույն հետո Ադդային եյի ուզում հանդիպել, նրա հայացքի տակ ապրել:

Յեվ գնում եյի ծովափ, փնտրում ամեն կողմ,

վոր տեսնեմ նրան մի ժայռի վրա անշարժ, ակնարկը ծովի խորքերին ուղղած՝ ինչպես սովոր եր նստել ու ժամերով մնալ:

Բայց միայն յերկու անգամ տեսա այդպես ու չհամարձակվեցի մոտ գնալ: Չիմացավ իսկ վոր տեսնում եյի նրան: Լիզայի նման չե՛ր քաշում նա ինձ իր վոտքերի մոտ... Հեռու նստած, մի փոսի մեջ պառկած՝ ակնարկս չեյի բաժանում նրանից, մինչև վոր նա յելնում եր ու կամաց-կամաց գնալով, անհետանում ծառերի յետեվում:

Ամեն որ գնում եյի նույն տեսարանը վայելելու մտածությամբ. բայց Ադդան այլևս չերեվաց: Ըստ յերեվույթին չեր գալիս այս կողմերը· գտել եր մի այլ ծովախորշ՝ թաքնվելու համար միայնության մեջ:

Ու զզվեցրին ինձ այնուհետեվ այդ ափերը· յե՛ս ել մտածեցի հեռանալ դեպի ուրիշ կողմեր: Գահավանդի կողմը, դեպի բաց ծովը դեռ չեյի յեղել: Վճռեցի գնալ այնտեղ, հնար յեղածին չափ հեռու լինել ամեն բնակությունից:

Հարցնելով գտա ճանապարհը· չուզեցի պարտուզի և մոլորեցնող շավիղներ բռնել: Անցա մի քանի մարգագետիններ և ինձ գտա մի պուրակի, դրեթե անտառի սկիզբը:

Հաճոյալից եր այդտեղ· կային և կանաչազեղ, ծաղկալից բացատներ, հովանավորող բարձր ծառեր, առատ բուսականություն աչք կտրածի չափ տարածությունով, և բազմատեսակ անուշաբույր ծաղիկներ:

Ծաղկեփունջ անգամ կազմել սկսեցի· չուրջս ի յեր կապույտ համասփյուռ, յերկնքուկ և շահոքրամ·

ալտերի միջից ցցվում էյին նունուֆարն ու դաշտային յեղնացուկը, իսկ բացատների դալարիների մեջ՝ դեղին շերտեր էյին կազմել մաճգաճակն ու մանրիկ վայրենի տուղտը։

Այդ բազմահրապույր տարածությունը սուր հակապատկերն էր մեր ամառանոցի յետեվից փռվող փշոտ անապատին։ Յեվ զարմանալին այն էր, վոր վոչ վոք չկար այստեղ. վո՛չ մարգերի վրա, վո՛չ անտառի մեջ և վոչ էլ արտերում։

Միայնակ էյի կատարելապես. գնում էյի հանդարտ քայլերով, ճշմարիտ վայելքով լիաբերան ծծում էյի ոդը, ախորժով ականջ դնում թռչունների դայլայլին և նույնիսկ ծղրիդների ճռնչող ձայներին։

Մինչեվ ծնկներս յերբեմն խոտերի ու ծաղիկների մեջ գնացի յես այդպես՝ կտրելով արտերը, մխրճվելով խիտ ծառաստանների մեջ, մինչև վոր շավիղը հանեց ինձ բլուրների առաջ, ուր մեկեն բուսականությունը կտրուկ առավ և սկսեց դաճային ճերմակ ու չոր գետին, մանրիկ թփիկներով ու կարճ ծառերով պատած։

Մի քանի քայլ, մի յերկու թուփ էլ անցա, յետ տվի թզուկ ծառերի ճյուղերը և հանկարծ վոտքերիս տակ-խորքում յերեվաց բաց ծովը՝ իր անոլորտ տարածությունով։

Գտնվում էյի ահավոր բարձրության վրա, պատի նման ուղղաձիգ դահավանդների գլխին։

6.

Անմիջապես վոտքերիս տակ-խորքում, մինչեվ անհուն հորիզոնը տարածվելով՝ որորվում էր լեղակագույն վիթխարի մի զանգված, վոր դեպի ափերն էր

ծփացնում շառաչող փրփուրների և վոստնող ճերմակ բաշերի շարքեր։ Անդուլ համերգը բերնին վեռ-վեռ կոհակների կայտառ վոստումները մեկմյանց վրա հանած, անհոդ ծալքերի ու շերտավորումների պճրանքները քմահաճորեն պուճավորած՝ ընկողմանել էր նա վորպես վաստակաբեկ մի հսկա, վոր ահավոր պատերազմից հոգնած՝ հանգչում է հեվքոտ շնչառությունով, խոշոր կրծքի մեծ յելեվեջներով։

Ու մնացի տեղն ու տեղը զամված, կծկված մի թփի տակ, հմայված վեր յելնող միալար մռնչյունից, շլացած մի որինակ փողփողուն ծփումներից։

Դահավանդը նույնպես վեռ-վեռ, կարծես ահագին ճերմակ կոհակներ կազմելով, դողաձեվ գնում էր դեպի ձախ ու պտույտների մեջ անհետանում։ Վո՛չ մի բավիղ դեպի ծովը. ճերմակ, դաճային ուղղորդաձեվ կողեր էյին գլուխ պտտեցնող բարձրությամբ, գխախուխ կատարներով։ Աջի՛ց միայն ափը հետըզհետե իջնում էր պուրակների խառնուրդով և գնում հասնելու ջրի մեջ մխրճված լեզվակին։

Արեվը չէր այրում այլեվս, վորովհետեվ ամպոտում էր յերկինքը հետըզհետե. ծովի կողմից փչում էր զովացնող մեղմ քամի. Նստելու տեղս չա՛տ հարմար, ընկողմանեցի մանրիկ խոտերի վրա, թփի ստորոտում, և գոհ յեղա, վոր կարող էյի յերկա՛ր դիտելու մնալ մի ա՛յդքան չքեղ տեսարան։

Վո՛չ մի ձայն շրջապատում. ծովի մռնչյունը բացարձակորեն խլացնում էր ամեն ուրիշ աղմուկ։ Տաս-տասնհինգ րոպեյից հետո տեսողությունս էլ կենտրոնացավ միմիայն ջրի վրա և նրանց վեհափառ ծավալը նսեմացրեց ուրիշ վորեվե առարկայի տեսքը։

Ծովն էլ միայն տեսնում, ծովի՛ն միայն լսում. ուշադրությունս էլ նա չէր գրավում ամբողջովին և մտածություններս վոստոստում էին նրա ծածանումների վրա, նրա յելեվեջների կատարներին ու խորշերին, նրա ծալքերի ու կնճիռների անվերջ փոփոխումների յետեվից:

Ահա՛ այնտեղ, յելնում են ու իջնում անհամար թմբիկներ, սողոսկում են արծաթյա փուլեր... մյուս կողմում լերթ կապտագույն կույտերը միմիանց են բաղխում նախ. հետո կուտակված սահում են, ժողուվում են այս-այն կողմից հապճեպով յեկող յուրաքանչյուր շարժում, իրար են միացնում, իրար հրմշտկում ու բերանները բաց, սեվ պատ են կազմում ճերմակ քիվերով, շարժուն պատնեշների նման գալիս են սպառնալից... բայց ափերի մոտ փլում են մեղմ ժպիտով ցրվում, ծիծաղում ավազուտների վրա, ճերմակում, կապտում և ջինջ ու պայծառ կաթիլներով կամ սուզվում են, կամ յետ քաշվում...

Յեվ յեզերքների ծխուն ջրերը որորում են ծովային կարմրավուն բույսեր, վորոնց մոտ, ամեն ուղղությամբ տարածվող չեկ մաղանման խոտերը յերերում են՝ վորպես կույսի ցրված գիսակներ...

Ու հայացքս դարձյա՛լ դեպի յետ — հորիզո՛նն էր վոստնում, ուր յերկինքը արդեն մթնաղնում էր և վորտեղից դարձյա՛լ զինվում էին նոր արշավանքներ դեպի ափը, ջրերը միմիանց էին գնում արտասալով, իրար առաջ մղում, զանազան կողմերից վերահաս ընկերներին ձեռք էին տալիս, վորպեսզի նորի՛ց գնան, անվե՛րջ գնան իրենց շրջանակները փշրելու, կաշկանդող շղթաները ցնցել-ջարդելու...

Յեվ այդպես, հայացքս հորիզոնից ափերին և ափերից դեպի տարածությունը—անդադարորեն, չեմ հիշում պատկերների վորպիսի՛ զուգորդության շնորհիվ—միտքս գնաց դեպի Ազգան:

Յերեվի պատճառն այն էր վոր մեկե՛ն հիշեցի թե Ազգան այդ կողմերը կարող էր լինել, գուցե ինձ նման կծկված մի ծառի տակ, մի թփի մոտ՝ ծովը դիտելիս:

Դրա համար էր վոր մի րոպե յելա, շուրջս անհարկ նայեցի և ջանացի նշմարել թե չէ՞ր յերեվում արդյոք վարդագույն բաճկոն վորեվե ծառի տակ:

Հետո նորից նստեցի և շարունակեցի մտածել այդ աղջկա մասին: Պատկերացրի դեմքը, ակնարկը, հիշեցի մի քանի որ առաջվա մեր յերկար խոսակցությունը և վերջապես մի առ մի ամփոփեցի ա՛յն ամենը, ինչ վոր գիտեյի և լսել էյի նրա վերաբերմամբ:

Պատմել էյին նրա անցյալից՝ մի քիչ ամենքը: Լիզային յես չէյի հավատում շատ. ի՛նքն էլ չէր պատմում, չէ՛ր սիրում խոսել Ազգայի մասին, վոչ էլ լսել: Լիզայի մայրն էր գլխավոր աղբյուրը. նա՛ էր պատմել շատ բան: Ուսանողներից լրացրել էյի պակասածը:

Մալարոս էր Ազգան. այն յերազող և համառ կամքի տեր, վոգեվորվող աղջիկներից, վոր իրե՛նք են սիրում բանալ իրենց կյանքի ուղին. սիրում են անկախությունը, սովորելն ու յերաժշտությունը և յերբ սիրում են մեկին—սերը հասցնում են պաշտումի և անձնազոհության:— Այդպիսի տիպարները գիտեն նաև նվիրվել գաղափարական գործերի, յետ չկա-

ել, պատվարներից չեն վախենում և կարող են ժայռը դեմքին տանջվել ու մեռնել իսկ:

Հարուստ էին Ալդայի ծնողները. ապրում էր միայն մայրը. մեռել էին հայրը և մի յեղբայրը, վերջինս հանկարծ... անհետացել էր, 4–5 տարի յեր՝ չկար, կամ փախել էր արտասահման և կամ Մոսկվայի հայտնի ապստամբության օրերին զարնըված էր ու թաղված ընդհանուր, յեղբայրական գուբերում:

Չնայելով հարստությանը, Ալդան լավ սովորել էր, քննություն տվել, համալսարան մտել ու հայտնի յեր վորպես շատ ընդունակ, յեռանդուն պարապող: Պարզ կյանք վարել, շատ պարզ հագնվելը նրա սկզբունքն էր, այնպես վոր մայրը միշտ դանդատվում էր, թե իր աղջիկը հպարտ էր, չեր ուզում ընդունել ավելորդ փող, չեր ուզում վայելել հոր հարստությունը:

Լիդայի մոր, այլև ուսանողների պատմածներին նայելով այդ տարի հունվարին հանկարծ Ալդան սաստիկ հիվանդացել էր Պետերբուրգում և քեռին ստիպված էր յեղել ընկերանալ մորը ու գնալ մայրաքաղաք: Հետո աղջկան բերել էին հայրենիք և այժմ էլ Գելենջիք էին իջեցրել՝ վոր կազդուրվի և բուժվի:

Վո՛չ վոք չգիտեր հիվանդության պատճառները. մելամաղձոտ ու տխուր էր դարձել այն աղջիկը, վոր մի քանի տարի առաջ իր զվարթությունովն ու հրապույրով կյանք. էր սփռում շուրջը, վոր ծիծաղը միշտ շրթունքներին, լուրջ խնդիրների մեջ պատկառելի յեր, վորպես մի գիտնական, վոր սիրում էր խոսել, վիճաբանել ու ցնցել ամենքին...

Իսկ այժմ դժվարությամբ էր նա մի յերկու բառ արտասանում, հազիվ էր ծիծաղում և յերբե՛ք չէր սիրում վորեվե շրջանի մեջ վիճել, ճառել կամ նույնիսկ վեճն ու ճառը լսել:

Յեվ մանավանդ, ամեն ինչ մի քանի տարի առաջ վարդագույն տեսնող աղջիկը, այժմ դարձել էր սաստի՛կ հոռետես և վո՛չ մի լավ բանի չէր հավատում:

Թե ինչո՞ւ յեր նա այդպես դարձել— գաղտնիք էր: Գաղտնիք, վոր ամենքը կարծում էին թե գիտեն, բայց ցույց տալով հանդերձ վոր կա՛ գաղտնիք— մերժում էին պատմել ինձ:

«Զա՛րժե», «Թո՛ղեք», «ո՛հ, վո՛չ, չեմ կարող պատմել», «խա՛չ դրեք վրան» — ահա իմ հետաքրքրության պատասխանները:

Հիրավի, ի՞նչ կար, ի՞նչու յեր այդ աղջիկը հուսաբեկ, ջարդված վոտքերի կայանը կորցրած և կյանքից այլեվս վոչինչ չսպասող: Արդյոք անհույս սե՞ր, խաբվա՞ծ, արդյոք անպատվել էին և թողե՞լ, թե՞ ինքը սիրել էր մեկին և հանկարծ տեսել վոր իր սիրածը մի զարշելի արարած էր... ո՞վ գիտե, գուցե անհասանելի մի սեր էր այն, վոր հուսահատեցրել էր:

Բայց մի՞թե խելքը գլխին մի աղջիկ, վոր ունի իդեալներ ու նպատակներ, վոր զարգացած է և գիտությունից ճաշակել է—կարող է այդպե՛ս ջախջախված զգալ իրեն, վորովհետեվ կամ իր սիրածն է իրեն խաբել, կամ իրեն «անպատվել» են ու «թողել» և կամ գուցե «սիրում է մեկին ու չի սիրվում»...

Վո՛չ, Ալդան ա՛յդքան արդեն վողորմելի չէր

և վոչ էլ կրքի (թող լինի՝ սրտի) գերի: Կային ուրիշ գաղտնիքներ՝ նրա հուսահատությանը պատճառ դարձած: Գաղտնիքներ, վորոնք հայտնի չեյին և վո՛չ մեկին. վոչ վոքի:

Չե՞ վոր յերբեմն մարդու սրտի խորքերումը գոյանում են այնպիսի դա՛ռն, սրտամաշուք ջլատումներ, վոր մարդ բերանով արտահայտե՛լ անգամ չի ուզում, վորովհետև բուժվելու հույս չկա, վորովհետև միևնույնն է, արտահայտելովը վոչինչ չէ՛ փոխվիլ...

Յեվ կամ, գուցե դրանք այնպիսի՛ գաղտնիքներ եյին, վորոնց հայտնելու համար նա չե՛ր գտել դեռ մի մտերիմ սիրտ, անմիջապե՛ս ըմբռնող և լռելյան վշտակցող մի հոգի, վոր ցավակցական գռեհիկ բառեր չասեր ու պստիկացներ տանջանքի խորությունը, այլ վոր անձայն համակրությունով թափանցեր անհուսության ահավորությունը...

Այդպե՛ս, խորասուզվել եյի յես Աղդայի հոգեկան ներքին աշխարհը, յերբ մի րոպեյի սթափման մեջ նկատեցի վոր այլեվս արեվ չկար, յերկինքը ծածկվել եր միաձույլ ամպերով և սեվաթույր խավարը կարծես իջնում եր ճզմելու, կլանելու կապույտ ծովին:

Ջրերը հուզվել եյին սկսել և հուսահատական թափով պատրաստվում եյին կուրծքը դեմ տալ ծանրության. ուռում եյին, կնճռում մեծ ճակատը, խոշոր յերախները բաց արած մռնչելու եյին յելնում ու հաջող րոպեյի սպասում, վոր նետվեն իջնող հրեշի դեմ:

Պահ մի անլսելի դարձավ ափերի շռինդը. ար-

ձանացման մի շունչ իջավ կարծես ու սառեցրեց ամեն շարժում. օդի մեջ զգացվող առկախ վորոտը վարանման մի վայրկյան ունեցավ, հետո հա՛նկարծ սև զանգվածը համր յերերումով սկսեց իջնել և ջրերը վոստնեցին կատաղի շարժումներով:

Այնուհետեվ մեկե՛ն պայթեց ամեն ինչ. սեվ կույտերը թավալեցին վիթխարի տատանումներով, վորոտն ու մռնչյունը դղրդեցրին շրջակայքը, յերախներից դուրս ժայթքող փրփրադեզ ցայտումները խառնվեցին իրար:

Համայնատարած աճեցուն կռվի դաշտ եր դառնում խորությունը, ուր շղթայազերծ ջրերը խոյացումի մեծ թափով վողողե՛լ եյին հանդգնում նույնիսկ բարձր ապառաժների կատարները:

Ցնցվում եր ամեն ինչ. ափերը կծկվում եյին կարծես. սարսռում եյին նո՛ւյնիսկ թուփ և խոտ. ծաղիկները սքմել եյին, մռայլ ստվերը ծանրանում եր դաշտ ու անտառի վրա...

Շունչս բռնած, սոսկումով լի հիացման մեջ քարացած՝ յելել ծառի բունն եյի գրկել և դեպի անդունդը կառչած՝ դիտում եյի տեղի ունեցող այն մեծափառ պատերազմը, վոր շարժուն, կենդանի տարրի կռիվն եր՝ մռայլ ու խավար կաշկանդումի դեմ...

Չգիտեմ վորքան տեվեց այդ. ժամե՞ր, թե՞ րոպեներ, միայն հանկարծ թվեց ինձ թե խավարը հաղթահարվել եր, լուծվում եր ու ծալվում ինքն իր վրա, վոր նա ամոթալից յետ եր քաշվում և հորիզոնի լայնության մեջ տեղի եյին ունենում պատռվածքներ: Սեվ ամպեր եյին գոյանում վերև-

կում, խարխափել եր միաձույլ մգձավանջը, իրար մղելով՝ միմյանց վրա եյին նետվում խավարի կույտերը և գլորվում եյին խուսափելու համար:

Հետո, այդ խուճապի մեջ լույսի մի լայն շառավիղ ճեղքում եր թուխ զանգվածը և չեշտակի կտրելով տարածությունը՝ իջնում եր պսպղացնելու ծովի մի ընդարձակ դաշտ:

Ու ջրերը այնտեղ սկսում եյին հեվք տանել, հաղթության տարած՝ ժպիտներ կազմել դեմքի վրա, որոնել՝ հանգչելու համար ահավոր պատերազմից հետո:

Անսովոր չե՛ր այդ ամենը: Յեղանակն եր փոխվում, փոթորիկը յեկել եր, փչվել ու փախուստ տվել: Այժմ նույնիսկ ամպերը բացվում եյին, դո-ղույն տատանում, իսկ նրանց յեզերքները արծաթազօծվում եյին լույսի աննման յերիզներով:

Ահա այդ խաղն եր, որ զգայախաբության մի յերկրորդ պատրանք գրավում եր ինձ:

Շեղակի իջնող լույսի լայն շառավիղի մեջ, վերեվից դեպի ջրերը՝ պատկերանում եր աչքերիս առաջ մի տարօրինակ կիսաստվեր:

Զկարողացա վորոշել սկզբում թե ի՞նչ եր այն. արդյոք լույսի և ստվերի հակապատկե՞ր եր, թե ամպերից սլացող անձրեվային գծերի մի փունջ: Սակայն ահա լույսը պարզվում եր հետզհետե և պարզությամբ տեսնում եյի, վոր ծփումներն իբր պատվանդան ունենալով՝ ջրերի վրա հայտնվում եր մի վայելչակազմ կնոջ ստվեր...

Այո՛, կին եր այն. հրաշալի մարմնով մի կույս, վոր շքեղ և ալեծուփ գիսակները փռած թիկունքին,

բաց թեվերը գլխի յետևը տարել, դրել եր ծոծրակին և աննման դեմքը լույսի ցնծուղներին պարզած սորվում եր կոհակների վրա:

Մերկ չեր ամբողջովին: Բաց եյին միայն վիզն ու թեվերը:

Ստինքներից մինչև վոտքերը պարուրված եր նա ջրափրփուրի նուրբ շերտով, վոր ճերմակ պատմուճանի նման վոլորտվում եր մարմնի շուրջը և յերկար քղանցքը, մարող փոթերով տանում եր տարածելու ջրերի յերեսին...

Արձանացած մնացել եյի: Չեյի զորում շարժում գործել: Աչքերս լայն բաց արած՝ հետևվում եյի յերեվույթին, վոր ալիքների ծփումների հետ մոտենում եր ափին, գալի՛ս եր իմ կողմը:

Տեսնում եյի ակնարկը՝ լուսաշաղ դեմքի վրա. ակնարկ, վոր ահավոր թախիծով լի, սեվաթույր ամպերի աշխարհակալ կուտակմանը վրայից յերկինքն եր կարծես վորոնում՝ դեպի նրան նետելու իր բոցավեղ վարանումներն ու մրկող բողոքները:

Բայց վորտեղ եյի տեսել յես նմա՛ն մի յերեվույթ. հար և նման մի պատկեր... Ինչո՞ւ այդ պատրանքը ծանո՛թ եր թվում ինձ, ծանոթ և վո՛չ զգայախաբական:

Ու յերբ միտքս պրպտում եյի, հանկարծ սորովող կինը, ծփման մի շարժումի մեջ դեմքը իմ կողմը դարձրեց և յես ճանաչեցի նրան:

Ալզան եր...

Այդ խոկ վայրկյանին յերեվույթը անհետացավ, հալվեց լույսի մեջ, խորասուզվեց կարծես ջրի տակ

և նրա տեղը մնաց հոսանուտ ծալքերի մի մեծ տարածություն, վոր յերերում եր դողահար։

Յեվ յերբ սթափված շուրջս եյի նայում, զգացի վոր սիրտս սեղմվում եր, անհասկանալի մի տխրություն համակում անձս։

Մի քայլ հետ գնացի ու խոտերի վրա նստեցի։

7.

Վոր դեռ հիվանդ եյի և ջլախտային դրությունից չեյի բուժվել—դա փաստ եր։ Զգայախաբության դեպքը— ապացույց։ Տեսիլքը սակայն մտածածին չեր։ Համոզված եյի, վոր տեսել եյի նման պատկեր, կամ կարդացել եյի, կամ դուցե պատմել եյին։ Չեյի հիշում՝ վո՞րտեղ, յե՞րբ։

Իսկ թե ի՞նչու տեսիլքի առարկան Ադդան եր— այդ ել յերևի այն պատճառով, վոր մի վայրկյան առաջ միտքս ամբողջովին նրանով եր զբաղված։

Այսպես կամ այնպես, վոտքի յելա և պատրաստվեցի տուն վերադառնալ։ Լիովին սթափվել եյի։ Մի հետին ակնարկ ել ձգեցի ծովին, ուր ջրերը հանդարտել եյին, հորիզոնի ամպերի կույտերը անոսրացել և արևի շողքերը պսպղացնում եյին կապուտակ տարածությունը։

Դեպի այդտեղ գալու ժամանակ՝ բռնել եյի յես մի շավիղ, վոր անցնում եր արտերի միջով. մինչդեռ, ինչպես հետո իմացա, ուրիշ ավելի մեծ մի արահետ, մտնելով անտառը՝ հանում եր ավելի լավ տեղի, դահավանդի ամենաբարձր կետին, ուր փլումների շնորհիվ, մնացել եյին դեպի անդունդը կռացած մի քանի խոշոր կաղնիներ։

Սովորաբար մարդիկ այդ ծառերի բուներն եյին ընտրում վորպես դիտանոց և նրանց հովանու տակ եյին գալիս նստելու։ Ավելի անվախները մինչև իսկ յելնում եյին նրանցից մեկի բունի ծայրին, վոր հորիզոնաձև պարզվում եր դեպի անդունդը. նստում եյին՝ վոտները դեպի խորխորատը կախած, ճյուղերից ամուր գրկած և յեթե գլխի պտույտ չեյին ունենում— վայելում եյին՝ անդունդի խորքը աներկյուղ կերպով զննելու քաջությունը։ Քաջություն՝ գոնե իմ տեսակետով, վորովհետև յես յերբե՛ք չեմ կարողացել բարձրություններից դեպի ցած նայել՝ առանց գլխի կորստաբեր պտույտների։

Ահա հենց այդ առկախ ծառի բունի վրա յեր, վոր յետ դառնալուս միջոցին աչքս հանկարծ ընկավ և այնտեղ նստած տեսա մի կին։

Բավական հեռու յեր, դեմքը պարզ չեր վորոշվում։ Յերևում եյին սև շրջազգեստը՝ կախված անդունդի գլխին, այլև գորշ կոշկավոր յերկու վոտներ. իսկ ծառարմնից յելնող ճյուղերի մեջ նշմարվում եր, յերկնագույն բաճկոնակով և գլխաբաց յերիտասարդ մի դեմք։

Անմիջապես մտքիս մեջ ծագեց վոր Ադդան պիտի լիներ։ Իսկույն հետո սակայն, ի նկատի ունենալով կնոջ հագուստը, մտածեցի վոր նա չեր, այլ մի ուրիշը։ Իսկ յեթե Լիզան եր։ Այո՛, տեսել եյի նրան այդպես շորերով. կարծեմ տեսել եյի։ Յեվ հետո, կարծես սեվահեր եր։ Ինչո՞ւ վոչ։ Գուցե դիտեր վոր յես այս կողմերն եյի յեկել։ Յեվ կամ, ինքն ել, անկախ կերպով, դիպվածաբար, յեկել եր բաց ծովի տեսքով զվարճանալու։

Ջննելը անողոք եր. չեր ճանաչվում: Յեթե Լիզան եր... ավելի՛ լավ: Այդ աղջիկը կարո՞ղ եր իսկակա՞ն հաճույք ազդել ինձ բնության այս հրաշալի անկյունում: Անտարբեր լինել նրա կողքին—չպիտի կարողանայի. և ի՞նչ գիտեմ, գուցե նրա տրամադրությունն ել իմինի պատասխանն եր. գուցե նա՛ յել ցանկանում եր ինձ. միթե իզո՞ւր եյին այնքան հաճոյանալու ձևերն ու ձգտումները... Ո՛հ, նրա համբույրն ունենալ, խելահե՛ղ լինել նրա կրքոտ շըրթունքների հպումներից...

Քայլերս իրենք-իրենց շուռ յեկան դեպի այն կողմը և յես հուզմամբ, գրեթե դողալով ցանկությունից, արագ գնացի դեպի ծառերը:

Ջանացի հանկարծակիի բերել: Խուլ կերպով զգում եյի վոր պիտի փախչեր և կամ, պիտի նստած մնար այն սոսկալի ծառաբնի վրա ու պահանջեր վոր հեռանայի: Այդպե՛ս եր չարաճճին, քանի՛ցս փորձել եյի և մատո՛վ իսկ իրեն դիպչելը արգելել եր լրջությամբ:

Ծառերի ստվերներով, թփուտների տակից սահեցի և յերբ ինձ թվում եր վոր մոտեցել եյի, հանկարծ յերևան յեկա:

Գտնվում եյի տասը քայլ հեռու. զարմացած կանգ առի՝ ճանաչելով Մագդային:

Հագուստը, մազերը, դեմքն իսկ փոխված եյին: Նա՛ յեր: Վոտները դեպի անդունդ, թեվով գրկած և գլուխը մի մեծ ճյուղի կռթնեցրած, հայացքը անբաժան՝ իր աչքերին նմանող անծայր ծովից, լիովին անշարժ՝ վորպես արձանացած դիցուհի—վո՛չ իսկ իմացավ ներկայությունս:

Միայն բոլորովին յերբ մոտ գնացի, գլուխը իմ կողմը դարձրեց, յելավ ժպտեց ինձ ու ասաց.

— Կշտացա՞ք նայելով: Տեսնում եյի ձեզ... Յետ կացեք վոր իջնեմ:

Հետո համարձակ դուրս սողոսկեց և յելավ հաստատուն գետնի վրա:

— Կուզե՞ք միասին վերադառնանք տուն:

Բարևեցի: Յեվ տեսիլքը հիշելով՝ նայեցի մազերին ու հասակին: Դեմքն ու թևերը նման եյին. նույնիսկ վիզը, վոր բավական բաց եր: Մազերը միայն սարքված եյին այսոր ուրիշ տեսակ: Գնդել եր ծոծրակի վրա:

Գունատ եր, ժպիտը տխուր, ձեռքը սառ և չոր, քայլվածքը դանդաղ: Ավելի՛ հիվանդ եր յերևում, այլև հոգնած:

Մտանք անտառ, հետո բացատը հասած՝ նստեցինք իրար կողքի մի կոճղի վրա և յերբ բավակա՛ն լուռ եյինք, հարցրեց.

— Առաջի՞ն անգամն եր այսոր... բաց ծովի առաջ:

— Այո՛: Դուք յերևի հաճախ եք գալիս: Ձեզ այլևս չեմ հանդիպում այն կողմերը:

— Ամե՛ն որ այստեղ եմ:

— Սիրո՛ւմ եք ծովը:

— Ծո՞վը... ասաց նա— ի՞նչպես ասել ձեզ: Գուցե և չե՛մ սիրում. նույնիսկ յերբեմն ատո՛ւմ եմ... բայց սովոր եմ... Մի տեսակ ապշության մեջ է ձգում ինձ այդ լեղի տարածությունը: Կարծես հիպնոսացնում է, թովում... Այդպես է: Անընդհատ և ժամանակավոր ծփումներ, նույն տեսակ—շառաչ...

Ուրիշներին քնեցնում է։ Անքուն մարդիկ գիտեն, վորոնք լավ քնել են ծովի կողքին։ Ինձ—վո՛չ, նա անէացնում է, նյութականությունից ազատում․ անմարմին է դարձնում... Ձեզ հասկանալի՞ չէ այդ։

— Հասկանալի չէ։

— Ավելի լավ։ Հետո, յերբեմն էլ վրդովում է․ այդ ծովը։ Տարածությունը, մեծությունն ու դունադեղությունն է վրդովողը... ինչ վերաբերում է նրա զայրանալուն ու մռնչալուն, այժմ այլևս դառն ծիծաղ է առաջացնում իմ մեջ։— Միևնույն է, մտածում եմ յես— քիչ հետո դա՛րձյալ պիտի գալարվես, կծկվես և քեզ շրջանակավորող ժայռերի վոտները լզես...

— Այո՛, բայց շատ լզելով՝ ժայռերին տապալում է ծովը։

— Շա՛տ... մինչև յե՞րբ սակայն... Ո՛հ, համբերություն չկա․ վո՛չ համբերություն և վո՛չ էլ այդպես ոձանման հաղթության գծուծությունն... Ուզում եմ ասել, վոր ամեն վոք չի՛ կարող ոձի նման սողոսկել ժայռերի վոտների մոտ, լզել նրան անընդհատ և այդպիսի ստորաքարշության միջոցավ տանել հաղթանակը... Ա՛հ, կուզեյի վոր ըմբռնեյիք այն, ինչ վոր դժվարանում եմ ավելի նուրբ կերպով բացատրելու... Դուք հասկանո՞ւմ եք արդյոք... Ժայռերը դաժան ու անողոք, և վոչ իսկ մի թիզ լայնացնել են ուզում ջրերի վանդակը․ քրքջալի՛ր՝ պաշարել են նրանք ծովին և ստիպում են վոր նա լզե իրենց վոտները... Ու ծովը լզում է, մռնչում է— բայց լզում է, իսկ լզելը իր կռվի զենք համարել, չնայելով վոր նա հիրավի ժայռեր է տապալում ու մաշում— լզելով վոչնչացնելը իր հաղթություն

հուշակել, պանծա՛լ նրանով... վո՛չ, այդ յես գտնում եմ չափազանց դարշելի... Յես գերադասում եմ բոլորովի՛ն չկռվել։

— Ապա ի՞նչպես...

— Վոչինչ․ լուռ, առանց տրտնջալու, առանց դեմքն իսկ կնճռելու՝ վերարկույով ծածկել գլուխը և մեռնել...

— Վերարկույով ծածկե՛լ գլուխը։

— Այո՛... Ծածկել գլուխը՝ չտեսնելու համար վորևե չարախնդաց դեմք...

— Ցավակցո՛ղ դեմք՝ ասացեք։

— Նույնի՛սկ այդ... ի՞նչու ցավակցություն, ի՞նչ բուժումն դրանից․ կարո՞ղ է մեռնողին շունչ տալ այդ... Վո՛չ․ յերբ պիտի մեռնել—ուրեմն առա՛նց ցավակցությունների․ մեռնել կտրո՛ւկ, առանց հիշելու վոր կարող եր ապրել, կուզենա՛ր ապրել...

— Արտասովոր բաներ եք ասում։ Բայց խորապե՛ս դառնացած, նույնիսկ տանջանքներից խելահեղ յեղած մարդ եք յերևում... խելահե՛ղ յեղած, այո՛...

Հետո, յերբ պահ մի լռել եյի, վճռական կերպով նայեցի նրան և ավելացրի․

— Ասացե՛ք ինձ ձեր վշտերը... Ձե՞ք ասիլ։

Ցնցվեց, դարձավ ուժգնությամբ դեպի ինձ, լուռ զննեց ակնարկս մի րոպե, հետո վոտքի յելավ և ասաց․

— Գնա՛նք։

Ապա յերկա՛ր այլևս չխոսեց։ Ընթանում եր կողքիցս, առանց շուրջը նայելու, ակնարկը սևեռած դիմացը յերևցող լեռների սավերածերին։ Կամ մտածում եր խորունկ վրդովումներով, և կամ սաս–

ուկ հուզվել վերաբացված վերքերովը—վորի պատճառը յես յեղա․ խոսելու ույժ չեր գտնում:

Այդ լռությունը նեղում եր ինձ: Ուզում եյի խոսել, բա՛յց աներ սիրտը իմ առաջ: Շա՛տ բան ունեյի ասելու նրան․ Հազիվ գլխիվածը ներկայացել եր առանձին և յերկար խոսելու առիթը կար, յեթե միայն պատասխաներ ինձ: Պետք եր վերջապես սիրտ տալ, կյանքի՛ բերել այդ հուսաբեկ աղջկան, կյանքի վայե՛լքը ներշնչել, հասկացնել ու համոզել, վոր հուսահատությունը փոքրոգություն ե՝ ինչ վոր ել պատահած լիներ իր կյանքում, ի՛նչ տանջանք ու վիշտ ել վոր կրած լիներ…

Հիրավի, միթե՞ չեր կարելի անել այդ․— փրկել մի դժբախտ, բայց լա՛վ մարդու, վոր ընկղմում եր աննպատակության սոսկալի դատարկի մեջ, խավար եր զգում չուրջը և զարհուրում եր ապրելուց: Չե՞ր կարելի միթե նորից զարթեցնել նրա մեջ նո՛ր ձգտումներ, վոգեվորող նո՛ր նպատակներ, և կամ, գոնե կյանքի հաճույքները լիաբուռն վայելելու, ել՛ և անվերջ սպառվելո՛ւ չափ վայելելու մարմաջը:

Համոզված եյի, զգում եյի, վոր աղջիկը մեռնե՛լ եր վճռել, զզվել եր կյանքից, գուցե և նրա բո՛լոր հաճույքներից, մանավանդ՝ հոգնել եր տանջվելուց, մարտնչելուց․ հույս չուներ ապագայից, վոտքի կայա՛ն չուներ, բարոյական նեցուկի հասկացողությունը կորցրած՝ վոչ կռան եր մնացել նրա համար և վոչ կառչելու շյուղ: Ջարդվել եր ժայռերի դեմ, ջարդվե՛լ եր նրա մեջ ամեն բան․— հավատք դեպի գաղափարը, սերը դեպի մարդիկ և կամ վորևե հույս՝ դեպի արշալույսը…

Այդպե՛ս եր յերևում ինձ Աղդան․ մի քանի խոսք—և պատկերանում եր նրա տանջված հոգին, հանգստանալ-անհետանալու ձգտող սիրտը:

Վո՛չ, պետք եր փրկե՛լ նրան, կորզել ու հեռացնել անդունդի յեզրից, ամուր հողի վրա կանգնեցնել, հույսեր ներշնչել, հավատքը վերականգնել և այդպիսով միջոց տալ սիրո վայելքները տենչալու, ապրելու…

Այդ խակ մտածությամբ, վորոշեցի իջեցնել նրա հոռետես տրամադրության վրա իմ սառը փիլիսոփայությունների կռանը, ներշնչել նրան ա՛յն միտքը, վոր չպետք եր չափազանց վոգեվորվել—հուսահատ հիասթափումի չհասնելու համար, չպետք եր շատ յերազել—զարթնումի դառն իրականությունից չտանջվելու համար… ներշնչել վոր այդպիսի մահը փոքրոգություն ե և վոր միմիայն թուլամորթ հոգինե՛րն են, վորոնք առատացնում են արտասունքը և փութացնում մահը՝ անզգայանալու, կռվից խուսափելու համար…

Համենայն դեպս՝ Աղդան յերևի վճռել եր խոսել, սիրտը բանալ մեկին: Գուցե հենց նրա համար, վոր ունենար իր անհետացման փիլիսոփայությանը համամիտ մարդ: Համամտությո՛ւն եր պետք նրան՝ յերևի ջնջելու համար այն հետին վարանումը, վոր ըստ յերևույթին դեռ կասեցնել եր տալիս վճռական քայլը:

Յերբ հասել եյինք խիտ ծառերով յեզերված մի ծառուղու, կրթնեց նա խոշոր մի տանձենու և ասաց խուլ ձայնով.

— Կանգնեցե՛ք. յես ձեզ կպատմեմ իմ մտածու-թյունները:

— Յեվ ձեր վշտե՞րը:

— Նստենք մի տեղ:

Ընտրեցինք կանաչ մի թումբ: Նա նստեց բարձր, իսկ յես քիչ հեռու ակոսի մեջ:

Ու սկսեց պատմել: Կցկտուր, ցան ու ցրիվ, յերբեմն դողդոջուն, մարող ձայնով, յերբեմն սառն ու դառն ժպիտով, մեկ-մեկ խանդալից չեշտով...

Պատմեց կարճ, կտրուկ և խիստ բառերով, առանց վոչինչ ծածկելու: Զարկո՛ւմ էր կարծես ինքն իրեն և ախորժ էր զգում այդ գանահարությունից:

Վոչինչ չհարցրի, վո՛չ մի բառով չընդհատեցի:

Պատմությունը, իրավ է, սրտառուչ էր, սոսկալի, բայց վո՛չ տարօրինակ: Միջավայրը և ժամանակը ջնջում էին ամեն արտասովորություն՝ յեղածի մեջ:

Ուսանողուհի, կարողացել էր վերջապես ազատ վայելել ամենամեծ, անձնազոհ սերը, վոր ուներ նա դեպի իր մանկության ընկեր յերիտասարդը: Անունը պետք չեր տալ: Ուժեղ բնավորության տեր, աշխույժ և խելոք մի տղա յեր դա, վորին Ադդան պաշտում էր վորպես աստծո և հավատում էր: Նրա հետ միասին էր վոր մտել էր գաղափարական գործունեյության մեջ, տեսել էր գյուղացու զրկանքը, բանվորի հարստահարվելը, կանանց ստրկությունը և մանուկների տգիտությունը... Տեսե՛լ էր և նվիրվել այդ թշվառներին սփոփելու, այլև գիտակցության ու բողոքի տանելու՝ գործին...

Ի՞նչ հարկ յերկարել: Պարզ էր: Յեկել էին ժայլում, կրակե՛ օրեր. հրդեհը ծայր առած՝ բոցեր

էր տարտղնում ամեն ուղղությամբ: Զահը ձեռքին և քրտնաթոր՝ վազել էին նրանք, կրակը տանելու քաղաքից քաղաք... Յեվ ընկել էին նման շա՛տ շատերի...

Յերիտասարդին դեմ էին տվել մի լապտերի սյունի և գնդակահարել՝ փռել սալահատակի վրա, իսկ իրեն—Ադդային, բանտից բանտ, վորջից վորջ քշել էին ու տանջել խոնավ գետնի, մութ խորշերի մեջ անոթի, յենթակա կոպիտ վարմունքների... Հետո մի գինարբու մարդ, վոր իշխանություն ուներ գաղափարները հալածելու, ուժով բռնաբարել էր նրան... ձեռքերը կապել տվել ու բռնաբարել...

Հիվանդացել էր, տարել էին հիվանդանոց, կանչել մորը: Հետո, կամենալով անշուշտ գինարբու մեծի վարմունքը ծածկել մի կերպ, Ադդային ազատել էին, ծնողներին հանձնել և հրամայել վոր իսկույն հեռացնեն դեպի հարավ: Ու տարել էին դեպի հարավ, բայց վո՛չ դեպի հայրենիք: Բռնաբարությունը ունեցել էր հետեվանք: Ծնել էր զավակ, վո՛չ, տեսնել չե՛ր ուզում նրան: Զգիտեր ի՞նչ յեղածը և վո՞րտեղ յեղածը: Յերեվի մայրը թաղել էր անբախտին մի հեռու տեղ:

Այդ չեր ամենը սակայն: Հայրենիք գալով, Ադդան յերեվան էր հանել և մի ուրիշ սոսկում, մի ուրիշ դարշանք:

Յերիտասարդը, վորին նա պաշտել էր և վորի մեռնելուց հետո ապրե՛լ չեր կամեցել—այդ իդյալիստը, վո՛չ միայն հարաբերություն էր ունեցել Լիդայի հետ, այլև Ադդայի հետ յեղած ժամանակ, պահպանելիս էր յեղել սիրային ջերմ նամակագրու-

թյուն այդ զարհուրելի աղջկա հետ: Զարհուրելի, վորովհետև յերիտասարդը նրա չորրո՞րդը, թե՞ հինգերորդ սիրեկանն է յեղել... միաժամանա՛կ...

Ո՛հ, բազմայրո՛ւթյուն, չա՛տ ամուսին ունենալ... Ի՞նչու վոչ, յերբ տղամարդը կարող է լինել բազմակին, ունենալ միաժամանակ յերկու, յերեք կին, յերեք սիրուհի, այլև հանդիպա՛ծ կինը...

Այդպես եր: Իր կուռքը գրում եր տրխտ, երոտիքական այնպիսի՛ նամակներ Լիզային և ստանում է յեղել այնպե՛ս կրքոտ, այնքան պակշոտ և յերբեմն էլ խենեշ արտահայտություններով լի յերեսներ, վոր նա, Ադդան, յերբ սկսում է կարդալ նրանց—զգացել եր իրեն՝ վորպես յնթակա՝ անօրինակ մի մղձավանջի... Ցեվ այդ նամակները գրվել են ու ստացվել այն ժամանակ, յերբ ինքը—Ադդան, յերջանիկ զգալով իր սիրեկանի գրկում, համոզված է յեղել թե դեռ քի՛չ է սիրում իր կուռքին, իր աստծուն և թե հարկավոր եր մեռնել նրա համար, ապացուցանելու՝ վոր արժանի չե՛ր նրան, վոր զոհվե՛լ եր ուզում նրան...

Ա՜հ, միամի՛տ հիմարություններ և մարդկային անհատա՛կ կեղծություն, վոր մի անգամով փշրել է նրա մեջ և՛ հավատք և՛ սեր, վոր մի հարվածով խստացրել է նրա կրած տանջանքները, չեչտել է նրանց այրվածքները: Վորովհետև յերբ մարդ կորցնում է իր հետին ապավենը— անցյալից մնացած յերջանկության հիշատակը,— յերբ մարդ ապացույցն ունի վոր այդ հիշատա՛կն անգամ զարշելի յե և նողկալի — այն ժամանակ անեությունն է ցանկալի, վորովհետև կրած բոլո՛ր տանջանքները վերա-

նորոգում են իրենց մրկող, իրենց խարանող այրվածքները...

Սիրել այդպե՛ս ու խաբված լինել վատաբա՛ր, կորցնել դեպի կյանքը ունեցած հաճույքները, զարշանք ու ատորացումն զգալ անընդհատ իր մարմնի վրա և այն հրեշավոր հպումների հիշողության տակ յերազների՝ մեջ անգամ ցնցվել... Ո՛հ, չափազա՛նց շատ են դրանք՝ մի քանի կյանք իսկ ջնջելու համար...

Կար և մի ուրիշ բան. դա այն հուսախաբ հիասթափությունն եր, վոր լրացնում եր պակասը, ջնջում եր նրա մեջ՝ կյանքից վորևէ հույս ունենալու հետին հաճույքը:

Այստեղ Ադդան լռեց և վոտքի յելավ:

— Վո՞րն է այդ. հարցրեցի յես.— հիասթափություն ի՞նչից:

Նայեց ինձ, կարծես տարօրինակ գտնելով, վոր չհասկացա: Հետո նշան արավ քայլելու և ասաց.

— Հիասթափություն միջավայրից...Անդրադարձե՛ք մեկ մեր շրջապատի վրա... Լուռ է՝ ինչպես անապատ, անշարժ՝ վորպես ճահիճ. վո՛չ միայն անշարժ, այլ հետզհետե զարշահոտ և լի զեռուններով. յերեկվա մեր սավառնող բազեները այսօր ճախնուտների մեջն են իրենց փորը կշտացնելու իջել... Մեծանում է անապատը մի կողմից, ճահիճը-մյուս: Ամե՛ն մեծություն փշրվել է և թխլիկ քաղքենիներ գոյացել. նույնիսկ մտավորականության մեջ կազմվել է մի զարշելի՛ բուրժուականություն, վոր իր ճանկերի մեջ լլպորում է ամեն միտք, ամեն թըռիչք... Ամեն վոք քայլում է մենակ. կամ ինքն իր

մեջ ամփոփված՝ վորպես Ջրակուլաների կողքին մի վոտքի վրա կանգնած յերկարակտուց արագիլ, և կամ, բողոքի ամե՛ն մտադրություն բանադրանքի տված, լիբերալիզմ բազմաներկ դրոշն է բանահարում ու նրանով բարոյախոսում...

— Դուք խի՛ստ եք:

— Բայց ճշմարիտ եմ... Չկա՛ մեծ շնչով առողջություն այն շքե՛ղ յերիտասարդությունը, վոր պատմության մեջ գիտե՛ նոր եջեր բանալ. չկա՛ փորձառու հասակավորների այն յերկաթե լուրջ ցնցումները, վորոնք հասարակական կյա՛նքը գիտեն մաքրել ամեն աղտեղությունից և վոչխարային մտավախությունից... Չկա վո՛չ մեկը. այժմ ամեն վոք ճգնում է ապացուցանել, վոր ինքը յեղել է և կա բարեհույս ավելի՝ քան ամեն բարեհուսություն. ամեն վոք կերդվի ձեզ, վոր խոնավ չե՛ ոդը, խավար չե՛ շրջապատը, մռայլ չե յերկինքը...Կգտնեք նույնիսկ հայհոյողներ լույսին, գովաձայնողներ՝ ամեն դարշանքի...

— Մի՞թե այդ բոլորը ձեզ հետաքրքրում է. ասացի յես: Հետո զգալով վոր կարող եմ վիրավորած լինել այդ հարցումով, ավելացրի.

— Ներեցեք, սակայն ինձ թվում է, վոր ձեր սեփական տանջանքները շա՛տ ավելի մեծ են:

— Այո՛... սակայն ահա իմ մտածությունը:— Մարմինս ու սիրտս զզվեցնում են ինձ. փորձեցի ստուգել թե արդյոք չե՞ր կարելի գնալ մեռնելու հանուն մի լավ գաղափարի. գնալ գլխովին նվիրվելու մի լավ, լուսաբար, փրկարար գործի, մոռանալ անձս, տանջանքներս, համառ տոկունությամբ և անձանձիր զոհողություններով նետվել հոսանքը բերող աշխա-

տություններին... Ա՛յդ եր մնում միայն վոգեվորող, այդ եր մնում իբր նպատակ. ուսումս շարունակել չեյի՛ ուզում և սիրտ չկար... Ի՞նչու, ավելորդ չե՞ր...: Ի՞նչ փույթ իմ ընկված անձը այլևս... Վորոշեցի վերանորոգել հարաբերությունս հին, գաղափարակից գործիչների, ընկերներիս հետ... Ճանաչում եք դուք Սերյոժային:

— Լիզայի յեղբո՞րը:

— Այո: Հին աշխույժ գործիչներից է:

— Չի յերեվում այդ:

— Անշուշտ... Այդպես չեր այն որերում: Այժմ նա, մայրաքաղաքում յեղած ժամանակ, ռոճիկ է ստանում զանազան մթին տեղերից... Մայրը շատ դրամ չունի: Տղան սիրում է թղթախաղ և կանայք: Մի քանի սիրուհիներ ունի:

— Այդ դուք հաստա՞տ գիտեք:

— Գրել է ինձ իմ ընկերուհիներից մեկը և զգուշացրել: Հայտնի յե ամենքին այնտեղ... Բայց կան և ուրիշներն ել այդ «հին հերոսներից»: Ով չի՛ կարողանում այդպես հեշտությամբ ծիծաղել մեր քըթին—նա ընտրում է ուրիշ տեսակ անկումն: Նրանցից մեկը, որինակ, գինետների սեղանների տակն է վորոնում իր կորցրած գաղափարները. յերկրորդը ամուսնացել է, գործարանատեր դարձել և տրամագծորեն գործում է այն մտքերի հակառակ, վորոնց համար նա կոկորդներ պատռում և պատնեշներ եր կառուցանում... բայց ի՞նչ հարկ յերկարել: Ինձ ծաղրեցին, յերբ յես դիմեցի մի քանիսին՝ հայտնելով ցանկություններս: Ես չե՞յի գժվել. պետք եր զգույշ լինել այդպիսի նամակներ անգամ գրելուց: Ե՛հ, խելքս

վո՞րտեղ եր, չե՞յք տեսնում միթե վոր մարդիկ ապրել են ուզում, րոպեներից ոգտվել, կյանքը լիաբուռն վայելել և այլևս «հիմարություններ» չանել... Վայելե՛ք դու յել կյանքը, սիրե՛ք, ապրե՛ք, կոխե՛ք ամեն բարոյականություն. ի՞նչ բարոյականություն, հիմար խո չե՞յք, կինը յեղել ե՝ հանձնվելու և տղամարդը— առնելու համար. ահա կյանքի ամբողջ միտքը, եյությունը. դրանից դուրս-վոչինչ: Վայելք սիրո, միմիայն վայելք՝ իր ամենաբուռն տեսակներով... առա՛նց քաշվելու, նույնի՛սկ պարծենալո՛վ, բարձրագո՛չ...

Յեվ Ազգան լռեց: Հասել եյինք անտառի վերջին. այժմ մարգագետիններն եյին սկսում: Ճանապարհնիս անցնում եր նրանց միջով:

Սկսեցի խոսել յես: Ջանացի Ազգային մխիթարել, հույսե՛ր տալ, հորդորել՝ վոր մոռանա անցյալը, թողնի՛ յերազները, հաշտվի այն մտքերի հետ, թե կյանքի մեջ և՛ ճահիճներ կան և՛ ջինջ աղբյուրներ, և անտառ կա, բայց և անուշաբույր ծաղկալից բարձրություններ: Ճգնեցի ապացուցանել նաև թե ամենքը խաբեբա չեն ու տափամոլ՝ ամեն ազնվություն ծաղրելու չափ:

Մի խոսքով ամեն ջանք ու պերճախոսություն գործ դրի ապացուցանելու վոր խավարը մշտատեվ չի՛ կարող լինել և վոր արշալույսը վաղ թե ուշ— անշուշտ պիտի ծագեր: Իսկ ինչ վերաբերում ե այդ «հերոսներին» նրանք ա՛յժմ եր, վոր իրենց իսկական գույնն եյին ցույց տալիս. յեղել են նրանք կե՛ղծ: Ուրախ պիտի լինել, վոր, հետադարձ շարժումները դիմակազերծ են անում այդպիսիներին՝ նոր ապագա

պահելու համար ապագա գործունեությունը... Չպե՛տք եր յերբեք հույսը կտրել: Չե՞ վոր կային բարձրություններ. մարդիկ կարող են ցրվել, մանրանալ, բայց գաղափարը խո չի՞ մեռնում... յեթե կան բարձրություններ, ուրեմն և նրանցից յելնող ջրերը անշո՛ւշտ պիտի հոսանք կազմեն... Հոսանքը նոր ուժեր կծնեցնի. ահա այդ հոսանքին և այդ նոր ուժերին պետք ե սպասել անընդհատ...

Լսում եր ինձ Ազգան, առանց առարկելու, առանց նայելու: Վերջացնելուցս հետո յել վոչինչ չը խոսեց, բայց նկատեցի վոր դեմքի վո՛չ մի գիծը չը խաղաց:

Չե՛ր հավատում. չեյի կարողացել համոզել: Անշուշտ, նոր չեյին և վոչ ել ազդու իմ մխիթարությունները: Յես ինքս գտա նրանց բավակա՛ն ծամծմած մտքեր, վորոնք միալար կրկնված այժմ այլևս ձանձրացնում են և յերբե՛ք համոզում:

Հասել եյինք իրենց տան առաջ: Սեղմեցի պարզած ձեռքը:

— Չտեսնվե՞նք այլևս. հարցրի:

— Ինչո՞ւ վոչ, ասաց նա: Շնորհակալ եմ վոր ցանկացաք հույս ներշնչել ինձ:

Բաժանվեցինք: Յերբ մի քայլ եյինք արել, հանկարծ ծովի վրայի տեսիլքը միտս յեկավ: Չգիտեմ ինչո՞ւ— մեքենաբար կանգ առի: Կարծես մի բան եյի ուզում հարցնել Ազգայից:

Նա յել տեսավ կամ զգաց կանգ առնելս: Սպասեց դռան մոտ և հարցրեց:

— Ուրիշ ասելիքնե՞ր ունիք:

— Ասելիքնե՞ր... Վո՛չ... բայց այո՛... Ասա-

ցե՛ք, խնդրեմ, դուք չե՞ք պատմել ինձ և կամ չգիտե՞ք արդյոք մի այդպիսի պատկեր.— ծով, ծովի վրա մի կին՝ հերարձակ, ձեռքերը գլխի հետևը դրած...

— Ինչպե՞ս չէ, ընդհատեց նա— բայց վոչ թե ծովի վրա, այլ ծովի ափին... Ստինքներից մինչև վոտները մի ճերմակ յերկար պատմուճան, դեմքը բարձր, կուտակ ամպերին, վորտեղից իջնում է լույսի մի լայն շառավիղ... Յես էլ յերկար նայեցի նրան... Կգտնեք դուք Լիզայի սենյակի պատին. ճիշտ այն լուսամուտի դիմաց, ուր մի որ նստեցինք՝ օրկեստրի նվագը լսելու համար...

— Ահա՛, իրա՛վ վոր... Շնորհակալ եմ... Բայց մի՞թե այդ կինը նման է ձեզ...

Նայեց ինձ ժպտուն և ասաց.

— Ի՞նձ... Չգիտեմ, ճշմարիտ... Գուցե՛... Ստուգեցեք մի անգամ էս...

Հետո գլխովը բարեվեց, նորից ժպտեց ու գնաց:

8

Այնուհետև դարձյա՛լ յերկար ժամանակ չհանդիպեցի յես Ազգային: Ծովափին կամ լողարանների առաջ նա չեր յերևում: Վո՛չ իսկ զահավանդների վրա, թեև այնտեղ գնացած ժամանակ քանի՛ցս յես պրպտեցի յուրաքանչյուր մատչելի բարձրություն, յուրաքանչյուր ծառախումբ: Վարպետությամբ հարցրի Սերյոժային, նույնիսկ Լիզային: Ազգան Գելենջիք եր. յերբեմն յերևում եր այս-այնտեղ, բայց ընդհանրապես տնից սկսել եր սակա՛վ դուրս յելնել:

Մի քանի անգամ մտածեցի գնալ տեսության, բայց համարձակություն չունեցա. չկա՛ր առիթ. հրավեր չեյի ստացել:

Ինչ վերաբերում է Լիզային, կամաց-կամաց մեր նախկին կատակածև մտերմությունն էլ սառեց: Այլևս քի՛չ եր ուշադրություն դարձնում ինձ վրա: Պատճառ կար: Դրացի ամառանոցն եր յեկել մի սիրունատես և հարուստ յերիտասարդ: Ցերեկվի Լիզան նրա գլուխը դարձրել եր: Մարդը գրեթե ամեն որ զբոսանքների յեր հրավիրում ամբողջ ընտանիքին, մեկ-մեկ էլ յերկու ուսանողներին: Մի որ կառքով եյին գնում Ջանխոտ, մյուս որ՝ շոգենավով, յերրորդ որը նավակներով պտույտի եյին յելնում և այդպես անվերջ: Նսեմացել եյի յես: Ասենք ի՛նքս էլ դեմ չեյի դրան: Այդ յերիտասարդների ընկերակցությունը չեր գրավում ինձ:

Այնպես վոր, յերկրորդ ամիսը արդեն մնացել եյի բոլորովին մենակ, թափառում եյի ծովի յեզերքները ամեն ուղղությամբ, անտառ ու պուրակ չեյի թողել, վոր վոտնատակ տված չլինեյի:

Մինչև իսկ դիմացի լեռան կեսը բարձրացա մի որ և վերադարձա, այլև այցելեցի Ֆրանսիական հեռավոր ծովափնյա գործարան, ուր կրաղյուս եյին պատրաստում և խոշոր շոգենավերով արտահանում:

Այլևս տեսնելու բան չեր մնացել: Միևնույն տեղերը գնալուց զզվել եյի, լողանալուց էլ ձանձրացել, կարդալուց էլ:

Վերջերում սակայն, գտա փարոսի մոտերքը կառուցված մի կես գետնափոր հյուղ, ուր ապրում եր մի ծերունի տաճիկ ձկնորս:

Ինքնատիպ, կյանքի դառնություններից լա՛վ կրթված ու փորձառու դարձած այդ արևելցին հետաքրքրեց ինձ: Հաճույք էր պատճառում նստել նրա կողքին հյուղի հովանու տակ և լսել:

Յերկու հոգի էին— հայր և վորդի: Ամեն տարի այդ ամիսներում գալիս էին՝ հյուղը նորոգում, ձուկ էին բռնում և տեղն ու տեղը վաճառում, այդպիսով քիչ գումար էին ունենում և տուն վերադառնում:

Գրեթե ամեն որ այցելում էի նրանց, մանավանդ յերեկոյանները: Հագնում էի վերարկուս՝ ծովից փչող հովից պատսպարվելու համար, իջնում էի ծովափը և ժամերով նստած մի ժայռի վրա, դիտում էի թե ինչպես հայր ու վորդի ցցեր էին տնկում ջրի մեջ շեղակի ուղղությամբ, հետո մեծ թոռը տանում դեպի ծովի խորքը, լարում ծովաբերանի առաջ և չվանը բերում՝ խրճիթի մոտ խփած ցցին կապում:

Այդ գործողությունը տևում էր մի քանի որ: Հետո սկսվում էր ձկնորսությունը, վոր տեղի յեր ունենում առավոտը լուսաբացին: Հրճվանքով ներկա էի լինում, յերբ թոռից ափի վրա էին շուռ տալիս և կամ նավակի մեջ բազմաթիվ փոքրիկ, վոստոստուն արծաթափայլ ձկներ:

Յերբեմն նստում էի ծերունու և վորդու հետ նրանց նավակը և գիշերով սահում-գնում էինք մինչև ծովի բացը, ուր վորսորդներն իրենց ուռկանն էին հարդարում, ամեն կողմից գնում և կամ կամաց-կամաց հավաքելով՝ պատրաստվում էին դուրս քաշել:

Ուռկանի ժողովելը տեղի յեր ունենում առավոտը շա՛տ շուտ, լուսադեմին յերբ արշալույսը գունավորում էր ծովի հորիզոնը և լեռների գագաթները:

Ծովի բացը, հեռուն հետզհետե շառագույն ու մշուշոտ, ջրերը գողտրիկ նազանքներով և ծփանքներով համրընթաց գալիս էին հալվելու ծովի մեջ, հետո նորից վետ-վետ ծավալումներով աջ ու ձախ էին սփռվում և գնում էին նետվելու դեպի ափերը:

Յեվ մեր նավակը յերերուն այդ ծալքերի մեջ ընկած, մեծածուփ շարժումներով յետ ու առաջ էր սահում, ղեկավարված ծերունու ձեռքով:

Սկզբներում վո՛չ մի անգամ բաց չէի թողնում, իսկ հետո շաբաթը գոնե մի որ անշուշտ, շուտ զարթնելով, հասնում էի ձկնորսներին ընկերանալու նրանց նավակի մեջ, ուր սակայն անգործ ու անշարժ նստած՝ միմիայն հորիզոնն էի դիտում և կամ ծերունու շարժումներին հետևում:

Այդպիսի մի թարմ առավոտ էր ահա, վոր յերբ ծոցի մեջ կանգնեցրած վերջին ցցից սկսելով ժողովում էին ուռկանի շուրթերը, հանկարծ վորդին թողեց գործը, ուղղվեց մակույկի մեջ, մի ինչ վոր բառ աղաղակեց և հայր ու վորդի մեկե՛ն թողած ամեն ինչ, անշարժեցրին նավակն ու ակնարկները սևեռեցին դեպի ծովը:

Յե՛ս էլ նայեցի: Բավական հեռուն, ջրի յերեսին ծփում էր ինչ վոր խոշոր սև բան: Կարծես կոճղ լիներ և կամ նման առարկա:

Մոտենում էր համր ու մեծ շարժումներով:

Ձկնորսների յերկարատև սեվեռուն հայացքը սկսեց վրդովել ինձ:

— Ի՞նչ է այն... հարցրի վախեցած:

— Խեղդված մարդ է. ասաց վորդին:

Խեղդված մա՞րդ... Այդ ջրի տատանումների վրա օրորվող առարկան ուրեմն մի մա՞րդ եր, մի թշվառ, վոր գուցե լողանալիս խեղդվել եր, կամ ո՛վ գիտե ուրիշ ինչպիսի արկածի զոհ եր յեղել...

Սոսկումը կրծքումս, ջղային դողի ձեռքը ընկած նորից թոթովեցի:

— Մա՞րդ... բայց ո՞վ է, ճանաչո՞ւմ եք:

— Չի՛ ճանաչվում. ասաց վորդին—բայց կարծես մեզնից մեկը լինի. ձկնորս...

— Ուրիշ ո՞վ կլինի. խոսեց դառնությամբ հայրը— մեր բոլորիս վերջը այդ չե՞:

Դառնությամբ ասված այդ խոսքը բոլորովին չհանգստացրեց ինձ: Ակնարկս լարված՝ ճգնում եյի վորոշել առարկայի գծերը: Ինչ վոր ուռուցիկ բան եր յերևում ջրի վրա, բայց դեմք չկար դեռևս:

Անձկությամբ սպասեցինք: Լույսը սկսել եր լավ բացվել, մշուշը ցրվում եր: Հանկարծ վորդին հորը դարձավ ու ասաց տաճկերեն.

— Նայի՛ր, հայր, կարծես կին լինի:

— Կի՞ն— ճչացի յես ջղայնորեն և սարսափով— ասացիք կի՞ն:

— Այո՛. հաստատեց ծերունին,— կին է. յերիտասարդ կին:

Նույնիսկ յերիտասա՛րդ... Արդեն լավ տեսնում եյին այդ ձկնորսները, իսկ իմ աչքերը մթագնում եյին:

Յեվ, սոսկալի՛ բան— կայծակի նման կիզիչ ու արագ՝ մի այնպիսի ցնցում անցավ մարմնովս, վոր սրտիս բաբախումը մի վայրկյան կանգ առավ կարծես: Խեղդիչ անձկություն, աննկարագրելի ճնշում կսկծեցրեց հոգիս...

Արդյոք հիմա՞ր եյի, ո՞վ ներշնչեց ինձ այդ միտքը, ինչո՞ւ, վորտե՞ղից...

— Մո՛տ գնանք, մո՛տ գնանք, կանչեցի յես ահավոր ձայնով ու խելահեղ— մղե՛ք այն կողմը նավակը, ազատենք թշվառին. գուցե դեռ շնչում է՝ կենդանի յե...

Ծերունին ինձ նայեց զգայուն դրությունս հասկացողի արդահատանքով, գլուխը ցցեց և ասաց տխուր.

— Ավա՛ղ, ուշ է արդեն. յերեկ դիշերվանից սկսած՝ ջրի մեջն է. նայի՛ր...

... Ու պառկած եր նա, այդ դժբա՛խտ կինը, ընկա՛ծ մեջքի վրա, կապույտ քողի նմանող ջրի նուրբ շերտի տակ. մազերը ծովային կանաչավուն ճապաղ խոտերի խառնուրդի հետ փռվել եյին գլխի շուրջը և դեմքը գունատ ու արձանացած, կապույտ աչքերը գրեթե անբիր՝ ուղղված անորոշ անհունության,— թողել եր այլևս ամեն վիշտ և հիշողություն հավիտենապես ազատվե՛լ եր մեծ տանջանքների հոգեմաշ անդրադարձումներից, ու չե՛ր կամեցել գռեհիկ կերպով ապրել՝ վարելու համար տ–

հասնային, բուսական այն կյանքը, վորի զոհն էր յեղել ինքը...

Աղդան էր: Կյանքը խճճել էր նրան իր վոստայնի մեջ, ծծե՛լ էր կենսական բոլոր նյութերն ու այժմ դուրս էր նետում անողոք պաղարյունությամբ:

Կյանքը, միջավայրն ու ժամանակը...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Գյուղից	11
Զուչո քարը	27
Կույրը	70
Քյոխվա	102
Ստարշինա	136
Սերմնացան	147
Հողի աշխատավորը	172
Զորագլխին	211
Խաղը	
2. Պատմվածքներ	255
Մշուշ	291
Իկար	318
Morituri	330
Ծովափին	

Տեխ-խմբագիր՝
Սգ. Ալբունյան
Սրբագրիչ՝
Մ. Թումանյան

ՎՖ 1046 Հրատ. 5228.
Պատվեր 343. Տիրաժ 4000.
Հանձնված է արտադրության 19/V 1940 թ.
Ստորագրված է տպագրութ. 27/XII 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

7.

ՀՀ Ազգային գրադարան
NL0370223

59 930